ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ 1

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 1. Քրեական դատավարությունը կարգավորող օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական դատավարությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենսգրքով, ինչպես նաև դրանց համապատասխան ընդունված այլ օրենսգրքերով և օրենքներով:

Հոդված 2. Քրեական դատավարության օրենսգրքի նպատակը

Սույն օրենսգրքի նպատակն է անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումը:

Հոդված 3. Քրեական դատավարության օրենսգրքի գործողությունը տարածության վրա

1. Հայաստանի Հանրապետության տարածքում, անկախ հանցանքի կատարման վայրից, քրեական վարույթն իրականացվում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

2. Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ Հայաստանի Հանրապետության դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ Հայաստանի Հանրապետության տարբերանշանը կրող, Հայաստանի Հանրապետության օդանավակայանում կամ նավահանգստում գրանցված օդային, ծովային կամ գետային նավի վրա կատարված ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթն իրականացվում է սույն օրենսգրքի նորմերով:

3. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում սույն օրենսգրքի դրույթները կիրառվում են նաև օտարերկրյա պետությունների տարածքում:

4. Միջազգային դատարանի, օտարերկրյա պետության դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի միջնորդությամբ առանձին քննչական կամ դատական գործողություններ կատարելիս կարող է կիրառվել օտարերկրյա պետության քրեադատավարական օրենսդրությունը, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 4. Քրեական դատավարության օրենսգրքի գործողությունը ժամանակի մեջ

1. Քրեական վարույթի ընթացքում կիրառվում է սույն օրենսգրքի այն դրույթը, որը գործում է համապատասխան դատավարական գործողության կատարման կամ որոշման կայացման ժամանակ:

2. Ապացույցի թույլատրելիությունը որոշվում է այն ձեռք բերելու պահին գործող օրենքով:

3. Սույն օրենսգրքի դրույթները հետադարձ ուժ չունեն, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հոդված 5. Քրեական դատավարության օրենսգրքի կիրառման սահմանափակումներն ըստ անձանց շրջանակի

1. Սույն օրենսգրքի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին կամ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական իրավազորությունից ազատված այլ անձանց վրա, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց նկատմամբ սույն օրենսգրքի կիրառման առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Հոդված 6. Սույն օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենսգրքում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) քրեական վարույթ՝ ենթադրյալ հանցանքի մասին պատշաճ ձևով տեղեկանալու պահից սույն օրենսգրքով սահմանված պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասության սահմաններում իրականացվող ընթացակարգ.

2) քրեական գործ՝ քրեական վարույթի ընթացքում պատշաճ կարգով հավաքված ու ստացված փաստաթղթերի և այլ նյութերի համարակալված ամբողջություն.

3) մինչդատական վարույթ՝ վարույթի հանրային մասնակիցների կողմից իրենց իրավասության սահմաններում իրականացվող ընթացակարգ.

4) դատական վարույթ՝ դատարանի կողմից իր իրավասության սահմաններում իրականացվող ընթացակարգ.

5) նախաքննություն՝ քննիչի կողմից իր իրավասության սահմաններում

ենթադրյալ հանցանքի փաստի կապակցությամբ իրականացվող գործունեություն.

6) հետաքննություն՝ հետաքննության մարմնի կողմից նախաքննության շրջանակներում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն, որը ներառում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների կատարումը.

7) վարույթն իրականացնող մարմին՝ այն մարմինը կամ պաշտոնատար անձը, որն իրավասու է կայացնել կոնկրետ վարույթի ընթացքը կանխորոշող որոշումներ.

8) վարույթին ներգրավված անձ՝ դատավորը, դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի ղեկավարը, հետաքննիչը, մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, նրա օրինական կամ լիազոր ներկայացուցիչը, գույքային պատասխանողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը, վկան, փորձագետը, թարգմանիչը, ընթերական կամ դատական նիստի քարտուղարը.

9) վարույթի հանրային մասնակից՝ դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը կամ հետաքննիչը.

10) վարույթի մասնավոր մասնակից՝ մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը կամ լիազոր ներկայացուցիչը, գույքային պատասխանողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը.

11) վարույթին օժանդակող անձ՝ վկան, վկայի փաստաբանը, փորձագետը, թարգմանիչը, ընթերական կամ դատական նիստի քարտուղարը.

12) կողմեր՝ դատական վարույթում հակադիր շահեր ներկայացնող մասնակիցներ.

13) մեղադրանքի կողմ՝ դատական վարույթին մասնակցող դատախազը, քննիչը, տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը և լիազոր ներկայացուցիչը.

14) պաշտպանության կողմ՝ դատական վարույթին մասնակցող մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, գույքային պատասխանողը, նրա լիազոր ներկայացուցիչը.

15) դատարան՝ քրեական վարույթի ընթացքում դատական իշխանություն

իրականացնող պետական մարմին.

16) դատավոր՝ քրեական վարույթի ընթացքում դատական իշխանություն իրականացնող պետական պաշտոնատար անձ.

17) դատախազ՝ պետական պաշտոնատար անձ, ով քրեական վարույթի ընթացքում պետության անունից իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները.

18) քննիչ՝ պետական պաշտոնատար անձ, ով իր իրավասության սահմաններում քրեական վարույթի ընթացքում իրականացնում է նախաքննություն.

19) քննչական մարմնի ղեկավար՝ քննչական ծառայության, գլխավոր վարչության, վարչության, բաժնի կամ բաժանմունքի պետ կամ նրա տեղակալ, ով իր իրավասության սահմաններում կազմակերպում և ապահովում է նախաքննության ընթացքը.

20) հետաքննության մարմին՝ <<Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին>> ՀՀ օրենքով նախատեսված պետական մարմնի համակարգում գործող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրակականցնող ստորաբաժանման ղեկավար (հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցներ (հետաքննիչներ), ովքեր քննիչի հանձնարարությամբ իրավասու են նախաքննության շրջանակներում կատարելու օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և գաղտնի քննչական գործողություններ.

21) մեղադրյալ՝ անձ, ում նկատմամբ դատախազը հարուցել է քրեական հետապնդում, և միաժամանակ, ում նկատմամբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ մեղադրական կամ արդարացման դատավճիռ.

22) արդարացված մեղադրյալ՝ մեղադրյալ, ում նկատմամբ առկա է օրինական ուժի մեջ չմտած արդարացման վերդիկտ.

23) դատապարտված մեղադրյալ՝ մեղադրյալ, ում նկատմամբ առկա է օրինական ուժի մեջ չմտած մեղադրական վերդիկտ.

24) պաշտպան՝ փաստաբան, ով քրեական վարույթի ընթացքում ստանձնել և իրականացնում է ձերբակալված անձի կամ մեղադրյալի պաշտպանությունը.

25) տուժող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ հանցագործությամբ նրան պատճառվել է վնաս կամ կարող էր պատճառվել՝ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելու դեպքում.

26) գույքային պատասխանող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է գույքային պատասխանատվություն կրել մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցանքով պատճառած վնասի համար.

27) հանրային մեղադրող՝ հանրային մեղադրանքի կարգով իրականացվող վարույթում առաջին ատյանի դատարանում պետության անունից մեղադրանքը պաշտպանող դատախազ.

28) մասնավոր մեղադրող՝ մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող վարույթներում առաջին ատյանի դատարանում իր անունից մեղադրանքը ներկայացնող տուժող.

29) օրինական ներկայացուցիչ՝ անչափահաս կամ անգործունակ մեղադրյալի կամ տուժողի ծնողը, որդեգրողը, խնամակալը կամ հոգաբարձուն, կամ տուժող իրավաբանական անձի ղեկավարը, ով քրեական վարույթի ընթացքում ներկայացնում է տվյալ մեղադրյալի կամ տուժողի իրավաչափ շահերը.

30) լիազոր ներկայացուցիչ՝ փաստաբան, որին տուժողը կամ գույքային պատասխանողը պատշաճ լիազորել է վարույթի ընթացքում ներկայացնելու նրա իրավաչափ շահերը.

31) վարութային ակտ՝ քրեական վարույթի ընթացքում դատարանի կամ վարույթի հանրային մասնակցի կատարած գործողություն, դրսևորած անգործություն կամ կայացրած դատավարական ակտ.

32) դատավարական ակտ՝ դատական ակտ կամ վարույթի հանրային մասնակցի կայացրած որոշում.

33) դատական ակտ՝ դատարանի կայացրած որոշում կամ դատավճիռ.

34) եզրափակիչ դատավարական ակտ՝ տվյալ վարույթի ընթացքն ավարտող դատավարական ակտ.

35) եզրափակիչ դատական ակտ՝ տվյալ վարույթի ընթացքն ավարտող

դատական ակտ.

36) ապացույց՝ փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալ, որի հիման վրա քննիչը, դատախազը, դատարանը պարզում են ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ.

37) քրեական հետապնդման հարուցում՝ դատախազի որոշումը անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին.

38) մեղադրանք՝ որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկած, որն ունի փաստական և իրավական հիմնավորում.

39) ռեաբիլիտացիա՝ Հայաստանի Հանրապետության անունից ի շահ արդարացվածի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կատարվող հատուցում.

40) ձերբակալում՝ առանց դատարանի որոշման՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով սահմանված անձի ազատության իրավունքի սահմանափակումը.

41) քննչական գործողություն՝ քննիչի կամ դատարանի կողմից, ինչպես նաև քննիչի հանձնարարությամբ հետաքննության մարմնի կողմից կատարվող՝ սույն օրենսգրքով նախատեսված գործողություն, որի արդյունքում ակնկալվում է ձեռք բերել ապացույց.

42) արձանագրություն՝ դատական նիստերի քարտուղարի կամ վարույթի հանրային մասնակցի կողմից կազմվող փաստաթուղթ, որը հավաստում է որոշակի գործողությունների կատարումը կամ այլ փաստեր.

43) միջնորդություն՝ վարույթի մասնակցի կամ այլ անձի խնդրանքը՝ ուղղված վարույթն իրականացնող մարմնին.

44) բացարկ՝ վարույթի մասնակցի գրավոր միջնորդությունը՝ դատավորին, վարույթի հանրային մասնակցին, փորձագետին, թարգմանչին, ընթերակային կամ դատական նիստի քարտուղարին վարույթից հեռացնելու վերաբերյալ.

45) բողոք՝ վարույթի մասնակցի կողմից վարութային ակտի վերաբերյալ գրավոր անհամաձայնություն.

46) առարկություն՝ վարույթի մասնակցի կողմից իրավասու անձին ներկայացված գրավոր անհամաձայնություն.

47) հանձնարարություն՝ դատախազի կողմից քննիչին, քննչական մարմնի ղեկավարին, քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին կամ քննիչի կողմից հետաքննության մարմնին տրվող գրավոր հրահանգ՝ կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալ որևէ գործողություն կատարելուց.

48) ցուցմունք՝ մեղադրյալի, վկայի կամ տուժողի կողմից հարցաքննության, առերեսման կամ տեղում ցուցմունքների ստուգման ընթացքում գրավոր կամ բանավոր ձևով հաղորդված և պատշաճ ձևով արձանագրված տվյալներ.

49) բացատրություն՝ բանավոր կամ գրավոր պնդում, որը կատարում է վարույթի մասնավոր մասնակիցը կամ այլ անձ՝ իր դիրքորոշումը ներկայացնելու կամ հիմնավորելու համար.

50) օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատող՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, փոխվարչապետը, պատգամավորները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը և անդամները, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահները և դատավորները, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության նախարարները, նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության մարզպետները, նրանց տեղակալները, Երևանի քաղաքապետը, նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահը և խորհրդի անդամները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի անդամները, Հայաստանի Հանրապետության կարգավորող հանձնաժողովների ղեկավարները և անդամները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և անդամները, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահը և տեղակալը.

51) պետական հատուկ ծառայություն իրականացնող անձ՝ դատախազները, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչները, ոստիկանության (բացառությամբ ոստիկանության զորքերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ զորքերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարարական մարմինների պաշտոնատար անձինք.

52) ազգականներ՝ ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք: Սույն օրենքի իմաստով, անձի հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները: Անձի հետ ազգակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Անձի հետ ազգակցական կապի մինչև 3-րդ աստիճանի մեջ են գտնվում ազգակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք.

53) մերձավոր ազգական՝ ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը կամ քույրը, պապը, տատը, թոռը, ամուսինը, ամուսնու ծնողը կամ զավակի ամուսինը.

54) բնակարան՝ շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար նրանց անմիջական հարող մասնավոր տարածքները, ինչպես նաև դրանց այլ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հանգստի, գույք պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար: «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր տրանսպորտային միջոցը, ինչպես նաև ծառայողական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը.

55) դեպքի վայր՝ սահմանափակ տարածք, որտեղ հանցագործության մասին հաղորդմամբ կամ բավարար ապացույցներով համոզիչ հիմնավորվում է, որ կատարվել է հանցանքը և միաժամանակ առկա են հանցագործության հետքեր ու հետևանքներ:

ԳԼՈՒԽ 2
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 7. Քրեական վարույթի հանրայնությունը

1. Քրեական վարույթի իրականացումը հանրային գործունեություն է, որի ընթացքում և արդյունքում ապահովվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

2. Արդարադատությունը, քրեական հետապնդումը, դատախազական հսկողությունը և հանրային այլ գործունեությունն իրականացվում են բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմինների կողմից:

3. Արդարադատություն իրականացնելիս կամ դատական այլ երաշխիքներ ապահովելիս դատավորը պարտավոր է լինել և երևալ անկողմնակալ:

4. Ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունք ունեն սույն օրենսգրքով նախատեսված մասնակցություն ունենալ քրեական վարույթում հանրային շահերի պաշտպանությանը:

5. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ տուժողը, պարտավոր են օժանդակել քրեական դատավարությունում հանրային շահերի պաշտպանությանը:

Հոդված 8. Բոլորի հավասարությունը օրենքի առջև

1. Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

2. Սույն օրենսգրքով սահմանված կարգը միասնական է քրեական վարույթին ներգրավված բոլոր անձանց համար՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի

գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինների իրավասությունը, նրանց կողմից վարույթի իրականացման կարգը չեն կարող կամայականորեն փոփոխվել առանձին դեպքի կամ անձի կամ որոշակի իրավիճակի համար կամ որևէ ժամանակահատվածով:

4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի և Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր են քրեական վարույթն իրականացնող մարմնի համար:

Հոդված 9. Անմեղության կանխավարկածը

1. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը:

3. Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնին ցույց տալ որևէ աջակցություն: Մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել նաև նրա պաշտպանի, օրինական ներկայացուցչի, գույքային պատասխանողի և նրա լիազոր ներկայացուցչի վրա: Մեղադրանքի ապացուցման և մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև տուժողը, նրա օրինական ներկայացուցիչն ու լիազոր ներկայացուցիչը:

4. Հանցագործության համար անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի փոխկապակցված վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջությամբ:

5. Խոստովանական ցուցմունքը չի կարող անձին դատապարտելու հիմք հանդիսանալ, եթե այն չի հիմնավորվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցների բավարար ամբողջությամբ:

6. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածները, որոնք չեն փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

Հոդված 10. Անձի ազատությունը և անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցները կիրառվում են ոչ այլ կերպ, քան սույն օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով: Քրեական վարույթի ընթացքում անձին ազատությունից զրկելը չպետք է պատժի նպատակ հետապնդի:

3. Անձին կալանավորելը, կալանքի ժամկետը երկարացնելը, բժշկական կամ դաստիարակչական հաստատությունում հարկադրաբար տեղավորելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ՝ այն դեպքում, երբ անձի պատշաճ վարքագիծը չի կարող երաշխավորվել հարկադրանքի այլ միջոցներով:

4. Դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը իրենց իրավասության սահմաններում պարտավոր են անհապաղ ազատ արձակել անհիմն կամ ապօրինի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի:

5. Սույն օրենսգրքով ձերբակալման տվյալ տեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը լրանալուն պես ձերբակալված անձը պետք է անհապաղ ազատ արձակվի, եթե առկա չէ նրան կալանանավորելու վերաբերյալ որոշում:

6. Յուրաքանչյուր անձի անհապաղ և պաշտաճ ձևով հաղորդվում են նրան ազատությունից զրկելու հիմքերը, իսկ հանցագործության մեջ մեղադրվելու դեպքում՝ նաև դրա փաստական հանգամանքները և իրավական գնահատականը:

7. Քրեական վարույթի ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է անձից տեղեկություններ ստանալ բռնության, սպառնալիքի, խաբեության, նրա իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

8. Արգելվում է քրեական վարույթի ընթացքում մարդու կյանքը կամ առողջությունը վտանգող, նրան ֆիզիկական կամ հոգեկան տանջանքներ պատճառող դատավարական գործողություններ կատարելը:

9. Առանձին դատավարական գործողության կատարմանը խոչընդոտելու, իր դատավարական պարտականությունները պատշաճ ձևով իրականցնելուց հրաժարվելու դեպքում տվյալ դատավարական գործողության կատարումն ապահովելու նպատակով անձի նկատմամբ կարող են կիրառվել օրենքով նախատեսված դատավարական հարկադրանքի միջոցներ:

Հոդված 11. Իրավաբանական օգնության ապահովումը

1. Քրեական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն: Մեղադրյալի համար իրավաբանական օգնությունն ապահովումն է պաշտպանության իրավունքի ձևով:

2. Տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, գույքային պատասխանողը, նրա օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև վկան քրեական վարույթի ընթացքում իրավունք ունեն օգտվել իրենց հրավիրած փաստաբանի իրավաբանական օգնությունից:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի արգելելու սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց կողմից հրավիրված փաստաբանի

մասնակցությունը նրանց մասնակցությամբ կատարվող դատավարական գործողություններին:

Հոդված 12. Մեղադրյալի պաշտպանության ապահովումը

1. Մեղադրյալը պաշտպանության իր իրավունքն իրականացնում է ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով: Քրեական վարույթին մեղադրյալի պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի մասնակցությունը չի սահմանափակում մեղադրյալի իրավունքները:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է մեղադրյալին բացատրել նրա իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրա պաշտպանվելու իրական հնարավորությունը:

3. Սույն օրենսգրքով պարտադիր համարվող դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը:

4. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է օրենքով նախատեսված դեպքերում վարույթին մասնակից դարձնել մեղադրյալի օրինական ներկայացուցչին:

5. Քրեական հետապնդման մարմինը պարտավոր է հանգամանորեն ստուգել ի պաշտպանություն մեղադրյալի բերված և պատշաճ ձևակերպված փաստարկները:

Հոդված 13. Կողմերի հավասարությունը և մրցակցությունը

1. Դատարանում վարույթն իրականացվում է կողմերի հավասարության և մրցակցության հիման վրա: Կողմերի հավասարությունից և մրցակցությունից շեղում թույլատրվում է միայն քննչական և գաղտնի քննչական գործողություններ կատարելիս դատական երաշխիքների վարույթներում, համաձայնեցման և համագործակցության վարույթներում, ինչպես նաև վճռաբեկ վարույթում և բացառիկ վերանայման վարույթներում:

2. Մեղադրանքը և պաշտպանությունը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր անձինք: Դատարանն ապահովում է դատական նիստին կողմերի մասնակցության իրավունքը:

3. Դատարանը, պահպանելով անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է բոլոր ապացույցների համակողմանի հետազոտման համար անհրաժեշտ պայմաններ: Դատարանը, կողմի միջնորդությամբ, սույն օրենսգրքով սահմանված կարգով, աջակցում է նրան ձեռք բերելու անհրաժեշտ ապացույցներ:

4. Դատարանը կաշկանդված է մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներով, սակայն կարող է կաշկանդված չլինել մեղադրյալին մեղսագվող արարքին տրված իրավական գնահատականով: Օրենքի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ կողմերի դիրքորոշումները դատարանի համար պարտադիր չեն:

5. Դատարանում կողմերն օժտված են իրենց դիրքորոշումը ներկայացնելու և պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի ապացույցներ, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:

Հոդված 14. Դատական պաշտպանության ապահովումը

1. Յուրաքանչյուր ոք ունի դատական պաշտպանության իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով:

2. Յուրաքանչյուր ոք ունի իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար դատական քննության իրավունք:

3. Յուրաքանչյուր ոք, ում ենթադրյալ հանցագործությամբ վնաս է պատճառվել, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով ունի հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և հանցագործությամբ իրեն պատճառված վնասը հատուցելու պահանջով դատարան դիմելու իրավունք:

4. Քրեական վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերը, որոնք առնչվում են անձի իրավունքներին և ազատություններին, կարող են սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով բողոքարկվել դատարան:

Հոդված 15. Քրեական վարույթի ողջամիտ ժամկետը

1. Նախաքննությունը և դատական քննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում:

2. Մեղադրյալն ունի ողջամիտ ժամկետում դատարանի առջև կանգնելու իրավունք:

3. Անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է սահմանափակվի ամենակարճ անհրաժեշտ ժամանակահատվածով:

4. Դատարանը գործերի քննության հերթականությունը որոշելիս նախապատվությունը տալիս է այն վարույթներին, որոնցով մեղադրյալը գտնվում է կալանքի տակ:

Հոդված 16. Կրկին դատվելու անթույլատրելիությունը

1. Ոչ ոք չպետք է Հայաստանի Հանրապետության իրավազորության շրջանակներում կրկին դատվի կամ պատժվի այն արարքի համար, որի համար նա օրինական ուժի մեջ մտած դատավճռով արդարացվել կամ դատապարտվել է:

2. Քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քրեական հետապնդման մարմնի օրինական ուժի մեջ մտած որոշման առկայությունը բացառում է քրեական հետապնդումը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման:

3. Անձի վիճակի բարելավման պահանջով վարույթը եզրափակող ակտի վերանայումը կրկին դատվել չէ:

4. Անձի վիճակի վատթարացման պահանջի հիման վրա կրկին դատվել չէ՝

1) օրինական ուժի մեջ չմտած եզրափակիչ դատական ակտի կամ քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քրեական հետապնդման մարմնի օրինական ուժի մեջ չմտած որոշման վերանայումը կամ վերացումը.

2) իրավունքի հիմնարար խախտման կամ նոր հանգամանքի հիմքով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի կամ քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քրեական հետապնդման մարմնի օրինական ուժի մեջ մտած որոշման վերանայումը՝ տվյալ հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներում:

5. Եթե անձին դատապարտելիս պարզվում է, որ նույն արարքի համար նրա նկատմամբ կիրառվել է վարչական կամ կարգապահական պատասխանատվության միջոց, ապա նրա նկատմամբ պատիժ նշանակելու դեպքում այն պետք է վերացվի և հաշվի առնվի պատիժ նշանակելիս:

Հոդված 17. Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունք: Իրավասու մարմիններն առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ տեղեկություններ կարող են հավաքել, պահել և օգտագործել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, եթե դա անհրաժեշտ է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու համար:

2. Անձը, ում քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է հայտնել այնպիսի տեղեկություններ կամ տրամադրել այնպիսի նյութեր, որոնք հետագայում կարող են օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի, իրավունք ունի հրաժարվել նման տեղեկություններ հայտնելուց կամ նյութեր տրամադրելուց:

3. Յուրաքանչյուր ոք ունի հեռախոսային հաղորդակցության, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք: Քրեական վարույթի ընթացքում անձի հեռախոսային հաղորդակցությունը, նամակագրությունը, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները կարող են վերահսկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

4. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Բացառությամբ դեպքի վայրի զննման, անձի բնակարանում քննչական և այլ

դատավարական գործողություններ կարող են կատարվել դատարանի որոշմամբ կամ տվյալ անձի համաձայնությամբ: Բնակարանում խուզարկությունը, առգրավումը և զննումը կարող են կատարվել միայն դատարանի որոշմամբ:

5. Քրեական վարույթի ընթացքում անձանց ֆինանսական միջոցների և այլ գույքի վրա արգելանք կարող է դրվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված անհետաձգելի դեպքերի: Վարույթի ընթացքում դրամական տույժեր նշանակելը, ինչպես նաև գույքը հարկադրաբար օտարելը կարող են կատարվել միայն դատարանի որոշմամբ:

Հոդված 18. Քրեական վարույթի լեզուն

1. Քրեական վարույթի լեզուն գրական հայերենն է: Քրեական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական վարույթի լեզվին չտիրապետող անձին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքները:

3. Քրեական վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին տրվում են սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճեններն այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Քրեական վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթղթերը քրեական գործին կցվում են թարգմանչի կողմից վավերացված հայերեն թարգմանությունների հետ:

Հոդված 19. Դատական վարույթի հրապարակայնությունը

1. Դատարանում վարույթը դռնբաց է, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

2. Դռնբաց դատական նիստին իրավունք ունի ներկա գտնվել 16 տարին լրացած յուրաքանչյուր ոք, իսկ դատարանի թույլտվությամբ՝ նաև 16 տարին չլրացած անձը:

3. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ, եթե դա չի հանգեցնի հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակման, կարող է որոշում կայացնել դատական նիստը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու մասին:

4. Դատարանի թույլտվությամբ դռնփակ դատական նիստին վարույթին ներգրավված անձանցից բացի կարող են ներկա գտնվել նաև այլ անձինք:

5. Դռնբաց դատական նիստին ներկա անձինք իրավունք ունեն կատարել գրառում և ձայնագրառում: Դատական նիստի ընթացքի տեսագրումը կամ լուսանկարահանումը թույլատրում է դատարանը՝ մեղադրյալի համաձայնությամբ: Մեղադրյալի համաձայնության դեպքում դատական նիստի ընթացքի տեսագրումը կամ լուսանկարումը կարող է արգելվել դատարանի պատճառաբանված որոշմամբ՝ կողմերի կարծիքը լսելուց հետո: Դռնփակ դատական նիստի ընթացքում դատարանը կարող է թույլատրել միայն գրառումներ:

6. Դատական վարույթի ընթացքում դատարանի կայացրած ակտերը հայտարարվում են հրապարակայնորեն: Ելնելով դռնփակ դատական քննություն անցկացնելու հիմքերից՝ դատարանի որոշմամբ դատական ակտի առանձին մասեր կարող են հրապարակայնորեն չհայտարարվել: Նշված դատական ակտերի ներածական և եզրափակիչ մասերն ամեն դեպքում հրապարակվում են:

Հոդված 20. Դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը

1. Վարույթի մասնավոր մասնակիցները և վարույթին օժանդակող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

2. Արգելվում է դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների այնպիսի չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին:

3. Դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձի նկատմամբ կարող է կիրառվել չարաշահմանը

համաչափ՝ սույն օրենսգրքով նախատեսված դատավարական ներգործության միջոց, եթե այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը:

ԲԱԺԻՆ 2

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

ԳԼՈՒԽ 3

ԴԱՏԱՐԱՆԸ ԵՎ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 21. Քրեական արդարադատություն իրականացնող դատարանները

Հայաստանի Հանրապետությունում քրեական արդարադատությունն իրականացնում են միայն առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ քրեական դատարանը և վճռաբեկ դատարանը:

Հոդված 22. Դատարանի կազմը

1. Առաջին ատյանի դատարանում վարույթը, այդ թվում՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը և նախնական լսումները, իրականացվում է միանձնյա:

2. Վերաքննիչ դատարանում հիմնական վարույթը եզրափակող դատական ակտերի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, այլ դատական ակտերի դեմ բողոքները՝ միանձնյա:

3. Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երկու դատավորի կազմով: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանը քննում է կոլեգիալ՝ նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով:

Հոդված 23. Պահեստային դատավորը

1. Եթե դատարանում մեղադրանքի քննությունը բացառիկ երկար ժամանակ է պահանջում, ապա դատարանի որոշման հիման վրա տվյալ դատարանի

նախագահը այդ դատարանի դատավորների կազմից նշանակում է պահեստային դատավոր, որը պարտավոր է դատական քննության ընթացքում ներկա գտնվել դատական նիստերի դահլիճում: Դատարանի նախագահը կարող է պահեստային դատավոր չնշանակել, եթե գտնում է, որ դրա անհրաժեշտությունը տվյալ գործով բացակայում է:

2. Նույն վարույթի համար կարող է նշանակվել միայն մեկ պահեստային դատավոր:

3. Մեղադրանքը քննող դատավորի բացարկի, ինքնաբացարկի կամ դատավորի լիազորությունների դադարեցման կամ վարույթին նրա մասնակցությունը բացառող այլ հիմքերի առկայության դեպքում պահեստային դատավորը փոխարինում է նրան:

Հոդված 24. Դատարանի իրավասությունը

Դատարանն իրավասու է՝

1) որոշումներ կայացնել սույն օրենսգրքով նախատեսված հարկադրանքի միջոցների, քննչական գործողությունների, վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերի դեմ բերված բողոքների կապակցությամբ.

2) որոշումներ կայացնել նախնական դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարցերի կապակցությամբ.

3) իրականացնել քրեական վարույթ առաջին ատյանի, վերաքննության և վճռաբեկության կարգով.

4) դատական ակտն ուղարկել կատարման.

5) օրենքով նախատեսված դեպքերում լուծել այլ հարցեր:

Հոդված 25. Նախագահողը և նրա լիազորությունները

1. Գործը միանձնյա քննող դատավորը նախագահում է դատական նիստը:

2. Վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանում վարույթը կոլեգիալ կազմով իրականացնելիս նիստը նախագահում է դատարանի նախագահը կամ պալատի նախագահը կամ օրենքով նախատեսված կարգով՝ լիազորված դատավորը:

3. Նախագահողը նախապատրաստում և ղեկավարում է դատական նիստը, միջոցներ է ձեռնարկում ապահովելու վարույթի արդարացի քննությունը և պահպանելու սույն օրենսգրքի այլ պահանջները, ինչպես նաև դատական նիստին ներկա գտնվող անձանց պատշաճ վարքագիծը:

4. Նախագահողը վարույթի հետ կապված հարցերը ներկայացնում է բոլոր դատավորների լուծմանը: Որոշումն ընդունվում է դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայները հավասար բաշխվելու դեպքում ընդունված է համարվում մեղադրյալի համար առավել բարենպաստ որոշումը:

5. Կոլեգիալ կազմով վարույթ իրականացնող բոլոր դատավորներն օժտված են հավասար լիազորություններով:

Հոդված 26. Առարկայական ընդդատությունը

1. Առաջին ատյանի դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները:

2. Վերաքննիչ քրեական դատարանին ընդդատյա են բոլոր այն վարույթները, որոնցով առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք է բերված:

3. Վճռաբեկ դատարանի քրեական պալատին ընդդատյա են բոլոր վարույթները, որոնցով վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք է բերված:

4. Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով կարող է իրականացնել վերաքննիչ քրեական դատարանին ընդդատյա վարույթներ:

Հոդված 27. Տարածքային ընդդատությունը

1. Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:

2. Այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է

գտնվում մեղադրյալի բնակության վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթ իրականացրած մարմնի նստավայրը:

3. Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթին մասնակցող անձանց մեծամասնությունը բնակվում է մեկ ուրիշ առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումը ընդունում է գործը քննող դատարանը:

4. Դատական վերահսկողության կարգով վարույթներն ընդդատյա են մինչդատական վարույթն իրականացնող մարմնի նստավայրի կամ համապատասխան գործողության կատարման վայրի դատարանին:

Հոդված 28. Ընդդատության որոշումը վարույթները միացնելիս

1. Եթե մինչդատական վարույթում միացվել են առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա երկու կամ ավելի վարույթներ, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթ իրականացրած մարմնի նստավայրը:

2. Եթե առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա երկու կամ ավելի վարույթներ միացվում են, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որն ավելի վաղ է գործն ընդունել վարույթ:

Հոդված 29. Վարույթի փոխանցումն ըստ ընդդատության

1. Դատարանը, պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ փոխանցում է ըստ ընդդատության:

2. Եթե սույն օրենսգրքով նախատեսված տարածքային ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվում է դատաքննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է շարունակել վարույթի իրականացումը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը պատճառաբանված որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

3. Մինչև վարույթն ըստ ընդդատության փոխանցելը կարող են կատարվել միայն անհետաձգելի դատավարական գործողություններ:

Հոդված 30. Ընդդատության մասին վեճերը լուծելը

Վարույթն ըստ ընդդատության ստացած դատարանն իրավասու է պատճառաբանված որոշմամբ վիճարկել դրա ընդդատությունը: Այդ դեպքում վարույթի ընդդատությունը հնգօրյա ժամկետում որոշվում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ:

ԳԼՈՒԽ 4
ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Հոդված 31. Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը

Քրեական վարույթի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս վարույթի հանրային մասնակիցը գործում է ինքնուրույն՝ հիմնվելով օրենքի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավասու անձի հանձնարարությունների վրա: Վարույթի հանրային մասնակիցը պատասխանատու է ներքին համոզմունքի վրա հիմնված իր վարութային ակտերի համար:

Հոդված 32. Դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում

1. Հսկող դատախազը մինչդատական վարույթի ընթացքում՝

1) ստուգում է ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման և արձանագրման մասին օրենքի պահանջների կատարումը.

2) ստուգման համար հետաքննության մարմնից պահանջում է օպերատիվ հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների իրականացման վերաբերյալ օրենքով սահմանված փաստաթղթերը կամ այդպիսիք ստուգում է դրանց գտնվելու վայրում.

3) ստուգման համար քննիչից պահանջում է նախաքննության ընթացքի մասին տեղեկություններ, քրեական վարույթի նյութերը կամ այդպիսիք ստուգում է դրանց գտնվելու վայրում.

4) սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան քննչական մարմնի ղեկավարին հանձնարարություն է տալիս նախաքննություն սկսելու մասին.

5) անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու, քրեական հետապնդումը վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի միջնորդության հիման վրա կայացնում է համապատասխան որոշում.

6) սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ քննիչին հանձնարարում է կազմել անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու մասին միջնորդություն.

7) վարույթի նյութերի հիման վրա իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում քրեական հետապդնում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին.

8) իր իրավասության սահմաններում քննչական մարմնի ղեկավարին հանձնարարություն է տալիս վարույթը քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ.

9) որոշում է կայացնում հետաքննիչին, հետաքննության մարմնի պետին, քննիչին, քննչական մարմնի ղեկավարին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի կապակցությամբ.

10) իր իրավասության սահմաններում քննիչին տալիս է հանձնարարություններ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ.

11) սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ մասնակցում է քննչական գործողությանը, այդ ընթացքում քննիչին տալիս է պարտադիր կատարման ենթակա հանձնարարություններ.

12) որոշում է կայացնում քննիչի հանձնարարությունների վերաբերյալ հետաքննության մարմնի պետի առարկությունների կապակցությամբ.

13) վերացնում է հետաքննության մարմնի պետի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի անօրինական կամ անհիմն որոշումները, ինչպես նաև քննչական մարմնի ղեկավարի կամ քննիչի անօրինական կամ անհիմն հանձնարարությունները.

14) որոշում է կայացնում հետաքննության մարմնի պետի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի վարութային ակտերի դեմ վարույթի մասնավոր մասնակիցների բերած բողոքների կապակցությամբ.

15) քրեական վարույթի ընթացքում օրենքի կոպիտ կամ պարբերական խախտում թույլ տալու դեպքում հետաքննության մարմնի պետին, հետաքննիչին կամ քննիչին հեռացնում է տվյալ վարույթին մասնակցելուց, սակայն չի կարող որոշում կայացնել նրա փոխարեն այլ անձ նշանակելու մասին.

16) դիմում է իրավասու մարմիններին քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց կալանավորելու թույլտվություն ստանալու միջնորդություններով.

17) հաստատում է մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը կամ եզրափակիչ ակտը և քրեական գործն ուղարկում է դատարան՝ ըստ էության քննելու համար, հաստատում է քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը.

18) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իր որոշմամբ չի հաստատում մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը, եզրափակիչ ակտը կամ քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը և քրեական գործը վերադարձնում է քննչական մարմնի ղեկավարին՝ վարույթը շարունակելու հաձնարարությամբ.

19) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում համաձայնություն է տալիս քննիչի միջնորդությունը դատարան ներկայացնելուն, կարող է հետ վերցնել քննիչի՝ դատարան ներկայացրած միջնորդությունը կամ մասնակցել դատական երաշխիքների վարույթին.

20) ստորագրում է մինչդատական համաձայնության վերաբերյալ համաձայնագիր.

21) իր որոշմամբ անհապաղ վերացնում է անձի իրավունքների կամ ազատությունների ցանկացած ոչ իրավաչափ սահմանափակում, այդ թվում՝ ազատում է ոչ իրավաչափ պահվող անձանց.

22) սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով որոշում է կայացնում պարզեցված նախաքննությամբ քննվող վարույթը ընդհանուր կարգով իրականացնելու վերաբերյալ.

23) մինչդատական վարույթի ընթացքում իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

2. Վերադաս դատախազը մինչդատական վարույթի ընթացքում՝

1) գործի հսկողությունը հանձնարարում է ստորադաս դատախազին կամ այն իրականացնում է անձամբ՝ օգտվելով սույն օրենսգրքով մինչդատական վարույթում հսկող դատախազի լիազորություններից.

2) անհրաժեշտության դեպքում հետաքննության կամ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը հանձնարարում է մի քանի դատախազների և նրանց միջև կատարում աշխատանքի բաժանում.

3) իր որոշմամբ հսկող դատախազին հեռացնում է վարույթից և նախաքննության ու հետաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը հանձնարարում այլ դատախազի կամ այն իրականացնում է անձամբ՝ օգտվելով սույն օրենսգրքով մինչդատական վարույթում հսկող դատախազի լիազորություններից.

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իր որոշմամբ փոխում է հսկողություն իրականացնող դատախազին.

5) որոշում է կայացնում հսկող դատախազին հայտնված բացարկի, ինչպես նաև նրա ինքնաբացարկի կապակցությամբ.

6) քննչական մարմնի ղեկավարին հանձնարարում է վարույթը քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ, եթե նման հանձնարարությունը դուրս է հսկող դատախազի իրավասության շրջանակից.

7) իր որոշմամբ վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մեկ այլ մարմնի՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով.

8) վարույթի օրինականությունն ապահովելու նպատակով հանձնարարություններ է տալիս հսկող դատախազին.

9) վերացնում է հսկող դատախազի անօրինական կամ անհիմն որոշումները և հանձնարարությունները.

10) որոշում է կայացնում հսկող դատախազի հանձնարարությունների վերաբերյալ քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի առարկությունների կապակցությամբ, ինչպես նաև վերադաս դատախազի հանձնարարությունների վերաբերյալ հսկող դատախազի առարկությունների կապակցությամբ.

11) որոշում է կայացնում հսկող դատախազի վարութային ակտերի (այդ թվում՝ հանձնարարությունների) դեմ բերված բողոքների կապակցությամբ.

12) մինչդատական վարույթի ընթացքում իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

3. Հսկող դատախազը պարտավոր է կատարել վերադաս դատախազի հանձնարարությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ համարում է, որ նման հանձնարարությունն անհիմն կամ անօրինական է: Այդ դեպքում հսկող դատախազը, առանց վերադաս դատախազի հանձնարարությունը կատարելու, առարկություն է ներկայացնում հանձնարարություն տված դատախազի վերադասին.

4. Մինչդատական վարույթի շրջանակներում դատախազի հանձնարարությունները ենթակա են պարտադիր կատարման քննիչի, քննչական մարմնի ղեկավարի և հետաքննության մարմնի կողմից:

5. Մինչդատական վարույթի ընթացքում դատախազի կողմից իր իրավասության սահմաններում կայացված որոշումները ենթակա են պարտադիր կատարման բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

Հոդված 33. Դատախազի լիազորությունները դատական վարույթի ընթացքում

1. Դատախազն իրավունք ունի՝

1) հայտնել բացարկներ.

2) հարուցել միջնորդություններ.

3) օրենքով սահմանված կարգով ներկայացնել քրեական վարույթին առնչվող առարկաներ և փաստաթղթեր.

4) ներկայացնելու համար օրենքով սահմանված կարգով պահանջել քրեական վարույթին առնչվող առարկաներ և փաստաթղթեր, եթե դրանք անհրաժեշտ են վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած նոր ապացույցների վերաբերյալ դիրքորոշում հայտնելու համար.

5) առարկել դատական վարույթի մասնակիցների կամ դատարանի գործողությունների կամ անգործության դեմ.

6) մեղադրական վերդիկտից հետո դիրքորոշում հայտնել նշանակման ենթակա պատժի վերաբերյալ.

7) ներկայացնել դիտողություններ դատական նիստի արձանագրության վերաբերյալ.

8) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով բողոքարկել դատական ակտերը.

9) իրականացնել սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2. Դատախազը պարտավոր է՝

1) մասնակցել նախնական դատալսումներին և դատաքննությանը.

2) հանդես գալ բացման խոսքով, առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում հանդես գալ եզրափակիչ ելույթով, իսկ վճռաբեկ դատարանում՝ մասնակցել նիստին.

3) մասնակցել քրեական վարույթի նյութերի և ապացույցների հետազոտմանը.

4) դիրքորոշում հայտնել համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդության վերաբերյալ.

5) ի պաշտպանություն պետության գույքային շահերի՝ մեղադրյալի կամ վերջինիս գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի դեմ հարուցել հայց.

6) կարծիք հայտնել վարույթի ընթացքում ծագած ցանկացած հարցի վերաբերյալ.

7) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով փոփոխել մեղադրանքը.

8) ենթարկվել դատական նիստի կարգին և նախագահողի կարգադրություններին.

9) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով բերել նոր հանգամանքներով բողոք.

10) կատարել սույն օրենսգրքով նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 34. Քննիչի լիազորությունները

1. Քննիչը՝

1) առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության դեպքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրություն և անհապաղ ձեռնամուխ լինում նախաքննության իրականացմանը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դատախազին.

2) բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննության համար ինքնուրույն ուղղություն է տալիս քննությանը, ընդունում անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքին համապատասխան կատարում է քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է ստանալ դատախազի համաձայնությունը կամ դատարանի թույլտվությունը.

3) նախաքննության ընթացքում նոր հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին.

4) միջոցներ է ձեռնարկում ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերի հատուցումն ապահովելու համար.

5) մեղադրյալի կամ պաշտպանի ներկայացրած առարկաները կամ փաստաթղթերը որպես ապացույց կցում է քրեական գործին, անհրաժեշտության դեպքում գրավոր եզրակացություն է կազմում այդ առարկաների կամ փաստաթղթերի անթույլատրելիության կամ ոչ վերաբերելիության մասին.

6) հետաքննության մարմնին տալիս է գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ նրա համար պարտադիր հանձնարարություններ.

7) հետաքննության մարմնից պահանջում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները.

8) որոշում է կայացնում անձին ձերբակալելու կամ ձերբակալված անձին ազատ արձակելու մասին.

9) հետաքննության մարմնին հանձնարարում է իրագործելու ձերբակալման, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները, ինչպես նաև հետաքննության մարմնից աջակցություն է ստանում քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելիս.

10) վարույթ է ներգրավում ընթերակա, թարգմանիչ, փորձագետ, վկա.

11) անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու, քրեական հետապնդումը վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդությամբ դիմում է դատախազին.

12) որոշում է կայացնում տուժող և տուժողի օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին.

13) ապահովում է վարույթին փաստաբանի մասնակցությունը որպես պաշտպան կամ լիազոր ներկայացուցիչ.

14) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով պաշտպանին, լիազոր ներկայացուցչին կամ վկայի փաստաբանին հեռացնում է վարույթից.

15) որոշում է կայացնում ընթերակային, թարգմանչին, փորձագետին հայտնած բացարկի կապակցությամբ.

16) իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում վարույթի մասնավոր մասնակիցների միջնորդությունների և բողոքների կապակցությամբ.

17) իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում խափանման միջոց կիրառելու, փոխելու, վերացնելու մասին.

18) հսկող դատախազի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ ազատ է արձակում կալանավորված մեղադրյալին.

19) դիմում է դատարան սույն օրենսգրքով սահմանված դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու, կալանքի ժամկետը երկարացնելու, քննչական

և գաղտնի քննչական գործողություններ կատարելու միջնորդություններով: Միջնորդության պատճենն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին:

20) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում վերացնում է անձի իրավունքների կամ ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակումները.

21) քննչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ շարունակում է վարույթը դատախազի կողմից վերադարձված գործով: Նման հանձնարարությունը պարտադիր է քննիչի համար և ենթակա չէ բողոքարկման.

22) հսկող դատախազի հանձնարարության կամ որոշման վերաբերյալ գրավոր առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին՝ չկասեցնելով դրա կատարումը:

23) վարույթը կարճելու կամ նախաքննությունն այլ կերպ ավարտելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին հսկող դատախազի հանձնարարության հետ համաձայն չլինելու դեպքում առանց այն կատարելու դրա վերաբերյալ գրավոր առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին.

24) քննչական մարմնի ղեկավարի հանձնարարության վերաբերյալ գրավոր առարկություն է ներկայացնում հսկող դատախազին.

25) դատախազին միջնորդության է ներկայացնում քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին.

26) կայացնում է քրեական վարույթը կարճելու մասին որոշում և այն ներկայացնում հսկող դատախազի հաստատմանը.

27) հսկող դատախազի հաստատմանն է ներկայացնում մեղադրական եզրակացությունը, մեղադրական ակտը կամ եզրափակիչ ակտը.

28) իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

2. Քննիչը պատասխանատու է քննության բնականոն ընթացքի, քննչական և այլ դատավարական գործողություններն օրենքով սահմանված կարգով ու ժամանակին կատարելու համար:

3. Նախաքննության ընթացքում քննիչի կողմից իր իրավասության սահմաններում կայացված որոշումները ենթակա են պարտադիր կատարման բոլոր

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

Հոդված 35. Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները

1. Նախաքննության արդյունավետ կազմակերպումն ապահովելու նպատակով քննչական մարմնի ղեկավարը՝

1) նախաքննության կատարումը գրավոր հանձնարարում է քննիչին.

2) միևնույն ստորաբաժանման շրջանակներում վարույթը մի քննիչից որոշմամբ հանձնում է մյուսին: Եթե դա կարող է հանգեցնել նախաքննության կատարման վայրի փոփոխության, ապա վարույթը մի քննիչից մյուսին հանձնելը կարող է տեղի ունենալ միայն համապատասխան վերադաս դատախազի գրավոր համաձայնությամբ.

3) ծանոթանում է իր ենթակայության տակ գործող քննիչի կողմից իրականացվող վարույթի նյութերին, դրա հիման վրա իր իրավասության սահմաններում քննիչին տալիս է կազմակերպական բնույթի գրավոր հանձնարարություններ.

4) վարույթից հեռացված քննիչին որոշմամբ փոխարինում է այլ քննիչով.

5) սեփական նախաձեռնությամբ կամ դատախազի հանձնարարությամբ որոշում է կայացնում վարույթը քննչական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ.

6) կոնկրետ քննիչի կողմից իրականացվող վարույթով միևնույն ստորաբաժանման քննիչներին հանձնարարում է առանձին քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարումը, եթե բացակայում է վարույթը քննչական խմբի կողմից իրականացնելու անհրաժեշտությունը.

7) որոշում է կայացնում նախաքննությունն անձամբ կատարելու մասին՝ օգտվելով քննիչի համար սույն օրենսգրքով սահմանված բոլոր լիազորություններից.

8) հետևում է քննիչի կողմից քննչական և այլ դատավարական գործողությունների, դատախազի որոշումների, դատախազի և իր հանձնարարությունների կատարմանը, քրեական հետապնդման և կալանավորման ժամկետների պահպանմանը.

9) ապահովում է վերադարձված քրեական գործով վարույթը շարունակելու մասին դատախազի հանձնարարության կատարումը.

10) իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների ու հանձնարարությունների պատճենները քննչական մարմնի ղեկավարն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին:

3. Քննչական մարմնի ղեկավարի որոշումները և հանձնարարությունները քննիչի կողմից ենթակա են պարտադիր կատարման, սակայն դրանց վերաբերյալ կարող են գրավոր առարկություններ ներկայացվել հսկող դատախազին:

4. Դատախազի հանձնարարությունները և որոշումները պարտադիր են քննչական մարմնի ղեկավարի համար, սակայն վերջինս կարող է դրանց վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացնել վերադաս դատախազին՝ չկասեցնելով այդ հանձնարարությունների կամ որոշումների կատարումը:

Հոդված 36. Հետաքննության մարմնի լիազորությունները

1. Հետաքննիչը՝

1) իրականացնում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ.

2) կատարում է սույն օրենսգրքով նախատեսված գաղտնի քննչական գործողություններ.

3) օժանդակում է քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը.

4) օպերատիվ հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքներն օրենքով նախատեսված կարգով ներկայացնում է քննիչին.

5) հետաքննության կատարման ընթացքում նոր հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ գրավոր տեղեկացնում է քննիչին.

6) ձերբակալում է հանցանքի կատարման մեջ կասկածվող անձին, այդ մասին անհապաղ հայտնում է իրավասու դատախազին, իսկ անհրաժեշտության դեպքում ձերբակալելիս անձնական խուզարկության է ենթարկում նրան.

7) անհապաղ ազատ է արձակում է իր նախաձեռնությամբ ձերբակալված անձին, եթե բացակայում է այդ անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը, այդ մասին անհապաղ հայտնում է իրավասու դատախազին.

8) միջոցներ է ձեռնարկում քրեական վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները և փաստաթղթերը, ինչպես նաև դեպքի վայրը պահպանելու ուղղությամբ.

9) իրականացնում է սույն օրենսգրքով և «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված լիազորությունները հետաքննիչն իրականացնում է բացառապես քննիչի գրավոր հանձնարարությամբ:

3. Հետաքննության մարմնի պետը՝

1) իր իրավասության սահմաններում կազմակերպում և ապահովում է հետաքննիչի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունների իրականացումը.

2) անձամբ իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները.

3) քննիչի հանձնարարության հիման վրա որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին.

4) հսկող դատախազին առարկություններ է ներկայացնում քննիչի անօրինական հանձնարարությունների վերաբերյալ.

5) դատախազի գրավոր պահանջով նրա ստուգմանն է ներկայացնում օպերատիվ հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների իրականացման վերաբերյալ օրենքով սահմանված փաստաթղթերը.

6) իրականացնում է սույն օրենսգրքով և «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

ԳԼՈՒԽ 5
ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Հոդված 37. Մեղադրյալի իրավունքները և պարտականությունները

1. Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) իրեն հասկանալի լեզվով, անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվել իրեն ներկայացվող մեղադրանքի փաստական հանգամանքների և իրավական գնահատականի մասին, իսկ արգելանքի վերցվելու դեպքում՝ նաև իրեն ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների մասին.

2) մեղադրանք ներկայացնելուց հետո քննիչից անմիջապես անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման, իսկ արգելանքի վերցվելու դեպքում՝ ձերբակալման կամ կալանավորման որոշումների պատճենները.

3) ձերբակալումից կամ մեղադրանք ներկայացնելուց հետո քննիչից անմիջապես անվճար ստանալ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում.

4) ձերբակալման կամ կալանավորման դեպքում քրեական վարույթի յուրաքանչյուր փուլում անցնել անվճար բժշկական հետազոտություն և ստանալ անվճար եզրակացություն.

5) ձերբակալման կամ մեղադրանք ներկայացնելու պահից իր ընտրությամբ ունենալ պաշտպան կամ պաշտպանվել ինքնուրույն (հրաժարվել պաշտպանից), իսկ պաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար միջոցներ չունենալու դեպքում՝ ունենալ պետական միջոցների հաշվին նշանակված պաշտպան.

6) խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման.

7) պահպանել լռություն կամ ցուցմունք տալ պաշտպանի ներկայությամբ.

8) գրավոր տեղեկացվել իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ ցուցմունք չտալու իր իրավունքի, ինչպես նաև այն մասին, որ իր ցուցմունքը քրեական գործի քննության ընթացքում կարող է օգտագործվել որպես ապացույց.

9) հարցաքննել իր դեմ վկայած անձանց կամ իրավունք ունենալ, որ այդ անձինք ենթարկվեն հարցաքննության, ինչպես նաև իրավունք ունենալ, որ իր օգտին վկայող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ վկայած անձինք.

10) մասնակցել իր կամ պաշտպանի միջնորդությամբ կատարվող քննչական և այլ դատավարական գործողություններին, եթե դա չի խոչընդոտի համապատասխան գործողության կատարմանը կամ չի վնասի այլ անձանց իրավունքներին, ինչպես նաև հրաժարվել քննչական կամ այլ դատավարական գործողություններին մասնակցելուց, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ.

11) ստանալ վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշումը իր կամ պաշտպանի միջնորդությամբ կատարվող քննչական գործողությանն իր մասնակցությունը չթույլատրելու մասին.

12) արգելանքի վերցվելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով իր մերձավոր ազգականներին, իսկ զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությանը տեղյակ պահել արգելանքի տակ իրեն պահելու հիմքերի և վայրի մասին:

Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի արգելանքի վերցնելու դեպքում նրան պահելու հիմքերի և վայրի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը 24 ժամվա ընթացքում դիվանագիտական ուղիներով հայտնում է արգելանքի վերցված անձի քաղաքացիության, իսկ եթե նա քաղաքացիություն չունի՝ նրա մշտական բնակության պետությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև շահագրգիռ այլ պետությանը:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով արգելանքի վերցված օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին իրավունք է վերապահված կապվելու համապատասխանորեն իր

քաղաքացիության պետության կամ իր մշտական բնակության պետության համապատասխան ներկայացուցչի կամ այդպիսի կապ հաստատելու իրավասություն ունեցող այլ ներկայացուցչի հետ, իսկ այդ ներկայացուցչի կողմից իրեն այցելության, ապա արգելանքի վերցված անձի կողմից այդ իրավունքի իրականացման խնդրանքի դեպքում պետք է այն բավարարել՝

13) քրեական վարույթի ընթացքում հետազոտելու համար ներկայացնել ապացույցներ.

14) հայտնել բացարկներ.

15) հարուցել միջնորդություններ.

16) հայտարարել իր մեղավորության կամ անմեղության մասին.

17) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական և այլ դատավարական գործողության արձանագրությանը, դիտողություններ ներկայացնել այդ արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

18) իր խնդրանքով անվճար ստանալ իր մասնակցությամբ կատարված քննչական և այլ դատավարական գործողության արձանագրության պատճենը.

19) ծանոթանալ իր նկատմամբ խափանման միջոց և դատավարական հարկադրանքի այլ միջոց կիրառելու, փորձաքննություն նշանակելու մասին որոշումներին, իսկ իր խնդրանքով՝ նաև անվճար ստանալ այդ որոշումների և մեղադրական եզրակացության, մեղադրական ակտի կամ եզրափակիչ որոշման, քրեական հայցի, փորձագետի եզրակացության, գույքային հայցի, ինչպես նաև եզրափակիչ դատական ակտի պատճենը.

20) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ վարույթի բոլոր նյութերին, դրանցից անվճար պատճեններ ստանալ և դուրս գրել ցանկացած տեղեկություն.

21) միջնորդել կիրառելու համաձայնեցման վարույթ.

22) միջնորդել կիրառելու համագործակցության վարույթ.

23) դատական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ստանալ պատշաճ ծանուցում.

24) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատական նիստերին, ապացույցների հետազոտմանը, հանդես գալ բացման (ներածական) խոսքով, եզրափակիչ ելույթով և եզրափակիչ հայտարարությամբ.

25) սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկել վարույթի հանրային մասնակիցների, դատարանի վարութային ակտերը, այդ թվում՝ եզրափակիչ դատավարական ակտերը և եզրափակիչ դատական ակտերը, տեղեկացվել վարույթի այլ մասնակիցների կողմից բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի մասին.

26) հետ վերցնել իր ներկայացրած բողոքը.

27) առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն հաղորդած կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած վարույթի այլ մասնավոր մասնակիցների բողոքների վերաբերյալ.

28) դատական նիստում կարծիք հայտնել վարույթի այլ մասնավոր մասնակիցների միջնորդությունների և հայտարարությունների վերաբերյալ.

29) բողոքել վարույթի այլ մասնակիցների անօրինական գործողությունների դեմ.

30) առարկել դատական նիստը նախագահողի գործողությունների դեմ.

31) ստանալ վարույթի հանրային մասնակիցների անօրինական գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում:

2. Մեղադրյալն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ:

3. Մեղադրյալի կողմից իր իրավունքներն իրականացնելը կամ դրանց իրականացումից ձեռնպահ մնալը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա կամ նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք:

4. Հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա ձերբակալված անձն օգտվում է սույն օրենսգրքով մեղադրյալի համար սահմանված բոլոր իրավունքներից և երաշխիքներից:

5. Մեղադրյալը պարտավոր է՝

1) ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) լինելով ձերբակալված կամ կալանավորված՝ վարույթի հանրային մասնակցի պահանջով ենթարկվել անձնական խուզարկության.

3) քննիչի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման, մատնադրոշմման, լուսանկարվել և հնարավորություն ընձեռել վերցնելու համեմատական հետազոտության համար սույն օրենսգրքով նախատեսված նմուշներ.

4) քննիչի պահանջով ենթարկվել քննման և փորձաքննության.

5) չխոչընդոտել քրեական վարույթին, այդ թվում՝ ապօրինի չմիջամտել ապացուցման գործընթացին.

6) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատավորի օրինական կարգադրություններին.

7) մինչև ընդմիջում հայտարարելն առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը, դատարանի դահլիճում պահպանել կարգուկանոն:

6. Անչափահաս կամ անգործունակ մեղադրյալի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը, բացառությամբ նրա անձից անբաժանելի իրավունքների:

Հոդված 38. Մեղադրյալի օրինական ներկայացուցիչը

1. Անձն իրավունք ունի ճանաչվելու իր անչափահաս կամ անգործունակ՝ որպես մեղադրյալ ներգրավված երեխայի, որդեգրվողի, խնամարկյալի կամ հոգաբարձյալի օրինական ներկայացուցիչ: Անձը մեղադրյալի օրինական ներկայացուցիչ է ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

2. Վարույթն իրականացնող մարմինը որոշմամբ թույլատրում է վարույթին որպես մեղադրյալի օրինական ներկայացուցիչ մասնակցելու նրա ծնողներից, որդեգրողներից, խնամակալներից կամ հոգաբարձուներից, որպես կանոն, միայն մեկին: Ընդ որում, որպես օրինական ներկայացուցիչ պետք է թույլատրվի մասնակցել այն ծնողին, որդեգրողին, խնամակալին կամ հոգաբարձուին, ում թեկնածությունն իր համաձայնության առկայության դեպքում պաշտպանում են մյուսները:

3. Մեղադրյալի օրինական ներկայացուցիչն ունի մեղադրյալի բոլոր իրավունքները և պարտականությունները, բացառությամբ մեղադրյալի անձից անբաժանելի իրավունքների և պարտականությունների:

4. Մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրավունք չունի կատարելու մեղադրյալի շահերին հակասող որևէ գործողություն:

5. Մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ:

6. Մեղադրյալի օրինական ներկայացուցիչը կարող է կանչվել և հարցաքննվել որպես վկա:

Հոդված 39. Պաշտպանը

1. Միևնույն վարույթի շրջանակներում նույն պաշտպանը կարող է ներկայացնել միայն մեկ մեղադրյալի, բացառությամբ այն դեպքերի, երբ նման արգելքը ողջամտորեն կարող է վտանգել արդարադատության շահը և երկու կամ ավելի մեղադրյալներ կամավոր, գիտակցաբար և գրավոր հրաժարվել են առանձին պաշտպաններով ներկայացվելու հնարավորությունից:

2. Պաշտպանության ստանձնումը հաստատելու համար պաշտպանը վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է իր անձը հաստատող և փաստաբան լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ սույն օրենսգրքով պաշտպան հրավիրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ վավերացված փաստաթուղթը կամ պաշտպան նշանակելու մասին օրենքով լիազորված մարմնի որոշումը:

3. Նույն մեղադրյալը կարող է ունենալ մեկից ավելի պաշտպաններ: Դատավարական գործողությունը, որին պաշտպանի մասնակցությունն անհրաժեշտ է, չի կարող անօրինական ճանաչվել, եթե համապատասխան մեղադրյալի ոչ բոլոր պաշտպաններն են մասնակցել տվյալ գործողությանը:

4. Այլ երկրների փաստաբանները կարող են հանդես գալ որպես պաշտպան ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով:

5. Պաշտպանը դադարում է որպես այդպիսին մասնակցել քրեական վարույթին, եթե՝

1) ձերբակալված անձը, մեղադրյալը կամ նրա օրինական ներկայացուցիչը դադարեցրել են հրավիրված պաշտպանի լիազորությունները.

2) քրեական վարույթն իրականացնող մարմինը, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով, ընդունել է մեղադրյալի հրաժարումը պաշտպանից.

3) քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանին ազատել է հետագա վարույթին մասնակցելուց՝ հաշվի առնելով քրեական վարույթին նրա մասնակցությունը բացառող հանգամանքների հայտնաբերումը:

Հոդված 40. Քրեական վարույթին պաշտպանի մասնակցության հիմքերը

1. Փաստաբանը քրեական վարույթին որպես պաշտպան մասնակցում է՝

1) մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի հրավերով, ինչպես նաև այլ անձանց հրավերով՝ մեղադրյալի հետագա գրավոր համաձայնությամբ.

2) ՀՀ փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:

2. Վարույթն իրականացնող մարմինը ՀՀ փաստաբանների պալատից պահանջում է նշանակել պաշտպան, եթե՝

1) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում պաշտպանի մասնակցությունը վարույթին պարտադիր է և մեղադրյալը պաշտպան չունի.

2) մեղադրյալը չունի բավարար միջոցներ պաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում պաշտպանի նշանակում նախաձեռնելուց առաջ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է մեղադրյալին առաջարկել իր ընտրությամբ հրավիրել պաշտպան:

4. Վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որպես պաշտպան հրավիրելու համար երաշխավորել որևէ փաստաբանի:

Հոդված 41. Պաշտպանի պարտադիր մասնակցությունը

1. Քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է անձի ձերբակալման կամ նրան մեղադրանք ներկայացնելու պահից, քանի դեռ մեղադրյալը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով չի հրաժարվել պաշտպանից:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

1) մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն պաշտպանվել հոգեկան կամ ֆիզիկական ոչ լիարժեքության, ինչպես նաև բացահայտ մտավոր թերզարգացածության հետևանքով.

2) մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում հայերենին.

3) մեղսագրվող արարքը կատարելու պահին մեղադրյալն անչափահաս է.

4) մեղադրյալը զինծառայող է.

5) մեղադրյալը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անգործունակ.

6) քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարում անմեղսունակության վիճակում.

7) մեղադրյալը մեղադրվում է առանձնապես ծանր հանցանք կատարելու համար.

8) մեղադրյալների շահերի միջև կան հակասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի.

9) մեղադրյալը միջնորդել է կիրառել համաձայնեցման կամ համագործակցության վարույթ.

10) մասնավոր մեղադրանքի վարույթով տուժողին ներկայացնում է փաստաբանը.

11) մեղադրյալի նկատմամբ կիրառվել է սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դատավարական սանկցիա.

12) քրեական վարույթն իրականացնող մարմինը սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով պաշտպանին հեռացրել է վարույթից.

13) դա է պահանջում արդարադատության շահը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում, երբ մեղադրյալը պաշտպան չունի, քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել պաշտպանի մասնակցությունը վարույթին՝ այն պարտադիր դարձնող համապատասխան հիմքն ի հայտ գալուց անմիջապես հետո:

Հոդված 42. Պաշտպանից հրաժարվելը

1. Պաշտպանից հրաժարվելը մեղադրյալի հայտարարությունն է՝ իր պաշտպանությունն առանց որևէ պաշտպանի օգնության (անձամբ) իրականացնելու վերաբերյալ: Պաշտպանից հրաժարվելու մասին մեղադրյալի հայտարարությունը արտացոլվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կազմված արձանագրության մեջ:

2. Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալն այդ մասին հայտարարել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և վարույթին մասնակցող պաշտպանի ներկայությամբ: Մեղադրյալը պարտավոր չէ բացահայտել պաշտպանից հրաժարվելու պատճառները: Այն դեպքում, երբ պաշտպանից հրաժարվելը թելադրված է մեղադրյալի՝ պաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար բավարար միջոցների բացակայությամբ, քրեական վարույթն իրականացնող մարմինը, սույն օրենսգրքով նախատեսված կարգով անհապաղ պահանջում է պաշտպան նշանակել պետական միջոցների հաշվին:

3. Պաշտպանից հրաժարված մեղադրյալն իրավունք ունի ցանկացած պահի պահանջելու քրեական վարույթին ներգրավել նոր պաշտպան: Նոր պաշտպան ունենալու մեղադրյալի կամարտահայտությունը պարտադիր է վարույթն իրականացնող մարմնի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրյալը ակնհայտորեն չարաշահում է իր այդ իրավունքը: Այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինն իր որոշմամբ մերժում է նոր պաշտպանի ներգրավումը: Նոր պաշտպանի մասնակցությունը հիմք չէ վարույթը վերսկսելու համար:

Հոդված 43. Պաշտպանի իրավունքները և պարտականությունները

1. Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պաշտպանելու նրա իրավունքները և իրավաչափ շահերը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) իմանալ՝ ինչում է կասկածվում պաշտպանյալը կամ ծանոթանալ նրան ներկայացված մեղադրանքին, մասնակցել նրա հարցաքննությանը.

2) սույն օրենսգրքով սահմանված կարգով առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ.

3) մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողության, մասնակցել իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին, քննիչի առաջարկով մասնակցել կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին.

4) մեղադրյալին բացատրել նրա իրավունքները և քննչական կամ այլ դատավարական գործողություն իրականացնող անձի ուշադրությունը հրավիրել նրա կողմից թույլ տրված օրենքի խախտման վրա.

5) օրենքով սահմանված կարգով ձեռք բերել ապացույցներ, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար.

6) հարցման ենթարկել ֆիզիկական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից, ինչպես նաև ոչ պետական մարմիններից ու կազմակերպություններից պահանջել փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, եթե դրանք չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք: Վերջիններս պարտավոր են սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկությունները, փաստաթղթերը կամ դրանց պատճենները.

7) մեղադրյալի պաշտպանության իրականացման հետ կապված հատուկ գիտելիքներ պահանջող հարցերով ստանալ փորձագետի կարծիքը.

8) հայտնել բացարկներ.

9) հարուցել միջնորդություններ.

10) առարկել վարույթի հանրային մասնակիցների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

11) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց ինքը կամ իր պաշտպանյալը մասնակցել է, դիտողություններ ներկայացնել դրանցում արված գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը, ինչպես նաև դատարանի նիստին մասնակցելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

12) իր խնդրանքով ստանալ իր կամ մեղադրյալի մասնակցությամբ կատարված քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրությունների պատճենները, ինչպես նաև այն դատավարական փաստաթղթերի պատճենները, որոնք իր պաշտպանյալը սույն օրենսգրքով ստանալու իրավունք ունի.

13) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ վարույթի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած տեղեկություն.

14) մասնակցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերին, ապացույցների հետազոտմանը, հանդես գալ բացման (ներածական) խոսքով և եզրափակիչ ելույթով.

15) բողոքարկել վարույթի հանրային մասնակիցների և դատարանի վարութային ակտերը, այդ թվում՝ եզրափակիչ դատավարական ակտերը և եզրափակիչ դատական ակտերը.

16) հետ վերցնել իր ներկայացրած ցանկացած բողոք, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի.

17) տուժողի հետ մեղադրյալի հաշտվելու դեպքում պաշտպանյալի հանձնարարությամբ հանդես գալ նրա անունից.

18) առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն հաղորդած կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

19) դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների և հայտարարությունների կապակցությամբ.

20) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

21) առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ.

22) պաշտպանյալի հաշվին, իսկ մեղադրյալին պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ստանալ վարձատրություն.

23) իր պաշտպանյալին ցույց տալ իրավաբանական օգնություն օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

24) իրականացնել սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2. Պաշտպանն իրավունք չունի՝

1) կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն.

2) հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ ընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը դրա կատարման մեջ.

3) հրապարակել այն տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել պաշտպանությունն իրականացնելու ընթացքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

4) ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

5) խոչընդոտել այլ պաշտպան հրավիրելուն կամ քրեական վարույթին վերջինիս մասնակցելուն.

6) քրեական վարույթին մասնակցելու իր լիազորությունները վերավստահել այլ անձի:

3. Պաշտպանն իրավունք չունի առանց պաշտպանյալի հանձնարարության՝

1) հայտարարել հանցանքի կատարման մեջ նրա մեղավորության մասին.

2) հայտարարել տուժողի հետ պաշտպանյալի հաշտվելու մասին.

3) ընդունել մեղադրյալի դեմ ներկայացված քրեական կամ գույքային հայցը.

4) հետ վերցնել պաշտպանյալի ներկայացրած բողոքը:

4.Պաշտպանը պարտավոր է՝

1) պաշտպանությունը ստանձնելուց անմիջապես հետո այդ մասին տեղյակ պահել քրեական վարույթն իրականացնող մարմնին.

2) մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

3) ենթարկվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

4) քննչական և այլ դատավարական գործողության, ինչպես նաև դատական նիստի ընթացքում դրսևորել պատշաճ վարքագիծ.

5) վարույթին մասնակցելուց իրեն ազատելու խնդրանքով դիմել քրեական վարույթն իրականացնող մարմնին, եթե դա չանելն անխուսափելիորեն կվնասի պաշտպանյալի իրավունքներին և շահերին:

Հոդված 44. Տուժողի իրավունքները և պարտականությունները

1. Տուժող ճանաչելու մասին որոշումը կայացնում է քննիչը կամ դատարանը:

2. Տուժողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) ծանոթանալ մեղադրյալին ներկայացված մեղադրանքին.

2) տալ ցուցմունք.

3) հրաժարվել ցուցմունք տալուց կամ նյութեր տրամադրելուց, եթե դրանք հետագայում կարող են օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի: Այն դեպքում, երբ տուժողը համաձայնում է տալ ցուցմունք, ապա նա նախազգուշացվում է, որ իր տված ցուցմունքը կարող է քրեական վարույթի ընթացքում օգտագործվել որպես ապացույց, այդ թվում նաև՝ դրանից հրաժարվելու դեպքում.

4) ներկայացնել փաստաթղթեր և առարկաներ քրեական գործին կցելու և հետազոտելու համար.

5) հայտնել բացարկներ.

6) հարուցել միջնորդություններ.

7) առարկել վարույթն իրականացնող մարմնի գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

8) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է, և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ.

9) պահանջել քննչական և այլ դատավարական գործողության արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն.

10) ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը, դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ.

11) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ քրեական վարույթի նյութերին, դրանից պատճեններ հանել և դուրս գրել ցանկացած տեղեկություն.

12) ժամանակին պատշաճ կերպով տեղեկացվել դատական նիստի տեղի և ժամանակի մասին.

13) մասնակցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների նիստերին, ապացույցների հետազոտմանը, հանդես գալ եզրափակիչ ելույթով.

14) անվճար ստանալ իր կարգավիճակին վերաբերող դատավարական ակտերի պատճենները.

15) իր միջնորդությամբ անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ ակտի պատճենը, ինչպես նաև եզրափակիչ դատական ակտի պատճենը.

16) բողոքարկել վարույթի հանրային մասնակիցների և դատարանի վարութային ակտերը, այդ թվում՝ եզրափակիչ դատավարական ակտը և եզրափակիչ դատական ակտը.

17) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հաշտվել մեղադրյալի հետ.

18) իրեն ենթադրաբար պատճառված նյութական վնասը հատուցելու նպատակով գույքային հայց ներկայացնել դատարան, մինչև ապացույցների հետազոտման փուլի ավարտը փոփոխել գույքային հայցը, ինչպես նաև մինչև գույքային հայցի լուծման համար առանձին սենյակ հեռանալը հրաժարվել գույքային հայցից.

19) օրենքով սահմանված կարգով ստանալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը.

20) ստանալ քրեական վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցումը.

21) հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով վերցված իրեն պատկանող գույքը, փաստաթղթերի բնօրինակները.

22) ունենալ լիազոր ներկայացուցիչ և դադարեցնել նրա լիազորությունները.

23) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում ազատվել իր ներկայացուցչի ծառայությունների դիմաց վճարելու պարտականությունից.

24) իր, ինչպես նաև իր ընտանիքի անդամների կամ մերձավոր ազգականների կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վտանգի առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել պաշտպանության հատուկ միջոցներ կիրառելու միջնորդություն.

25) հետ վերցնել իր կամ իր լիազոր ներկայացուցչի ներկայացրած ցանկացած բողոք:

3. Սույն օրենսգրքի 45-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված հիմքերով տուժող ճանաչված անձն ունի սույն հոդվածով նախատեսված բոլոր իրավունքները բացառությամբ՝ սույն հոդվածի 1-ին մասի 17-րդ, 19-րդ և 25-րդ կետերով նախատեսված իրավունքների:

4. Տուժողը պարտավոր է՝

1) ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) տալ ճշմարտացի ցուցմունք.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ներկայացնել իր մոտ եղած առարկաները, փաստաթղթերը.

4) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով համեմատական հետազոտման համար հանձնել նմուշ կամ ենթարկվել քննման, փորձաքննության.

5) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արտահիվանդանոցային փորձաքննության՝ ստուգելու համար քրեական վարույթի ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա մոտ այդպիսի ունակության առկայությունը.

6) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին.

7) դատարանի նիստում պահպանել կարգ ու կանոն:

5. Տուժողն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

6. Տուժողն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապատասխանում է այդ իրավունքների և պարտականությունների բնույթին: Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

7. Տուժող ճանաչված իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն իրականացնում է դրա ներկայացուցիչը:

8. Վարույթի ընթացքում ի հայտ եկած բավարար հիմքերի առկայության դեպքում քննիչը կամ դատարանը պատճառաբանված որոշմամբ վերացնում են տուժող ճանաչելու մասին որոշումը:

Հոդված 45. Մահացած տուժողի կամ տուժող ճանաչվելու ենթակա անձի փոխարեն տուժող ճանաչելը

1. Եթե տուժողը կամ տուժող ճանաչվելու ենթակա անձը մահացել է, ապա տուժող է ճանաչվում սույն օրենսգրքով նախատեսված ժամկետում վարույթն իրականացնող մարմնին նման միջնորդություն ներկայացրած մահացածի մերձավոր ազգականը:

2. Մահացած տուժողի կամ տուժող ճանաչվելու ենթակա անձի փոխարեն տուժող ճանաչվում է նրա մերձավոր ազգականներից, որպես կանոն, միայն մեկը: Ընդ որում, տուժող պետք է ճանաչվի այն մերձավոր ազգականը, ում թեկնածությունն իր համաձայնության առկայության դեպքում պաշտպանում են մյուսները:

3. Անձն իրավունք ունի տուժող ճանաչվել, եթե իր մերձավոր ազգական տուժողը կամ տուժող ճանաչվելու ենթակա անձը մահացել է:

4. Մահացածի մերձավոր ազգականների բացակայության կամ վերջիններիս կողմից համապատասխան միջնորդություն չներկայացնելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը տուժող է ճանաչում մահացածի ազգականներից որևէ մեկին՝ վերջինիս համաձայնությամբ:

Հոդված 46. Տուժողը՝ որպես մասնավոր մեղադրող

1. Մասնավոր մեղադրանքի վարույթում անձը ճանաչվում է տուժող, եթե նրա ներկայացրած քրեական հայցի հիման վրա բավարար հիմքեր կան ենթադրելու, որ սույն օրենսգրքի 491-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներով նրան վնաս է պատճառվել կամ կարող էր պատճառվել՝ ենթադրյալ հանցագործությունն ավարտին հասցնելու դեպքում:

Մասնավոր մեղադրանքի վարույթում անձը տուժող է ճանաչվում քրեական վարույթ սկսելու մասին դատարանի որոշմամբ:

2. Մասնավոր մեղադրող հանդիսացող տուժողն ունի նաև սույն օրենսգրքի 60-րդ գլխով նախատեսված լրացուցիչ իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 47. Տուժողի օրինական ներկայացուցիչը

1. Անձն իրավունք ունի ճանաչվելու իր անչափահաս կամ անգործունակ՝ տուժող ճանաչված երեխայի, որդեգրվողի, խնամարկյալի կամ հոգաբարձյալի օրինական ներկայացուցիչ: Տուժող ճանաչված իրավաբանական անձի ղեկավարն իրավունք ունի ճանաչվելու տուժողի օրինական ներկայացուցիչ: Անձը տուժողի օրինական ներկայացուցիչ է ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ թույլատրվում է վարույթին որպես տուժողի օրինական ներկայացուցիչ մասնակցելու նրա ծնողներից, որդեգրողներից, խնամակալներից կամ հոգաբարձուներից, որպես կանոն, միայն մեկին: Ընդ որում, որպես օրինական ներկայացուցիչ պետք է թույլատրվի մասնակցել այն ծնողին, որդեգրողին, խնամակալին կամ հոգաբարձուին, ում թեկնածությունն իր համաձայնության առկայության դեպքում պաշտպանում են մյուսները:

3. Տուժողի օրինական ներկայացուցիչն ունի տուժողի բոլոր իրավունքները և պարտականությունները, բացառությամբ տուժողի անձից անբաժանելի իրավունքների և պարտականությունների:

4. Տուժողի օրինական ներկայացուցիչն իրավունք չունի կատարելու տուժողի շահերին հակասող որևէ գործողություն:

5. Տուժողի օրինական ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ:

6. Տուժողի օրինական ներկայացուցիչը կարող է կանչվել և հարցաքննվել որպես վկա:

Հոդված 48. Տուժողի լիազոր ներկայացուցիչը

1. Անձը տուժողի լիազոր ներկայացուցիչ է ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

2. Տուժողը կարող է ունենալ մի քանի լիազոր ներկայացուցիչ:

Վարույթն իրականացնող մարմինը կարող է սահմանափակել դատավարական գործողությանը կամ դատական նիստին միաժամանակ մասնակցող լիազոր ներկայացուցիչների թիվը, եթե դա չի խաթարում կողմերի իրավահավասարությունը:

3. Ընդհանուր լիազորությամբ տուժողի ներկայացուցիչն ունի տուժողի բոլոր իրավունքները և պարտականությունները, բացառությամբ տուժողի անձից անբաժանելի իրավունքների և պարտականությունների:

4. Տուժողի լիազոր ներկայացուցիչն իրավունք չունի կատարելու տուժողի շահերին հակասող որևէ գործողություն: Տուժողի ներկայացուցիչը, առանց հատուկ լիազորության, իրավունք չունի նաև տուժողի անունից՝

1) հետ վերցնել տուժողի նկատմամբ քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելու վերաբերյալ քրեական հայցը.

2) հաշտվել մեղադրյալի հետ.

3) հրաժարվել ներկայացված գույքային հայցից կամ փոփոխել դրա չափը.

4) հետ վերցնել ի շահ տուժողի ներկայացված բողոքը:

5. Տուժողի լիազոր ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ:

Հոդված 49. Գույքային պատասխանողի իրավունքները և պարտականությունները

1. Գույքային պատասխանող ճանաչելու մասին որոշումն ընդունում է դատարանը:

2. Գույքային պատասխանողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) ծանոթանալ մեղադրյալին ներկայացված մեղադրանքին.

2) ներկայացնել պատասխան իր դեմ տրված գույքային հայցի վերաբերյալ.

3) ներկայացնել ապացույցներ՝ քրեական վարույթին կցելու և հետազոտելու համար.

4) հայտնել բացարկներ.

5) հարուցել միջնորդություններ.

6) ներկայացնել բացատրություններ.

7) գույքային հայցի մասով առարկել դատարանի գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել դատական նիստի կամ դատավարական գործողության արձանագրության մեջ, ծանոթանալ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է, դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում

պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

8) դատարանում ծանոթանալ վարույթի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած տեղեկություն.

9) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին.

10) դատական նիստում հանդես գալ եզրափակիչ ելույթով.

11) իր խնդրանքով անվճար ստանալ իր դեմ ներկայացրած գույքային հայցի, մեղադրական եզրակացության, մեղադրական ակտի կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև եզրափակիչ դատական ակտի պատճենը.

12) իր դեմ ներկայացված հայցի մասով բողոքարկել դատարանի գործողությունները և որոշումները.

13) հետ վերցնել իր կամ իր ներկայացուցչի ներկայացրած բողոքը.

14) իր դեմ ներկայացված հայցի մասով առարկություններ ներկայացնել եզրափակիչ դատական ակտի դեմ բերված դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ, դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների և հայտարարությունների վերաբերյալ.

15) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

16) առարկել նախագահողի գործողությունների դեմ.

17) ունենալ լիազոր ներկայացուցիչ և դադարեցնել նրա լիազորությունները.

18) մինչև դատական ակտ կայացնելու համար դատարանի առանձին սենյակ հեռանալը ընդունել հայցը.

19) ստանալ քրեական վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում.

20) հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով իրենից վերցված գույքը, ինչպես նաև իրեն պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները:

3. Գույքային պատասխանողը պարտավոր է՝

1) ներկայանալ դատարանի կանչով.

2) դատարանի պահանջով ներկայացնել իր մոտ եղած առարկաները, փաստաթղթերը, ինչպես նաև նմուշներ՝ համեմատական հետազոտման համար.

3) ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն:

4. Գույքային պատասխանողն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

5. Գույքային պատասխանողն իրեն վերապահված իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապատասխանում է համապատասխան իրավունքների և պարտականությունների բնույթին:

Հոդված 50. Գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչը

1. Անձը գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչ է ճանաչվում դատարանի որոշմամբ:

2. Գույքային պատասխանողը կարող է ունենալ մի քանի լիազոր ներկայացուցիչ:

Դատարանը կարող է սահմանափակել դատավարական գործողությանը կամ դատական նիստին միաժամանակ մասնակցող լիազոր ներկայացուցիչների թիվը, եթե դա չի խաթարում կողմերի իրավահավասարությունը:

3. Ընդհանուր լիազորությամբ գույքային պատասխանողի ներկայացուցիչն ունի գույքային պատասխանողի բոլոր իրավունքները և պարտականությունները, բացառությամբ գույքային պատասխանողի անձից անբաժանելի իրավունքների և պարտականությունների:

4. Գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչն իրավունք չունի կատարելու գույքային պատասխանողի շահերին հակասող որևէ գործողություն: Գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչը, առանց հատուկ լիազորության, իրավունք չունի նաև գույքային պատասխանողի անունից՝

1) լրիվ կամ մասնակի ընդունել գույքային հայցը.

2) հաշտություն կնքել տուժողի կամ նրա ներկայացուցչի հետ.

3) հետ վերցնել ի շահ գույքային պատասխանողի ներկայացված բողոքը:

5. Գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ:

ԳԼՈՒԽ 6
ՎԱՐՈՒՅԹԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՆՁԻՆՔ

Հոդված 51. Վկան

1. Վկան ցուցմունք տալու նպատակով կողմի կամ վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել քրեական վարույթով պարզաբանման ենթակա որևէ հանգամանք:

Անձը որպես վկա կարող է հարցաքննվել սույն հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև սուտ ցուցմունք տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին գրավոր տեղեկացվելուց հետո:

2. Որպես վկա չեն կարող հարցաքննվել և գործի համար կարևորություն ներկայացնող առարկաներ, փաստաթղթեր և այլ նյութեր հանձնել՝

1) անձինք, ովքեր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները.

2) փաստաբանները՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրանց կարող են հայտնի լինել՝ կապված իրավաբանական օգնության դիմելու կամ նման օգնություն ցույց տալու հետ.

3) անձինք, որոնց տվյալ քրեական վարույթին վերաբերող տեղեկությունները հայտնի են դարձել որպես պաշտպան, տուժողի, գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչ, վկայի փաստաբան մասնակցելու կապակցությամբ.

4) դատավորը, նախկին դատավորը, դատական նիստի քարտուղարը և դատախազը՝ կապված այն վարույթի հետ, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները, բացառությամբ տվյալ վարույթի ընթացքում

թույլ տրված սխալների և չարաշահումների քննության, նոր հանգամանքներով տվյալ վարույթի նորոգման կամ կորցրած գործի վերականգնման վարույթի:

3. Որպես վկա հարցաքննվելու և վարույթի համար կարևորություն ներկայացնող առարկաներ, փաստաթղթեր և այլ նյութեր հանձնելու պարտականությունից ազատվում են՝

1) ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը՝ խոստովանանքից իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին.

2) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին:

Հոդված 52. Վկայի իրավունքները և պարտականությունները

1. Վկան իրավունք ունի՝

1) իմանալ, թե որ վարույթով է կանչվում.

2) վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ.

3) չհայտնել այնպիսի տեղեկություններ կամ չտրամադրել այնպիսի նյութեր, որոնք հետագայում կարող են օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, ամուսնու կամ մերձավոր ազգականի.

4) ցուցմունքներ տալիս վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ օգտվել փաստաթղթերից և իր գրավոր նշումներից.

5) ցուցմունքներ տալիս կազմել պլաններ, սխեմաներ և գծանկարներ.

6) մինչդատական վարույթի ընթացքում անձամբ գրավոր շարադրել իր ցուցմունքները.

7) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և իր ցուցմունքների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.

8) ստանալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում.

9) հետ ստանալ վարույթն իրականացնող մարմնի կողմից իրենից վերցված առարկաները, փաստաթղթերը և այլ նյութերը:

2. Վկան պարտավոր է՝

1) ցուցմունքներ տալու, դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով ծանուցագրում նշված օրը և ժամին.

2) տալ ճշմարտացի ցուցմունքներ՝ հայտնել իրեն ամբողջ հայտնի դարձածը և պատասխանել առաջադրված հարցերին, ստորագրությամբ հաստատել դատավարական գործողության արձանագրության մեջ իր տված ցուցմունքների արձանագրման ճշտությունը.

3) վարույթն իրականացնող մարմնի պահանջով տրամադրել իր մոտ եղած առարկաները, փաստաթղթերը և այլ նյութերը.

4) վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման, եթե դա անհրաժեշտ է իր տված ցուցմունքը ստուգելու համար.

5) վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արտահիվանդանոցային փորձաքննության՝ ստուգելու համար քրեական վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա այդպիսի ունակությունը.

6) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի կարգադրություններին.

7) չմեկնել այլ վայր՝ առանց վարույթն իրականացնող մարմնին իր գտնվելու նոր վայրի մասին նախապես տեղեկացնելու.

8) առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը կամ դատարանի շենքը.

9) դատական նիստի ժամանակ պահպանել կարգուկանոն:

3. Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 53. Փորձագետը

1. Փորձագետը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, ով վարույթն իրականացնող մարմնի կամ վարույթի մասնավոր մասնակցի

նախաձեռնությամբ, հատուկ գիտելիքների օգտագործմամբ, օժանդակում է վարույթին՝

1) հետազոտություն իրականացնելու և դրա հիման վրա եզրակացություն տալու միջոցով.

2) հետազոտության իրականացմամբ կամ առանց դրա գրավոր կարծիք տալու միջոցով.

3) քննչական ու գաղտնի քննչական, ինչպես նաև այլ դատավարական գործողությունների կատարմանն աջակցելու միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված օժանդակության համար փորձագետը ներգրավվում է միայն վարույթի մասնավոր մասնակցի կողմից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված օժանդակության համար՝ միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից:

3. Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների:

Քրեական վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում:

Հոդված 54. Փորձագետի իրավունքները և պարտականությունները

1. Փորձագետն իրավունք ունի՝

1) վարույթն իրականացնող մարմնից եզրակացություն տալու համար պահանջել անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր՝ համեմատական հետազոտման համար.

2) վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալ եզրակացություն կամ կարծիք տալու համար անհրաժեշտ նյութերին և գործի նյութերից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ, իր պարտականությունները պատշաճ կատարելու համար հարցեր տալ մեղադրյալին, տուժողին, վկաներին, ծանոթանալ փորձաքննության առարկային վերաբերող նյութերին, դրանցից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ.

3) մասնակցել դատավարական գործողություններին, որքանով դրանք վերաբերում են փորձաքննության առարկային և անհրաժեշտ են եզրակացություն տալու համար.

4) դատարանի և դատավարության մասնակիցների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքների վրա, որոնք կապված են փորձաքննության առարկայի և փորձագետին առաջադրվող հարցերի ձևակերպման հետ.

5) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և արձանագրության մեջ իր գործողությունների և ցուցմունքների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.

6) քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ներգրավված լինելու դեպքում ստանալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում:

2. Փորձագետը պարտավոր է՝

1) վարույթն իրականացնող մարմնին և իրեն հրավիրած անձին ներկայացնել իր հատուկ որակավորումը հաստատող փաստաթղթերը.

2) իրեն առաջադրված հարցերով տալ հիմնավորված և օբյեկտիվ եզրակացություն կամ կարծիք, դրանց պարզաբանման համար տալ ցուցմունքներ.

3) հրաժարվել փորձաքննություն կատարելուց, եթե առաջադրված հարցերը դուրս են գալիս իր հատուկ գիտելիքների շրջանակներից, կամ ներկայացված նյութերը բավարար չեն այդ հարցերին պատասխանելու համար՝ այդ մասին կազմելով արձանագրություն.

4) եզրակացություն կամ կարծիք տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և հետազոտության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով.

5) իրեն ներգրաված մարմնի կամ անձի պահանջով ներկայացնել հետազոտության կատարման ծախսերի նախահաշիվ և կատարած ծախսերի մասին հաշվետվություն.

6) ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով՝ դատավարության մասնակիցների հարցերին պատասխանելու, ինչպես նաև եզրակացության կամ կարծիքի բովանդակությունը պարզաբանելու համար.

7) վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ժամանակ տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և վարույթին ներգրավված անձանց հետ հարաբերությունների մասին.

8) դատավարական գործողությանը մասնակցելիս չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.

9) ենթարկվել դատարանի և վարույթի հանրային մասնակցի կարգադրություններին.

10) դատարանի նիստի ժամանակ պահպանել կարգուկանոն.

11) առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստի ժամանակ իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

3. Փորձագետի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4. Փորձագետն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 55. Թարգմանիչը

1. Թարգմանիչը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, ում քրեական վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն կատարելու համար: Թարգմանիչ է նաև համրի նշանները հասկացող և խուլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը:

2. Թարգմանիչը պետք է ազատորեն տիրապետի քրեական վարույթի լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը:

3. Վարույթի այլ մասնակիցներն իրավունք չունեն թարգմանիչ լինելու:

Հոդված 56. Թարգմանչի իրավունքները և պարտականությունները

1. Թարգմանիչն իրավունք ունի՝

1) թարգմանությունը ճշգրտելու համար հարցեր տալ թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց.

2) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.

3) ստանալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում:

2. Թարգմանիչը պարտավոր է՝

1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանչի՝ իր որակավորումը հաստատող փաստաթղթերը.

3) դատարանի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական վարույթին ներգրավված անձանց հետ հարաբերությունների մասին.

4) թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել դատավարական գործողության կատարման վայրում, դատական նիստերի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.

5) թարգմանել լրիվ, ճշտորեն և ժամանակին.

6) ենթարկվել դատական նիստը նախագահողի, դատավարության հանրային մասնակցի կարգադրություններին, եթե դրանք չեն վերաբերում թարգմանության բովանդակությանը.

7) դատական նիստի ընթացքում պահպանել կարգուկանոն.

8) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված դատավարական գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը.

9) առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

3. Թարգմանչի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4. Թարգմանիչն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 57. Ընթերական

1. Ընթերական վարույթի առարկայով չշահագրգռված՝ Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացին է, ում վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է մասնակցելու քննչական գործողության կատարմանը՝ հաստատելու համար դրա կատարման փաստը, բովանդակությունը, ընթացքը և արդյունքները: Անձը կարող է որպես ընթերակա ներգրավվել միայն իր նախնական գրավոր համաձայնությամբ:

Ընթերական պետք է ունակ լինի լրիվ և ճշտորեն ընկալելու իր ներկայությամբ կատարվող գործողությունները:

2. Ընթերական իրավունք ունի՝

1) սկզբից մինչև վերջ մասնակցել համապատասխան քննչական գործողության կատարմանը.

2) ծանոթանալ համապատասխան քննչական գործողության արձանագրությանը.

3) քննչական գործողության կատարման ընթացքում, ինչպես նաև արձանագրությանը ծանոթանալիս անել դիտողություններ, որոնք մտցվում են քննչական գործողության արձանագրության մեջ.

4) ստանալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում:

3. Ընթերական պարտավոր է՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնի և քննչական գործողություն կատարող անձի պահանջով տեղեկություններ հայտնել համապատասխան քրեական վարույթին ներգրավված անձանց հետ իր հարաբերությունների մասին.

2) սկզբից մինչև վերջ մասնակցել համապատասխան քննչական գործողության կատարմանը.

3) ենթարկվել քննչական գործողություն կատարող անձի կարգադրություններին.

4) չլքել համապատասխան քննչական գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության.

5) ստորագրել համապատասխան քննչական գործողության արձանագրությունը՝ վերջինիս մասին դիտողություններ անելով կամ առանց դրանց.

6) առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական գործողության ժամանակ իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

4. Ընթերակայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

5. Ընթերական ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 58. Դատական նիստի քարտուղարը

1. Դատական նիստի քարտուղարը վարույթի առարկայով չշահագրգռված դատական ծառայող է, որը վարում է դատական նիստի արձանագրությունը:

2. Դատական նիստի քարտուղարը պարտավոր է՝

1) դատարանի կամ կողմի պահանջով տեղեկություններ հայտնել համապատասխան քրեական վարույթին ներգրավված անձանց հետ իր հարաբերությունների մասին.

2) արձանագրության մեջ լրիվ և ճշտորեն շարադրել դատարանի գործողությունները և որոշումները, դատական նիստի ընթացքում արված միջնորդությունները, առարկությունները, տրված ցուցմունքները, դատական նիստին մասնակցող բոլոր անձանց բացատրությունները, ինչպես նաև դատական նիստի արձանագրության մեջ արտացոլման ենթակա այլ հանգամանքներ.

3) սույն օրենսգրքով նախատեսված ժամկետում պատրաստել դատական նիստի արձանագրությունը.

4) ենթարկվել նախագահողի կարգադրություններին.

5) չհրապարակել դռնփակ դատական նիստի տվյալները:

3. Դատական նիստի քարտուղարը պատասխանատվություն է կրում դատական նիստի արձանագրության լրիվության և ճշտության համար: Արձանագրությունը կազմելիս դատական նիստի քարտուղարը կաշկանդված չէ ոչ ոքի ցուցումներով՝ կապված արձանագրության մեջ ընդգրկվող գրառումների բովանդակության հետ:

4. Դատական նիստի քարտուղարի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

5. Դատական նիստի քարտուղարն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

ԳԼՈՒԽ 7

ՎԱՐՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Հոդված 59. Բացարկը, ինքնաբացարկը և քրեական վարույթից հեռացնելու մասին միջնորդությունը

1. Բացարկը, ինքնաբացարկը և քրեական վարույթից հեռացնելու մասին միջնորդությունը ներկայացվում են քրեական վարույթին համապատասխան անձանց մասնակցությունը բացառող հանգամանքների հիման վրա:

2. Քրեական վարույթին ներգրավված անձինք, ովքեր տեղեկություններ ունեն քրեական վարույթին իրենց մասնակցությունը բացառող հանգամանքների մասին, պարտավոր են դրանց մասին հայտնել քրեական վարույթի շահագրգիռ մասնակիցներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին, իսկ այն դեպքում, երբ նրանք կասկածներ ունեն իրենց մասնակցությամբ քրեական վարույթի ընթացքի բնականոն հնարավորության վերաբերյալ՝ հայտնել ինքնաբացարկ կամ ներկայացնել վարույթից իրենց հեռացնելու մասին միջնորդություն:

3. Վարույթի մասնավոր մասնակիցն ունի վարույթի հանրային մասնակցին ցանկացած պահի բացարկ հայտնելու իրավունք: Դատավորին բացարկ կարող է հայտնվել միայն մինչև դատաքննությունը սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ բացարկ հայտնողը կապացուցի, որ բացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունը սկսվելուց հետո և մինչ այդ չէր կարող հայտնի լինել:

4. Բացարկի կամ ինքնաբացարկի միջնորդությունը պետք է լինի պատճառաբանված: Բացարկի միջնորդությունը նույն հիմքով կարող է ներկայացվել միայն մեկ անգամ:

Հոդված 60. Բացարկի, ինքնաբացարկի և քրեական վարույթից հեռացնելու միջնորդության քննումը և լուծումը

1. Քրեական վարույթն իրականացնող մարմինը լիազորված է իր իրավասության սահմաններում լուծել բացարկների, ինքնաբացարկների և քրեական վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները, իսկ քրեական վարույթին համապատասխան անձի մասնակցությունը բացառող հանգամանքներ հայտնաբերելու դեպքում՝ սեփական նախաձեռնությամբ հեռացնելու այդ անձին քրեական վարույթից: Այլ անձանց հայտնված բացարկները լուծելու համար իրավասու անձին հայտնված բացարկը պետք է լուծվի առաջնահերթության կարգով:

2. Բացարկի, ինքնաբացարկի կամ քրեական վարույթից հեռացնելու մասին միջնորդության քննության արդյունքում կայացվում է պատճառաբանված որոշում, որում նշվում են միջնորդությունը բավարարելու կամ մերժելու հիմքերը: Այդ որոշման

պատճենն անհապաղ ուղարկվում է տվյալ քրեական վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին:

3. Դատավորին բացարկ հայտնելու միջնորդության հարցը լուծում է այն դատավորը, որին նման միջնորդություն է ներկայացվել: Դատավորների կոլեգիալ կազմով քրեական վարույթ իրականացնելիս, եթե բացարկի միջնորդություն է ներկայացվել մեկից ավելի դատավորների կամ դատարանի ամբողջ կազմին, ապա յուրաքանչյուր դատավոր լուծում է իր բացարկի հարցը:

4. Դատավորը, ով ինքնաբացարկ է հայտնել, պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, ինչը ենթակա է բառացի արձանագրման: Ինքնաբացարկ հայտնած դատավորը, եթե համարում է, որ ինքը կարող է տվյալ վարույթի ընթացքում լինել անկողմնակալ, կարող է դիմել կողմերին՝ առաջարկելով իր բացակայությամբ քննարկելու ինքնաբացարկի անտեսման հարցը: Եթե կողմերը դատավորի բացակայությամբ որոշում են կայացնում դատավորի ինքնաբացարկն անտեսելու մասին, ապա այդ որոշումն արձանագրելուց հետո դատավորն իրականացնում է դատական վարույթը:

5. Դատախազին հայտնված բացարկը լուծում է վերադաս դատախազը, իսկ դատական նիստին մասնակցելիս՝ համապատասխան դատարանը:

6. Քննիչին, քննչական մարմնի ղեկավարին, հետաքննիչին կամ հետաքննության մարմնի պետին հայտնված բացարկը լուծում է հսկող դատախազը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ վերադաս դատախազը:

7. Պաշտպանին, տուժողի կամ գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցչին, վկայի փաստաբանին, մեղադրյալի, տուժողի կամ վկայի օրինական ներկայացուցչին նախաքննության ընթացքում վարույթից հեռացնելու հարցը լուծում է քննիչը՝ դատախազի համաձայնությամբ, իսկ դատական վարույթներում՝ դատարանը:

8. Փորձագետին կամ թարգմանչին հայտնված բացարկի հարցը լուծում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

9. Ընթերակային հայտնված բացարկի հարցը լուծում է քննչական գործողություն կատարող անձը, իսկ դատական նիստի քարտուղարին հայտնված բացարկը՝ դատարանը:

10. Այն դեպքում, երբ վարույթին մի քանի անձանց միաժամանակյա մասնակցությունը բացառվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների պատճառով, քրեական վարույթից պետք է հեռացվեն այն անձինք, ովքեր մյուսներից ուշ են ձեռք բերել քրեական վարույթին ներգրավված անձի կարգավիճակ: Եթե ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերություններով կապված անձինք հայտնվել են դատարանի կազմում, քրեական վարույթից հեռացվելու ենթակա անձին ընտրում է նախագահողը:

Հոդված 61. Քրեական վարույթին դատավորի մասնակցությունը բացառող հանգամանքները

1. Դատավորը չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե՝

1) կանխակալ վերաբերմունք ունի վարույթի որևէ մասնակցի նկատմամբ.

2) որպես մասնավոր անձ, ականատես է եղել այն փաստերին, որոնք վիճարկվում են քրեական վարույթի ընթացքում.

3) նա կամ նրա ամուսինը կամ նրանց հետ ազգակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) քրեական վարույթին ներգրավված անձ կամ ներգրավված է եղել տվյալ վարույթին.

4) անձամբ նա կամ նրա ամուսինը կամ նրանց հետ ազգակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձինք տնտեսական շահ ունեն՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ.

5) առկա են այլ հանգամանքներ, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ վարույթի հետ կապված նրա անկողմնակալության մեջ:

2. Մինչդատական վարույթում, առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարաններում քրեական վարույթին մասնակցած դատավորը չի կարող մասնակցել տվյալ վարույթին հետագայում: Դատավորի կողմից նախնական դատալսումների անցկացումն առաջին ատյանի դատարանի կազմում տվյալ քրեական վարույթին նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ: Վճռաբեկ դատարանի դատավորի մասնակցությունը վարույթին չի բացառում վճռաբեկ դատարանում նույն վարույթին նրա հետագա մասնակցությունը:

3. Դատավորը պարտավոր չէ կայացնել բացարկն ընդունելու մասին որոշում, եթե դատական ակտ կայացնելու համար չի կարող ստեղծվել արդարադատության մեկ այլ մարմին, կամ քրեական վարույթի ընթացքի լուծման հրատապության առումով անգործությունը կարող է հանգեցնել ծանր հետևանքների:

Հոդված 62. Քրեական վարույթին հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքները

1. Վարույթի հանրային մասնակիցը չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե՝

1) առկա է սույն օրենսգրքի նախորդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքներից մեկը .

2) համապատասխան վարույթն իրականացնող դատավորի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ:

2. Դատախազի մասնակցությունը քրեական վարույթին, ինչպես նաև դատական նիստում նրա կողմից մեղադրանքը պաշտպանելը համապատասխան քրեական վարույթին որպես դատախազ նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ:

3. Համապատասխան քրեական վարույթին նախկինում որպես քննիչ, հետաքննիչ, ինչպես նաև դատախազ մասնակցելը տվյալ քրեական վարույթին նրանց հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ, բացի այն դեպքերից, երբ բացահայտվել են քրեական վարույթի ընթացքում նրանց կողմից թույլ տրված օրենքի էական խախտումներ:

Հոդված 63. Քրեական վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքները

1. Պաշտպանը, տուժողի կամ գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչը չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե՝

1) քրեական վարույթին մասնակցել է որպես դատավոր, հանրային մասնակից, մասնավոր մասնակից կամ վարույթին օժանդակող անձ, բացառությամբ վկայի փաստաբան հանդես գալու դեպքերի.

2) գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն պաշտոնատար անձի հետ, ով մասնակցել կամ պաշտպանի կամ լիազոր ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է քրեական վարույթին.

3) տվյալ վարույթի հետ կապված իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, որի շահերը հակասում են պաշտպանյալի կամ վստահորդի շահերին, ինչպես նաև այդ անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ.

4) երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր դատավարական գործողության կատարմանը:

5) օրենքով կամ դատական ակտով իրավունք չունի լինելու փաստաբան:

2. Մեղադրյալի պաշտպանը չի կարող քրեական վարույթի ընթացքում ներկայացնել այլ անձանց, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները տարածվում են նաև վկայի փաստաբանի վրա, բացառությամբ մեկից ավելի տուժողներ և վկաներ ներկայացնելու դեպքերի:

Հոդված 64. Քրեական վարույթին օրինական ներկայացուցչի մասնակցությունը բացառող հանգամանքները

Անչափահաս կամ անգործունակ մեղադրյալի, տուժողի կամ վկայի օրինական ներկայացուցիչը չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե՝

1) գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն դատավորի, վարույթի հանրային կամ մասնավոր մասնակցի հետ, ով մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է քրեական վարույթին.

2) քրեական վարույթին մասնակցել է որպես դատավոր, հանրային մասնակից, մասնավոր մասնակից կամ վարույթին օժանդակող անձ, բացառությամբ վկա հանդես գալու դեպքերի.

3) իր վարքագծով ակնհայտորեն վնասում է անչափահասի շահերին.

4) երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր դատավարական գործողության կատարմանը:

5) օրենքով կամ դատական ակտով իրավունք չունի լինելու օրինական ներկայացուցիչ:

Հոդված 65. Ընթերակային բացարկելը

1. Ընթերական չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե առկա է սույն օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը, ինչպես նաև, եթե նա օրենքով կամ դատական ակտով իրավունք չունի լինելու ընթերակա:

2. Ընթերական չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե գտնվում է քրեական վարույթն իրականացնող մարմնից անձնական կամ ծառայողական կախվածության մեջ:

3. Ընթերակայի նախկին մասնակցությունը քննչական գործողությանը տվյալ քրեական վարույթի այլ քննչական գործողությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանք է:

Հոդված 66. Փորձագետին, թարգմանչին կամ դատական նիստի քարտուղարին բացարկելը

1. Փորձագետը, թարգմանիչը կամ դատական նիստի քարտուղարը չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե՝

1) առկա է սույն օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը.

2) օրենքով կամ դատական ակտով իրավունք չունի լինելու փորձագետ.

3) հանրային կամ մասնավոր սուբկետի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական, ծառայողական կամ այլ կախվածության հարաբերությունների մեջ.

4) հայտնաբերվում է նրա անձեռնհասությունը:

2. Որպես փորձագետ, թարգմանիչ կամ դատական նիստի քարտուղար՝ անձի նախորդ մասնակցությունը քրեական վարույթին որպես այդպիսին քրեական վարույթին նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ: Որպես փորձագետ անձի հետագա մասնակցությունը քրեական վարույթին բացառվում է

այն դեպքում, երբ նրա եզրակացության վերաբերյալ ծագած կասկածի հիման վրա կատարվում է կրկնակի փորձաքննություն:

Հոդված 67. Քրեական վարույթին մասնակցելուց ազատելը

Դատական նիստի քարտուղարը, ընթերական կամ թարգմանիչը, որոնց մասնակցությունը քրեական վարույթին չի բացառվում որևէ հիմքով, կարող են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, իրենց խնդրանքով, ազատվել դրան մասնակցելուց՝

1) հաշվի առնելով իրենց մասնակցությանը խոչընդոտող հարգելի պատճառների առկայությունը.

2) սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

ԳԼՈՒԽ 8

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 68. Քրեական վարույթին մասնակցող անձանց պաշտպանությունը

1. Քրեական վարույթին մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

2. Քրեական վարույթին մասնակցող անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի (սույն գլխում այսուհետ՝ պաշտպանվող անձ) պաշտպանությունն իրականացնում է օրենքով համապատասխան լիազորություն ունեցող մարմինը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը, հայտնաբերելով, որ պաշտպանվող անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի

հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման:

4. Պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին պաշտպանվող անձի դիմումը քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին, և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը:

5. Եթե պաշտպանվող անձի դիմումի վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումը մերժելու մասին, ապա դիմում ներկայացրած անձն իրավունք ունի որոշման պատճենը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, այն բողոքարկելու սույն օրենսգրքով սահմանված կարգով:

6. Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումի մերժումն արգելք չէ պաշտպանվող անձի կողմից այդպիսի միջոցներ ձեռնարկելու մասին նոր դիմում ներկայացնելու համար, եթե նա ենթարկվել է սպառնալիքի կամ հարձակման կամ ի հայտ են եկել նախորդ դիմումում չնշված այլ հանգամանքներ:

7. Ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ղեկավարը համապատասխանաբար ձերբակալված, կալանավորված կամ ազատազրկման ձևով պատիժ կրող անձի պաշտպանության համար կարող է դիմել քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ իր նախաձեռնությամբ կամ այդ անձի դիմումի հիման վրա:

8. Սույն գլխում մերձավոր է համարվում այն անձը, որի պաշտպանության նպատակով քրեական վարույթին մասնակցող անձը գրավոր դիմում է ներկայացրել քրեական վարույթն իրականացնող մարմին:

Հոդված 69. Պաշտպանության միջոցները

1. Պաշտպանության միջոցներն են՝

1) այն անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում.

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը.

3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը.

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը.

5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը.

6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը.

7) մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրա կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը.

8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը.

9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը.

10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը.

11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատաքննություն անցկացնելը.

12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

2. Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի պաշտպանության միջոցներ:

3. Պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով պաշտպանության ենթակա անձի պաշտպանությունը կարող է իրականացվել նաև օտարերկրյա պետության տարածքում:

Հոդված 70. Քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին նախազգուշացնելը

1. Պաշտպանվող անձի կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի մասին վկայող փաստերի առկայության դեպքում, որոնք բավարար չեն այն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար, որից սպասվում է բռնության կամ այլ հանցանքի կատարման վտանգ, քրեական վարույթն իրականացնող մարմինը նրան պաշտոնապես նախազգուշացնում է քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին:

2. Քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին նախազգուշացումն իրականացվում է նախազգուշացվող անձից ստորագրություն վերցնելով:

Հոդված 71. Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը

Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրականացվում է՝

1) քրեական գործում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով:

Տեղեկությունները սահմանափակելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը և դրան առնչվող նյութերն առանձնացվում են քրեական գործի մյուս նյութերից և պահվում վարույթն իրականացնող մարմնի մոտ:

Հիմնական վարույթի նյութերից առանձնացված որոշմանը և դրան առնչվող նյութերին ծանոթանալը մատչելի է միայն վարույթն իրականացնող մարմնին, իսկ վարույթի մասնավոր մասնակիցները դրան կարող են ծանոթանալ միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, եթե դա անհրաժեշտ է մեղադրյալի

պաշտպանությունն իրականացնելու կամ քրեական վարույթի համար էական նշանակություն ունեցող որևէ հանգամանք պարզելու համար.

2) պաշտպանվող անձի մասին տեղեկություններ տրամադրելու վրա ժամանակավոր արգելք դնելով:

Հոդված 72. Անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը

1. Քրեական վարույթն իրականացնող մարմինը, համագործակցելով այլ իրավասու մարմինների հետ, իրականացնում է պաշտպանվող անձի անձնական պահպանությունը, նրա բնակարանի կամ այլ գույքի պահպանությունը:

2. Պաշտպանվող անձի բնակարանը կամ այլ գույքը սարքավորվում են հակահրդեհային կամ ազդանշանային տեխնիկական միջոցներով, փոխվում են նրա բնակարանի կամ անձնական այլ հեռախոսահամարները կամ նրան պատկանող տրանսպորտային միջոցի (միջոցների) պետական համարանիշերը:

Հոդված 73. Անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը

Պաշտպանվող անձի անձնական անվտանգության ապահովման համար օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրամադրվում են անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև նրան հայտնվում է սպասվող վտանգի մասին:

Հոդված 74. Վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային կամ այլ հաղորդումները գաղտնալսելը

Քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա կամ նրա գրավոր համաձայնությամբ և սույն օրենսգրքով սահմանված կարգով իրականացնում է նրա հեռախոսային կամ այլ հաղորդումների գաղտնալսում: Խոսակցությունների գաղտնալսման ընթացքում կարող է կիրառվել ձայնագրառում:

Հոդված 75. Պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը

Քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու համար անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի փոխադրման անվտանգությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Հոդված 76. Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելը

Քրեական վարույթն իրականացնող մարմինն օրենքով սահմանված կարգով մեղադրյալի նկատմամբ ընտրում է խափանման այնպիսի միջոց, որը կբացառի բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը, ինչի մասին կայացվում է պատճառաբանված որոշում: Որոշման մասին տեղեկացվում է նաև պաշտպանվող անձը:

Հոդված 77. Բնակության այլ վայր փոխադրելը

1. Պաշտպանվող անձը ժամանակավոր կամ մշտապես փոխադրվում է բնակության այլ վայր:

2. Բնակության այլ վայր փոխադրելն իրականացվում է պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոցներով:

Հոդված 78. Ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ պաշտպանվող անձի արտաքինը փոխելը

1. Անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև կարող է փոխվել նրա արտաքինը:

2. Փաստաթղթերի փոխարինումը, արտաքինը փոխելը, այդ թվում՝ պլաստիկ վիրահատությունը, իրականացվում են պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոցներով:

Հոդված 79. Աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը

1. Եթե պաշտպանվող անձին ուղղված վտանգի վերացման համար պահանջվում է, որ նա թողնի նախկին աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը, ապա քրեական վարույթ իրականացնող մարմինն այդ անձի միջնորդությամբ կամ համաձայնությամբ օգնում է տեղավորվել նոր աշխատանքի կամ ուսման վայր:

2. Պաշտպանվող անձի հարկադիր պարապուրդի ժամկետը հաշվակցվում է որպես աշխատանքային ստաժ, և այդ ժամկետի համար վճարվում է փոխհատուցում, որը չի կարող նախկին աշխատանքի կամ ծառայության համար տրված աշխատավարձից ցածր լինել: Նոր աշխատանքի կամ ծառայության վայրում ցածր աշխատավարձի դեպքում աշխատավարձերի տարբերությունը փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Պաշտպանվող անձին ուսման այլ վայր տեղավորելիս պետք է հաշվի առնվեն նրա նախկին ուսման վայրում առկա պայմանները:

Հոդված 80. Դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը

1. Պաշտպանվող անձի անվտանգության շահերից ելնելով՝ դատական նիստի նախագահողն իրավասու է առանձին անձանց հեռացնելու դատական նիստերի դահլիճից:

2. Պաշտպանվող անձի անվտանգությունն ապահովելու համար դատական նիստի նախագահողն անցկացնում է դռնփակ դատական քննություն, ինչի մասին կայացվում է պատճառաբանված որոշում:

Հոդված 81. Պաշտպանվող անձի հարցաքննությունը դատարանի կողմից

1. Դատարանի կողմից պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց նրա ինքնության մասին տվյալների հրապարակման, կարող է կատարվել կեղծանվան օգտագործմամբ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել

դատական նիստերի դահլիճից մեղադրյալի և պաշտպանության կողմի մյուս ներկայացուցիչներին հեռացնելուց հետո:

2. Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել այնպիսի պայմաններում, որոնք բացառում են անձի ինքնության ճանաչումը: Այդ նպատակով կարող են օգտագործվել դիմակ, շպար, պաշտպանվող անձի ձայնը փոփոխող սարք և օրենքին չհակասող պաշտպանության այլ միջոցներ:

3. Պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց քրեական վարույթի մյուս մասնակիցների ակներև տեսանելիության, կարող է կատարվել տեսաձայնային և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ՝ քրեական վարույթի սահմանափակ շրջանակով մասնակիցների մասնակցությամբ՝ գաղտնիության պահպանման մասին նախազգուշացումով:

4. Բացառիկ դեպքերում դատարանը կարող է պաշտպանվող անձին ազատել դատական նիստին մասնակցելու պարտականությունից՝ նրա կողմից նախկինում տրված ցուցմունքի գրավոր հաստատման առկայության դեպքում:

5. Անհրաժեշտության դեպքում դատական նիստի նախագահողը կարող է դատաքննության ընթացքում արգելել տեսաձայնային և այլ միջոցներով հարցաքննության տեսաձայնագրառումը:

Հոդված 82. Պաշտպանվող անձի իրավունքները և պարտականությունները

1. Պաշտպանվող անձն իրավունք ունի՝

1) ներկայացնելու միջնորդություն պաշտպանության լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու կամ դրանք դադարեցնելու մասին.

2) իմանալու իր նկատմամբ իրականացվող պաշտպանության միջոցի կամ միջոցների, դրանց տեսակի, իրականացման, ժամկետի և դադարեցման մասին.

3) դատական կարգով բողոքարկելու քրեական վարույթն իրականացնող մարմնի վարութային ակտերը.

4) հրաժարվելու պաշտպանության միջոցներից:

2. Պաշտպանվող անձը պարտավոր է՝

1) կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի օրինական պահանջները.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին անհապաղ տեղյակ պահել իրեն սպառնացող վտանգի կամ հակահիրավական գործողության յուրաքանչյուր դեպքի, իր անձնական կյանքում և գործունեության մեջ տեղի ունեցած և պաշտպանվող անձի պաշտպանությանն առնչվող ցանկացած փոփոխության մասին.

3) խուսափել որևէ գործունեությունից, որը կարող է խոչընդոտել պաշտպանության միջոցի արդյունավետ կիրառմանը.

4) պահպանել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ժամանակավոր օգտագործման համար իրեն հանձնված գույքը և փաստաթղթերը:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին որոշում կայացնելուց հետո պարտավոր է պաշտպանվող անձին անհապաղ բացատրել նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև աջակցել պաշտպանվող անձին այդ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման գործում:

Հոդված 83. Պաշտպանության միջոցների դադարեցման հիմքերը և կարգը

1. Պաշտպանության միջոցների իրականացումը կարող է դադարեցվել, եթե պաշտպանվող անձը՝

1) այդ մասին ներկայացրել է գրավոր դիմում.

2) տվել է կեղծ ցուցմունք, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով.

3) չի կատարել սույն օրենսգրքի 82-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պարտականությունները.

4) այլևս պաշտպանության կարիք չունի՝ իր կյանքին կամ անվտանգությանը սպառնացող իրական վտանգի վերացման պատճառով.

5) մահացել է:

2. Պաշտպանության միջոցների իրականացման դադարեցումը կատարվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, որի պատճենը եռօրյա ժամկետում ուղարկվում է պաշտպանվող անձին, որը կարող է այն բողոքարկել դատական կարգով:

ԲԱԺԻՆ 3

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 9

ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ

Հոդված 84. Ձերբակալման տեսակները, նպատակը և ժամկետի հաշվարկը

1. Ձերբակալումը կարող է կիրառվել՝

1) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում.

2) ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար.

3) խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ.

4) վարույթի մասնավոր մասնակիցների (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի) կամ վկայի՝ սույն օրենսգրքով նախատեսված դատավարական պարտականությունների կատարումն ապահովելու համար:

2. Ձերբակալման նպատակը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքի, անձին դատարան ներկայացնելն է:

3. Անձը համարվում է ձերբակալված, իսկ ձերբակալման ժամկետը հաշվարկվում է նրան ազատությունից փաստացի զրկելու պահից:

4. Ձերբակալումը կիրառվում է միայն քննիչի որոշման հիման վրա:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով ձերբակալված անձինք պահվում են ձերբակալվածներին պահելու վայրերում:

Ձերբակալվածներին պահելու կարգը և պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 85. Ձերբակալումը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում

1. Անձը հանացանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կարող է ձերբակալվել, եթե՝

1) նա բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո.

2) ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով նախատեսված արարքը կատարողի.

3) տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր.

4) առկա են հանցանքի կատարմանը անձի առնչությունը հաստատող այլ հիմքեր և, եթե նա դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ նրա ինքնությունը պարզված չէ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված անձին քրեական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմին բերելուց անմիջապես հետո ձերբակալում իրականացրած անձը կազմում է անձի ձերբակալման արձանագրություն: Արձանագրության մեջ նշվում են՝ ձերբակալված անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, ամիսը, օրը, հաշվառման և/կամ փաստացի բնակության հասցեն, անձին փաստացի ազատությունից զրկելու օրը, ժամը, րոպեն, վայրը, պայմանները, պատճառները և հիմքերը, ձերբակալում իրականացրած պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, անձին ազատությունից փաստացի զրկելու պահին կամ քրեական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմին բերելուց հետո կատարված անձնական խուզարկությամբ անձից վերցված առարկաների և/կամ փաստաթղթերի

անվանումը և նկարագրությունը (առկայության դեպքում), ձերբակալված անձի մարմնի կամ հագուստի վրա առկա տեսանելի վնասվածքները (առկայության դեպքում), ինչպես նաև առերևույթ նրա ֆիզիկական և հոգեկան վիճակը, ձերբակալված անձի հայտարարությունները (այդպիսիք լինելու դեպքում), ձերբակալված անձին քրեական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմին բերելու և արձանագրություն կազմելու օրը, ժամը և րոպեն:

3. Արձանագրությունը ստորագրում են ձերբակալում իրականացրած անձը և ձերբակալվածը: Ձերբակալված անձի կողմից ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրության մեջ ամրագրվում է ինչպես այդ փաստը, այնպես էլ հրաժարվելու պատճառները: Արձանագրության պատճենը ստորագրությամբ հանձնվում է ձերբակալված անձին:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված անձին ազատությունից փաստացի զրկելու պահից ոչ ուշ, քան վեց ժամվա ընթացքում պետք է հանձնվի նրան ձերբակալելու կամ ազատ արձակելու վերաբերյալ որոշում: Ձերբակալման որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը, րոպեն և վայրը, ձերբակալված անձի տվյալները, անձին մեղսագրվող արարքի փաստական հանգամանքները, ձերբակալման հիմքը, ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալված անձը:

5. Ձերբակալման որոշմանը, որպես դրա բաղկացուցիչ մաս, կցվում են անձի ձերբակալման արձանագրությունը, ինչպես նաև ձերբակալված անձի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների և պարտականությունների ցանկը: Ձերբակալման որոշման և անձի ձերբակալման արձանագրության պատճեններն անհապաղ ուղարկվում են հսկող դատախազին:

6. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 72 ժամից ավելի: Նշված հիմքերով ձերբակալված անձին պետք է մեղադրանք ներկայացվի և մեղադրյալը պետք է դատարան տարվի՝ նրա կալանավորման հարցը լուծելու համար ոչ ուշ, քան ձերբակալման պահից 60 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:

7. Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Կալանավորման հարցը քննարկելիս դատարանը պետք է ստուգի նաև ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Հոդված 86. Ձերբակալումը ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար

1. Ազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավունք ունի որոշում կայացնել մեղադրյալին ձերբակալելու մասին: Որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, մեղադրյալի տվյալները, ձերբակալման հիմքը և պատճառները, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է ձերբակալման իրականացումը:

2. Հետաքննիչը մեղադրյալին ձերբակալելուց առաջ ստորագրությամբ նրան է հանձնում ձերբակալման որոշման պատճենը: Ազատությունից փաստացի զրկվելուց անմիջապես հետո մեղադրյալը բերվում է քննիչի մոտ: Մեղադրյալին քննիչի մոտ բերելու փաստը ամրագրվում է անձի ձերբակալման արձանագրության մեջ: Արձանագրության մեջ նշվում են՝ մեղադրյալի անունը, ազգանունը, հայրանունը, նրան փաստացի ազատությունից զրկելու օրը, ժամը, րոպեն, վայրը, պայմանները և հիմքերը, ձերբակալում իրականացրած հետաքննիչի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, ձերբակալված մեղադրյալի հայտարարությունները (այդպիսիք լինելու դեպքում), ձերբակալված մեղադրյալին քննիչի մոտ բերելու և արձանագրություն կազմելու օրը, ժամը և րոպեն:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 24 ժամից ավելի: Նշված հիմքով ձերբակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 12 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված մեղադրյալը ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Կալանավորման հարցը քննարկելիս դատարանը պետք է ստուգի նաև ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Հոդված 87. Խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի ձերբակալումը

1. Եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, քննիչն իրավունք ունի որոշում կայացնել նրան ձերբակալելու մասին՝ միաժամանակ մեղադրյալի կալանավորման մասին միջնորդություն ներկայացնելով դատարան: Որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, մեղադրյալի տվյալները, ձերբակալման հիմքը և պատճառները, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է ձերբակալման իրականացումը:

2. Մեղադրյալին սույն հոդվածով նախատեսված հիմքով կարելի է ձերբակալել միայն այն դեպքում, երբ սույն օրենսգրքի դրույթները թույլ են տալիս նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը:

3. Հետաքննիչը մեղադրյալին ձերբակալելուց առաջ ստորագրությամբ նրան է հանձնում ձերբակալման որոշման պատճենը: Ազատությունից փաստացի զրկվելուց անմիջապես հետո մեղադրյալը բերվում է քննիչի մոտ: Մեղադրյալին քննիչի մոտ բերելու փաստը ամրագրվում է անձի ձերբակալման արձանագրության մեջ: Արձանագրության մեջ նշվում են՝ մեղադրյալի անունը, ազգանունը, հայրանունը, նրան փաստացի ազատությունից զրկելու օրը, ժամը, րոպեն, վայրը, պայմանները և հիմքերը, ձերբակալում իրականացրած հետաքննիչի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, ձերբակալված մեղադրյալի հայտարարությունները (այդպիսիք լինելու դեպքում), ձերբակալված մեղադրյալին քննիչի մոտ բերելու և արձանագրություն կազմելու օրը, ժամը և րոպեն:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 24 ժամից ավելի: Նշված հիմքով ձերբակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 12 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:

5. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված մեղադրյալը ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Կալանավորման հարցը քննարկելիս դատարանը պետք է ստուգի նաև ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Հոդված 88. Ձերբակալումը դատավարական պարտականությունների կատարումն ապահովելու համար

1. Վարույթի մասնավոր մասնակցի կողմից (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի) սույն օրենսգրքով նախատեսված դատավարական պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում քննիչը, դրանց կատարումն ապահովելու նպատակով, իրավունք ունի որոշում կայացնել անձին ձերբակալելու մասին:

2. Որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, ձերբակալման ենթակա անձի տվյալները, ձերբակալման հիմքը և պատճառները, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է ձերբակալման իրականացումը:

3. Հետաքննիչը անձին ձերբակալելուց առաջ ստորագրությամբ նրան է հանձնում ձերբակալման որոշման պատճենը: Ազատությունից փաստացի զրկվելուց անմիջապես հետո անձը բերվում է քննիչի մոտ: Անձին քննիչի մոտ բերելու փաստը ամրագրվում է անձի ձերբակալման արձանագրության մեջ: Արձանագրության մեջ նշվում են՝ ձերբակալված անձի անունը, ազգանունը, հայրանունը, նրան փաստացի ազատությունից զրկելու օրը, ժամը, րոպեն, վայրը, պայմանները և հիմքերը, ձերբակալում իրականացրած հետաքննիչի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, ձերբակալված անձի հայտարարությունները (այդպիսիք լինելու դեպքում), ձերբակալված անձին քննիչի մոտ բերելու և արձանագրություն կազմելու օրը, ժամը և րոպեն:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել ավելին, քան այն դատավարական պարտականության կատարումը, որի ապահովման նպատակով ձերբակալվել է

անձը, սակայն բոլոր դեպքերում ոչ ավելի, քան 12 ժամը: Նշված ժամկետը լրանալու դեպքում անձը պետք է անհապաղ ազատ արձակվի:

Հոդված 89. Ձերբակալվածին ազատելը

1. Ձերբակալվածը, քննիչի կամ դատախազի որոշմամբ պետք է ազատ արձակվի, եթե՝

1) չի հաստատվել անձի կողմից քրեական օրենքով նախատեսված արարք կատարելու վերաբերյալ կասկածը.

2) վերացել է անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը.

3) անձն ազատությունից զրկվել է օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ.

4) լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը:

2. Ձերբակալվածին ազատ արձակելու մասին քննիչի կամ դատախազի որոշման պատճենն անհապաղ հանձնվում է ազատված անձին: Որոշման մեջ նշվում են անձին ազատելու հիմքը և ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը, րոպեն):

3. Այն դեպքում, երբ դատարանը մերժում է ձերբակալված մեղադրյալին կալանավորելու վերաբերյալ միջնորդությունը, մեղադրյալն անհապաղ ազատ է արձակվում դատարանի կարգադրությամբ: Դատարանի որոշման պատճենն անհապաղ հանձնվում է մեղադրյալին:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում, եթե քննիչի կամ դատախազի որոշմամբ անձը ազատ չի արձակվել, ձերբակալվածին ազատ է արձակում ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարը: Այդ դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարը անձին հանձնում է ձերբակալվածին ազատելու մասին տեղեկանք, որի մեջ նշվում են անձին ազատելու հիմքը և ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը, րոպեն): Տեղեկանքի պատճենն ուղարկվում է քննիչին և հսկող դատախազին:

5. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալումից ազատ արձակված անձը չի կարող կրկին ձերբակալվել նույն հիմքով:

ԳԼՈՒԽ 10

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 90. Խափանման միջոցների նպատակը և տեսակները

1. Խափանման միջոցները կարող են կիրառվել մեղադրյալի նկատմամբ՝ նրա հնարավոր անօրինական վարքագիծը կանխելու նպատակով:

2. Խափանման միջոցներն են կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները:

Հոդված 91. Խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը

1. Խափանման միջոց չի կարող կիրառվել, եթե բացակայում է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը կատարել է իրեն մեղսագրվող հանցանքը:

2. Խափանման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝

1) մեղադրյալի փախուստը կանխելու համար.

2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար.

3) մեղադրյալի կողմից իր վրա օրենքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքների հիմնավորում չի պահանջվում՝

1) սույն օրենսգրքով նախատեսված առանձին այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու դեպքում.

2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի սկզբնական կալանքի կամ այլընտրանքային խափանման միջոցի կիրառման դեպքում:

4. Խափանման միջոցի տեսակն ընտրելիս դատարանը կամ քննիչը հաշվի են առնում մեղադրյալի պատշաճ վարքագիծը ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները:

Հոդված 92. Խափանման միջոց փոխելը կամ վերացնելը

1. Եթե խափանման միջոցի գործողության ընթացքում փոխվել կամ վերացել են դրա իրավաչափության պայմանները, վարույթն իրականացնող մարմինն իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին:

2. Եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, վարույթն իրականացնող մարմինն իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում ավելի խիստ խափանման միջոց կիրառելու համար:

3. Խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին որշումն անհապաղ հանձնվում է խափանման միջոցի կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին, իսկ դրա պատճենը՝ այն անձին, ում նկատմամբ կիրառվում է խափանման միջոցը:

4. Եթե բողոքի քննարկման արդյունքում կիրառված խափանման միջոցը վերացվել է, ապա այդ կամ առավել խիստ խափանման միջոց կարող է կիրառվել միայն նոր հանգամանքների առկայության դեպքում:

Հոդված 93. Կալանքը և դրա իրավաչափությունը

1.Կալանքը դատարանի որոշմամբ մեղադրյալին օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ազատությունից զրկելն է՝ օրենքով և դատարանի այդ որոշմամբ սահմանված ժամկետով:

2.Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը անհնարին է կամ անբավարար մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար:

3. Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պատճառաբանված հաստատվել են սույն օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափության պայմանները: Դատական վարույթում կալանքի կիրառման համար բավարար է դատարանի կողմից նշված պայմանների պատճառաբանված հաստատումը:

4. Կալանքի ժամկետը երկարացնելիս դատարանի առջև անհրաժեշտ է հիմնավորել նաև վարույթն իրականացնող մարմնի պատշաճ ջանասիրությունը, ինչպես նաև տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը:

Հոդված 94. Կալանքի ժամկետը

1. Անձին կարելի է կալանքի տակ պահել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար, սակայն ամեն դեպքում այդ ժամկետը չի կարող գերազանցել սույն հոդվածով կալանքի տակ պահելու համար սահմանված առավելագույն ժամկետները:

2. Մինչդատական վարույթում սկզբնական կալանքի ժամկետը չի կարող գերազանցել մեկ ամիսը: Մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել յուրաքանչյուր դեպքում երկու ամսից ոչ ավելի ժամկետով՝ պահպանելով սույն հոդվածով սահմանված մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետները:

3. Մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետն է՝

1) երկու ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում.

2) չորս ամիս՝ միջին ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում.

3) տասը ամիս՝ ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում.

4) տասներկու ամիս՝ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում:

4. Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվում է նրա ձերբակալման պահից: Կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվում է նաև այն ժամանակը, երբ մեղադրյալը դատարանի որոշմամբ գտնվել է բժշկական հաստատությունում՝ հիվանդանոցային փորձաքննություն կատարելու կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարումից բուժում անցնելու համար:

5. Կալանքի տակ պահելու ընդհանուր ժամկետի մեջ չի հաշվակցվում այն ժամանակը, որի ընթացքում անձը արգելանքի տակ է գտնվել այլ պետության տարածքում՝ պայմանավորված վարույթի փոխանցման կամ անձի հանձնման հետ:

Հոդված 95. Կալանքից ազատելը

1. Մեղադրյալը վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման, եթե՝

1) վերացել է անձի ազատությունը սահմանափակելու անհրաժեշտությունը.

2) մեղադրյալի նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը.

3) մեղադրյալը արդարացվել է.

4) դատարանը մեղադրյալի նկատմամբ նշանակել է ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ կալանքի հետ չկապված պատիժ.

5) լրացել և չի երկարացվել դատարանի կողմից սահմանված կալանքի ժամկետը.

6) լրացել է անձին կալանքի տակ պահելու սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը.

7) մեղադրյալի կողմից կամ ի շահ նրա ներկայացվել են մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովող՝ դատարանի սահմանած այլընտրանքային երաշխիքները:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 5-7-րդ կետերով նախատեսված դեպքերում անձին կալանքից ազատելու որոշում կարող է կայացնել նաև կալանքի տակ պահելու վայրի վարչակազմի ղեկավարը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված դեպքերում արդարացվածին կամ մեղադրյալին դատարանը կալանքից ազատում է անմիջապես դատական նիստի դահլիճում: Սույն հոդվածի 1-ին մասի 5-7-րդ կետերով նախատեսված դեպքերում կալանքի տակ պահելու վայրի վարչակազմի ղեկավարը մեղադրյալին անմիջապես ազատում է կալանքից:

Հոդված 96. Կալանքից ազատված անձին կրկին կալանավորելը

1. Կալանքից ազատված անձը չի կարող նորից կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք

վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելու պահին:

2. Եթե կալանքից ազատված անձը նորից է կալանավորվում, ապա նրան կալանքի տակ պահելու առավելագույն թույլատրելի ժամկետը որոշելիս հաշվի է առնվում մինչև կալանքից ազատվելը կալանքի տակ նրա եղած ժամանակը:

Հոդված 97. Այլընտրանքային խափանման միջոցների տեսակները

1. Այլընտրանքային խափանման միջոցներն են՝

1) տնային կալանքը.

2) ոստիկանության հսկողությանը հանձնելը.

3) գրավը.

4) Հայաստանի Հանրապետությունից բացակայելու արգելքը.

5) պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը.

6) երաշխավորությունը.

7) հսկողության հանձնելը:

2. Այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-2-րդ կետերով նախատեսված խափանման միջոցները կարող են կիրառվել միայն դատարանի կողմից: Կալանքի միջնորդությունը մերժելու և այն սույն հոդվածի 1-ին մասի 1-2-րդ կետերով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցներով փոխարինելու դեպքում, դատարանը համակցությամբ կարող է կիրառել նաև այլընտրանքային այլ խափանման միջոցներ:

4. Մինչդատական վարույթում սույն հոդվածի 1-ին մասի 3-7-րդ կետերով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել քննիչի կամ դատախազի կողմից:

Հոդված 98. Տնային կալանքը

1. Տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության վայրը:

2. Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) ունենալ հեռախոսային հաղորդակցություն, ուղարկել կամ ստանալ նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ, օգտվել կապի այլ միջոցներից.

2) շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:

3. Տնային կալանք կիրառելու մասին դատարանի որոշման մեջ նշվում են այն կոնկրետ սահմանափակումները, որոնք տարածվում են մեղադրյալի նկատմամբ, ինչպես նաև ոստիկանության այն մարմինը, որին հանձնարարվում է այդ սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունը:

4. Մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ կարող է իրականացվել հատուկ էլեկտրոնային միջոցներով: Մեղադրյալը պարտավոր է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, դրանք պահել սարքին վիճակում, ինչպես նաև արձագանքել ոստիկանության հսկողության ազդանշաններին:

5. Տնային կալանքի ժամկետների, կիրառման, կարգի և դրա դեմ բերված բողոքների քննության վրա տարածվում են կալանքի համար սույն օրենսգրքով սահմանված դրույթները:

6. Մեղադրյալի կողմից տնային կալանքի պայմանները խախտելու դեպքում դատախազի կամ քննիչի միջնորդության հիման վրա դատարանն այն կարող է փոխարինել կալանքով:

7.Տնային կալանքի մեկ օրը հավասար է կալանքի մեկ օրվան:

Հոդված 99. Ոստիկանության հսկողությանը հանձնելը

1. Ոստիկանության հսկողությանը հանձնելը մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է, որի պայմաններում նա

պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի ոստիկանության մարմնում:

2. Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխելու մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը.

2) այցելելու որոշման մեջ նշված որոշակի վայրեր.

3) տեսակցելու որոշակի անձանց.

4) օրվա որոշակի ժամերին լքելու իր բնակության վայրը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արգելքները սահմանելիս հաշվի են առնվում մեղադրյալի աշխատանքի կամ ուսման պայմանները կամ առողջական վիճակը:

4. Մեղադրյալին ոստիկանության հսկողությանը հանձնելու մասին որոշման պատճենը կատարման նպատակով ուղարկվում է դատարանի կողմից սահմանված ոստիկանության մարմնին:

5. Ոստիկանությունն անհապաղ գրանցում է մեղադրյալին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահում վարույթն իրականացնող մարմնին:

6. Մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ կարող է իրականացվել հատուկ էլեկտրոնային միջոցներով: Մեղադրյալը պարտավոր է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, դրանք պահել սարքին վիճակում, ինչպես նաև արձագանքել ոստիկանության հսկողության ազդանշաններին:

7. Ոստիկանության հսկողությանը հանձնելու պայմանների, կիրառման կարգի և դրա դեմ բերված բողոքների քննության վրա տարածվում են կալանքի համար սույն օրենսգրքով սահմանված դրույթները:

Հոդված 100. Գրավը

1. Գրավը դատարանի կամ դատախազի համաձայնությամբ քննիչի որոշմամբ սահմանված դրամական գումար է, որը դրամի, արժեթղթերի կամ այլ արժեքների ձևով փոխանցվում է համապատասխան որոշմամբ նշված բանկ կամ դեպոզիտ (պահատվության)՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծը ապահովելու նպատակով:

Որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույք, եթե գրավ կիրառելու մասին որոշմամբ հատուկ նշվել է դրա հնարավորության մասին:

2. Գրավի չափը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից: Գրավի չափը որոշելիս հաշվի են առնվում մեղադրյալին վերագրվող հանցանքի ծանրության աստիճանը, մեղադրյալի գույքային դրությունը: Գրավի արժեքի ապացուցման պարտականությունը կրում է գրավատուն:

3. Գրավը կարող է մուծել մեղադրյալը կամ ցանկացած այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Եթե գրավը մուծում է այլ անձ, ապա նրան բացատրվում է մեղադրյալին ներկայացված մեղադրանքի էությունը, ինչպես նաև մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու դեպքում վրա հասնող հետևանքները:

4. Գրավատուն ներկայացնում է գրավի մուծված լինելը հավաստող փաստաթուղթ, որը կցվում է քրեական գործին:

5. Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ վայր, պարբերաբար չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի կանչով կամ ենթադրաբար կատարել է նոր դիտավորյալ հանցանք, ապա դատախազը դիմում է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ: Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատարանի որոշումը գրավատուն կարող է բողոքարկել վերաքննիչ դատարան:

6. Գրավը վերադարձվում է գրավատուին բոլոր դեպքերում, երբ չեն ապացուցվել սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված խախտումները կամ գրավը՝ որպես խափանման միջոց վերացվում կամ փոխվում է: Գրավը վերադարձնելու մասին որոշումն ընդունվում է համապատասխան խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ:

7. Գրավի կիրառման կարգի և դրա դեմ բերված բողոքների քննության վրա տարածվում են կալանքի համար սույն օրենսգրքով սահմանված դրույթները:

Հոդված 101. Հայաստանի Հանրապետությունից բացակայելու արգելքը

1. Եթե քննիչը կամ դատարանը բավարար հիմքեր ունեն ենթադրելու, որ մեղադրյալը կարող է դիմել փախուստի՝ օգտագործելով անձը հաստատող

փաստաթուղթ, կարող են որոշում կայացնել նրա՝ ՀՀ-ից բացակայելն արգելելու մասին, որն ուղեկցվում է մեղադրյալի անձնագիրը կամ նրա անձը հաստատող այլ այնպիսի փաստաթուղթ վերցնելով, որը կարող է տալ պետական սահմանը հատելու հնարավորություն: Մեղադրյալին կարող է նաև արգելվել ստանալու նման նոր փաստաթուղթ:

2. Մեղադրյալը չի կարող առանց սույն հոդվածում նշված խափանման միջոցը կիրառած մարմնի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը, պարտավոր է ներկայանալ քննիչի կամ դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին:

3. ՀՀ-ից բացակայելն արգելելու մասին որոշումն ուղարկվում է մեղադրյալին անձը հաստատող համապատասխան փաստաթուղթ տված իրավասու մարմնին:

4. Սույն հոդվածում նշված խափանման միջոցը վերացնելու մասին կազմվում է համապատասխան որոշում: Այս դեպքում մեղադրյալից վերցված փաստաթուղթն անհապաղ վերադարձվում է նրան: Այդ մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրում է խափանման միջոցը կիրառած մարմինը և մեղադրյալը:

Հոդված 102. Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը

1. Հանրային ծառայության մեջ գտնվող մեղադրյալի պաշտոնավարությունը քննիչի որոշմամբ և դատախազի համաձայնությամբ կարող է ժամանակավորապես դադարեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի քրեական վարույթի ընթացքին, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:

2. Մեղադրյալի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման մասին որոշումն ուղարկվում է նրա աշխատավայրի վարչակազմի ղեկավարին, որն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է կատարել այն և դրա մասին տեղյակ պահել համապատասխան որոշումը կայացրած մարմնին կամ անձին:

3. Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը վերացվում է դատախազի կամ դատախազի համաձայնությամբ քննիչի որոշմամբ, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:

Հոդված 103. Երաշխավորությունը

1. Երաշխավորությունը վստահություն վայելող անձանց գրավոր պարտավորությունն է այն մասին, որ նրանք իրենց հեղինակությամբ երաշխավորում են մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը:

2. Երաշխավորող կարող է լինել չափահաս գործունակ ֆիզիկական անձը: Երաշխավորողների թիվը երկուսից պակաս չի կարող լինել: Բացառիկ դեպքերում անձնական երաշխավորությունը որպես խափանման միջոց կարող է կիրառվել առանձնակի վստահություն վայելող մեկ երաշխավորողի առկայությամբ:

3. Գտնելով, որ երաշխավորողը վայելում է վստահություն, և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կարող է կիրառվել երաշխավորությունը, քննիչը կամ դատարանը դիմողին ծանոթացնում է մեղադրյալին ներկայացված մեղադրանքի էությանը, նրան բացատրում երաշխավորողի իրավունքները և պարտականություններն ու նախազգուշացնում խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում երաշխավորողի համար օրենքով նախատեսված պատասխանատվության մասին: Դրանից հետո դիմողն իրավունք ունի հաստատել իր խնդրանքը կամ հրաժարվել դրանից:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նախատեսված դատավարական գործողությունների կատարումն արտացոլվում է արձանագրությունում: Որպես խափանման միջոց երաշխավորություն ընտրելու դեպքում վարույթն իրականացնող մարմնի որոշման մեջ նշվում է երաշխավորողը: Համապատասխան որոշման պատճենն անմիջապես հանձնվում է երաշխավորողին:

Հոդված 104. Հսկողության հանձնելը

1. Հսկողության հանձնելն այն է, երբ անչափահաս մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը:

2. Անչափահասի նկատմամբ որպես խափանման միջոց հսկողության հանձնելը կիրառելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը նրա ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին ծանոթացնում է կայացված որոշմանը և նրանց հանձնում որոշման պատճենը, ծանոթացնում է մեղադրանքի բովանդակությանը, նրանց բացատրում է իրենց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչն արտացոլվում է արձանագրությունում:

3. Ծնողները, խնամակալները, հոգաբարձուներն իրավունք ունեն հրաժարվել անչափահաս մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելուց:

4. Իրենց պարտականությունները չկատարելու համար հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 105. Հրամանատարության հսկողությանը հանձնելը

1. Հրամանատարության հսկողությանը հանձնելն այն է, երբ զորամասի, զորամիավորման հրամանատարի, զինվորական հիմնարկի պետի վրա, որտեղ ծառայում կամ զորահավաքներ կամ վարժահավաքներ է անցնում մեղադրյալը, պարտականություն է դրվում ապահովել վերջինիս պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը:

2. Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց հրամանատարության հսկողությանը հանձնելը կիրառելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը հրամանատարության ներկայացուցչին ծանոթացնում է հրամանատարության հսկողությանը հանձնելու մասին կայացված որոշմանը և նրան հանձնում որոշման

պատճենը, ծանոթացնում է մեղադրանքի բովանդակությանը, նրան բացատրում է իր իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչն արտացոլվում է արձանագրությունում:

3. Ենթակայի նկատմամբ հսկողություն իրականացնելիս հրամանատարությունը գործում է զինվորական կանոնադրություններին համապատասխան:

4. Մեղադրյալի նկատմամբ վերոհիշյալ խափանման միջոցի կիրառման ընթացքում նա չի նշանակվում պահակության և մարտական հերթապահության, զրկվում է խաղաղ ժամանակ զենք կրելու իրավունքից, սպա կամ ենթասպա չհանդիսացող զինծառայողը միայնակ չի ուղարկվում զորամասի տարածքից դուրս:

5. Իրենց պարտականությունները չկատարելու համար հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած անձինք կրում եմ օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ԳԼՈՒԽ 11
ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԿԱԼԱՆՔ ԴՆԵԼԸ

Հոդված 106. Գույքի վրա կալանք դնելը

1. Գույքի վրա կալանք դնելը կիրառվում է հնարավոր գույքային հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու համար:

2. Կալանք դրվում է մեղադրյալի, ինչպես նաև այն անձանց գույքի վրա, որոնց վրա, մեղադրյալի գործողությունների համար, կարող է դրվել գույքային պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե ինչպիսի գույք է և ում մոտ է գտնվում:

3. Ամուսինների կամ ընտանիքի համատեղ սեփականության դեպքում կալանքը դրվում է մեղադրյալի բաժնի վրա: Բավարար ապացույցների առկայության դեպքում, որ համատեղ սեփականությունն ավելացել կամ ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին, կալանքը կարող է դրվել ամուսինների կամ ընտանիքի ամբողջ գույքի կամ դրա որոշակի բաժնի վրա:

4. Կալանք չի կարող դրվել այն գույքի վրա, որի վրա օրենքի համաձայն չի կարող տարածվել բռնագանձում:

Հոդված 107. Գույքի վրա կալանք դնելու հիմքերը

1.Գույքի վրա կալանք դնելը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել բռնագրավման ենթակա գույքը:

2. Գույքի վրա կալանք դնելը կիրառվում է դատարանի որոշման հիման վրա: Անհետաձգելի դեպքերում, երբ հարկադրանքի այս միջոցի անհապաղ չկիրառումը կարող է հանգեցնել գույքի կորստի, վնասման կամ ոչնչացման, գույքի վրա կալանք դնելը կարող է կիրառվել քննիչի որոշմամբ՝ դատախազի համաձայնությամբ: Այս դեպքում անհապաղ սակայն ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում պետք է համապատասխան որոշումը և այն հիմնավորող նյութերը ներկայացվի դատարանի հաստատմանը:

3. Գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ պետք է նշվի կալանքի ենթակա գույքը, ինչպես նաև գույքի այն արժեքը, որի վրա բավական է կալանք դնել՝ գույքային հայցը և դատական ծախսերն ապահովելու համար:

4. Անհրաժեշտության դեպքում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ գույքը կամովին չի հանձնվի, կարող է կատարվել խուզարկություն՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 108. Կալանքի ենթակա գույքի արժեքի որոշումը

1. Կալանքի ենթակա գույքի արժեքը որոշվում է դրա շուկայական գնով:

2. Այն գույքի արժեքը, որի վրա տուժողի կամ դատախազի հարուցած գույքային հայցի ապահովման համար դրվում է կալանք, պետք է համապատասխանի հայցագնի չափին:

3. Մի քանի մեղադրյալներից կամ նրանց գործողությունների համար պատասխանող անձանցից յուրաքանչյուրի գույքի՝ կալանքի ենթակա բաժինը որոշելիս հաշվի է առնվում հանցագործությանը մեղադրյալների մասնակցության

աստիճանը, սակայն գույքային հայցն ապահովելու համար նրանցից որևէ մեկի գույքի վրա կալանք կարող է դրվել լրիվ չափով:

Հոդված 109. Գույքի վրա կալանք դնելու որոշման կատարման կարգը

1. Քննիչը գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին ստորագրությամբ հանձնում է գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը և պահանջում հանձնել այն: Այդ պահանջը կամովին կատարելուց հրաժարվելու դեպքում գույքի վրա կալանքը դրվում է հարկադիր կարգով:

2. Նախաքննության ավարտից հետո դատարանի որոշմամբ գույքի վրա կալանք դնելն իրականացնում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը:

3. Գույքի վրա կալանք դնելիս հնարավորության դեպքում ներգրավվում է մասնագետ-ապրանքագետ, որը որոշում է դրա մոտավոր արժեքը:

4. Գույքի վրա կալանք դնելուն ներկա գտնվող սեփականատերը կամ գույքի տիրապետողն իրավունք ունի որոշել, թե առաջին հերթին որ արժեքների կամ այլ առարկաների վրա է անհրաժեշտ կալանք դնել՝ ապահովելու համար որոշման մեջ նշված գումարները:

5. Քննիչը գույքի վրա կալանք դնելու մասին կազմում է արձանագրություն, իսկ հարկադիր կատարողը՝ օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթ: Արձանագրության մեջ (փաստաթղթում) մասնավորապես թվարկվում է ամբողջ գույքը, որի վրա կալանք է դրված՝ ճշգրիտ նշելով անվանումը, քանակը, քաշը, մաշվածության աստիճանը, այլ անհատական հատկանիշները, հնարավորության դեպքում՝ արժեքը, նշվում է, թե ինչպիսի գույք է վերցված և ինչպիսին թողնված պահպանության, շարադրվում է կալանադրված գույքը՝ այլ անձանց պատկանելու մասին ներկաների հայտարարությունները:

6. Համապատասխան արձանագրության (փաստաթղթի) պատճենն ստորագրությամբ հանձնվում է այն գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին, որի վրա կալանք է դրված, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկին, բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչին:

Ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության տարածքում գտնվող գույքի վրա կալանք դնելիս համապատասխան արձանագրության (փաստաթղթի) պատճենն ստորագրությամբ հանձնվում է դրանց ներկայացուցչին:

Հոդված 110. Կալանքի տակ գտնվող գույքի պահպանությունը

1. Բացի անշարժ գույքից և մեծածավալ առարկաներից, այլ կալանադրված գույքը, որպես կանոն, վերցվում է:

2. Թանկարժեք մետաղները և քարերը, ադամանդը, օտարերկրյա տարադրամը, չեկերը, արժեթղթերը և վիճակախաղային տոմսերը պահպանման համար հանձնվում են Հայաստանի Հանրապետության գանձապետարան, դրամական գումարները մուծվում են այն դատարանի դեպոզիտ, որին ընդդատյա է քրեական վարույթը, վերցված մյուս առարկաները կնքվում և պահվում են այն մարմնում, որի որոշմամբ գույքի վրա կալանք է դրվել, կամ պահպանության են հանձնվում բնակարանային շահագործման կազմակերպությանը կամ տեղական իշխանության ներկայացուցչին:

3. Չվերցված գույքը, որի վրա կալանք է դրված, կնքվում և պահպանության համար թողնվում է գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին: Նրանց բացատրվում է տվյալ գույքն օտարելու կամ փչացնելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը, ինչի մասին նրանցից վերցվում է ստորագրություն:

Հոդված 111. Գույքի վրա կալանք դնելու բողոքարկումը

Գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, սակայն ներկայացված բողոքը չի կասեցնում համապատասխան որոշումն ի կատար ածելը:

Հոդված 112. Գույքը կալանքից ազատելը քրեական դատավարության կարգով

1. Գույքը ազատվում է կալանքից, եթե գույքային հայցը հետ վերցվելու, մեղադրյալին վերագրվող արարքի որակումը փոխվելու հետևանքով կամ այլ

պատճառներով վերացել է գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը:

2. Տուժողի կամ այլ շահագրգիռ անձանց միջնորդությամբ դատարանն իրավունք ունի գույքի վրա դրված կալանքը պահպանել նաև քրեական վարույթի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 12
ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 113. Հոգեկան հիվանդություն ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները

Հոգեկան հիվանդություն ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցներն են՝

1) փորձաքննություն կատարելու համար բժշկական հաստատությունում տեղավորելը.

2) հոգեկան հիվանդություն ունեցող անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցները:

Հոդված 114. Փորձաքննություն կատարելու համար բժշկական հաստատությունում տեղավորելը

Դատարանն իրավունք ունի մեղադրյալներին և այն անձանց, որոնց հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրանց ներգրավել որպես մեղադրյալ, տեղավորել բժշկական հաստատությունում՝ դատահոգեբանական, դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննություն կատարելու համար:

Հոդված 115. Հոգեկան հիվանդություն ունեցող անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցները.

1. Անմեղսունակության վիճակում քրեական օրենքով չթույլատրված արարք ենթադրաբար կատարած անձանց նկատմամբ անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել հետևյալ անվտանգության միջոցները՝

1) հիվանդին հսկողության հանձնելը.

2) հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը:

2. Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած, սակայն հասարակության համար վտանգ չներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է հանձնվել ազգականների, խնամակալների, հոգաբարձուների հսկողությանը՝ այդ մասին տեղյակ պահելով առողջապահության մարմիններին:

3. Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և հասարակության համար վտանգ ներկայացնող անձը կարող է դատարանի որոշմամբ տեղավորվել հոգեբուժական հաստատությունում:

ԳԼՈՒԽ 13
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԸ

Հոդված 116. Դատական սանկցիաների կիրառման հիմքերը և տեսակները

1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքները չարաշահելու կամ դատավարական պարտականությունները անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում դատարանն իրավունք ունի քրեական վարույթին մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու դատական սանկցիա:

2. Դատական սանկցիաներն են՝

1) նախազգուշացումը.

2) դատական նիստերի դահլիճից հեռացնելը.

3) դատական տուգանքը.

4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար ՀՀ գլխավոր դատախազին կամ Փաստաբանների պալատ դիմելը.

5) դատարան ներկայացնելու կարգադրագիրը:

3. Սանկցիան պետք է համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը:

Հոդված 117. Դատական սանկցիա կիրառելու կարգը

1. Նախազգուշացումը և դատական նիստերի դահլիճից հեռացնելը կիրառվում են նույն դատական նիստում կայացվող դատարանի արձանագրային որոշմամբ:

2. Դատական նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող անձի նկատմամբ:

3. Դատական նիստերի դահլիճից հեռացնելու մասին որոշումն անհապաղ կամովին չկատարելու դեպքում կատարվում է հարկադիր կարգով Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի միջոցով:

4. Դատական տուգանքը կիրառվում է վարույթի մասնակիցների նկատմամբ՝ բացառությամբ դատախազի, պաշտպանի և լիազոր ներկայացուցչի: Դատական տուգանքը կարող է կիրառվել մինչև նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Դատական տուգանքի չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ, սակայն բացի արարքի ծանրությունից, պետք է հաշվի առնվի նաև արարք կատարողի անձը: Դատական տուգանքը կիրառվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Դատական տուգանք կիրառելու մասին որոշումը կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Մեղադրյալին դատական նիստի դահլիճից հեռացնելու դեպքում նիստը հետաձգվում է մինչև երկու շաբաթ ժամկետով: Կալանավորված անձանց համար հետաձգման ժամկետը չի հաշվվում պատժի ժամկետի մեջ:

6. Քրեական վարույթին մասնակցող դատախազի և քրեական վարույթին որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կիրառվում են բացառապես նախորդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները: Գլխավոր դատախազին կամ

Փաստաբանների պալատ դիմելը իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ:

Նախորդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

7. Դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Դատական տուգանք կիրառելու կամ մեղադրյալին նիստերի դահլիճից հեռացնելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան հրապարակման պահից երեք օրվա ընթացքում:

8. Դատական սանկցիայի կիրառումն արգելք չէ սանկցիայի ենթարկված անձին օրենքով նախատեսված այլ պատասխանատվության միջոցների ենթարկելու համար:

Հոդված 118. Դատարան ներկայացնելու կարգադրագիրը

1. Քրեական վարույթի մասնավոր մասնակցի (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի), ինչպես նաև վկայի կամ փորձագետի կողմից սույն օրենսգրքով նախատեսված դատավարական պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում դատարանը, դրանց կատարումն ապահովելու նպատակով, իրավունք ունի արձակել անձին դատարան ներկայացնելու կարգադրագիր:

2. Կարգադրագրում նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, դատարան ներկայացնելու ենթակա անձի տվյալները, ներկայացնելու հիմքը և պատճառները, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է իրագործել անձին դատարան ներկայացնելը:

3. Հետաքննիչը անձին դատարան ներկայացնելուց առաջ ստորագրությամբ նրան է հանձնում դատարանի արձակած կարգադրագրի պատճենը: Դրանից անմիջապես հետո անձը բերվում է դատարան:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով դատարան ներկայացված անձը չի կարող պահվել ավելի երկար, քան այն դատավարական պարտականության կատարումը, որի ապահովման նպատակով անձը ներկայացվել

է դատարան: Նշված ժամկետը լրանալու դեպքում անձը պետք է անհապաղ ազատ արձակվի: Այդ մասին նշում է արվում դատական նիստի արձանագրության մեջ:

ԲԱԺԻՆ 4

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՈՒՄ

ԳԼՈՒԽ 14

ԱՊԱՑՈՒՅՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հոդված 119. Քրեական վարույթում ապացույցները

1. Քրեական վարույթում ապացույց են՝

1) ձերբակալված անձի ցուցմունքը.

2) մեղադրյալի ցուցմունքը.

3) տուժողի ցուցմունքը.

4) վկայի ցուցմունքը.

5) փորձագետի եզրակացությունը և ցուցմունքը.

6) փորձագետի կարծիքը և ցուցմունքը.

7) իրեղեն ապացույցները.

8) քննչական, գաղտնի քննչական, այլ դատավարական գործողությունների արձանագրությունները.

9) ալ փաստաթղթերը:

2. Օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքները քրեական վարույթում չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե չեն համապատասխանում սույն օրենսգրքով ապացույցներին ներկայացվող պահանջներին:

Հոդված 120. Որպես ապացույց չթույլատրվող նյութերը

1.Օրենքի էական խախտմամբ ձեռք բերված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված դատավարական գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները չի թույլատրվում օգտագործել որպես ապացույց:

2.Ապացույցներ ձեռք բերելիս էական են համարվում այն խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, դատավարությանը մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավուքների զրկմամբ և սահմանափակմամբ:

3. Մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել նաև այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝

1) տվյալ քրեական վարույթն իրականացնելու, համապատասխան քննչական, գաղտնի քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից.

2) բացարկման ենթակա անձի մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ պետք է իմանար քրեական վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին.

3) սույն օրենսգրքով նախատեսված դատավարական կարգի խախտմամբ, եթե հնարավոր չէ դրանք վերացնել օրենքով նախատեսված դատավարական գործողության կատարմամբ.

4) մեղադրյալից՝ պաշտպանի բացակայությամբ կատարված հարցաքննության ընթացքում, եթե մեղադրյալը դատարանում չի հաստատել դրա հավաստիությունը.

5) մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում.

6) այն անձից, որն ունակ չէ ճանաչել փաստաթուղթը կամ այլ առարկան, հաստատել դրա իսկությունը, հայտնել դրա առաջացման և ստացման հանգամանքների մասին.

7) անհայտ կամ դատական նիստում չբացահայտվող աղբյուրից.

8) ժամանակակից գիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառման արդյունքում:

4. Օրեքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե դրանք կամ դրանց հատկանիշները փոփոխելու վարկածը չի բացառվել:

5. Օրենքով սահմանված կարգի խախտմամբ կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները չեն կարող քննչական գործողության կատարման հիմք լինել:

6. Մեղադրանքի կողմի թույլ տված օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը մեղադրյալի, պաշտպանի, իսկ եթե այն վերաբերում է հանցագործությամբ պատճառված նյութական վնասին՝ նաև գույքային պատասխանողի միջնորդությամբ կարող է թույլատրվել որպես ապացույց: Այդպիսի ապացույցը թույլատրվում է միայն համապատասխան մեղադրյալի կամ գույքային պատասխանողի նկատմամբ:

Հոդված 121. Փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիության հաստատումը

1. Ապացույցի թույլատրելիությունը հիմնավորելու պարտականությունն ընկած է վարույթի համապատասխան հանրային մասնակցի վրա:

2.Փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը, ինչպես նաև օրենքի խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ:

3. Մեղադրյալի, պաշտպանի, ինչպես նաև տուժողի, գույքային պատասխանողի, նրանց ներկայացուցիչների ներկայացրած ապացույցների անթույլատրելիությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը: Ներկայացված ապացույցները վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ անթույլատրելի ճանաչվելու դեպքում պետք է մնան քրեական գործի նյութերում:

Հոդված 122. Ապացուցման ենթակա հանգամանքները

1. Ապացուցման ենթակա հանգամանքներն են՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6) մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները.

7) այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից.

8) այն հանգամանքները, որոնցով անձը հիմնավորում է վարույթի ընթացքում իր գույքային պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

2. Սույն օրենսգրքով նախատեսված քրեական վարույթի առանձին տեսակների համար կարող է սահմանվել ապացուցման ենթակա հանգամանքների այլ շրջանակ:

Հոդված 123. Փաստերի իրավական կանխավարկածը

1. Եթե քրեական վարույթի ընթացքում հակառակը չի ապացուցվում, քրեական դատավարությունում ապացուցված են համարվում՝

1) հանրաճանաչ փաստը.

2) ժամանակակից գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի համընդհանուր ճանաչում ստացած մեթոդիկաների ճշմարտացիությունը.

3) փաստը, որը անձին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ նորմատիվ ակտերով սահմանված իր մասնագիտական կամ պաշտոնական պարտականությունների կապակցությամբ.

4) փաստը, որը մեղադրյալին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ՝ որպես նրա բացառիկ իրազեկվածության հանգամանք:

2. Եթե դատավարության մասնակիցներից մեկը վիճարկում է նշված փաստերի հավաստիությունը, այն ապացուցելու պարտականությունը կրում է այն վիճարկող կողմը:

Հոդված 124. Որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանգամանքները

Քրեական վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով՝

1) մահվան պատճառը, առողջությանը հասցված վնասի բնույթը կամ ծանրության աստիճանը՝ դատաբժշկական փորձագետի եզրակացություն.

2) հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացություն.

3) վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու ենթադրյալ հանցագործության բացահայտման համար նշանակություն ունեցող հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացություն.

4) գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարիքի մասին փաստաթղթի, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատաբժշկական և դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացություն.

5) մեղադրյալի մոտ նախկին դատվածության առկայությունը և նրան որոշակի պատիժ նշանակելը՝ համապատասխան տեղեկանք, իսկ հնարավորության դեպքում՝ նաև դատարանի դատավճռի պատճեն:

ԳԼՈՒԽ 15

ԱՊԱՑՈՒՅՑԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդված 125. Ձերբակալված անձի ցուցմունքը

Ձերբակալված անձի ցուցմունքը՝ հարկադրանքի այդ միջոցի կիրառման ընթացքում մինչդատական վարույթում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ նրա հաղորդած գրավոր տվյալներն են:

Հոդված 126. Մեղադրյալի ցուցմունքը

Մեղադրյալի ցուցմունքը՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

Հոդված 127. Տուժողի ցուցմունքը

Տուժողի ցուցմունքը՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

Հոդված 128. Վկայի ցուցմունքը

Վկայի ցուցմունքը՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

Հոդված 129. Փորձագետի եզրակացությունը և ցուցմունքները

1. Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրած հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով:

2. Փորձագետի ցուցմունքները իր եզրակացությունը ներկայացնելուց հետո այդ եզրակացությունը ճշգրտելու կամ պարզաբանելու նպատակով մինչդատական

վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ նրա հաղորդած տվյալներն են:

3. Փորձագետի ցուցմունքը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Հոդված 130. Փորձագետի կարծիքը և ցուցմունքը

1. Փորձագետի կարծիքն իր մասնագիտական գիտելիքների և հմտությունների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են, որոնց նա հանգում է քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարմանը աջակցելով:

2. Փորձագետի ցուցմունքները իր կարծիքը ներկայացնելուց հետո այդ ակտը ճշգրտելու կամ պարզաբանելու նպատակով մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ նրա հաղորդած տվյալներն են:

3. Փորձագետի ցուցմունքը չի կարող փոխարինել նրա կողմից տրված կարծիքին:

Հոդված 131. Իրեղեն ապացույցները

1. Իրեղեն ապացույցներ են ճանաչվում՝

1) հանցագործության գործիքները կամ այն առարկաները, որոնք իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել.

2) այն առարկաները, որոնք հանցավոր արարքների օբյեկտ են եղել.

3) հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և առարկաները.

4) այն առարկաները, որոնք կարող են գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված առարկաները վարույթն իրականացնող մարմնի կողմից զննվում են, համապատասխան որոշմամբ ճանաչվում են իրեղեն ապացույց և կցվում քրեական գործի նյութերին:

3. Առարկան կորցնում է իրեղեն ապացույցի նշանակությունը, եթե ողջամտորեն չի բացառվել առարկան փոխելու, առանձնահատկությունները, հատկանիշները պարունակող հետքերն էապես փոխելու հնարավորությունը:

Հոդված 132. Իրեղեն ապացույցների և այլ առարկաների պահպանումը

1. Բացառությամբ շուտ փչացող առարկաների՝ իրեղեն ապացույցները քրեական գործի նյութերի հետ միասին պահվում են այնքան, քանի դեռ դրանց տնօրինման հարցը չի լուծվել օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշմամբ՝ մինչև դրա բողոքարկման ժամկետն անցնելը:

2. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իրեղեն ապացույցների տնօրինման մասին որոշումը կարող է ընդունվել նախքան քրեական վարույթի ավարտը:

3. Եթե քրեական գործին կցված առարկայի նկատմամբ իրավունքի մասին վեճը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով, տվյալ առարկան պահվում է մինչև քաղաքացիական գործով վճիռն ուժի մեջ մտնելը:

4. Իրեղեն ապացույցները, որոնք իրենց մեծածավալության կամ այլ պատճառներով չեն կարող պահվել քրեական գործի հետ միասին, այդ թվում՝ ապրանքների մեծ քանակներ, որոնց պահելը բարդ է կամ պահպանման հատուկ պայմանների ծախսերը համապատասխանում են դրանց արժեքին՝

1) որոշմամբ վերադարձվում են դրանց օրինական տիրապետողին, եթե դա հնարավոր է առանց ապացուցմանը վնասելու.

2) լուսանկարահանվում կամ տեսանկարահանվում են, հնարավորության դեպքում կնքվում են և պահվում քննիչի կամ դատարանի որոշած վայրում: Քրեական գործին կցվում է նշված իրեղեն ապացույցների գտնվելու վայրի մասին փաստաթուղթ.

3) որոշմամբ տրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով իրացման: Դրանից ստացած

միջոցները փոխանցվում են վարույթն իրականացնող մարմնի դեպոզիտային հաշվին՝ մինչև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը:

Սույն մասով սահմանված կարգով իրեղեն ապացույցների պահպանման հարցը լուծելիս քրեական գործին կարող է կցվել իրեղեն ապացույցի նմուշը:

5. Շուտ փչացող ապրանքներ կամ արտադրանք հանդիսացող իրեղեն ապացույցները, որոնք դժվար է պահել կամ որոնց պահելու ծախսերը համապատասխանում են դրանց արժեքին՝

1) որոշմամբ վերադարձվում են օրինական տիրապետողին.

2) օրինական տիրապետողին վերադարձնելու անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշմամբ հանձնվում են իրացման: Իրացման արդյունքում ստացված միջոցները փոխանցվում են առգրավման որոշում կայացրած մարմնի դեպոզիտային հաշվին՝ մինչև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը: Քրեական գործին կարող է կցվել իրեղեն ապացույցի նմուշը.

3) փչանալու կամ պիտանիությունը կորցնելու դեպքում որոշմամբ ոչնչացվում են: Այդ մասին կազմվում է արձանագրություն:

6. Վարույթի ընթացքում առգրավված էթիլային սպիրտը, ալկոհոլ և սպիրտ պարունակող արտադրանքը, ինչպես նաև այն առարկաները, որոնց երկարատև պահելը վտանգավոր է մարդու կյանքի և առողջության կամ շրջակա միջավայրի համար, համապատասխան հետազոտություններն անցկացնելուց հետո ոչնչացվում կամ հանձնվում են տեխնոլոգիական վերամշակման: Ադ մասին կազմվում է արձանագրություն:

7. Դրամը, արժեթղթերը և այլ արժեքները՝

1) որոշմամբ պահպանման են հանձնվում բանկին կամ այլ վարկային կազմեկերպությանը.

2) կարող են պահվել քրեական գործի հետ, եթե դրամանիշների անհատական հատկանիշներն ապացուցման համար նշանակություն ունեն.

3) վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերադարձվում են սեփականատիրոջը, եթե դրամանիշների անհատական հատկանիշներն ապացուցման համար նշանակություն չունեն:

Հոդված 133. Իրեղեն ապացույցների տնօրինումը

1. Քրեական վարույթը կարճելու մասին որոշում, դատավճիռ կամ այլ եզրափակիչ դատավարական ակտ կայացնելիս պետք է որոշվի իրեղեն ապացույցների տնօրինման հարցը: Ընդ որում՝

1) մեղադրյալին պատկանող հանցագործության գործիքները բռնագրավվում են կամ հանձնվում են համապատասխան հաստատություն կամ ոչնչացվում են: Անզգույշ հանցագործության գործիքները կարող են վերադարձվել սեփականատիրոջը.

2) շրջանառությունից հանված առարկաները հանձնվում են համապատասխան հաստատություն կամ ոչնչացվում են.

3) արժեք չներկայացնող առարկաները շահագրգիռ անձի միջնորդությամբ տրվում են նրան, իսկ միջնորդության բացակայության դեպքում՝ ոչնչացվում.

4) հանցավոր ճանապարհով ստացված դրամը, այլ արժեքները և գույքը, ինչպես նաև դրանցից ստացված եկամուտները վերադարձվում են սեփականատիրոջը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

5) փաստաթղթերը պահվում են քրեական գործում, իսկ շահագրգիռ անձի միջնորդությամբ տրվում են այդ անձին.

6) մյուս առարկաները հանձնվում են սեփականատիրոջը, իսկ եթե սեփականատերը պարզ չէ, ապա դարձվում են պետության սեփականություն.

7) ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասում նշված դրամը, այլ արժեքները և գույքը ՀՀ կառավարության սահմանած կարգով ենթակա են բռնագրավման՝ բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքերի:

2. Առարկաների պատկանելության վերաբերյալ վեճերը լուծվում են քաղաքացիական դատավարության կարգով:

Հոդված 134. Քննչական, գաղտնի քննչական, այլ դատավարական գործողությունների արձանագրությունները

1. Քննչական, գաղտնի քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրությունները սույն օրենսգրքով նախատեսված գրավոր կազմված փաստաթղթեր են, որոնք արտացոլում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից անմիջականորեն ընկալված, քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները:

2. Որպես ապացույց կարող են օգտագործվել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների վերաբերյալ ընդունված բանավոր հայտարարությունների, մեղայականով ներկայանալու առիթով կազմված արձանագրությունները:

3. Քննչական գործողության արձանագրության բովանդակային ոչ լրիվությունը չի կարող մեղադրանքի նպատակներով լրացվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, ինչպես նաև ընթերակայի և այլ անձանց ցուցմունքներով:

Հոդված 135. Այլ փաստաթղթեր

1. Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որը պարունակում է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հատկանիշներ պարունակող փաստաթղթերը կարող են ճանաչվել նաև որպես իրեղեն ապացույցներ:

3. Այլ փաստաթղթերն ապացույց են ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

Հոդված 136. Փաստաթղթերը կցելը, պահպանելը և վերադարձնելը

1. Փաստաթուղթը քրեական գործի նյութերին կցվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից և պահվում է գործի հետ՝ վերջինիս պահելու ամբողջ ժամանակամիջոցում:

2. Այն դեպքում, երբ առգրավված և գործին կցված փաստաթղթերն օրինական տիրապետողին անհրաժեշտ են ընթացիկ հաշվառման, հաշվետվության

և այլ օրինաչափ նպատակների համար, նրան հնարավորություն է ընձեռվում ժամանակավոր օգտագործման համար ստանալ այդ փաստաթղթերը կամ դրանցից պատճեններ հանել:

3. Դատարանի դատավճիռը կամ քրեական վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամիս հետո գործում առկա փաստաթղթերի բնօրինակները՝ դրանց օրինական տիրապետողների խնդրանքով, վերադարձվում են նրանց:

ԳԼՈՒԽ 16
ԱՊԱՑՈՒՑՈՒՄԸ

Հոդված 137. Ապացուցումը

Ապացուցումը՝ վարույթի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

Հոդված 138. Ապացույցներ հավաքելը

1. Ապացույցները հավաքվում են նախաքննության և դատական քննության ընթացքում՝ սույն օրենսգրքով նախատեսված քննչական, գաղտնի քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման ճանապարհով:

2. Վարույթի մասնավոր մասնակիցը, ինչպես նաև հանրային մեղադրողն իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել առարկաներ և փաստաթղթեր՝ դրանք որպես ապացույց քրեական գործին կցելու համար:

Հոդված 139. Ապացույցների ստուգումը

Վարույթի ընթացքում հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրները ստուգելու միջոցով:

Հոդված 140. Ապացույցների գնահատումը

1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ վարույթի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ:

3. Ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև քննիչը և դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

ԲԱԺԻՆ 5

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 17

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 141. Քրեական վարույթի բովանդակությունը

Քրեական վարույթն առերևույթ հանցագործության մասին տեղեկանալու պահից սույն օրենսգրքով սահմանված պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասության սահմաններում բոլոր դատավարական գործողությունների իրականացումը և որոշումների ընդունումն է:

Հոդված 142. Քրեական վարույթի ընթացքի ամրագրումը

1. Քրեական վարույթի ընթացքում կատարվող բոլոր դատավարական գործողությունների ընթացքի և արդյունքների ամրագրումը պարտադիր է:

2. Ամրագրումը կատարվում է համակարգչային եղանակով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ձեռագիր պատրաստված արձանագրությամբ, որը կազմվում է դատավարական գործողության ընթացքում կամ դրա ավարտից անմիջապես հետո:

3. Արձանագրության մեջ նշվում են՝

1) դատավարական գործողության իրականացման վայրը, օրը, ամիսը, տարեթիվը, սկսելու և ավարտելու ժամանակը՝ րոպեի ճշտությամբ.

2) արձանագրությունը կազմողի պաշտոնը և ազգանունը.

3) դատավարական գործողությանը մասնակցող յուրաքանչյուր անձի ազգանունը, անունը, հայրանունը, դատավարական կարգավիճակը, անհրաժեշտության դեպքում՝ հասցեն և անձնական այլ տվյալներ:

4. Դատավարական գործողություններն արձանագրության մեջ նկարագրվում են այն հաջորդականությամբ, որով դրանք տեղի են ունեցել: Արձանագրության մեջ նշվում են նաև դատավարական գործողության արդյունքում ձեռք բերված և վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները, շարադրվում են դատավարական գործողության մասնակիցների հայտարարությունները:

5. Արձանագրության մեջ նշվում են տեղեկություններ դատավարական գործողության ընթացքում կիրառված տեխնիկական միջոցների, դրանց օգտագործման կարգի և պայմանների, այն օբյեկտների, որոնց նկատմամբ տեխնիկական միջոցները կիրառվել են, և ստացված արդյունքների, ինչպես նաև մասնակիցներին տեխնիկական միջոցների կիրառման մասին նախազգուշացնելու վերաբերյալ:

Տեխնիկական միջոցների կիրառման արդյունքում ստացված լուսանկարները, ձայնագրությունները, տեսագրությունները, կազմված գծագրերը, պլանները, ինչպես նաև պատրաստված ծեփապատճենները և հետքերի դրոշմները կցվում են արձանագրությանը և չեն կարող օգտագործվել դրանից անջատ:

6. Արձանագրությունը ներկայացվում է դատավարական գործողությանը մասնակցած անձանց՝ ծանոթացման համար: Նշված անձանց բացատրվում է արձանագրությունում լրացումներ և ուղղումներ կատարելու իրենց իրավունքը: Արձանագրությունում լրացումներ և ուղղումներ կատարելու վերաբերյալ բոլոր

հայտարարությունները ստորագրում են դատավարական գործողությանը մասնակցած անձինք:

7. Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և դատավարական գործողությանը մասնակցող անձինք: Դատավարական գործողությանը մասնակցած որևէ անձի՝ արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում այն կազմող անձը արձանագրությունում այդ մասին կատարում է համապատասխան գրառում, որը հավաստվում է դատավարական գործողությանը մասնակցած մյուս անձանց ստորագրություններով:

Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվող անձին հնարավորություն է տրվում բացատրելու հրաժարման պատճառները կամ պատճառները բացատրելուց հրաժարվելը, ինչը նույնպես արձանագրվում է:

Եթե դատավարական գործողության մասնակիցը ֆիզիկական թերությունների կամ առողջական վիճակի կամ անգրագիտության հետևանքով զրկված է արձանագրությունն անձամբ ստորագրելու հնարավորությունից, ապա արձանագրությունը տվյալ անձին ծանոթության է ներկայացվում դատավարական գործողության մյուս մասնակիցների ներկայությամբ, որոնք իրենց ստորագրություններով հաստատում են արձանագրության բովանդակության համապատասխանությունն իրականությանը և համապատասխան անձի կողմից այն ստորագրելու անհնարինությունը:

8. Արձանագրությունը պետք է պարունակի նաև գրառումներ դատավարական գործողության մասնակիցներին իրենց իրավունքներն ու պարտականությունները բացատրելու, պարտականությունները չկատարելու հետևանքները պարզաբանելու, դատավարական գործողության իրականացման ընդհանուր կարգը բացատրելու մասին, ինչը հավաստվում է դատավարական գործողության մասնակիցների ստորագրություններով:

Հոդված 143. Քրեական վարույթի նյութերը

1. Քրեական վարույթի բոլոր նյութերը պահվում են քրեական գործում:

2. Քրեական գործին կցվող յուրաքանչյուր փաստաթուղթ անմիջապես համարակալվում է ըստ էջերի: Քրեական վարույթն իրականացնող մարմիններն

իրականացնում են գործի էջերի հերթական համարակալումը՝ դրանց կցման ժամանակագրական կարգով:

3. Բոլոր դատավարական որոշումները և արձանագրությունները շարադրվում են համարակալված ձևաթղթերի վրա, որոնք համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր:

4. Քրեական վարույթի նյութերը պահվում են մեկ կամ մեկից ավելի հատորներում՝ յուրաքանչյուրի կազմի վրա համապատասխան գրառումներով և նրանցում պարունակվող նյութերի ցուցակով:

5. Այն առարկաները և փաստաթղթերը, որոնք իրենց բնույթով կամ մեծածավալությամբ չեն կարող պահվել քրեական գործում, պահվում են գործից առանձին՝ որպես նրա անբաժան մաս: Քրեական գործից առանձին պահվող առարկաների և փաստաթղթերի ցուցակը կցվում է քրեական գործին:

6. Քրեական վարույթի նյութերը կարող են պատճենահանվել թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, որը հավաստում է պատճենի ճշտությունը:

Հոդված 144. Քրեական վարույթների միացումը և անջատումը

1. Քննիչի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել՝

1) նույն անձի կողմից մեկից ավելի հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթները.

2) մեկից ավելի անձանց կողմից նույն կամ մեկից ավելի հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթները.

3) միմյանց հետ փոխկապակցված մեկից ավելի հանցանքների վերաբերյալ վարույթները՝ արդարադատության (իրավունքի) շահից ելնելով:

2. Մեկից ավելի անձանց կողմից մեկ կամ ավելի հանցանքներ կատարելու կապակցությամբ իրականացվող վարույթը մասամբ կարող է անջատվել, եթե դա թելադրված է արդարադատության (իրավունքի) շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի լրիվության և օբյեկտիվության վրա:

3. Քրեական վարույթները միացնելու կամ անջատելու մասին կայացվում է պատճառաբանված որոշում, որի մեջ նշվում են քրեական վարույթ նախաձեռնելու առիթը, ենթադրյալ հանցանքի փաստական հանգամանքները, հայտնի լինելու դեպքում՝ քրեորեն հետապնդելի արարքը կատարելու մեջ մեղադրվող անձի (անձանց) տվյալները, տեղեկություններ միացված կամ անջատված վարույթը ստանձնող մարմնի կամ պաշտոնատար անձի վերաբերյալ:

4. Որոշմանը բնօրինակով կամ պատճենով կցվում են վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև որոշումների, արձանագրությունների, փաստաթղթերի և իրեղեն ապացույցների ցանկը:

5. Քրեական վարույթի միացման կամ անջատման մասին գրավոր տեղեկացվում են վարույթի մասնավոր մասնակիցները, իսկ մինչդատական վարույթի ընթացքում կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հսկող դատախազին:

Հոդված 145. Քրեական վարույթի կարճման հիմքերը

1. Քրեական վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) հաստատվել է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը.

2) քրեական վարույթն իրականացվել է օրենքով չնախատեսված աղբյուրից ստացված հաղորդման հիման վրա.

3) մեղադրյալի նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը և սպառվել են վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները.

4) սույն օրենսգրքով նախատեսված ղեպքերում քրեական հետապնդումը կարող է իրականացվել միայն մասնավոր կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական վարույթը կարող է կարճվել միայն մինչդատական վարույթում:

Հոդված 146. Քրեական վարույթի ավարտը

Քրեական վարույթն ավարտվում է՝

1) քրեական վարույթը կարճելու մասին որոշումն ուժի մեջ մտնելով.

2) եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելով, եթե այն կատարման հանձնելու համար հատուկ միջոցների ձեռնարկում չի պահանջվում.

3) եզրափակիչ դատական ակտը կատարման հանձնելով:

Հոդված 147. Կորած քրեական գործի վերականգնումը

1. Քրեական գործի կորստի դեպքում դատախազը կամ դատարանը որոշում են ընդունում այն վերականգնելու մասին և անհրաժեշտության դեպքում այն ուղարկում քննության:

2. Քրեական գործի նյութերը վերականգնվում են համապատասխան փաստաթղթերից պատճեններ հանելու միջոցով, եթե հնարավոր է դրանք ստանալ, կամ անհրաժեշտ դատավարական գործողությունները նորից իրականացնելու միջոցով:

ԳԼՈՒԽ 18
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Հոդված 148. Վարույթի մասնակից ճանաչելու միջնորդության իրավունքը

1. Վարույթի մասնակից չհանդիսացող ցանկացած անձ, սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, իրավունք ունի միջնորդելու իրեն ճանաչել տուժող, գույքային պատասխանող, նրանց ներկայացուցիչ:

2. Տուժող, գույքային պատասխանող, նրանց ներկայացուցիչ ճանաչելու մասին անձի միջնորդությունը պետք է անհապաղ քննության առնվի քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ այն ստանալու պահից 3 օրվա ընթացքում: Միջնորդության վերաբերյալ ընդունված որոշման մասին անմիջապես ծանուցվում է դիմողը՝ նրան ուղարկելով համապատասխան որոշման պատճենը:

3. Դիմողն իրավունք ունի իրեն վարույթի մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ միջնորդության լուծումը հետաձգելու մասին որոշման պատճենը ստանալուց 5 օրվա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարան կամ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման պատճենը չի ստացվել բողոք տալու պահից մեկ

ամսվա ընթացքում, դիմել դատարան՝ իրեն վարույթի մասնակից ճանաչելու մասին պահանջով:

4. Մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի մերձավոր ազգականը կարող է միջնորդել իրեն ճանաչել տուժող: Նշված միջնորդությունը քննության է առնվում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով:

Հոդված 149. Վարույթի մասնակցի իրավունքների և պարտականությունների պարզաբանումը, դրանց իրականացման հնարավորության ապահովումը

1. Վարույթին մասնակցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի իմանալ իր իրավունքները և պարտականությունները, իր ընտրած դիրքորոշման իրավական հետևանքները, իր մասնակցությամբ կատարվող դատավարական գործողությունների նշանակությունը:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վարույթի յուրաքանչյուր մասնակցի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վարույթի մասնակցին հայտնել այն անձանց անունները, ազգանունները և նրանց մասին այլ անհրաժեշտ տվյալներ, որոնց կարող է բացարկ հայտնվել:

4. Վարույթի մասնակցի կարգավիճակ ձեռք բերած անձին նրա իրավունքները և պարտականությունները պարտադիր պարզաբանվում են նախքան նրա մասնակցությամբ կատարվող դատավարական գործողությունը սկսվելը և նրա կողմից՝ որպես դատավարության մասնակից, որևէ դիրքորոշում արտահայտելը:

Դատարանը պարտավոր է դատական նիստին ներկայացած վարույթի մասնակցին պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները՝ անկախ դրանց՝ մինչդատական վարույթի ընթացքում պարզաբանված լինելուց:

5. Քրեական վարույթն իրականացնող մարմինը և քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձը պարտավոր են ընթերակային,

թարգմանչին, փորձագետին, վկային նրանց մասնակցությամբ կատարվող յուրաքանչյուր քննչական կամ այլ դատավարական գործողություն սկսվելուց առաջ պարզաբանել նրանց իրավունքները և պարտականությունները: Վկային նրա իրավունքները և պարտականությունները կարող է մեկ անգամ պարզաբանվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ նրա առաջին հարցաքննությունից առաջ, և կրկին՝ դատական նիստում:

Հոդված 150. Միջնորդությունները քննության առնելու պարտադիր լինելը

1. Քրեական վարույթի մասնակցի միջնորդությունները պետք է մտցվեն դատական նիստի կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ, իսկ գրավոր միջնորդությունները՝ կցվեն քրեական գործին:

2. Միջնորդությունները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: Միջնորդության լուծումը կարող է հետաձգվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ոչ ժամանակին հարուցված միջնորդությունը թողնվում է առանց քննության:

3. Միջնորդության վերաբերյալ ընդունված որոշումները պետք է լինեն պատճառաբանված: Միջնորդության վերաբերյալ ընդունված որոշման մասին քրեական վարույթն իրականացնող մարմինն անմիջապես տեղյակ է պահում վարույթի՝ միջնորդություն հարուցած մասնակցին:

4. Միջնորդության մերժումը չի խոչընդոտում դրա կրկին ներկայացմանը քրեական դատավարության հետագա փուլերում կամ քրեական վարույթն իրականացնող այլ մարմնին: Քրեական վարույթի նույն փուլում կամ քրեական վարույթն իրականացնող նույն մարմնին միջնորդության կրկին ներկայացում հնարավոր է, եթե այն հիմնավորելու համար բերվում են նոր փաստարկներ, կամ վարույթի ընթացքում հաստատվել է դրա բավարարման անհրաժեշտությունը:

5. Վարույթի մասնավոր մասնակցի միջնորդության վերաբերյալ սույն օրենսգրքով նախատեսված ժամկետում վարույթն իրականացնող մարմնի կողմից

որոշում չկայացնելու դեպքում միջնորդությունը համարվում է բավարարված, և անձը կարող է իրականացնել դրանից բխող և սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները և հնարավորությունները:

Հոդված 151. Դատարանի և վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերի բողոքարկման ազատությունը

1. Դատարանի, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերը սույն օրենսգրքով սահմանված կարգով կարող են բողոքարկվել քրեական վարույթի մասնավոր մասնակիցների, ինչպես նաև այն անձանց կողմից, ում իրավունքներին և իրավաչափ շահերին առնչվում է տվյալ վարութային ակտը:

2. Բողոքները կարող են լինել գրավոր, իսկ նրանց գրավոր ձևը սույն օրենսգրքով հատուկ նախատեսված չլինելու դեպքում՝ նաև բանավոր: Քրեական վարույթն իրականացնող մարմինը բանավոր բողոքը մտցնում է տվյալ պահին կատարվող դատավարական գործողության արձանագրության մեջ կամ կազմում առանձին արձանագրություն:

3. Բողոքները վարույթի մասնավոր մասնակիցը տալիս է անձամբ կամ քրեական վարույթն իրականացնող այն մարմնի միջոցով, որի գործողությունները կամ որոշումները բողոքարկվում են: Իր կամ այլ անձանց գործողությունների կամ որոշումների դեմ բողոքն ընդունող հանրային մասնակիցը պարտավոր է անմիջապես, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում բողոքն ուղարկել ըստ ենթակայության, եթե սույն օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ:

4. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բողոք ներկայացնելը կասեցնում է բողոքարկվող որոշման կատարումը:

5. Վարույթի մասնակցի բողոքը պետք է անհապաղ քննության առնվի քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 3 օրվա ընթացքում: Սույն օրենսգրքով կարող են նախատեսվել բողոքների քննության նաև այլ ժամկետներ:

6. Բողոքը կարող է թողնվել առանց քննության և վերադարձվել վարույթի մասնակցին, եթե այն ստորագրված չէ նրա կամ նրա ներկայացուցչի կողմից կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին:

7. Բողոք տված անձն իրավունք ունի հետ վերցնել այն: Մեղադրյալն իրավունք ունի հետ վերցնել իր պաշտպանի բողոքը, տուժողը կամ գույքային պատասխանողն իրավունք ունեն հետ վերցնել իրենց լիազոր ներկայացուցչների բողոքները, բացառությամբ օրինական ներկայացուցչի բողոքի: Ի շահ մեղադրյալի ներկայացված բողոքը կարող է հետ վերցվել միայն նրա համաձայնությամբ: Բողոքը հետ վերցնելը չի խոչընդոտում նախքան սահմանված ժամկետները լրանալը դա կրկին ներկայացնելուն, բացի սույն օրենսգրքով նախատեսված դեպքերից:

8. Քրեական վարույթն իրականացնող մարմինը բողոքի վերաբերյալ ընդունում է պատճառաբանված որոշում: Այդ որոշման և դրա բողոքարկման կարգի մասին վարույթն իրականացնող մարմինն անհապաղ տեղյակ է պահում բողոք տված անձին:

9. Եթե քրեական վարույթն իրականացնող մարմինը սույն օրենսգրքով սահմանված ժամկետում ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում չի կայացնում, ապա բողոքը համարվում է բավարարված և անձը կարող է իրականացնել դրանից բխող և սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները և հնարավորությունները:

ԳԼՈՒԽ 19
ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ

Հոդված 152. Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը

1. Հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից ելնելով՝ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կամ մասնավոր կարգով:

2. Սույն օրենսգրքի 491-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է մասնավոր կարգով:

3. Մնացած բոլոր հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցանքների համակցության դեպքում քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

Հոդված 153. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները

1. Քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե՝

1) ապացուցվել է մեղադրյալի կողմից իրեն մեղսագրվող արարքը չկատարելը.

2) մեղադրյալի կատարած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.

3) առկա է անձին մեղասագրվող արարքի կապակցությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ այլ դատական ակտ, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.

4) առկա է անձին մեղասագրվող արարքի կապակցությամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատախազի չվերացված որոշում.

5) անցել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները.

6) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

7) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթն անհրաժեշտ է շարունակել մահացածի իրավունքների վերականգնման համար կամ այլ անձանց նկատմամբ նոր հանգամանքների հիմքով վարույթը վերսկսելու համար.

8) անձը կամովին հրաժարվել է հանցանքը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցանքի հատկանիշներ չի պարունակում.

9) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.

10) ընդունված համաներման ակտը կիրառելի է անձի նկատմամբ.

11) անձին մեղսագրվող արարքն ապաքրեականացվել է.

12) մեղադրյալը կամ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը օգտվում է քրեական հետապնդման անձեռնմխելիությունից և իրավասու մարմինը պատշաճ իրավական ընթացակարգի արդյունքում նրան չի զրկել այդ անձեռնմխելիությունից.

13) լրացել են սույն օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման առավելագույն ժամկետները, և հսկող դատախազը քրեական գործը չի ուղարկել դատարան:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում մեղադրյալը ստանում է ռեաբիլիտացիայի իրավունք:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը չի տարածվում քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին մահացած ճանաչելու դեպքերի վրա:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ, 10-րդ և 11-րդ կետերում նշված հիմքերով քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե անձն առարկում է դրա դեմ: Այս դեպքում քրեական վարույթը շարունակվում է սովորական կարգով:

ԲԱԺԻՆ 6

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՅՑԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

ԳԼՈՒԽ 20

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՅՑԸ

Հոդված 154. Գույքային հայցի քննության ընթացքում կիրառվող օրենսդրությունը

1. Գույքային հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:

2. Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և գույքային հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով:

3. Գույքային հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան:

4. Քրեական դատավարությունում գույքային հայցի վրա չեն տարածվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետները և հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքը, ինչպես նաև քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված հակընդդեմ հայց հարուցելու կանոնները:

Հոդված 155. Գույքային հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի նշանակությունը

1. Նույն գույքային հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը, հայցից տուժողի հրաժարումն ընդունելու կամ հաշտության համաձայնությունը հաստատելու մասին դատարանի որոշումը, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, որով հայցը մերժվել կամ լրիվ կամ մասնակի բավարարվել է, բացառում է գույքային հայցի հարուցումը:

2. Գույքային հայց չհարուցելու դեպքում անձն իրավունք ունի այդպիսի հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով:

3. Գույքային հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով:

Հոդված 156. Գույքային հայցի հարուցումը

1. Մասնավոր շահերի պաշտպանության համար գույքային հայցը հարուցում և պաշտպանում է տուժողը, իսկ պետական շահերի պաշտպանության համար՝ դատախազը:

2. Գույքային հայցը կարող է հարուցվել գործը դատարան ուղարկելուց հետո՝ մինչև նախնական լսումների ավարտը: Վարույթին ավելի ուշ ներգրավված տուժողն իրավասու է գույքային հայց հարուցել տուժող ճանաչվելուց անմիջապես հետո:

3. Գույքային հայց հարուցվում է մեղադրյալի կամ այն անձի դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

4. Հայցադիմումում նշվում է, թե որ վարույթով, ով, ում դեմ, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում գույքային հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:

5. Դատարանը կարող է հրաժարվել հայցադիմումն ընդունելուց, եթե այն չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին:

6. Գույքային հայցն ազատվում է պետական տուրքի գանձումից:

Հոդված 157. Գույքային հայցով հատուցման ապահովումը

Դատարանը պարտավոր է գույքային հայց ներկայացրած անձի կամ սեփական նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու գույքային հայցը:

Հոդված 158. Գույքային հայցից հրաժարվելը

1. Գույքային հայց ներկայացրած անձն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել հայցից, եթե դրանով չեն խախտվում այլ անձանց իրավունքները և իրավաչափ շահերը:

2. Գույքային հայցից հրաժարվելն ընդունելը հանգեցնում է գույքային հայցով վարույթի կարճման և համապատասխան անձին զրկում է տվյալ գույքային հայցը քրեական կամ քաղաքացիական դատավարության կարգով կրկին հարուցելու հնարավորությունից:

3. Գույքային հայցից հրաժարվելը հիմք չէ առաջադրված մեղադրանքը վերացնելու, փոփոխելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու համար:

Հոդված 159. Գույքային հայցի ընդդատությունը

Գույքային հայցը քննվում է քրեական գործի հետ միասին՝ ըստ վերջինիս ընդդատության:

Հոդված 160. Գույքային հայցի լուծումը

Գույքային հայցը լուծվում է դատավճռով: Ակնհայտ անհիմն կամ ոչ պատշաճ լինելու դեպքում գույքային հայցը կարող է լուծվել մինչև վերդիկտի կայացումը:

Հոդված 161. Գույքային վնասի հատուցումը դատարանի նախաձեռնությամբ

Անկախ գույքային հայցից՝ դատարանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին:

ԳԼՈՒԽ 21

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Հոդված 162. Փաստաբանի վարձատրությունը

1. Փաստաբանի կողմից ցույց տրվող իրավաբանական օգնությունը վարձատրվում է վստահորդի միջոցների հաշվին՝ փաստաբանի և վստահորդի միջև փոխհամաձայնեցված պայմաններով կամ փաստաբանի համաձայնությամբ ցույց է տրվում անվճար:

2. Նշանակված պաշտպանի կամ ներկայացուցչի կողմից մեղադրյալին կամ տուժողին ցույց տրվող իրավաբանական օգնությունը վարձատրվում է պետական միջոցների հաշվին:

3. Դատարանն իրավունք ունի վճարունակ տուժողի կամ դատապարտյալի վրա դնել նրան ցույց տրված իրավաբանական օգնության վճարման համար պետության կրած ծախսերի հատուցումը, բացի այն դեպքերից, երբ մեղադրյալին իրավաբանական օգնությունը ցույց է տրվել անկախ իր կամքից:

Հոդված 163. Թարգմանչի և փորձագետի վարձատրությունը

1. Թարգմանիչը և փորձագետը ստանում են՝

1) աշխատանքի վայրից աշխատավարձ, եթե աշխատանքը կատարել են ծառայության առաջադրանքի կարգով.

2) վարույթն իրականացնող մարմնի հետ պայմանավորված չափով վարձատրություն՝ պետական միջոցների հաշվին, եթե աշխատանքը կատարել են վարույթն իրականացնող մարմնի պահանջով.

3) համապատասխան կողմի հետ պայմանավորված չափով վարձատրություն, եթե աշխատանքը կատարել են տվյալ կողմի հետ ունեցած պայմանավորվածությամբ:

2. Սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում վարձատրությունը տրվում է թարգմանչի կամ փորձագետի կողմից հաշիվ ներկայացնելուց հետո՝ վարույթն իրականացնող մարմնի կայացրած որոշման հիման վրա:

Հոդված 164. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց ծախսերի հատուցումը

1. Պետական միջոցների հաշվին ենթակա են հատուցման տուժողի, գույքային պատասխանողի, մեղադրյալի օրինական ներկայացուցչի, նշանակված պաշտպանի, ընթերակայի, թարգմանչի, փորձագետի, վկայի կրած հետևյալ ծախսերը՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու՝ երկաթուղային, ջրային, ավտոմոբիլային և տրանսպորտի այլ տեսակներով երթևեկության արժեքը, իսկ քրեական վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ՝ նաև օդային տրանսպորտով երթևեկության արժեքը.

2) բնակտարածության վարձակալության արժեքը՝ ծառայողական գործուղումների վճարման համար ընդունված նորմերով, եթե այդ ծախսերն այլ կերպ չեն հատուցվել.

3) վարույթն իրականացնող մարմնի պահանջով մշտական բնակության վայրից դուրս տվյալ անձանց բնակվելու համար անհրաժեշտ օրապահիկը, եթե այն այլ կերպ չի հատուցվել.

4) միջին աշխատավարձն այն ամբողջ ժամանակի համար, որը քրեական վարույթին մասնակցելու համար վարույթն իրականացնող մարմնի պահանջով անձը եղել է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, բացի այն դեպքերից, երբ միջին աշխատավարձն այդ անձի գործատուի կողմից պահպանվել է.

5) վարույթն իրականացնող մարմնի պահանջով դատավարական կամ օպերատիվ-հետախուզական գործողությանը մասնակցելու հետևանքով աղտոտված, փչացած կամ կորած գույքի մաքրման, նորոգման, վերականգնման կամ ձեռքբերման ծախսերը:

2. Փորձագետին հատուցվում է նաև նրան պատկանող օգտագործված նյութերի արժեքը, որոնք նրա կողմից ծախսվել են հանձնարարված աշխատանքը կատարելիս, ինչպես նաև աշխատանքի կատարման համար անհրաժեշտ սարքավորումներն օգտագործելու, ծառայություններ ստանալու համար կատարած ծախսերը:

3. Վարույթի ընթացքում կրած ծախսերը վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա ենթակա են հատուցման սույն հոդվածի առաջին մասում թվարկված անձանց դիմումի համաձայն՝ օրենսդրությամբ սահմանված չափով: Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված ծախսերը կարող են օրենսդրությանը համապատասխան հատուցվել վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ:

ԳԼՈՒԽ 22
ՎԱՐՈՒԹԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ

Հոդված 165. Վարութային ծախսերը

1. Վարութային ծախսեր են՝

1) հանցագործության հետևանքով տուժողին պատճառված վնասի հատուցման գումարները.

2) տուժողի, փորձագետի, վկայի ներկայանալու և օրապահիկի ծախսերի հատուցման գումարները.

3) փորձագետի, թարգմանչի վարձատրության գումարները.

4) նշանակված պաշտպանին վճարվելիք գումարները.

5) իրեղեն ապացույցների պահպանման, առաքման և հետազոտման համար ծախսված գումարները.

6) հետախուզման համար իրավասու մարմնի կողմից ծախսված գումարները.

7) փորձաքննություն, քննչական փորձարարություն կատարելիս փչացած կամ ոչնչացած իրերի արժեքի և վարույթի ընթացքում կրած նման այլ ծախսերի հատուցման համար ծախսված գումարները.

8) վարույթի պատշաճ իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների համար ծախսված գումարները:

2. Հանրային մեղադրանքի գործերով վարութային ծախսերը վճարվում են պետական միջոցների հաշվին, եթե սույն օրենսգրքով այլ կարգ սահմանված չէ:

Հոդված 166. Վարութային ծախսերի գանձումը

1. Եթե դատապարտյալը վճարունակ է, ապա սույն օրենսգրքի 165-րդ հոդվածի առաջին մասի 1-6-րդ կետերում թվարկված վարութային ծախսերը դատարանը դնում է նրա վրա:

2. Նույն վարույթի շրջանակներում մի քանի անձանց դատապարտվելու դեպքում վարութային ծախսերը գանձվում են նրանցից յուրաքանչյուրից՝ ըստ դատարանի կողմից որոշված բաժնի՝ հաշվի առնելով այդ անձանց մեղավորության, նրանց նկատմամբ նշանակված պատժի խստության աստիճանը և յուրաքանչյուրի գույքային դրությունը:

3. Անչափահասին դատապարտելու դեպքում վարութային ծախսերը կարող են դրվել նրա օրինական ներկայացուցչի վրա:

4. Եթե մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը մեղադրյալը մահացել է, ապա նրա ժառանգները պատասխանատու չեն վարութային ծախսերի հետ կապված նրա պարտավորությունների համար:

5. Մասնավոր մեղադրանքի գործերով արդարացման վերդիկտի պարագայում սույն օրենսգրքի 165-րդ հոդվածի առաջին մասի 2-5-րդ կետերում թվարկված վարութային ծախսերը դատարանը դնում է տուժողի վրա:

ԲԱԺԻՆ 7

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ, ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 23

ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հոդված 167. Ծանուցագիրը

Ծանուցագիրն այն փաստաթուղթն է, որով վարույթն իրականացնող մարմինն անձին հրավիրում է նախաքննություն իրականացնող հաստատություն կամ դատարան՝ քրեական վարույթին նրա մասնակցությունն ապահովելու համար:

Հոդված 168. Ծանուցագրի բովանդակությունը

1. Ծանուցագրում նշվում է՝

1) հրավիրվող անձի անունը, ազգանունը, հասցեն և դատավարական կարգավիճակը.

2) վարույթն իրականացնող մարմնի, դատախազության կամ դատարանի անվանումը և հասցեն.

3) ներկայանալու տեղը և ժամը.

4) վարույթի հարուցման հիմքում դրված փաստը և դրա քրեաիրավական որակումը.

5) ծանուցումը ստացող անձի պարտականությունն այն հանձնելու հրավիրվող անձին.

6) չներկայանալու իրավական հետևանքները:

2. Ծանուցագրին կցվում է հրավիրվող անձի դատավարական կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների ցանկը:

3. Վկային հասցեագրված ծանուցագրում նշվում է, որ քննչական գործողությանը փաստաբանի հետ չներկայանալու դեպքում փաստաբան պահանջելու հիմքով այդ քննչական գործողությունը ենթակա չէ հետաձգման:

Հոդված 169. Ծանուցագրի ներկայացումը

1. Ծանուցագիրը հանձնվում է դրանում նշված օրվանից ոչ ուշ, քան երկու օր առաջ: Եթե դատավարական գործողությունը ծրագրավորված չէ կամ չի կարող հետաձգվել, ապա ծանուցագիրը կարող է հանձնվել ներկայանալու նախորդ օրը

կամ ներկայանալուց անմիջապես առաջ՝ դրանում նշելով ծանուցագիրն ուշ հանձնելու հիմքերը:

2. Ծանուցագիրը հանձնվում է անմիջականորեն կամ փոստով՝ հրավիրվող անձի նշած հասցեով, իսկ եթե նա առաջին անգամ է կանչվում, ապա մշտական բնակության վայրի հասցեով:

3. Այլ պետության տարածքում բնակվող անձին ծանուցագիրն ուղարկվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով կամ միջազգային պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 170. Ծանուցագիրը հանձնելը

1. Ծանուցագիրը ստորագրությամբ հանձնվում է անձամբ հրավիրվող անձին: Ծանուցագրի ստորագրության համար առանձնացված հատվածում նշվում է նաև դրա ստացման ժամանակը:

2. Հրավիրվող անձի բացակայության դեպքում ծանուցագիրը հանձնվում է նրա հետ բնակվող իր ընտանիքի չափահաս անդամներից մեկին: Այս դեպքում ծանուցագիրը ստացողը ծանուցագրի՝ ստորագրության համար առանձնացված մասում գրում է իր անունը և ազգանունը, ինչպես նաև նշում է հրավիրվող անձի հետ իր հարաբերությունների մասին: Ծանուցագիրը ստացողը պարտավոր է այն հանձնել հրավիրվող անձին:

3. Հրավիրվող անձի բացակայության դեպքում ծանուցագիրը ներկայացնող անձը ծանուցագրի՝ ստորագրության համար առանձնացված հատվածում այդ մասին նշում է կատարում, ինչպես նաև նշում է նրա գտնվելու վայրը և վերադառնալու հնարավոր ժամկետները:

4. Ծանուցագրի՝ ստորագրության համար առանձնացված մասը վերադարձվում է վարույթն իրականացնող մարմնին:

Հոդված 171. Հրավիրվող անձի պարտականությունը ընդունել ծանուցագիրը

1. Հրավիրվող անձը պարտավոր է ընդունել ծանուցագիրը:

2. Եթե հրավիրվող անձը հրաժարվում է ընդունել ծանուցագիրը, ծանուցագիրը ներկայացնողն այդ մասին նշում է կատարում ծանուցագրի՝ ստորագրության համար հատկացված մասում և ծանուցագիրը վերադարձնում վարույթն իրականացնող մարմին:

Հոդված 172. Հրավիրվող անձի՝ հասանելի լինելու պարտականությունը

1. Հրավիրվող անձը, ով վարույթն իրականացնող մարմին հայտնել է իր հասցեն, պարտավոր է այդ հասցեով հասանելի լինել:

2. Եթե ծանուցագիրը հանձնվել է սույն գլխով սահմանված կարգով, ապա ենթադրվում է, որ անձը տեղեկացվել է դատավարական գործողության կատարման տեղի և ժամանակի մասին:

ԳԼՈՒԽ 24
ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Հոդված 173. Անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքն անօրինական միջամտությունից, իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք:

2. Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն անձի անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ, ինչպես նաև անձնական բնույթի այլ տվյալներ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:

3. Անձնական կամ ընտանեկան կյանքի ինտիմ կողմերին վերաբերող ապացույցները քրեական դատավարությանը մասնակցող այն անձանց պահանջով, որոնց սպառնում է անձնական կամ ընտանեկան գաղտնիքի հրապարակումը, հետազոտվում են դռնփակ դատական նիստում:

4. Անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության խախտումն առաջ է բերում օրենքով սահմանված պատասխանատվություն, իսկ դրա հետևանքով անձին պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման օրենքով սահմանված կարգով:

Հոդված 174. Պետական գաղտնիքի պահպանումը

1. Վարույթի ընթացքում ձեռնարկվում են պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ:

2. Անձինք, որոնց քննիչն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող հրաժարվել այդ պահանջը կատարելուց՝ վկայակոչելով պետական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, սակայն իրավունք ունեն նախապես ստանալ նշված տեղեկությունների ստացման անհրաժեշտությունը հաստատող, հարցաքննության կամ այլ համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:

3. Պետական գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող պետական ծառայողն այդ մասին գրավոր հաղորդում է համապատասխան պետական մարմնի ղեկավարին, եթե դա նրան ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմինը:

4. Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ կապված քրեական վարույթը հանձնարարվում է այդպիսի տեղեկությունները չհրապարակելու մասին ստորագրություն տված դատավորներին, դատախազներին, քննիչներին, հետաքննության մարմնի աշխատակիցներին:

5. Վարույթի այն մասնավոր մասնակիցները, որոնց ծանոթացման համար ներկայացվում կամ այլ կերպ հաղորդվում են պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, պետք է նախապես ստորագրություն տան այդպիսի տվյալների չհրապարակման մասին: Ստորագրություն տալուց հրաժարվելու դեպքում պաշտպանը և լիազոր ներկայացուցիչը պատճառաբանված որոշմամբ հեռացվում են վարույթից, իսկ մյուս մասնավոր մասնակիցները պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ չեն ստանում:

Հոդված 175. Ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը

1. Վարույթի ընթացքում ձեռնարկվում են ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ:

2. Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով դատավարական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:

3. Անձինք, որոնց քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող հրաժարվել այդ պահանջը կատարելուց՝ վկայակոչելով ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, սակայն իրավունք ունեն դատարանից, դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալ նրանց կողմից նշված տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը հաստատող, համապատասխան քննչական կամ դատավարական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:

4. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող անձն այդ մասին գրավոր հաղորդում է համապատասխան ղեկավարին, եթե դա նրան ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմինը:

5. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցներն այն անձանց

պահանջով, որոնց սպառնում է նշված տեղեկությունների հրապարակումը, կարող են հետազոտվել դռնփակ դատական նիստում:

ԳԼՈՒԽ 25
ՎԱՐՈՒԹԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հոդված 176. Ժամկետների հաշվումը

1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետը վերջանում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետը լրանալու օրը ոչ աշխատանքային է, ապա ժամկետի վերջին օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, իսկ կալանքի տակ գտնվող կամ բժշկական հաստատությունում տեղավորված անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանքի տակ պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնված է մինչև ժամկետը լրանալը: Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, իսկ կալանքի տակ պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով:

5. Պաշտոնատար անձանց կողմից սահմանված ժամկետը պահպանելը հաստատվում է դատավարական փաստաթղթերում՝ համապատասխան նշումով:

Վարույթին ներգրավված անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը հաստատվում է գործին կցված նրանց ստորագրությամբ:

Հոդված 177. Ժամկետը բաց թողնելու հետևանքները և դրա վերականգնման կարգը

1. Ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում:

2. Բաց թողնված ժամկետի վերականգնում հնարավոր է, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

3. Հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը վերականգնվում է վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ շահագրգիռ անձի միջնորդությամբ: Ժամկետը վերականգնվում է այն բաց թողած անձի համար, այլ ոչ ուրիշ անձանց, եթե վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

4. Այն որոշման կատարումը, որը բողոքարկված է սահմանված ժամկետի բացթողումով, նշված անձի միջնորդությամբ կարող է կասեցվել մինչև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը:

5. Բաց թողնված ժամկետը վերականգնելուց քննիչի հրաժարումը կարող է բողոքարկվել դատախազին: Բաց թողնված ժամկետը վերականգնելուց դատարանի հրաժարումը վերադաս դատարան բողոքարկման ենթակա չէ, սակայն վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը՝ իր վարույթում գտնվող գործով:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ 8
ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

ԳԼՈՒԽ 26
ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՆԱԽԱՁԵՌՆԵԼԸ

Հոդված 178. Քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունը

1. Դատախազը կամ քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին հաղորդումը ստացվել է՝

1) ֆիզիկական անձից.

2) իրավաբանական անձից.

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից՝ նրա գործունեության կապակցությամբ.

4) հետաքննության մարմնից, քննիչից, դատախազից կամ դատավորից՝ իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ:

2. Զանգվածային լրատվության միջոցներում առևերույթ հանցանքի մասին հրապարակված տեղեկությունները դատախազի կամ քննիչի համար կարող են քրեական վարույթ նախաձեռնելու առիթ լինել:

3. Քրեական վարույթ չի կարող նախաձեռնվել, եթե հանցանքի մասին հաղորդումը ստացվել է սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված, այդ թվում՝ անհայտ կամ չբացահայտված աղբյուրից: Այդպիսի հաղորդումը կարող է ստուգվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության» մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 179. Ֆիզիկական անձի հաղորդումը

1. Առերևույթ հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդումը կարող է լինել գրավոր կամ բանավոր, որը շարադրվում է առաջին դեմքով:

2. Հաղորդումը պետք է պարունակի այն ներկայացրած անձի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան թիվը, բնակության հասցեն, ինչպես նաև բացահայտի ֆիզիկական անձի առնչությունը հանցագործությանը և նրա իրազեկության աղբյուրը:

3. Այն դեպքում, երբ լրացել է հաղորդում ներկայացրած ֆիզիկական անձի 16 տարին, նա նախազգուշացվում է սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

Հոդված 180. Իրավաբանական անձի հաղորդումը

1. Իրավաբանական անձի հաղորդումը պետք է ունենա ձևաթղթի վրա շարադրված պաշտոնական նամակի կամ վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի կամ հաղորդումների այլ ընդունված ձև:

2. Հաղորդումը պետք է պարունակի այն ներկայացրած իրավաբանական անձի լրիվ անվանումը, իրավաբանական հասցեն, ինչպես նաև բացահայտի իրավաբանական անձի առնչությունը հանցագործությանը և նրա իրազեկության աղբյուրը:

Հոդված 181. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հաղորդումը

1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հաղորդումը պետք է ունենա ձևաթղթի վրա շարադրված և կնիքով հաստատված պաշտոնական նամակի կամ վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի կամ հաղորդումների այլ ընդունված ձև:

2. Հաղորդումը պետք է պարունակի այն ներկայացրած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ անվանումը և հասցեն կամ համապատասխան պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ինչպես նաև բացահայտի համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի այն

գործունեությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել առերևույթ հանցանքի փաստը:

Հոդված 182. Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի հաղորդումը

1. Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի հաղորդումը պետք է ունենա ձևաթղթի վրա շարադրված և կնիքով հաստատված պաշտոնական նամակի կամ վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի կամ հաղորդումների այլ ընդունված ձև:

2. Հաղորդումը պետք է պարունակի այն ներկայացրած մարմնի լրիվ անվանումը և հասցեն կամ համապատասխան պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ինչպես նաև բացահայտի համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի այն լիազորությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել առերևույթ հանցանքի փաստը:

Հոդված 183. Հանցագործության մասին հաղորդումն արձանագրելը

1. Սույն օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված աղբյուրից առերևույթ հանցագործության մասին հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում դատախազը կամ քննիչն անհապաղ կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն:

2. Արձանագրության մեջ նշվում են քրեական վարույթ նախաձեռնող պաշտոնատար անձի տվյալները, քրեական վարույթ նախաձեռնելու առիթը, կատարված առերևույթ կոնկրետ հանցանքի նկարագրությունը և այն կատարած անձը (որքանով այդ տեղեկությունները հայտնի են վարույթը նախաձեռնելու պահին), քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի հատկանիշներով սկսվում է վարույթը, հաղորդմանը կցված նյութերի ցանկը՝ այդպիսիք լինելու դեպքում:

3. Արձանագրության պատճենն այն կազմելուց անմիջապես հետո հանձնվում կամ ուղարկվում է հաղորդումը ներկայացրած անձին:

Հոդված 184. Քրեական վարույթի ընթացքը այն նախաձեռնելուց հետո

1. Քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրությունը կազմելուց հետո՝

1) դատախազը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, քննչական մարմնի ղեկավարին նախաքննություն կատարելու հանձնարարություն է տալիս.

2) քննիչը ձեռնամուխ է լինում նախաքննության կատարմանը՝ այդ մասին գրավոր անհապաղ տեղյակ պահելով հսկող դատախազին:

2. Քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կազմելու հետ միաժամանակ իրավասու անձը պարտավոր է իր իրավասության սահմաններում ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցառումները քրեորեն հետապնդելի արարքը կանխելու կամ խափանելու, այն կատարած անձին հայտնաբերելու, ինչպես նաև հանցագործության հետքերը կամ վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները կամ փաստաթղթերը պահելու և պահպանելու ուղղությամբ:

3. Եթե քրեական վարույթ նախաձեռնած քննիչը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, իրավասու չէ նախաքննություն կատարել, նա իրավիճակից թելադրվող անհրաժեշտ բոլոր գործողությունները կատարելուց հետո քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրությունը ուղարկում է հսկող դատախազին՝ դրան կցելով վարույթի բոլոր նյութերը:

4. Կատարվող նախաքննության ընթացքում նույն անձի կողմից այլ հանցագործություն կատարելու փաստի հայտնաբերման դեպքում նոր քրեական վարույթ կարող է չնախաձեռնվել, եթե արդեն իսկ սկսված վարույթի շրջանակներում նախաքննությունը հնարավոր է իրականացնել ամբողջ ծավալով:

ԳԼՈՒԽ 27

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 185. Նախաքննության ձևերը

1. Նախաքննությունն իրականացվում է ընդհանուր կամ պարզեցված կարգով:

2. Նախաքննությունը ծանր և առաձնապես ծանր հանցագործությունների կապակցությամբ իրականացվում է ընդհանուր, իսկ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կապակցությամբ՝ պարզեցված կարգով:

3. Ելնելով վարույթի բնույթից, նշանակությունից, վարույթի մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, ինչպես նաև բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով դատախազի որոշմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության վերաբերյալ ցանկացած վարույթ կարող է իրականացվել ընդհանուր նախաքննության կարգով:

Հոդված 186. Նախաքննության մարմինները

Իրենց իրավասության սահմաններում նախաքննություն իրականացնում են ոստիկանության, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների, պաշտպանության նախարարության, հատուկ քննչական ծառայության քննիչները:

Հոդված 187. Քննչական ենթակայությունը

1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-164, 166-187, 191, 192, 195-201, 204, 212-214, 218, 222, 223, 225, 225.1 , 227-232, 235-249, 251-298, 300, 300.1, 300.2, 301, 301.1, 308-328, 331-332.3, 336, 341, 343-345.1, 347-355 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթով կատարում են ոստիկանության քննիչները:

2. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188, 189, 193, 194, 202, 203, 205-211 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթով կատարում են ոստիկանության կամ հարկային մարմինների քննիչները:

3. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190, 217, 217.1, 219-221, 224, 226, 233, 234, 250, 299, 302-307, 329, 330, 384-397.1

հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

4. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ վարույթով կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները:

5. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային զինվորական ծառայության զինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոմսերի կառավարման լիազորությունը հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ նախաքննությունը կատարում են պաշտպանության նախարարության քննիչները:

6. Նախաքննությունը օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների կապակցությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 154.1, 154.2 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է նախաքննության այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթ հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող:

7. Սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերում նախաքննությունը կատարում է այն մարմինը, որը սկսել է տվյալ վարույթը, բացառությամբ, երբ դատախազն այն հանձնում է նախաքննության այլ մարմնի:

8. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 128, 165, 200, 208, 209, 216, 308-310, 314, 315, 333-335, 337-340, 342, 345 և 346 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթով կատարում է նախաքննության այն մարմինը, որի վարույթում բացահայտվել է այդ հանցագործությունը:

9. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188, 189, 205, 206, 235, 263, 266, 268, 271, 272, 275 և 325 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթով կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վարույթը դատախազը հանձնարարում է նախաքննության այլ մարմնի:

10. Տարբեր մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ վարույթները մեկ վարույթում միացնելու կամ նախաքննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է դատախազը:

Հատուկ քննչական ծառայության քննիչը չի կարող իրականացնել նախաքննության այլ մարմնի քննիչի ենթակա վարույթ, բացառությամբ սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված դեպքերի:

Հոդված 188. Նախաքննության կատարման վայրը

1. Նախաքննությունն իրականացվում է այն վայրում, որտեղ կատարվել է հանցանքը, իսկ դա պարզելու անհնարինության դեպքում՝ հանցանքի բացահայտման վայրում:

2. Այլ վայրում առանձին քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում քննիչը կարող է այդ գործողությունները կատարել անձամբ կամ դրանց կատարումը հանձնարարել տվյալ վայրի քննիչին:

3. Արագության և լրիվության նպատակով դատախազի որոշմամբ նախաքննությունը կարող է իրականացվել հանցագործության բացահայտման, դրա հետևանքների վրա հասնելու, ինչպես նաև մեղադրյալի, տուժողի կամ վկաների մեծամասնության գտնվելու վայրում:

4. Տևող կամ շարունակվող հանցագործությունների դեպքում դատախազի որոշմամբ նախաքննությունը կարող է իրականացվել այն վայրում, որտեղ ավարտվել կամ դադարեցվել է հանցանքը:

5. Մեկից ավելի վայրերում հանցագործությունների կատարման դեպքում, եթե դրանք միացվել են մեկ վարույթում, դատախազի որոշմամբ նախաքննությունը իրականացվում է այն վայրում, որտեղ կատարվել է հանցագործությունների մեծ մասը կամ դրանցից առավել ծանրը:

6. Նախաքննության ընթացքում տարածքային ենթակայության հետ կապված վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը:

Հոդված 189. Նախաքննության կատարումը քննչական խմբի կողմից

1. Վարույթի բարդության կամ դրա ծավալի մեծ լինելու դեպքում նախաքննության կատարումը կարող է հանձնարարվել մի քանի քննիչի, որի մասին կազմվում է առանձին որոշում: Որոշման մեջ նշվում են բոլոր քննիչները, որոնց հանձնարարվում է նախաքննության կատարումը, այդ թվում՝ խմբի ղեկավար քննիչը:

2. Քննչական խումբ կարող է ստեղծվել միայն ընդհանուր կարգով նախաքննության կատարման ընթացքում:

3. Վարույթի մասնավոր մասնակիցները պետք է ծանոթացվեն քննչական խմբի կողմից նախաքննություն կատարելու մասին որոշմանը և նրանց պետք է պարզաբանվի ցանկացած քննիչի բացարկ հայտնելու նրանց իրավունքը:

Հոդված 190. Քննչական խմբի ղեկավարի լիազորությունները

1. Քննչական խմբի ղեկավարը կազմակերպում և ղեկավարում է քննչական խմբի աշխատանքը:

2. Վարույթները միացնելու կամ անջատելու, վարույթը կարճելու մասին որոշումները կայացնում է, անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ կասեցնելու, քրեական հետապնդումը վերսկսելու մասին, ինչպես նաև քրեական հետապնդման ժամկետը երկարացնելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և դրա ժամկետը երկարացնելու միջնորդությունները հարուցում է միայն քննչական խմբի ղեկավարը:

3. Մեղադրական եզրակացությունը կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցը քննելու համար վարույթը դատարան ուղարկելու մասին որոշումը կազմում է քննչական խմբի ղեկավարը:

4. Քննչական խմբի ղեկավարն իրավունք ունի մասնակցելու այլ քննիչների կողմից կատարվող քննչական գործողություններին, անձամբ կատարել քննչական գործողություններ և կայացնել որոշումներ:

Հոդված 191. Նախաքննության ավարտը

1. Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, մեղադրական ակտ, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար վարույթը դատարան ուղարկելու կամ վարույթը կարճելու մասին որոշում կազմելով:

2. Դատախազը կամ քննիչը պարտավոր են միջոցներ ձեռնարկել պարզելու համար հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները և անհրաժեշտության դեպքում նախաքննության ավարտին համապատասխան իրավաբանական կամ պաշտոնատար անձին ներկայացնել այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագիր: Այդ միջնորդագիրը ենթակա է պարտադիր քննարկման, որի արդյունքների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հաղորդվում է այն ուղարկած մարմնին կամ պաշտոնատար անձին:

Հոդված 192. Նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը

1. Վարույթի մասնավոր մասնակիցները և վարույթին օժանդակող անձինք իրավունք ունեն հրապարակել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում իրենց հայտնի դարձած նախաքննության տվյալները, եթե քննիչն

իր նախաձեռնությամբ կամ դատախազի հանձնարարությամբ՝ սույն հոդվածի 2-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկով գրավոր չի արգելել դրանց հրապարկումը:

2. Նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա կարող է՝

1) խոչընդոտել մինչդատական վարույթի իրավաչափ ընթացքին.

2) դառնալ նոր հանցանքի կատարման պատճառ.

3) վնասել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը.

4) հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման:

3. Նախաքննության տվյալների հրապարակման՝ սույն հոդվածով սահմանված արգելքները չեն տարածվում փաստաբանի և նրա վստահորդի միջև տեղեկությունների փոխանակման վրա:

Հոդված 193. Հետաքննություն կատարելու հիմքը

1. Հետաքննությունը կատարվում է քննիչի գրավոր հանձնարարությամբ:

2. Հետաքննության մարմինն իրավասու է կատարել միայն հանձնարարության մեջ նշված գաղտնի քննչական գործողությունները:

Հոդված 194. Հետաքննության սկիզբն ու ավարտը

1. Հետաքննությունը կարող է կատարվել միայն նախաքննություն սկսելուց հետո:

2. Հետաքննությունը ավարտվում է նախաքննության հետ միաժամանակ: Նախաքննության ավարտման պահին շարունակվող գաղտնի քննչական և օպերատիվ-հետախուզական գործողությունները դադարեցվում են, և արդյունքներն անհապաղ ներկայացվում են քննիչին:

ԳԼՈՒԽ 28

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ

Հոդված 195. Հանրային քրեական հետապնդում հարուցելը

1. Հանրային քրեական հետապնդումը հարուցվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին հսկող դատախազի որոշմամբ:

2. Անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցվում է նրա կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստերի առկայության դեպքում քննիչը անհապաղ դրանք հաստատող ապացույցների և վարույթի այլ նյութերի հետ միասին հսկող դատախազին ներկայացնում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին միջնորդություն: Անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձի ձերբակալված լինելու դեպքում քննիչը սույն մասով նշված միջնորդությունը և նյութերը ներկայացնում է հսկող դատախազին ոչ ուշ, քան ձերբակալման որոշումն անձին հանձնելու պահից 18 ժամվա ընթացքում:

4. Միջնորդությունը և այն հիմնավորող նյութերը ստանալուց հետո 18 ժամվա ընթացքում հսկող դատախազը որոշում է կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, իսկ քրեական հետապնդում հարուցելու հիմքեր չգտնելու դեպքում՝ իր որոշմամբ մերժում է քննիչի միջնորդությունը:

5. Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ նշվում են անձի անունը, ազգանունը, հայրանունը և նրա վերաբերյալ այլ անհարժեշտ տվյալներ, մեղադրանքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով, ինչպես նաև քրեական օրենսգրքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքի կատարման համար (արարքի իրավական գնահատականը):

6. Այն դեպքում, երբ անձին վերագրվում են քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, հոդվածի տարբեր մասերով կամ կետերով նախատեսված մի քանի արարքներ, որոշման մեջ նշվում են դրանցից յուրաքանչյուրի փաստական հանգամանքները և իրավական գնահատականը:

7. Դատախազն իրավունք չունի քննիչին հաձնարարել ներկայացնելու անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշակի բովանդակությամբ միջնորդություն, ինչպես նաև կազմելու այդպիսի որոշման նախագիծ:

Հոդված 196. Մեղադրանք ներկայացնելը

1. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը ստանալուց հետո ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում, քննիչը մեղադրյալին մեղադրանք է ներկայացնում:

2. Այն դեպքում, երբ մեղադրյալը թաքնվում է վարույթն իրականացնող մարմնից կամ այլ պատճառներով անհնար է ապահովել նրա հասանելիությունը, մեղադրանք ներկայացնելու սույն հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետն ընդհատվում է, իսկ մեղադրանքը ներկայացվում է մեղադրյալի՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ հայտվելուց անմիջապես հետո:

3. Քննիչը, հավաստիանալով մեղադրյալի ինքնության մեջ, նրան է հանձնում որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը, պարզաբանում մեղադրանքի փաստական հանգամանքները և իրավական գնահատականը, բացատրում է սույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված մեղադրյալի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև մեղադրյալին հանձնում է դրանց ցանկը:

4. Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված գործողությունների կատարումը հաստատվում է քննիչի կողմից կազմված արձանագրությամբ, որը ստորագրում են քննիչը, մեղադրյալը և ներկա գտնվող այլ անձինք: Մեղադրյալի կամ ներկա գտնվող այլ անձանց կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում քննիչը հատուկ հրավիրված ընթերակայի ներկայությամբ կամ տեսաձայնարգման ներքո պարզում և արձանագրության մեջ շարադրում է նման հրաժարման պատճառները, իսկ նրանց կողմից այդպիսիք չհայտնելու դեպքում՝ այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ և դրա պատճենն անհապաղ ուղարկում հսկող դատախազին:

Հոդված 197. Մեղադրանքը փոփոխելը կամ լրացնելը

Եթե նախաքննության ընթացքում հիմնավորվում է մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտությունը, ապա սույն օրենսգրքի 195-րդ և 196-րդ

հոդվածների պահանջների պահպանմամբ կայացվում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին նոր որոշում և անձին ներկայացվում է նոր մեղադրանք:

Հոդված 198. Հանրային քրեական հետապնդման ժամկետները

1. Մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելին, քան՝

1) երկու ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով.

2) չորս ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով.

3) ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով.

4) տասը ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով:

2. Բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները վերադաս դատախազի կողմից կարող են երկարացվել առավելագույնը՝

1) մեկ ամսով՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով,

2) երկու ամսով՝ միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթներով:

Հոդված 199. Հայեցողական քրեական հետապնդումը

1. Եթե հսկող դատախազը, հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթը, վտանգավորության աստիճանը, առաջացրած հետևանքները, ինչպես նաև հանցանք կատարած անձի հատկանիշները, գտնում է, որ վարույթի հետագա շարունակությունը նպատակահարմար չէ, ապա իրավունք ունի չհարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնել հարուցված քրեական հետապնդումն այն դեպքում, երբ անձը՝

1) առաջին անգամ կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք.

2) հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը.

3) աջակցել է հանցագործության հանգամանքների բացահայտմանը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին

որոշումը հանցագործությունից տուժած անձի, նրա օրինական ներկայացուցչի կամ լիազոր ներկայացուցչի կողմից կարող է բողոքարկվել վերադաս դատախազին՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում: Վերադաս դատախազը բողոքը ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին:

3. Բողոքը բավարարելու դեպքում դատախազը վերացնում է վիճարկվող որոշումը և իրավիճակից թելադրվող անհրաժեշտ գրավոր հանձնարարություններ տալիս քննիչին: Որոշումը վերացնելու մասին քննիչն անհապաղ գրավոր տեղեկացնում է վարույթի մասնավոր մասնակիցներին:

4. Բողոքը մերժելու դեպքում դատախազն իր որոշմամբ հաստատում է վիճարկվող որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Բողոքը մերժելու վերաբերյալ որոշումը դատախազն անհապաղ հանձնում է բողոք բերած անձին՝ նրան բացատրելով որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները:

5. Բողոքը լուծելու վերաբերյալ դատախազի որոշումը, սույն օրենսգրքի 322-324-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում, կարող է բողոքարկվել դատարան բողոք բերած անձի կողմից:

6. Դատարանի կողմից բողոքը բավարարելու դեպքում դատախազը հարուցում կամ նորոգում է քրեական հետապնդումը:

Հոդված 200. Հանրային քրեական հետապնդումը կասեցնելու հիմքերը

1. Մինչդատական վարույթում սույն օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդման ժամկետները կասեցվում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով քրեական հետապնդումը կասեցնելու մասին քննիչի միջնորդության հիման վրա դատախազի կողմից որոշում կայացնելու պահից:

2. Քրեական հետապնդումը կարող է կասեցվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) մեղադրյալը թաքնվում է վարույթն իրականացնող մարմնից.

2) մեղադրյալի մոտ առկա է ծանր հիվանդություն, որը նրան տևական ժամանակով զրկում է վարույթին մասնակցելու հնարավորությունից.

3) մեղադրյալը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու պատճառով չի կարող մասնակցել քրեական վարույթին.

4) գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է հետագա վարույթի իրականացմանը:

3. Քրեական հետապնդման ժամկետը կասեցվում է մինչև դրա համար հիմք ծառայած հանգամանքների վերանալը, սակայն ոչ ավելի, քան մինչև համապատասխան հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի լրանալը:

Հոդված 201. Հանրային քրեական հետապնդումը կասեցնելու կարգը

1. Քրեական հետապնդումը կասեցնելու մասին որոշումն ընդունվում է մեղադրյալի բացակայությամբ հնարավոր և անհրաժեշտ բոլոր դատավարական գործողությունները կատարելուց հետո, սակայն չի սահմանափակում նախաքննության ընթացքում դատավարական այլ գործողությունների իրականացումը:

2. Քրեական հետապնդումը կասեցնելու մասին միջնորդությունը այն հիմնավորող նյութերի հետ միասին քննիչն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին: Հսկող դատախազը միջնորդությունը ստանալու պահից ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում որոշում է կայացնում քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին կամ որոշմամբ մերժում է միջնորդությունը: Այդ որոշումներն անհապաղ ուղարկվում են քննիչին:

3. Քրեական հետապնդումը կասեցնելու մասին հսկող դատախազի որոշումը ստանալուց հետո քննիչը դրա պատճենները անհապաղ հանձնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց բացատրելով որոշման բողոքարկման կարգը և ժամկետները:

4. Քրեական հետապնդումը կասեցնելու մասին որոշումը վարույթի մասնավոր մասնակիցների կողմից կարող է բողոքարկվել վերադաս դատախազին՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում: Վերադաս դատախազը բողոքը

ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին:

Հոդված 202. Կասեցված քրեական հետապնդումը վերսկսելը

1. Քրեական հետապնդումը կասեցնելու հիմքը վերանալու դեպքում քննիչը դատախազին միջնորդություն է ներկայացնում քրեական հետապնդումը վերսկսելու մասին: Այդ որոշման հաստատման և ողոքարկման նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-4-րդ մասերով սահմանված կարգը:

2. Քրբեական հետապնդումը վերսկսվում է նաև այն դեպքում, երբ վերադաս դատախազն իր որոշմամբ վերացնում է քրեական հետապնդումը կասեցնելու մասին որոշումը:

Հոդված 203. Հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու կարգը

1. Սույն օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված՝ քրեական հետապնդումը բացառող հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում քննիչը միջնորդություն է ներկայացնում քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին, որի հիման վրա հսկող դատախազը որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին:

2. Եթե նախաքննության ընթացքում հիմնավորվում է մեղադրանքի որևէ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու անհրաժեշտությունը, ապա քննիչը հսկող դատախազին միջնորդություն է ներկայացնում այդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Այդ միջնորդության հիման վրա հսկող դատախազը որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին:

3. Քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշումը հսկող դատախազը կարող է կայացնել նաև իր նախաձեռնությամբ՝ քննիչից ստացված վարույթի նյութերի հիման վրա:

4. Որոշման մեջ շարադրվում են քրեական վարույթ նախաձեռնելու առիթը և հիմքը, անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հիմքը,

նախաքննության ընթացքում հաստատված փաստական հանգամանքները, դրանք հաստատող ապացույցները, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու իրավական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև կիրառված խափանման միջոցի վերացման, կալանադրված կամ առգրավված գույքի և իրեղեն ապացույցների տնօրինման հետ կապված հարցերը:

5. Սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերով քրեական հետապնդում չհարուցելիս կամ այն դադարեցնելիս որոշման մեջ չպետք է տրվեն այնպիսի ձևակերպումներ, որոնք կասկածի տակ են դնում անձի անմեղությունը:

6. Հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշման բողոքարկման նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-4-րդ մասերով սահմանված կարգը:

7. Քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշումը քննիչը հանձնում է նաև հանցանքի մասին հաղորդում ներկայացրած անձին: Վարույթի մասնավոր մասնակիցներին և հանցանքի մասին հաղորդում ներկայացրած անձին քննիչը բացատրում է նաև սույն օրենսգրքի 205-րդ հոդվածով վարույթի նյութերին ծանոթանալու կարգը և ժամկետները:

8. Քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշումը օրինական ուժի մեջ է մտնում սույն օրենսգրքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալու, իսկ բողոքարկելու դեպքում՝ այն վերջնականապես հաստատվելու պահից:

Հոդված 204. Չհարուցված կամ դադարեցված քրեական հետապնդումը նորոգելը

1. Քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին հսկող դատախազի չբողոքարկված որոշումը կարող է վերացվել վերադաս դատախազի կողմից այն օրինական ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

2. Քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին հսկող դատախազի որոշումը և այն հաստատելու մասին վերադաս դատախազի

որոշումը կարող է վերացվել ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից այն կայացնելուց հետո երեք ամսված ընթացքում, եթե այդ որոշումը դատական ստուգման չի ենթարկվել:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետներն անցնելուց հետո քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին հսկող դատախազի որոշումը կամ այն հաստատելու մասին վերադաս դատախազի որոշումը կարող է վերացվել բացառապես ՀՀ գլխավոր դատախազի կողմից և միայն նոր հանգամանքի հիմքով, եթե այդ որոշումները դատական ստուգման չեն ենթարկվել:

4. Սույն հոդվածով նախատեսված որոշումները վերացնելու դեպքում քրեական հետապնդումը հարուցվում կամ նորոգվում է, իսկ որոշման պատճենները անհապաղ հանձնվում են վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց բացատրելով որոշման դատական բողոքարկման կարգը և ժամկետները:

ԳԼՈՒԽ 29
ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ

Հոդված 205. Մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ վարույթի նյութերին ծանոթանալը

1. Մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է վարույթի մասնավոր մասնակիցներին և որոշում է վարույթի նյութերին նրանց ծանոթանալու ժամանակը և տեղը:

2. Վարույթի նյութերը քննիչը ներկայացնում է մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի և պաշտպանի ծանոթացմանը՝ անկախ միջնորդությունից, իսկ վարույթի մասնավոր մյուս մասնակիցների ծանոթացմանը՝ միջնորդությամբ:

3. Եթե պաշտպանը նշանակված ժամին չի ներկայանում, ապա քննիչը ծանոթացումը հետաձգում է մինչև երեք օր ժամկետով: Տվյալ ժամկետում պաշտպանի չներկայանալու դեպքում մեղադրյալին հնարավորություն է ընձեռվում

հրավիրել այլ պաշտպան: Եթե մեղադրյալն այլ պաշտպան չի հրավիրում, ապա քննիչը սույն օրենսգրքով սահմանված կարգով լուծում է պաշտպան նշանակելու հարցը:

Հոդված 206. Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու կարգը

1. Քննիչը ծանոթացման համար վարույթի նյութերը ներկայացնում է համարակալված էջերով և յուրաքանչյուր հատորում պարունակվող փաստաթղթերի ցանկով՝ մեկ կամ մի քանի կարված հատորների տեսքով: Պետք է ներկայացվեն նաև գործի հետ պահվող իրեղեն ապացույցները և քննչական գործողությունների արձանագրություններին կցված հավելվածները: Եթե վարույթի նյութերը կազմում են մի քանի հատոր, բոլոր հատորները պետք է ներկայացվեն միաժամանակ:

2. Վարույթի մասնավոր մասնակիցներին վարույթի նյութերին ծանոթացնելիս քննիչը, նրանց միջնորդությամբ, համապատասխան սարքավորումների կիրառմամբ վերարտադրում է ձայնագրառությունը, կինո և տեսաֆիլմերը, արձանագրությունների հավելված տեսապատկերները, ներկայացնում է իրեղեն ապացույցները:

3. Մեղադրյալը և պաշտպանը վարույթի նյութերին ծանոթանում են վարույթի մյուս մասնակիցներից ավելի ուշ:

4. Վարույթի նյութերին ծանոթացող անձինք իրավունք ունեն դրանցում առկա փաստաթղթերից անել դուրսգրումներ և պատճենահանել դրանք, լուսանկարել իրեղեն ապացույցները:

Հոդված 207. Վարույթի նյութերին ծանոթանալուց հետո արվող միջնորդությունները

1. Վարույթի նյութերին ծանոթանալուց հետո քննիչը վարույթի մասնավոր մասնակիցներից պարզում է, թե նրանք ունեն արդյոք լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու կամ նոր դատավարական որոշումներ կայացնելու վերաբերյալ միջնորդություններ, որոնք ներկայացվում են մեկօրյա ժամկետում:

2. Միջնորդությունը լրիվ կամ մասնակի մերժելու մասին քննիչը կայացնում է պատճառաբանված որոշում, որի պատճենը դիմողին է հանձնվում միջնորդություն

պատշաճ ձևով ստանալու պահից մեկ օրվա ընթացքում: Մինչև միջնորդության հարցը լուծելը գործը չի կարող հանձնվել դատախազին:

3. Այն գործի վերաբերյալ միջնորդությունը բավարարելուց քննիչի հրաժարվելը, որը քննիչը մտադրված է մեղադրական եզրակացությամբ ուղարկել դատախազին, կարող է միջնորդությունը բավարարելուց հրաժարվելու մասին որոշման պատճենը դիմողին հանձնելու պահից երկու օրվա ընթացքում բողոքարկվել դատախազին: Մինչև բողոքի լուծումը գործը չի ուղարկվում դատարան:

4. Հարուցված միջնորդության վերաբերյալ բողոքը դատախազի կողմից մերժելը չի խոչընդոտում դատարանում այդ նույն միջնորդությունը հարուցելուն:

Հոդված 208. Վարույթի նյութերին ծանոթացնելու արձանագրությունը

1. Վարույթի նյութերին ծանոթացնելու վերաբերյալ քննիչը կազմում է արձանագրություն, որում նշում է ծանոթացնելու ժամկետը և տեղը, իր պաշտոնը, վարույթի նյութերին ծանոթացող անձանց մասին և պաշտպանի, ինչպես նաև տուժողի լիազոր ներկայացուցչի լիազորությունները վկայակոչող փաստաթղթերի մասին տեղեկություններ:

2. Վարույթի յուրաքանչյուր մասնակցի՝ վարույթի նյութերին ծանոթացնելու մասին կազմվում է առանձին արձանագրություն: Վարույթի նյութերին պաշտպանի և պաշտպանյալի, ինչպես նաև ներկայացուցչի և ներկայացվողի ծանոթանալու մասին կազմվում է մեկ արձանագրություն:

3. Արձանագրության մեջ նշվում են ծանոթացման համար ներկայացված վարույթի նյութերի հատորների և յուրաքանչյուր հատորում առկա էջերի թիվը, ինչպես նաև ներկայացված իրեղեն ապացույցները և քննչական գործողությունների արձանագրություններին կցված հավելվածները:

4. Արձանագրության մեջ նշվում են վարույթի նյութերին ծանոթանալու յուրաքանչյուր օրը, սկսելու և ավարտելու ժամանակը:

5. Արձանագրության մեջ մտցվում են վարույթի նյութերին ծանոթանալուց հետո ներկայացված բանավոր միջնորդությունները: Գրավոր միջնորդությունները

կցվում են արձանագրությանը, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

Հոդված 209. Վարույթի նյութերին կրկին ծանոթանալը միջնորդությունները բավարարելուց հետո

Վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությունը բավարարելու դեպքում, անկախ նրանից, թե ով է հարուցել տվյալ միջնորդությունը, քննիչը նրան հնարավորություն է ընձեռում կրկին ծանոթանալ վարույթին՝ լրացված նյութերի մասով:

Հոդված 210. Մեղադրական եզրակացությունը

1. Մեղադրական եզրակացությունը բաղկացած է նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

2. Նկարագրական-պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները:

Եթե քրեական հետապնդումը հարուցվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ապա այդ մասին պետք է նշվի մեղադրական եզրակացության նկարագրական - պատճառաբանական մասում:

3. Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները, նրան մեղսագրվող արարքի փաստական հանգամանքները և իրավական գնահատական՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենսգրքի նորմերը:

4. Քննիչն ստորագրում է մեղադրական եզրակացությունը՝ նշելով այն կազմելու ժամանակը և տեղը:

Հոդված 211. Մեղադրական եզրակացության հավելվածները

1. Մեղադրական եզրակացությանը կցվում է դատական նիստին կանչվելու ենթակա անձանց ցուցակը: Ցուցակում քննիչը նշում է կանչման ենթակա անձանց գտնվելու տեղը և գործի այն էջերը, որոնք պարունակում են նրանց ցուցմունքները կամ եզրակացությունները:

2. Մեղադրական եզրակացությանը կցվում են իրեղեն ապացույցների և դրանց գտնվելու տեղի, գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու համար ձեռնարկված միջոցների, դատական ծախսերի, խափանման միջոցների մասին քննիչի տեղեկանքները՝ նշելով անձի՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը:

Հոդված 212. Մեղադրական եզրակացությունը դատախազին հանձնելը

Քննիչը պարտավոր է մեղադրական եզրակացությունը քրեական գործի հետ միասին հանձնել հսկող դատախազին ոչ ուշ, քան տվյալ մեղադրյալի քրեական հետապնդման կամ կալանքի ժամկետը լրանալուց յոթ օր առաջ:

Հոդված 213. Մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով դատախազի կողմից լուծվող հարցերը

Դատախազն ուսումնասիրում է մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերը, որպեսզի ստուգի՝

1) ապացուցված է արդյոք մեղադրյալին մեղսագրվող արարքը և այն պարունակում է արդյոք հանցակազմ.

2) հիմնավորված է արդյոք մեղադրյալի մեղավորությունը.

3) մեղադրանքի ձևակերպման մեջ ընդգրկված են արդյոք մեղադրյալի կատարած բոլոր հանցանքները.

4) քրեական հետապնդում հարուցված է արդյոք հանցագործությանը մասնակցած բոլոր անձանց նկատմամբ.

5) կան արդյոք քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու հիմքեր.

6) ճիշտ են որակված մեղադրյալի կատարած արարքները.

7) ճիշտ է ընտրված խափանման միջոցը.

8) ձեռնարկված են արդյոք միջոցներ՝ ապահովելու համար գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերը.

9) բացահայտված են արդյոք հանցագործությանը նպաստող հանգամանքները, և ձեռնարկված են արդյոք միջոցներ դրանք վերացնելու ուղղությամբ.

10) կատարված է արդյոք բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն.

11) մեղադրական եզրակացությունը բավարարում է արդյոք սույն օրենսգրքի 210-րդ և 211-րդ հոդվածներով նախատեսված պահանջները.

12) պահպանված են արդյոք նախաքննության կատարման կարգը որոշող սույն օրենսգրքի բոլոր մյուս կանոնները:

Հոդված 214. Դատախազի որոշումը մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով

1. Դատախազը մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

1) հաստատել մեղադրական եզրակացությունը.

2) վերակազմել մեղադրական եզրակացությունը, եթե վարույթի նյութերից հետևում է, որ անհրաժեշտ է մեղադրանքից հանել առանձին փաստեր կամ մեղմացման առումով փոխել մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը.

3) համապատասխան հանձնարարություններով գործը վերադարձնել քննիչին, եթե վարույթի նյութերից հետևում է, որ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը, կասեցնել քրեական հետապնդման ժամկետը կամ կազմել նոր մեղադրական եզրակացություն.

4) դադարեցնել քրեական հետապնդումը կամ կարճել քրեական վարույթը:

2. Դատախազը պարտավոր է նախաքննությունը շարունակելու համար վարույթի նյութերը վերադարձնել քննիչին, եթե դրանցից հետևում է, որ անհրաժեշտ է մեղադրանքը լրացնել կամ այն փոփոխել սկզբնականից էապես տարբերվող փաստերով:

Հոդված 215. Խափանման միջոցի մասին որոշումը

Մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով դատախազն իրավունք ունի վերացնել կամ փոխել խափանման միջոցը, իսկ եթե խափանման միջոց չի կիրառվել՝ ընտրել դրանցից որևէ մեկը կամ դիմել դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությամբ:

Հոդված 216. Դատական նիստին կանչվելու ենթակա անձանց ցուցակը փոխելը

Մինչև գործը դատարան ուղարկելը դատախազն իրավունք ունի իր որոշմամբ կրճատել կամ լրացնել դատական նիստին կանչման ենթակա անձանց ցուցակը: Ցուցակից չեն կարող հանվել վարույթի մասնավոր մասնակիցները:

Հոդված 217. Վարույթի նյութերը դատարան ուղարկելը

1. Հաստատելով կամ իր որոշմամբ վերակազմելով մեղադրական եզրակացությունը՝ դատախազը վարույթի նյութերն ուղարկում է դատարան՝ ըստ ընդդատության:

2. Վարույթի նյութերը դատարան ուղարկելու մասին դատախազն անմիջապես տեղեկացնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ պարզաբանելով, որ նրանք կարող են իրենց դիմումները և միջնորդություններն ուղարկել դատարան:

3. Միաժամանակ, դատախազը մեղադրյալին, իսկ միջնորդության դեպքում նաև պաշտպանին, տուժողին և վարույթի այլ մասնավոր մասնակիցներին ստորագրությամբ հանձնում է մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները: Եթե մեղադրական եզրակացության մեջ կամ դրան կցված հավելվածներում կատարվել են փոփոխություններ, ապա մեղադրական եզրակացությունը ներկայացվում է միայն վերջին խմբագրությամբ: Եթե դատախազի որոշմամբ մեղադրական եզրակացությունը փոփոխվել է, ապա ներկայացվում է նաև դատախազի համապատասխան որոշման պատճենը:

4. Քրեական վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Հոդված 218. Քրեական վարույթը կարճելը

1. Սույն օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում քննիչը որոշում է կայացնում քրեական վարույթը կարճելու մասին, որի հաստատման հարցը հսկող դատախազը լուծում է յոթ օրվա ընթացքում:

2. Որոշման մեջ շարադրվում են քրեական վարույթ նախաձեռնելու առիթը և հիմքը, նախաքննության ընթացքում հաստատված փաստական հանգամանքները, դրանք հաստատող ապացույցները, քրեական վարույթը կարճելու իրավական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև կալանադրված կամ առգրավված գույքի և իրեղեն ապացույցների տնօրինման հետ կապված հարցերը:

3. Քրեական վարույթը կարճելու մասին որոշումը վարույթի մասնավոր մասնակիցներին հանձնելու և այն բողոքարկելու նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-4-րդ մասերով սահմանված կարգը:

4. Քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչը հանձնում է նաև հանցանքի մասին հաղորդում ներկայացրած անձին: Վարույթի մասնավոր մասնակիցներին և հանցանքի մասին հաղորդում ներկայացրած անձին քննիչը բացատրում է նաև սույն օրենսգրքի 205-րդ հոդվածով վարույթի նյութերին ծանոթանալու կարգը և ժամկետները:

5. Սույն օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված հիմքերով քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը կարող է վերացվել վերադաս դատախազի որոշմամբ: Այդ դեպքում վարույթը նորոգվում է:

ԳԼՈՒԽ 30

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 219. Ընդհանուր դրույթներ պարզեցված նախաքննության մասին

1. Պարզեցված նախաքննություն կատարվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կապակցությամբ՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները և սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

2. Պարզեցված նախաքննություն չի կարող կատարվել մի քանի հանցագործությունների վերաբերյալ այն վարույթներով, որոնցում հանցագործություններից մեկը ծանր է կամ առանձնապես ծանր:

Հոդված 220. Քրեական հետապնդման ժամկետը պարզեցված նախաքննության ընթացքում

1. Պարզեցված նախաքննության ընթացքում քրեական հետապնդումը մեծ ծանրության հանցագործության դեպքում պետք է ավարտվի հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ քան քրեական հետապնդում հարուցելու պահից մեկ ամսվա ընթացքում, իսկ միջին ծանրության հանցագործության դեպքում՝ երկու ամսվա ընթացքում:

2. Սույն օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով, սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետները վերադաս դատախազի կողմից կարող են երկարացվել ևս մեկ ամսով:

Հոդված 221. Պարզեցված նախաքննության ընթացքում պարզելու ենթակա հանգամանքները

Պարզեցված նախաքննության ընթացքում պետք է պարզվեն հանցակազմի հատկանիշները, մեղադրյալի առնչությունը հանցագործությանը, հանցագործությունից տուժած անձին, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասի բնույթը և չափը:

Հոդված 222. Քննիչի առարկությունները հսկող դատախազի հանձնարարությունների վերաբերյալ

Պարզեցված նախաքննության ընթացքում քննիչը վերադաս դատախազին կարող է գրավոր առարկություն ներկայացնել հսկող դատախազի՝ միայն սույն

օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետում թվարկված հանձնարարությունների վերաբերյալ՝ առանց դրանք կատարելու:

Հոդված 223. Վարույթի նյութերին ծանոթանալը մեղադրական ակտ կազմելուց առաջ

1. Մեղադրական ակտ կազմելուց առաջ վարույթի մասնավոր մասնակիցները սույն օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանված կարգով ծանոթանում են վարույթի նյութերին:

2. Վարույթի նյութերը քննիչը ներկայացնում է մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի և պաշտպանի ծանոթացմանը՝ անկախ միջնորդությունից, իսկ վարույթի մասնավոր մյուս մասնակիցների ծանոթացմանը՝ միջնորդությամբ:

3. Եթե պաշտպանը նշանակված ժամին չի ներկայանում, ապա քննիչը ծանոթացումը հետաձգում է մինչև 5 օր ժամկետով: Տվյալ ժամկետում պաշտպանի չներկայանալու դեպքում մեղադրյալին հնարավորություն է ընձեռվում հրավիրել այլ պաշտպան: Եթե մեղադրյալն այլ պաշտպան չի հրավիրում, ապա քննիչը սույն օրենսգրքով սահմանված կարգով լուծում է պաշտպան նշանակելու հարցը:

4. Վարույթի մասնավոր մասնակիցներին պարզաբանվում է, որ վարույթի նյութերին ծանոթանալուց հետո նախաքննության վերաբերյալ բոլոր միջնորդությունները կարող են ներկայացվել միայն դատարան:

5. Վարույթի նյութերին ծանոթանալուց հետո երկօրյա ժամկետում դատախազին կարող են ներկայացվել միայն այնպիսի միջնորդություններ, որոնք վերաբերում են արարքի իրավաբանական որակմանը:

Հոդված 224. Մեղադրական ակտը

Մասնավոր մասնակիցների կողմից վարույթի նյութերին ծանոթանալուց հետո քննիչը, սույն օրենսգրքի 210-211-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, կազմում է մեղադրական ակտ և այն վարույթի նյութերի հետ միասին նույն օրն ուղարկում հսկող դատախազին:

Հոդված 225. Դատախազի գործողությունները մեղադրական ակտը ստանալուց հետո

1. Դատախազը մեղադրական ակտով վարույթի նյութերը ստանալուց հետո՝ երկու օրվա ընթացքում, պարտավոր է ընդունել սույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումներից մեկը:

2. Դատախազը սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետում կարող է նաև չհաստատել մեղադրական ակտը և քննիչին հանձնարարել շարունակել նախաքննությունն ընդհանուր կարգով:

ԲԱԺԻՆ 9

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 31

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 226. Քննչական գործողության կատարման հիմքերը

1. Քննիչն իրավասու է կատարելու միայն սույն օրենսգրքով նախատեսված քննչական գործողություններ:

2. Քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքում կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց:

3. Բացառապես քննիչի որոշման հիման վրա են կատարվում՝

1) զննումը՝ բացառությամբ դեպքի վայր չհամարվող բնակարանի զննման, հանրային նշանակության տեղանքի, շինության, դրանց տարածքում գտնվող առարկաների, տրանսպորտային միջոցների զննման.

2) արտաշիրմումը.

3) հետազոտման համար նմուշներ ստանալը.

4) փորձաքննությունը.

5) խուզարկությունը՝ բացառությամբ բնակարանի խուզարկության և սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անձնական խուզարկության.

6) առգրավումը՝ բացառությամբ բնակարանում կատարվող առգրավվման և բանկային կամ նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների առգրավման:

4. Բացառապես դատարանի որոշման հիման վրա են կատարվում՝

1) բնակարանում խուզարկությունը և առգրավումը.

2) դեպքի վայր չհանդիսացող բնակարանում զննումը.

3) բանկային կամ նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների առգրավումը:

Հոդված 227. Քննչական գործողության մասնակիցները

1. Քննչական գործողությունը կատարում է տվյալ վարույթի ընթացքում քննչական գործողություն կատարելու իրավասություն ունեցող քննիչը:

2. Քննիչը պարտավոր է քննչական գործողությունը սկսելուց առաջ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել դրա կատարման տեղի և ժամանակի մասին հսկող դատախազին տեղեկացնելու համար: Հսկող դատախազը կարող է մասնակցել քննչական գործողության կատարմանը դրա օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով: Օրենքի խախտման վերացման նպատակով դատախազը քննիչին տալիս է պարտադիր կատարման ենթակա հանձնարարություններ, անձամբ միջոցներ է ձեռնարկում օրենքի խախտումները վերացնելու ուղղությամբ, սակայն չի կարող ստանձնել քննչական գործողության կամ դրա մի մասի կատարումը կամ այլ կերպ ուղղորդել քննչական գործողության ընթացքը:

3. Քննչական գործողության կատարման կամ արդյունքների ամրագրման ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու նպատակով քննիչն իրավունք ունի քննչական գործողության կատարմանը ներգրավել փորձագետ:

4. Քննչական գործողության արդյունավետությունը ապահովելու նպատակով քննիչն իրավասու է դրան մասնակից դարձնել նաև վարույթի մասնավոր մասնակիցներին, ինչպես նաև վարույթին օժանդակող անձանց:

5. Ցուցմունքը տեղում ստուգելը, զննումը, արտաշիրմումը, քննումը, քննչական փորձարարությունը, ճանաչման ներկայացնելը, խուզարկությունը, առգրավումը, հետազոտման համար նմուշներ ստանալը կատարվում են առնվազն երկու ընթերակայի մասնակցությամբ: Միևնույն ընթերական չի կարող մասնակցել նույն վարույթի ընթացքում կատարվող մեկից ավելի քննչական գործողության: Միևնույն ընթերական չի կարող մասնակցել նույն քննիչի կողմից մեկ այլ վարույթի ընթացքում կատարվող քննչական գործողությանը:

6. Եթե քննչական գործողության կատարմանը ընթերակայի մասնակցությունն անհնար է, քննիչը արձանագրության մեջ նշում է ընթերակայի մասնակցության անհնարինությունը հաստատող հանգամանքները: Առանց ընթերակաների կատարվող քննչական գործողությունը ենթակա է պարտադիր տեսաձայնագրման:

7. Քննչական գործողության կատարման բնականոն ընթացքն ապահովելու համար քննիչն իրավասու է դրա կատարմանը ներգրավել նաև հետաքննության մարմնի աշխատակիցների:

Հոդված 228. Քննչական գործողությանը մասնակցելու նպատակով վարույթն իրականացնող մարմին հրավիրելու կարգը

1. Վարույթի մասնավոր մասնակիցներին, ինչպես նաև վկային, փորձագետին և թարգմանչին քննչական գործողությանը մասնակցելու նպատակով վարույթն իրականացնող մարմին են հրավիրվում ծանուցագրով: Ծանուցագիրը ներառում է հրավիրող պաշտոնատար անձի տվյալները, հրավիրվող անձի ազգանունը, անունը, հայրանունը և դատավարական կարգավիճակը, քննվող վարույթի տվյալները, կատարման ենթակա քննչական գործողությունը, դրա կատարման վայրը, իսկ առկայության դեպքում՝ հասցեն, կատարման ենթակա քննչական գործողության ժամանակը (ամիսը, օրը, ժամը), ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները: Ծանուցագրին կցվում է հրավիրվողի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հուշաթերթ:

2. Ծանուցագիրը հրավիրվող անձին հանձնվում է ստորագրությամբ կամ այլ հաստատումով՝ անմիջականորեն կամ կապի միջոցներով: Հրավիրվողի

ժամանակավոր բացակայության դեպքում ծանուցագիրը հանձնվում է հրավիրվողի ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկին կամ փոխանցվում է նրան աշխատանքի, ուսման կամ ծառայության վայրի վարչակազմի միջոցով:

3. Անազատության մեջ գտնվող անձանց ծանուցագիրը հանձնվում է համապատասխան վայրի վարչակազմի միջոցով:

4. Անազատության մեջ չգտնվող անչափահասները հրավիրվում են իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի միջոցով:

5. Քննչական գործողությանը մասնակցելու նպատակով վարույթն իրականացնող մարմին հրավիրված անձը պարտավոր է քննչական գործողության կատարման վայր ներկայանալ նշանակված ժամին կամ հրավիրող պաշտոնատար անձին նախապես իրազեկել չներկայանալու պատճառների մասին: Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում քննչական գործողությանը մասնակցելու նպատակով հրավիրված անձի նկատմամբ կարող են կիրառվել սույն օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի միջոցներ:

Հոդված 229. Քննչական գործողության մասնակիցների իրավունքների պաշտպանության ընդհանուր երաշխիքները

1. Ժամը 22.00-ից մինչև 7.00-ն քննչական գործողության կատարումն արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ դրա հետաձգումը ողջամտորեն կարող է հանգեցնել տվյալ քննչական գործողության արդյունքում ակնկալվող ապացույցի կորստի կամ վնասման:

2. Նախքան քննչական գործողությունը սկսելը քննիչը ճշտում է քննչական գործողության կատարմանը ներգրավված բոլոր մասնակիցների ինքնությունը, նրանց բացատրում է քննչական գործողության էությունը, դրա կատարման կարգը, մասնակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

3. Անթույլատրելի է քննչական գործողության մասնակցի նկատմամբ բռնության, սպառնալիքի և անօրինական այլ գործողությունների, նրա պատիվն ու

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումը, ինչպես նաև նրա կյանքի կամ առողջության համար վտանգավոր պայմանների ստեղծումը:

4. Մերկացմամբ զուգորդվող քննչական գործողությանը արգելվում է հակառակ սեռի անձանց ներկայությունը, բացառությամբ բժշկության բնագավառի փորձագետի:

5. Արգելվում է քննչական գործողության ընթացքում հայտնի դարձած մասնավոր բնույթի տեղեկությունների, օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակումը: Քննիչը պարտավոր է քննչական գործողության մասնակիցներին նախազգուշացնել քննչական գործողության ընթացքում իրենց հայտնի դարձած՝ սույն մասում նշված տեղեկությունների հրապարակման անթույլատրելիության և դրա համար նախատեսված պատասխանատվության մասին:

6. Քննչական գործողության ընթացքը և արդյունքները արտացոլվում են արձանագրությունում, որը կազմվում է քննչական գործողության ընթացքում կամ դրա ավարտից անմիջապես հետո՝ սույն օրենսգրքի 231-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 230. Քննչական գործողություններ կատարելիս տեխնիկական միջոցների կիրառումը

1. Քննչական գործողության ժամանակ դրա ընթացքը ամրագրելու, հանցագործության հետքերը և իրեղեն ապացույցները հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու նպատակով կարող են կատարվել ձայնագրում, տեսագրում, լուսանկարում, պատրաստվել հետքերի ծեփապատճեններ և դրոշմվածքներ:

2. Տեխնիկական միջոցներ կիրառելուց առաջ այդ մասին պետք է նախօրոք տեղյակ պահվեն քննչական գործողությանը մասնակցող անձինք:

3. Բացառիկ դեպքերում, եթե սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով քննչական գործողության կատարումն անհնարին է, և դա է պահանջում արդարադատության շահը, քննչական գործողությունը կարող է կատարվել տեսակապի միջոցով:

4. Տեսակապի միջոցով քննչական գործողության ընթացքում պետք է երաշխավորվի, որ քննիչը և այլ վայրում գտնվող քննչական գործողության մասնակիցները հստակ տեսնում և լսում են միմյանց:

5. Տեսակապի միջոցով քննչական գործողությունը սկսելուց առաջ քննիչը պետք է հայտարարի՝

1) քննչական գործողության կատարման տեղը, օրը և ժամը, ինչպես նաև տեղեկություններ, թե որ վարույթի շրջանակներում է կատարվում տվյալ քննչական գործողությունը.

2) քննչական գործողությունը կատարող քննիչի անունը, ազգանունը, պաշտոնը.

3) այլ վայրում գտնվող և քննչական գործողության կատարմանն օժանդակող իրավասու անձի անունը, ազգանունը, պաշտոնը.

4) քննչական գործողության ժամանակ կիրառվող տեխնիկական միջոցները:

6. Այլ վայրում գտնվող և քննչական գործողության կատարմանն օժանդակող անձը ապահովում է քննչական գործողության մասնակիցների ինքնության ստուգումը: Քննչական գործողության ավարտին քննիչը քննչական գործողության մասնակիցներին հարցնում է, թե արդյոք ունեն առարկություններ քննչական գործողության կատարման կարգի կամ ընթացքի վերաբերյալ, և դրանց առկայության դեպքում խնդրում է բարձրաձայն ներկայացնել դրանք:

7. Քննչական գործողության ավարտին քննիչը կազմում է քննչական գործողության արձանագրություն սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Քննչական գործողության արձանագրությունը ստորագրում են քննինչը և նրա հետ նույն վայրում գտնվող մասնակիցները:

8. Տեսակապի միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունը ապացուցման գործընթացում չի կարող օգտագործվել առանց տվյալ քննչական գործողության տեսագրության էլեկտրոնային կրիչի:

Հոդված 231. Քննչական գործողության արձանագրությունը

1. Արձանագրությունը գրվում է ձեռքով կամ պատրաստվում համակարգչային եղանակով:

Արձանագրությունում նշվում են՝

1) քննչական գործողության կատարման վայրը, առկայության դեպքում՝ հասցեն, տարեթիվը, ամիսը, օրը, սկսելու և ավարտելու ժամանակը՝ րոպեի ճշտությամբ.

2) արձանագրությունը կազմողի պաշտոնը և ազգանունը.

3) քննչական գործողությանը մասնակցող յուրաքանչյուր անձի ազգանունը, անունը, հայրանունը, անհրաժեշտության դեպքում՝ հասցեն և անձնական այլ տվյալներ:

2. Քննչական գործողության արձանագրությունում նկարագրվում են դրա ընթացքում կատարված բոլոր գործողություններն այն հաջորդականությամբ, ինչպես իրականում տեղի են ունեցել: Արձանագրությունում նշվում են դրանց կատարման ընթացքում պարզված հանգամանքները, շարադրվում են քննչական գործողության մասնակիցների հայտարարությունները:

3. Արձանագրությունում նշվում են տեղեկություններ քննչական գործողության ընթացքում կիրառված տեխնիկական միջոցների, դրանց օգտագործման կարգի և պայմանների, ստացված արդյունքների, ինչպես նաև մասնակիցներին տեխնիկական միջոցների կիրառման մասին նախազգուշացնելու վերաբերյալ:

4. Արձանագրությունը ներկայացվում է քննչական գործողությանը մասնակցած անձանց՝ ծանոթացման համար: Նշված անձանց բացատրվում է արձանագրության վերաբերյալ հայտարարություններ ու դիտողություններ անելու, ինչպես նաև լրացումներ և ուղղումներ պահանջելու իրենց իրավունքը: Արձանագրությունում կատարված լրացումները և ուղղումները ստորագրում են քննչական գործողությանը մասնակցած բոլոր անձինք:

5. Արձանագրությունը ստորագրում են քննիչը և քննչական գործողությանը մասնակցող անձինք:

Արձանագրությունը ստորագրելուց քննչական գործողության որևէ մասնակցի հրաժարվելու դեպքում այդ անձին հնարավորություն է տրվում բացատրելու և շարադրելու հրաժարման շարժառիթները: Քննիչն արձանագրությունում

հրաժարման մասին կատարում է համապատասխան գրառում, որը հավաստվում է քննիչի, ինչպես նաև քննչական գործողությանը մասնակցող փաստաբանների ստորագրություններով:

Եթե ֆիզիկական անլիարժեքության կամ անգրագիտության հետևանքով քննչական գործողության մասնակիցը զրկված է արձանագրությունն անձամբ ստորագրելու հնարավորությունից, ապա արձանագրությունը տվյալ անձին ծանոթացման է ներկայացվում կամ հայտարարվում է քննիչի, ինչպես նաև քննչական գործողությանը մասնակցող փաստաբանների կողմից, ովքեր իրենց ստորագրությամբ հաստատում են արձանագրության բովանդակության իսկությունը և այն ստորագրելու անհնարինության հիմնավորումը:

Եթե սույն մասում նշված դեպքերում քննչական գործողությանը որևէ փաստաբան չի մասնակցում, ապա համապատասխան փաստերը հաստատվում են սույն օրենսգրքի 196-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով:

6. Արձանագրությունը պետք է պարունակի նաև գրառումներ քննչական գործողության մասնակիցներին իրենց իրավունքներն ու պարտականությունները բացատրելու, պարտականությունները չկատարելու հետևանքները պարզաբանելու, քննչական գործողության իրականացման էությունը և կարգը բացատրելու մասին, ինչը հավաստվում է քննչական գործողության մասնակիցների ստորագրությամբ:

7. Առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական կարգը կանոնակարգող նորերով կարող են նախատեսվել կոնկրետ քննչական գործողության արձանագրությանը ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

Հոդված 232. Քննչական գործողության արձանագրության հավելվածները

1. Քննչական գործողության արձանագրությանը համարակալված կցվում են հետևյալ հավելվածները՝

1) քննչական գործողության ընթացքում հայտնաբերված կամ ներկայացված առարկաները, փաստաթղթերը կամ այլ նյութերը.

2) քննչական գործողության ընթացքն ու արդյունքները ամրագրած թվային կրիչները, տեսաերիզները, ձայնագրությունները, լուսանկարչական նեգատիվները և լուսանկարները.

3) քննչական գործողության ընթացքում կազմված կամ պատրաստված գծագրերը, պլանները, ծեփապատճենները, հետքերի դրոշմները:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված նյութերը մանրամասն նկարագրվում են համապատասխան արձանագրության մեջ, փաթեթավորվում են և կնքվում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված նյութերը չեն կարող օգտագործվել առանց արձանագրության, ինչպես նաև այն դեպքում, եթե դրանցում պարունակվող տվյալների ամբողջականությունը խախտված է:

ԳԼՈՒԽ 32

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԵՐԵՍՈՒՄԸ, ՑՈՒՑՄՈՒՆՔԸ ՏԵՂՈՒՄ ՍՏՈՒԳԵԼԸ

Հոդված 233. Հարցաքննության վայրը և տևողությունը

1. Հարցաքննությունը կատարվում է նախաքննության կատարման վայրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հարցաքննվողի գտնվելու վայրում:

2. Եթե տարիքի կամ հիվանդության պատճառով վարույթն իրականացնող մարմին անձի ներկայանալն անհնար է, հարցաքննությունը կատարվում է հարցաքննվողի գտնվելու վայրում:

3. Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի:

4. Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը:

5. Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ:

Հոդված 234. Վկայի հարցաքննությունը

1. Վկային կարելի է հարցաքննել գործի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանքի, այդ թվում՝ մեղադրյալի, տուժողի, այլ վկաների անձի մասին:

2. Վկան հարցաքննվում է այլ վկաներից անջատ: Քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի նույն վարույթի շրջանակներում կանչված վկաները մինչև հարցաքննության ավարտը հաղորդակցություն չունենան միմյանց հետ:

3. Հարցաքննությունից առաջ քննիչը հավաստիանում է վկայի ինքնության մեջ, տեղեկացնում, թե որ վարույթի շրջանակներում է նա կանչվել, և նախազգուշացնում ենթադրյալ հանցագործության վերաբերյալ իրեն հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Վկային հաղորդվում է, որ նա պարտավոր չէ տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ: Դրանից հետո քննիչը պարզում է մեղադրյալի, տուժողի հետ վկայի փոխհարաբերության բնույթը և սկսում է հարցաքննությունը:

4. Հարցաքննությունն սկսվում է նրանով, որ առաջարկվում է վկային պատմել գործով իրեն հայտնի ամեն ինչ, որից հետո նրան կարող են հարցեր տրվել: Քննիչի հայեցողությամբ հարցաքննությունը կարող է սկսվել վկային հարցեր առաջադրելով:

5. Եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, ապա փաստաբանն իրավունք ունի ներկա գտնվելու հարցաքննությանը և քննիչի ներկայությամբ կարճատև խորհրդատվություն տալ վկային: Փաստաբանը վկային հարցեր է տալիս միայն քննիչի թույլտվությամբ և իրավասու չէ մեկնաբանելու նրա պատասխանները: Վկայի՝ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու դեպքերում փաստաբանն իրավունք ունի անելու հայտարարություններ, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրությունում:

6. Եթե փաստաբանի հետ հարցաքննությանը ներկայանալու իրավունքի մասին պատշաճ ծանուցված վկան հարցաքննությանը ներկայացել է առանց

փաստաբանի, ապա քննիչը պարտավոր չէ փաստաբան հրավիրելու հիմքով հետաձգել հարցաքննությունը:

Հոդված 235. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժող հարցաքննությունը

1. Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը, անկախ տարիքից, կարող է հարցաքննվել՝ պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ:

2. Մինչև տասնվեց, իսկ քննիչի հայեցողությամբ՝ մինչև տասնութ տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:

3. Հարցաքննությունը սկսելուց առաջ օրինական ներկայացուցչին բացատրվում են հարցաքննությանը ներկա գտնվելու, քննիչի թույլտվությամբ իր դիտողությունները շարադրելու և հարցեր տալու իր իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Քննիչն իրավունք ունի չընդունելու տրված հարցերը, սակայն դրանք պետք է ներառվեն արձանագրությունում:

4. Տասնվեց տարին չլրացած վկային կամ տուժողին բացատրվում է վարույթին առնչվող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին:

Հոդված 236. Խուլ, համր կամ կույր, այլ ծանր հիվանդությամբ տառապող վկայի հարցաքննությունը

1. Խուլ, համր կամ կույր վկայի հարցաքննությունը կատարվում է նրա նշանները հասկացող կամ նրա հետ նշաններով բացատրվելու ունակ թարգմանչի մասնակցությամբ:

2. Վկայի մոտ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության առկայության դեպքում վերջինիս հարցաքննությունը կատարվում է բժշկի թույլտվությամբ և ներկայությամբ:

Հոդված 237. Տուժողի հարցաքննությունը

1. Տուժողի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով:

2. Այն դեպքում, երբ տվյալ վարույթի շրջանակներում տուժողն ունի նաև մեղադրյալի կարգավիճակ, նրա հարացաքննությունը կատարվում է մեղադրյալի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով:

Հոդված 238. Ձերբակալված անձի հարցաքննությունը

1. Սույն օրենսգրքի 84-րդ հոդվածով ձերբակալված անձը հարցաքննվում է սույն օրենսգրքով մեղադրյալի հարցաքննության համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

2. Ձերբակալված անձն իրավունք ունի հարցաքննվելու պաշտպանի մասնակցությամբ:

3. Հարցաքննությունից առաջ ձերբակալված անձին իր ցանկությամբ հնարավորություն է տրվում առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանի հետ: Եթե առկա է ձերբակալված անձի մասնակցությամբ դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, ապա քննիչը տեսակցության տևողությունը կարող է սահմանափակել՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով ձերբակալվածին և նրա պաշտպանին: Պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող երկու ժամից պակաս լինել:

4. Ձերբակալված անձն օգտվում է սույն օրենսգրքով մեղադրյալի համար սահմանված բոլոր իրավունքներից:

Հոդված 239. Մեղադրյալի հարցաքննությունը

1. Քննիչը պարտավոր է մեղադրյալին հարցաքննել նրան մեղադրանք ներկայացնելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, իսկ

մեղադրյալի խուսափելու կամ նրան հետախուզում հայտարարելու դեպքում՝ նրան ձերբակալելուց հետո 48 ժամվա ընթացքում:

2. Մեղադրյալը հարցաքննվում է այլ անձանցից անջատ: Քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի մեղադրյալը չհաղորդակցվի տվյալ վարույթի շրջանակներում հարցաքննված կամ հարցաքննման ենթակա այլ անձնաց հետ:

3. Մեղադրյալը հարցաքննվում է ներկայացված մեղադրանքի էության, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ:

4. Հարցաքննությունը սկսելուց առաջ քննիչը մեղադրյալին բացատրում է լռելու նրա իրավունքը և պարզաբանում, որ այդ իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

5. Եթե մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության և նախազգուշացնում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Այս փաստը հավաստվում է մեղադրյալի ստորագրությամբ:

6. Քննիչը մեղադրյալին բացատրում է նաև պաշտպանի մասնակցությամբ հարցաքննվելու կամ պաշտպանի մասնակցությունից հրաժարվելու (բացառությամբ պաշտպանի մասնակցության պարտադիր լինելու դեպքերի) նրա իրավունքները, և մեղադրյալին տրամադրում սույն օրենսգրքով սահմանված նրա իրավունքների քաղվածքը, եթե այն մինչ այդ մեղադրյալին չէր տրամադրվել: Այս փաստը հաստատվում է մեղադրյալի ստորագրությամբ:

7. Հարցաքննության սկզբում քննիչը պարզում է, թե մեղադրյալն արդյոք իրեն մեղավոր ճանաչում է ներկայացված մեղադրանքում, այնուհետև առաջարկում է մեղադրյալին ցուցմունքներ տալ մեղադրանքի և բոլոր այն հանգամանքների վերաբերյալ, որոնք իր կարծիքով, կարող են նշանակություն ունենալ գործի համար: Դրանից հետո մեղադրյալին կարող են տրվել հարցեր: Առաջին հարցաքննությունից հետո մեղադրյալը կարող է հարցաքննվել կոնկրետ հարցեր պարզաբանելու նպատակով:

Հոդված 240. Անչափահաս մեղադրյալի հարցաքննությունը

1. Մինչև տասնվեց, իսկ քննիչի հայեցողությամբ՝ մինչև տասնութ տարեկան մեղադրյալի հարցաքննությունը մասնակցում է նաև մանկավարժը: Անչափահաս մեղադրյալի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:

2. Հարցաքննությունը սկսելուց առաջ օրինական ներկայացուցչին բացատրվում են հարցաքննությանը ներկա գտնվելու, քննիչի թույլտվությամբ իր դիտողությունները շարադրելու և հարցեր տալու իր իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Քննիչն իրավունք ունի չընդունելու տրված հարցերը, սակայն դրանք պետք է ներառվեն արձանագրությունում:

3. Հարցաքննությունն սկսելուց առաջ տասնվեց տարին չլրացած մեղադրյալին քննիչը բացատրում է լռելու նրա իրավունքը և պարզաբանում, որ այդ իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

Եթե տասնվեց տարին չլրացած մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության մասին, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին: Այս փաստը հավաստվում է մեղադրյալի և նրա պաշտպանի ստորագրությամբ:

Հոդված 241. Դատապարտյալի հարցաքննությունը

Դատապարտյալի հարցաքննությունը կատարվում է մեղադրյալի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով:

Հոդված 242. Տվյալ քրեական վարույթում մեղադրանքի հետ առնչվող մեկ այլ քրեական վարույթում մեղադրյալի հարցաքննությունը

Տվյալ քրեական վարույթում մեղադրանքի հետ առնչվող մեկ այլ քրեական վարույթում մեղադրյալի հարցաքննությունը կատարվում է մեղադրյալի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով:

Հոդված 243. Հարցաքննության արձանագրությունը

1. Հարցաքննվող անձի ցուցմունքները գրի են առնվում առաջին դեմքով և, հնարավորության սահմաններում, բառացի: Հարցերը և դրանց պատասխանները գրի են առնվում նույն հաջորդականությամբ, ինչ որ տրվել են հարցաքննության ընթացքում: Արձանագրությունում նշվում են բոլոր հարցերը, այդ թվում՝ նրանք, որոնք չեն ընդունվել քննիչի կողմից, կամ որոնց հրաժարվել է պատասխանել հարցաքննվող անձը: Հարցերին պատասխանելուց հրաժարվելու պատճառները նշվում են արձանագրությունում:

Հարցաքննվող անձն իրավունք ունի իր ցուցմունքները գրելու իր ձեռքով, ինչի մասին քննիչն արձանագրությունում նշում է կատարում: Ցուցմունքին ծանոթանալուց հետո քննիչը նրան կարող է տալ լրացուցիչ հարցեր: Հարցերը և տրվող պատասխանները ներառվում են արձանագրությունում:

2. Եթե հարցաքննության ընթացքում հարցաքննվող անձին ներկայացվում են իրեղեն ապացույցներ կամ փաստաթղթեր, կամ հրապարակվում են քննչական այլ գործողությունների արձանագրություններ կամ վերարտադրվում են ձայնագրման և (կամ) տեսագրման նյութեր կամ քննչական գործողությունների նկարահանումներ, ապա այդ մասին նշում է կատարվում հարցաքննության արձանագրությունում: Արձանագրությունում պետք է արտացոլվեն դրանց կապակցությամբ հարցաքննվող անձի ցուցմունքները:

3. Եթե հարցաքննության ընթացքում հարցաքննվող անձի կողմից կատարվել են նշումներ, կազմվել են սխեմաներ, գծագրեր, նկարներ, դիագրամաներ, դրանք կցվում են արձանագրությանը, և այդ մասին նշվում է արձանագրության մեջ:

4. Հարցաքննության ավարտից հետո արձանագրությունը ներկայացվում է հարցաքննվող անձի ծանոթացմանը, կամ էլ նրա խնդրանքով արձանագրությունը հրապարակում է քննիչը, ինչի մասին նշում է կատարվում արձանագրությունում: Արձանագրությունը լրացնելու կամ դրանում ուղղումներ կատարելու վերաբերյալ հարցաքննվող անձի հայտարարությունները քննիչի կողմից մերժման ենթակա չեն:

5. Ցուցմունքին ծանոթանալու և դրանում առկա գրառումների ճշտության փաստը հարցաքննվող անձը հավաստում է իր ստորագրությամբ, որը դրվում է

արձանագրության վերջում: Հարցաքննվող անձը ստորագրում է նաև արձանագրության յուրաքանչյուր էջի տեքստի վերջում:

Հոդված 244. Առերեսում

1. Առրերսումը նախօրոք հարցաքննված երկու այն անձանց միաժամանկյա հարցաքննությունն է, որոնց ցուցմունքներում կան էական հակասություններ:

2. Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում:

3. Առերեսումը կատարվում է հարցաքննության՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

4. Առերեսմանը սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով կարող են մասնակցել պաշտպանը, փաստաբանը, թարգմանիչը և հարցաքննվողի օրինական ներկայացուցիչը, որոնք օգտվում են սույն օրենսգրքով հարցաքննության ժամանակ իրենց վերապահված իրավունքներից:

5. Առերեսման սկզբում ճշտվում է, թե արդյոք անձինք, որոնց միջև կատարվում է առերեսում, ճանաչում են իրար և ինչպիսի հարաբերությունների մեջ են միմյանց հետ: Վկան նախազգուշացվում է ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված պատասխանատվության, ինչպես նաև իր, ամուսնու կամ իր մերձավոր ազգականների վերաբերյալ չվկայելու իր իրավունքի մասին:

6. Առերեսման կանչված անձանց առաջարկվում է հերթով ցուցմունքներ տալ այն հանգամանքների վերաբերյալ, որոնք պարզելու համար կատարվում է առերեսումը: Դրանից հետո քննիչը հարցեր է տալիս: Առերեսման կանչված անձինք կարող են հարցեր տալ միմյանց: Առերեսմանը ներկա պաշտպանը կամ փաստաբանը ևս օգտվում են հարցեր տալու իրավունքից:

7. Առերեսման մասնակիցների նախորդ հարցաքննությունների ժամանակ տված ցուցմունքների հրապարակումը թույլատրվում է նրանց կողմից առերեսման

ընթացքում ցուցմունքներ տրվելուց և դրանք արձանագրության մեջ գրառելուց հետո միայն:

Հոդված 245. Ցուցմունքը տեղում ստուգելը

1. Վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով քննիչը մեղադրյալի, տուժողի կամ վկայի ցուցմունքը ստուգում է տեղում:

2. Ցուցմունքը տեղում ստուգելը կատարվում է այն անձի մասնակցությամբ, ում ցուցմունքը ենթակա է ստուգման:

3. Տեղում ցուցմունքի ստուգումը սկսելուց առաջ քննիչը մեղադրյալին, տուժողին, վկային առաջարկում է ցույց տալ այն տեղը, որտեղ պետք է ստուգվի նրա ցուցմունքը, այնուհետև տեղում վերարտադրել ստուգման ենթակա ցուցմունքը՝ զուգահեռաբար կատարելով որոշակի գործողություններ և մատնացույց անելով վարույթի համար նշանակություն ունեցող հետքերը, առարկաներն ու փաստաթղթերը:

4. Արգելվում է միևնույն տեղում մեկից ավելի անձանց ցուցմունքների միաժամանակյա ստուգումը:

5. Ցուցմունքը տեղում ստուգելու արդյունքներն արձանագրելուց հետո, եթե նախկին ցուցմունքի և տեղում դրա ստուգման արդյունքների միջև առկա է հակասություն, քննիչը պարտավոր է ցուցմունք տված անձին հարցաքննել հակասության պատճառը պարզելու նպատակով:

ԳԼՈՒԽ 33
ՁՆՆՈՒՄԸ, ԱՐՏԱՇԻՐՄՈՒՄԸ, ՔՆՆՈՒՄԸ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 246. Ձննումը

Հանցագործության դեպքը, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու, հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելու նպատակով քննիչը կատարում է դեպքի

վայրի, տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի, առարկայի, փաստաթղթի, կենդանու, մարդու կամ կենդանու դիակի զննում:

Հոդված 247. Զննում կատարելու կարգը

1. Քննիչն իրավունք ունի զննմանը մասնակից դարձնել մեղադրյալին, պաշտպանին, տուժողին, վկային, ինչպես նաև տվյալ քրեական վարույթում ներգրավված ցանկացած այլ անձի:

2. Քննիչը զննում է տեսանելի օբյեկտները, իսկ անհրաժեշտության դեպքում դրանց զննումը դարձնում է իրեն մատչելի, եթե դրանով չեն խախտվում անձի իրավունքները: Անհրաժեշտության դեպքում քննիչը կատարում է զննվող վայրի և առանձին առարկաների չափումներ, կազմում է հատակագծեր, գծագրեր, սխեմաներ, որի մասին նշվում է արձանագրության մեջ: Ամրագրման արդյունք հանդիսացող նշված փաստաթղթերը կցվում են արձանագրությանը:

3. Համակարգչային ծրագրերի, էլեկտրոնային կայքերի, ավտոմատացված տվյալների զննության ընթացքում քննիչը համակարգչային եղանակով կրկնօրինակում է զննվող օբյեկտները, պատրաստում դրանց թղթային պատճենները և այդ մասին նշում արձանագրության մեջ: Ամրագրման արդյունք հանդիսացող թղթային պատճենները ստորագրվում են զննության մասնակիցների կողմից և համակարգչային կրկնօրինակների հետ միասին կցվում արձանագրությանը:

4. Զննության ընթացքում քննիչն ինքնուրույն կամ փորձագետի օգնությամբ վերցնում է հետքեր, իրեր, փաստաթղթեր, ինչպես նաև այլ առարկաներ, որոնք գործով հետագայում կարող են ունենալ ապացուցողական նշանակություն: Քննիչն ամեն դեպքում վերցնում է օրենսդրությամբ շրջանառությունից հանված առարկաները կամ փաստաթղթերը՝ անկախ տվյալ հանցագործությանը դրանց առնչությունից:

5. Եթե զննման ընթացքում առաջանում է այլ քննչական գործողություն կատարելու անհրաժեշտություն, այն կատարվում է սույն օրենսգրքով տվյալ քննչական գործողության կատարման կարգը սահմանող նորմերին համապատասխան:

6. Այլ քննչական գործողության ժամանակ հայտնաբերված օբյեկտների զննումը կատարվում է այդ քննչական գործողության ընթացքում: Զննման արդյունքները ամրագրվում են տվյալ քննչական գործողության արձանագրության մեջ:

Հոդված 248. Դեպքի վայրի զննումը

1. Դեպքի վայրի զննումը կոնկրետ վայրի և այնտեղ գտնվող օբյեկտների զննումն է, երբ այն կատարվում է հանցագործության մասին հաղորդում ստանալուց հետո և բավարար հիմքեր կան ենթադրելու, որ հանցագործությունը կատարվել կամ շարունակվում է կատարվել տվյալ վայրում:

2. Եթե դեպքի վայրի զննումն ամբողջական չի եղել կամ ի հայտ են եկել պարզաբանման ենթակա նոր հարցեր, քննիչը կարող է կատարել դեպքի վայրի նոր զննում:

Հոդված 249. Տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի կամ առարկայի զննումը

1. Քննիչը կատարում է տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի կամ առարկայի զննում, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրանք առնչվում են նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությանը:

2. Տեղանքի, շինության, դրանց տարածքում գտնվող առարկայի, տրանսպորտային միջոցի զննումը հնարավորության դեպքում կատարվում է դրա սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ:

Հոդված 250. Դիակի զննումը

1. Դիակի կամ դրա առանձին մասերի զննումը կատարվում է դատաբժշկության բնագավառի փորձագետի կամ բժշկի մասնակցությամբ: Անհրաժեշտության դեպքում դիակի զննմանը կարող է ներգրավվել նաև այլ փորձագետ:

2. Չճանաչված դիակները ենթակա են լուսանկարահանման և մատնադրոշմման: Նման դիակների դիակիզումն արգելվում է:

Հոդված 251. Արտաշիրմում

1. Արտաշիրմումը կատարվում է կոնկրետ վայրում դիակի առկայության փաստը հաստատելու, ինչպես նաև այն զննելու, ճանաչման ներկայացնելու, հետազոտման համար նմուշներ վերցնելու կամ փորձաքննություն նշանակելու և կատարելու համար:

Արտաշիրմում կարող է կատարվել նաև հանգուցյալի հետ թաղված և գործի համար նշանակություն ունեցող առարկաներ հայտնաբերելու նպատակով:

2. Արտաշիրմումը կատարվում է քննիչի և դատաբժշկության բնագավառի փորձագետի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այլ փորձագետի մասնակցությամբ: Գերեզմանատան վարչակազմի ներկայացուցչի ներկայությունը պարտադիր է:

3. Արտաշիրմումը չի կարող կատարվել առանց արտաշիրմվողի մերձավոր ազգականների համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական գործով բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մերձավոր ազգականներից թեկուզ մեկը մասնակցել կամ որևէ կերպ առնչվել է արտաշիրմվողի մահվան հետ կապված դեպքին, կամ եթե հնարավոր չէ այլ կերպ պարզել դեպքի հանգամանքներն ու լուծել գործի ընթացքը:

4. Արտաշիրմմանը՝ իրենց ցանկությամբ, իրավունք ունեն մասնակցելու նաև տուժողի մերձավոր ազգականները:

5. Արտաշիրմումից հետո դիակը կարող է բերվել համապատասխան բժշկական հաստատություն՝ սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված քննչական գործողությունները կատարելու համար:

Հոդված 252. Կենդանու զննումը

Կենդանու զննումը կատարվում է դրա մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայությունը հայտնաբերելու, ինչպես նաև առանձին հրամաններին կենդանու արձագանքը ստուգելու համար:

Հոդված 253. Քննումը

1. Քննիչն իրավունք ունի կատարել մեղադրյալի, տուժողի կամ վկայի քննում՝ նրանց մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայություն հայտնաբերելու համար, եթե դրա համար չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն:

2. Քննումը կատարվում է զննում կատարելու համար սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

3. Քննում կատարելու մասին քննիչի որոշումը պարտադիր է այն անձի համար, որի նկատմամբ այն կայացվել է:

4. Անհրաժեշտության դեպքում քննումը կատարվում է դատաբժշկության բնագավառի փորձագետի կամ բժշկի մասնակցությամբ:

5. Այդ դեպքում, երբ քննիչն իրավասու չէ գտնվելու հակառակ սեռի անձի քննմանը, քննիչի հանձնարարությամբ քննումը կատարում է դատաբժշկության բնագավառի փորձագետը կամ բժիշկը:

6. Եթե քննումը կատարել է դատաբժշկության բնագավառի փորձագետը կամ բժիշկը կամ վերջինս մասնակցել է քննման կատարմանը, քննիչը նրան ներգրավում է արձանագրության կազմմանը: Եթե քննիչը ներկա չի գտնվել քննմանը, արձանագրությունը կազմում է դատաբժշկության բնագավառի փորձագետը կամ բժիշկը:

Հոդված 254. Քննչական փորձարարությունը

1. Գործի համար նշանակություն ունեցող տվյալներն ստուգելու և ճշտելու նպատակով փորձեր և այլ հետազոտական գործողություններ կատարելու համար քննիչն իրավունք ունի կատարել քննչական փորձարարություն:

2. Քննչական փորձարարության կատարման պայմանները պետք է հնարավորինս մոտ լինեն ստուգման ենթակա դեպքի հանգամանքներին: Պատահական արդյունքից խուսափելու նպատակով քննչական փորձարարության բովանդակությունը կազմող փորձերն ու հետազոտությունները կարող են կատարվել մի քանի անգամ:

ԳԼՈՒԽ 34

ՃԱՆԱՉՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 255. Ճանաչման ներկայացնելու հիմքը և տեսակները

1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ մեղադրյալը, տուժողը կամ վկան կարող է հաստատել որոշակի անձի կամ օբյեկտի նույնականությունը՝ այն ներկայացնում է ճանաչման:

2. Ճանաչման կարող է ներկայացվել անձը, դիակը, առարկան (փաստաթուղթը):

3. Կրկնակի ճանաչումն անթույլատրելի է:

4. Ճանաչում չի կատարվում, իսկ կատարված ճանաչումը չի կարող համարվել իրավաչափ, եթե ճանաչողը նշել է այնպիսի հատկանիշներ, որոնք իրենց անորոշության պատճառով բավարար չեն ճանաչվող անձի կամ օբյեկտի նույնացման համար:

Հոդված 256. Անձին ճանաչման ներկայացնելը

1. Անձը կարող է ճանաչման ներկայացվել արտաքին հատկանիշների, ֆունկցիոնալ առանձնահատկությունների կամ ձայնի հիման վրա:

2. Ճանաչման համար որևէ անձի վկային, տուժողին կամ մեղադրյալին ներկայացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը վերջիններիս նախապես հարցաքննում է այդ անձի հատկանիշների և այն հանգամանքների մասին, որոնցում ճանաչողը ընկալել է այդ անձին:

3. Եթե ճանաչողը վկա կամ տուժող է, նա նախապես նախազգուշացվում է ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության, ինչպես նաև իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ չվկայելու իր իրավունքի մասին:

4. Ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին նույն սեռի և արտաքինով ու հագուստով ճանաչվողին հնարավորինս նման առնվազն երեք այլ անձանց հետ: Ձայնի հիման վրա ճանաչումն իրականացվում է ճանաչման ենթակա

անձի ձայնին հնարավորինս նման ձայն ունեցող երեք այլ անձանց մասնակցությամբ:

5. Եթե անձին ճանաչման ներկայացնելն անհնար է, ճանաչումը կարող է կատարվել համապատասխան հատկանիշներով ճանաչվողին նման առնվազն երեք այլ անձանց լուսանկարներով, տեսագրություններով կամ ձայնագրություններով:

6. Ճանաչման ներկայացնելու պայմանները հնարավորինս պետք է մոտ լինեն այն պայմաններին, որոնցում ճանաչողը տեսել է ճանաչման ներկայացված անձին:

7. Ճանաչումն սկսելուց առաջ քննիչը ճանաչվողին առաջարկում է այլ անձանց միջև զբաղեցնել ցանկացած տեղը:

8. Քննիչի հայեցողությամբ կամ ճանաչողի ցանկությամբ անձի ճանաչումը կարող է կատարվել ճանաչվողի տեսողական դիտարկումից դուրս:

Հոդված 257. Առարկան (փաստաթուղթը) ճանաչման ներկայացնելը

1. Որևէ առարկա (փաստաթուղթ) ճանաչման ներկայացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը ճանաչողին նախապես հարցաքննում է այդ առարկայի (փաստաթղթի) նշանների, ինչպես նաև այն հանգամանքների մասին, որոնցում նա տեսել է այդ առարկան (փաստաթուղթը):

2. Եթե ճանաչողը վկա կամ տուժող է, նա նախապես նախազգուշացվում է ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության, ինչպես նաև իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյա չվկայելու իր իրավունքի մասին:

3. Ճանաչման ենթակա առարկան ճանաչողին ներկայացվում է անռվազն երեք միատեսակ այլ առարկաների շարքում: Ճանաչողին առաջարկվում է մատնացույց անել առարկան, որը նա կարող է ճանաչել և բացատրել, թե ինքն ինչ հատկանիշներով ճանաչեց այդ առարկան: Ճանաչման ներկայացնելու պայմանները հնարավորինս պետք է մոտ լինեն այն պայմաններին, որոնցում ճանաչողը տեսել է ճանաչման ներկայացված առարկան (փաստաթուղթը): Անհրաժեշտության դեպքում առարկան (փաստաթուղթը) ճանաչելիս թույլատրվում է այն մաքրել կեղտից, ժանգից և այլ կողմնակի նյութերից:

4. Այն առարկաների ճանաչումը, որոնց նման առարկաներ անհնար կամ դժվար է ձեռք բերել, կատարվում է ներկայացված մեկ օրինակով:

Հոդված 258. Դիակը ճանաչման ներկայացնելը

1. Դիակի, դրա մասերի ճանաչումը կատարվում է ներկայացված մեկ օրինակով:

2. Եթե ճանաչվում է մարդու դիակ, որին ճանաչողը կենդանի է տեսել, թույլատրվում է հանգուցյալին գրիմ անել:

3. Դիակի հագուստը ճանաչման է ներկայացվում սույն օրենսգրքի 257-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 259. Ճանաչման ներկայացնելու արձանագրությունը

Ճանաչման ներկայացնելու արձանագրության մեջ նշվում են նաև ճանաչողի տվյալները և դատավարական վիճակը, ինչպես նաև նրա նախազգուշացված լինելը ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Արձանագրության մեջ նշվում են ճանաչման ներկայացված անձանց տվյալները և առարկաների նկարագրությունը՝ մանրամասնորեն շարադրելով այն հատկանիշները, որոնցով կատարվել է դրանց ճանաչումը:

ԳԼՈՒԽ 35
ԱՆՁԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՔՆՆԻՉԻ ՊԱՀԱՆՋՈՎ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԿԱՄ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 260. Անձի նախաձեռնությամբ առարկաներ կամ փաստաթղթեր ներկայացնելը

1. Անձը, հիմքեր ունենալով ենթադրելու, որ իր մոտ առկա առարկան կամ փաստաթուղթը կարող է վարույթի համար նշանակություն ունենալ, այն ներկայացնում է քննիչին:

2. Առարկան կամ փաստաթուղթը ներկայացնելու մասին կազմվում է արձանագրություն, որտեղ նկարագրվում է ներկայացված առարկան կամ փաստաթուղթը և նշվում ներկայացնողի բացատրությունը այն ձեռք բերելու հանգամանքների մասին:

3. Եթե առարկան կամ փաստաթուղթը ներկայացվում է քննչական գործողության ընթացքում, ապա սույն հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունները մտցվում են համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ:

Հոդված 261. Քննիչի պահանջով առարկաներ կամ փաստաթղթեր ներկայացնելը

1. Եթե բացակայում է սույն օրենսգրքի 268-րդ հոդվածով նախատեսված առգրավում կատարելու անհրաժեշտությունը, քննիչն իրավասու է ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել փաստաթղթեր և առարկաներ, եթե հիմքեր է կան ենթադրելու, որ դրանք քրեական վարույթի համար կարող են նշանակություն ունենալ:

2. Առարկաներ կամ փաստաթղթեր ներկայացնելու պահանջը պետք է լինի գրավոր՝ հստակ նշելով պահանջվող առարկան կամ փաստաթուղթը և այն ներկայացնելու ժամկետը:

3. Եթե պահանջվող առարկան կամ փաստաթուղթը նշված ժամկետում չի ներկայացվում, քննիչը կատարում է առգրավում՝ սույն օրենսգրքի 268-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Եթե պահանջվող առարկան կամ փաստաթուղթը գտնվում է այլ քրեական, դատական կամ վարչական վարույթի նյութերում, ապա քննիչին կարող է տրամադրվել տվյալ առարկայի լուսանկարը կամ փաստաթղթի պատճենը՝ վարույթն իրականացնողի ստորագրությամբ: Առարկայի կամ փաստաթղթի բնօրինակը քննիչին տրամադրվում է միայն փորձաքննություն նշանակելու և կատարելու նպատակով:

5. Քննիչի պահանջով առարկաներ կամ փաստաթղթեր ներկայացնելու մասին կազմվում է արձանագրություն սույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 36
ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԳՐԱՎՈՒՄԸ

Հոդված 262. Խուզարկություն կատարելու հիմքերը

1. Քննիչը, հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ որևէ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են քրեական վարույթի համար նշանակություն ունեցող առարկաներ, նյութեր կամ փաստաթղթեր, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար:

2. Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար:

3. Քննիչի որոշմամբ խուզարկություն կատարելու դեպքում որոշման մեջ պետք է նշվի այն ենթադրյալ հանցագործության համառոտ նկարագրությունը, որի առիթով մտադրություն կա կատարել խուզարկություն, ինչ տվյալներ են ակնկալվում ստանալ, խուզարկության կատարման ժամկետը, տեղը, անմիջական կատարողները:

Հոդված 263. Խուզարկությանը ներկա գտնվող անձինք

1. Խուզարկություն կատարելիս պետք է ապահովվի այն անձի և նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայությունը, ում մոտ կատարվում է խուզարկությունը: Եթե նշված անձանց ներկայությունն անհնար է, կամ նրանք խուսափում են խուզարկությանը ներկա գտնվելուց, խուզարկությունը կատարվում է համատիրության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի ներկայությամբ:

2. Կազմակերպություններին կամ զորամասերին պատկանող շինություններում խուզարկությունը կատարվում է նրանց ներկայացուցչի և այն անձի

ներկայությամբ, ում ենթադրյալ հանցավոր արարքի կապակցությամբ կատարվում է խուզարկությունը: Եթե նշված անձանց ներկայությունն անհնար է, կամ նրանք խուսափում են խուզարկությանը ներկա գտնվելուց, խուզարկությունը կատարվում է տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի ներկայությամբ:

3. Մեղադրյալի բնակարանում կամ նրան պատկանող կամ նրա տիրապետման ներքո գտնվող շենքում, շինությունում կամ տարածքում խուզարկությունը կատարվում է մեղադրյալի ներկայությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրյալը հրաժարվում կամ խուսափում է մասնակցել խուզարկությանը, կամ առկա են նրա ներկայությունը խոչընդոտող օբյեկտիվ պատճառներ:

4. Եթե մեղադրյալի պաշտպանը տեղեկացել է մեղադրյալի բնակարանում կամ նրան պատկանող կամ նրա տիրապետման ներքո գտնվող շենքում, շինությունում կամ տարածքում կատարվող խուզարկության մասին և ցանկություն է հայտնել ներկա գտնվել խուզարկությանը, ապա նրա մուտքը և ներկայությունը չեն կարող խոչընդոտվել:

5. Փնտրվող առարկաները ճանաչելու անհրաժեշտության դեպքում խուզարկության կատարմանը կարող են ներկա գտնվել նաև տուժողը և վկան:

6. Խուզարկությանը ներկա գտնվող անձինք իրավունք ունեն հետևել քննիչի գործողություններին, անել հայտարարություններ, որոնք պետք է մտցվեն արձանագրության մեջ: Խուզարկությանը ներկա անձինք մինչև խուզարկության ավարտը առանց քննիչի թույլտվության իրավունք չունեն լքելու խուզարկության կատարման վայրը:

Հոդված 264. Խուզարկություն կատարելու կարգը

1. Քննիչը և քննչական գործողությանը մասնակցող անձինք խուզարկություն կատարելու մասին որոշման հիման վրա մուտք են գործում այն բնակարան, շինություն կամ տարածք, որտեղ պետք է կատարվի խուզարկությունը:

2. Խուզարկություն կատարելուց առաջ քննիչը պարտավոր է անձին, որի մոտ կատարվում է խուզարկությունը, ծանոթացնել որոշմանը և նրան հանձնել որոշման պատճենը: Այդ մասին նրանից վերցվում է ստորագրություն:

3. Խուզարկություն կատարելիս որոշումը ներկայացնելուց և հրապարակելուց հետո քննիչն առաջարկում է հանձնել առգրավման ենթակա առարկաները և փաստաթղթերը կամ թաքնված անձին: Եթե դրանք հանձնվում են կամովին, ապա այդ մասին նշվում է արձանագրության մեջ: Որոնվող առարկաների, փաստաթղթերի կամ թաքնված անձի չհանձնվելու կամ ոչ ամբողջությամբ հանձնվելու դեպքում կատարվում է խուզարկություն:

4. Խուզարկությունը սկսելուց առաջ քննիչը խուզարկությանը ներկա անձանց բացատրում է նրանց իրավունքները և պարտականությունները:

5. Խուզարկություն կատարելիս քննիչն իրավունք ունի բացել փակված բնակարանները, շինություններն ու պահեստարանները, եթե դրանց տերը հրաժարվում է կամովին բացել դրանք: Ընդ որում, պետք է խուսափել փականքները, դռները և այլ առարկաներն առանց անհրաժեշտության վնասելուց:

6. Բացի խուզարկություն կատարելու մասին որոշման մեջ նշված իրերից, քննիչը վերցնում է նաև խուզարկության ընթացքում հայտնաբերված այն բոլոր առարկաները, նյութերն ու փաստաթղթերը, որոնք հանված են շրջանառությունից կամ որոնք իրենց բնույթով, տարբերակիչ նշաններով կամ իրենց վրա առկա հետքերով կարող են կապված լինել մեկ այլ ենթադրյալ հանցագործության հետ:

7. Խուզարկություն կատարող անձի կամ անձանց բոլոր գործողությունները պետք է տեսանելի լինեն խուզարկությանը ներկա գտնվողներին:

8. Քննիչն իրավունք ունի խուզարկության վայրում գտնվող անձանց արգելել հեռանալու այդ տեղից, ինչպես նաև հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ՝ մինչև քննչական գործողության ավարտը:

9. Վերցված բոլոր առարկաները և փաստաթղթերը ներկայացվում են քննչական գործողության մասնակիցներին, մանրամասն նկարագրվում են արձանագրության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փաթեթավորվում և կնքվում քննիչի կնիքով:

Հոդված 265. Անձնական խուզարկություն

1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ անձի հագուստի մեջ, իրերում կամ մարմնի վրա կարող են գտնվել ենթադրյալ հանցագործությանը

առնչվող առարկաներ, նյութեր կամ փաստաթղթեր, դրանք հայտնաբերելու և վերցնելու նպատակով կատարում է անձնական խուզարկություն:

2. Անձնական խուզարկությունը, առանց այդ մասին որոշում կայացնելու, կարող է կատարվել՝

1) հանցագործության մեջ կասկածվող անձին ձերբակալելիս և ոստիկանություն կամ այլ իրավապահ մարմին բերելիս.

2) հանցագործության մեջ կասկածվողին ձերբակալելիս և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը կիրառելիս.

3) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն շինությունում գտնվող անձը, որտեղ խուզարկություն է կատարվում, իր մոտ կարող է թաքցնել փաստաթղթեր կամ այլ առարկաներ, որոնք գործով կարող են ունենալ ապացուցողական նշանակություն:

3. Անձնական խուզարկությունը կատարվում է խուզարկվողի հետ նույն սեռի ընթերակաների ներկայությամբ: Անհրաժեշտության դեպքում անձնական խուզարկությանը կարող է ներգրավվել դատաբժշկության ոլորտի փորձագետ կամ բժիշկ:

Հոդված 266. Խուզարկության արձանագրությունը

1. Խուզարկության ընթացքում ամբողջ վերցվածի մասին պետք է նշվի քննչական գործողության արձանագրության մեջ՝ ճշգրիտ նշելով դրանց քանակը, չափը, քաշը, անհատական հատկանիշները և այլ առանձնահատկությունները:

2. Եթե որոնվող առարկաները կամ անձինք կամովին են հանձնվել, այդ մասին նշվում է արձանագրության մեջ:

3. Եթե քննչական գործողությունները կատարելիս փորձեր են եղել ոչնչացնելու կամ թաքցնելու հայտնաբերված առարկաները կամ փաստաթղթերը, ապա այդ մասին նշվում է արձանագրության մեջ:

Հոդված 267. Խուզարկության արձանագրության պատճենի հանձնման պարտադիր լինելը

1. Խուզարկության արձանագրության պատճենը ստորագրությամբ հանձնվում է այն անձին, ում մոտ կատարվում է քննչական գործողությունը, կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ այն բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչին, որի տարածքում կատարվել է քննչական գործողությունը:

2. Եթե խուզարկությունը կատարվել է կազմակերպության կամ զորամասի տարածքում, արձանագրության պատճենը հանձնվում է դրանց ներկայացուցչին:

Հոդված 268. Առգրավում կատարելու հիմքերը

1. Քրեական վարույթի համար նշանակություն ունեցող որոշակի առարկաներ, նյութեր կամ փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտության դեպքում, եթե ստույգ հայտնի են, թե որտեղ և ում մոտ են դրանք գտնվում, քննիչը կատարում է առգրավում:

2. Առգրավում կատարելու որոշման մեջ պետք է նշվի առգրավման կատարման ժամկետը, տեղը, անմիջական կատարողները, արդյունքների ամրագրման ձևը:

3. Այն փաստաթղթերի առգրավումը, որոնք պարունակում են պետական գաղտնիք, կատարվում է միայն դատախազի թույլտվությամբ՝ համապատասխան հիմնարկի ղեկավարի հետ համաձայնեցված կարգով:

4. Կազմակերպությունները, պաշտոնատար անձինք և քաղաքացիներն իրավունք չունեն հրաժարվել քննիչին հանձնելու այն առարկաները, նյութերը, փաստաթղթերը կամ դրանց պատճենները, որոնք պահանջվել են նրա կողմից:

5. Եթե որոնվող առարկաները որոշման մեջ նշված տեղում չեն հայտնաբերվում, ապա քննիչի որոշմամբ կարող է կատարվել խուզարկություն, բացառությամբ այն դեպքերի, երբ խուզարկությունը կարող է կատարվել միայն դատարանի որոշման հիման վրա:

Հոդված 269. Առգրավում կատարելու կարգը և արդյունքների արձանագրումը

Առգրավումը կատարվում և դրա արդյունքները ամրագրվում են սույն օրենսգրքի 264-րդ և 266-րդ հոդվածներով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 37
ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՄՈՒՇՆԵՐ ՍՏԱՆԱԼԸ

Հոդված 270. Հետազոտման համար նմուշներ ստանալու հիմքը

1. Քննիչն իրավունք ունի ստանալ մարդու, դիակի, կենդանու, նյութի կամ այլ օբյեկտի հատկությունները բնութագրող նմուշներ, եթե դրանց հետազոտումը կարող է հանցագործության բացահայտման համար նշանակություն ունենալ:

2. Նմուշներ ստանալու մասին որոշման մեջ պետք է նշվեն՝ նմուշներ ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, ումից պետք է ստացվի նմուշը, նրա դատավարական վիճակը, ինչ չափով և կոնկրետ ինչ նմուշներ պետք է ստացվեն, երբ և ում պետք է ներկայանա անձը իրենից նմուշներ ստանալու համար, որտեղ, ում և ինչ նպատակով պետք է ներկայացվեն նմուշները՝ դրանք ստանալուց հետո:

3. Նմուշ կարող են լինել՝

1) արյունը, սերմնահեղուկը, մազը, եղունգների կտրվածքները, մաշկի մանրադիտակային քերվածքները.

2) թուքը, քրտինքը և այլ արտաթորանքներ.

3) մաշկի գծանախշերի դրոշմը, ատամների և վերջավորությունների կաղապարները.

4) ձեռագիրը, ստորագրությունը, մարդու հմտությունն արտահայտող այլ նյութեր.

5) ձայնագրությունը.

6) պատրաստի արտադրանքի, հումքի, նյութերի փորձնական նմուշները.

7) զենքը, պարկուճը, գնդակը, փամփուշտը.

8) այլ նյութեր և առարկաներ:

Հոդված 271. Հետազոտման համար նմուշներ ստանալու կարգը

1. Հետազոտման համար նմուշներ վերցնում է քննիչը կամ քննիչի հանձնարությամբ՝ փորձագետը: Դատաքննության ընթացքում, դատարանի հանձնարարությամբ նմուշներ վերցնում է փորձագետը:

2. Քննիչը սույն օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով անձին հրավիրում է իր մոտ կամ գնում է նրա գտնվելու վայրը, ստորագրությամբ ծանոթացնում է նրան նմուշ ստանալու մասին որոշմանը, նրան, փորձագետին, ընթերականերին բացատրում է իրենց իրավունքներն ու պարտականությունները:

3. Քննիչը փորձագետի մասնակցությամբ, եթե նա կանչվել է, և ընթերակաների ներկայությամբ կատարում է անհրաժեշտ գործողություններ և ստանում է նմուշներ: Բացի փաստաթղթերից, մյուս նմուշները փաթեթավորվում և կնքվում են:

4. Եթե այլ եղանակով նմուշների ստացումն անհնար է, նմուշներ կարող են ստացվել խուզարկության կամ առգրավման միջոցով:

5. Քննիչը կարող է հետազոտման համար նմուշներ ստանալ նաև այլ քննչական գործողության ընթացքում, բացառությամբ մարդուց ստացվող նմուշների:

Հոդված 272. Հետազոտման համար նմուշներ ստանալու արձանագրությունը

1. Հետազոտման համար նմուշներ ստանալու մասին արձանագրության մեջ նկարագրվում են նմուշներ ստանալու համար ձեռնարկված բոլոր գործողություններն այն հաջորդականությամբ, ինչպես որ դրանք կատարվել են, ինչպես նաև ստացված նմուշները:

2. Եթե հետազոտման համար նմուշներ ստացվել են այլ քննչական գործողության ընթացքում, ապա սույն հոդվածի առաջին մասում սահմանված տեղեկությունները նշվում են տվյալ քննչական գործողության արձանագրության մեջ:

3. Ստացված նմուշները կցվում են արձանագրությանը:

ԳԼՈՒԽ 38.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԸ

Հոդված 273. Փորձաքննություն նշանակելու և կատարելու հիմքերը

1. Փորձաքննություն նշանակվում և կատարվում է, երբ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ:

2. Քրեական վարույթի մասնակիցների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից:

3. Վկայի և տուժողի նկատմամբ փորձաքննություն նշանակվում և կատարվում է միայն նրանց կամ նրանց ներկայացուցչի համաձայնությամբ՝ բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-4-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Հոդված 274. Փորձաքննություն նշանակելու մասին որոշումը

1. Փորձաքննությունը նշանակվում և կատարվում է քննիչի որոշման հիման վրա:

2. Փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ պետք է նշվեն՝

1) փորձաքննություն նշանակելու հիմքերը.

2) փորձագիտական հիմնարկի անվանումը կամ այն անձի անունը և ազգանունը, որին հանձնարարված է փորձաքննության կատարումը.

3) փորձագետին առաջադրված հարցերը.

4) փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները և այլ օբյեկտները՝ նշելով՝ երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել, իսկ քրեական գործի նյութերով փորձաքննություն կատարելիս՝ տեղեկություններ, որոնց վրա կարող են հիմնվել փորձագետի հետևությունները:

3. Քննիչը մեղադրյալին և նրա պաշտպանին ծանոթացնում է փորձաքննություն նշանակելու և կատարելու մասին որոշմանը և նրանց բացատրում սույն օրենսգրքի 276-րդ հոդվածով նախատեսված իրավունքները: Այդ մասին

կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են մեղադրյալը և նրա պաշտպանը:

Հոդված 275. Փորձաքննության կատարմանը ներկա գտնվող անձինք

1. Քննիչն իրավունք ունի ներկա գտնվել փորձաքննության կատարմանը և փորձագետից ստանալ նրա գործողությունների վերաբարյալ պարզաբանումներ, ինչի մասին նշում է կատարվում փորձագետի եզրակացության մեջ:

2. Դատաբժշկական փորձաքննության ընթացքում դիահերձում կատարելիս, որպես կանոն, ներկա է գտնվում քննիչը:

3. Քննիչի համաձայնությամբ և փորձագետի թույլտվությամբ փորձաքննությանը կարող են մասնակցել նաև դատավարության մասնակիցները, եթե դա չի խոչընդոտի գործի քննությանը:

Հոդված 276. Փորձաքննություն նշանակելիս և կատարելիս մեղադրյալի, տուժողի և վկայի իրավունքները

1. Փորձաքննություն նշանակելիս և կատարելիս մեղադրյալը, տուժողը և վկան իրավունք ունեն՝

1) մինչև փորձաքննություն կատարելը ծանոթանալ փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը և ստանալ իրենց իրավունքների պարզաբանում.

2) բացարկ հայտնել փորձագետին.

3) միջնորդել, որ փորձագետ նշանակվի իր մատնանշած անձանց թվից.

4) փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն.

5) փորձագետին առաջադրել լրացուցիչ հարցեր.

6) քննիչի թույլտվությամբ ներկա գտնվել փորձաքննության կատարմանը.

7) բացատրություններ տալ փորձագետին.

8) քննիչի կողմից փորձագետի եզրակացությունը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում ծանոթանալ փորձագետի եզրակացությանը.

9) մասնակցել իր միջնորդությամբ կատարվող՝ փորձագետի հարցաքննությանը:

2. Թվարկված իրավունքներից օգտվում է նաև այն անձը, ում նկատմամբ պետք է լուծվի բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հարցը, եթե դա թույլ է տալիս նրա հոգեկան վիճակը:

Հոդված 277. Միանձնյա կամ հանձնաժողովային փորձաքննություն

1. Փորձաքննությունները կարող են կատարվել միանձնյա կամ նույն մասնագիտությամբ փորձագետների հանձնաժողովի կողմից:

2. Հանձնաժողովային փորձաքննություն կատարելու մասին որոշումը պարտադիր է փորձագիտական հիմնարկի ղեկավարի համար: Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին առանց հանձնաժողովային փորձաքննության պահանջի, ապա նրա ղեկավարն իրավասու է կազմակերպել հանձնաժողովային փորձաքննության կատարումը:

3. Մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, պահանջով փորձագետների հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել իրենց կողմից հրավիրված փորձագետը:

4. Միասնական կարծիքի հանգելու դեպքում փորձագետները ստորագրում են եզրակացությունը: Տարաձայնության դեպքում յուրաքանչյուր փորձագետ կազմում է առանձին եզրակացություն՝ ընդգրկելով բոլոր կամ տարաձայնություններ առաջացրած հարցերը:

Հոդված 278. Համալիր փորձաքննություն

1. Եթե քրեական գործով նշանակություն ունեցող որևէ հարցի պարզումը հնարավոր է միայն տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ապա պետք է նշանակվի համալիր փորձաքննություն:

2. Համալիր փորձաքննության շրջանակում պարզաբանված փաստական տվյալների համակցության հիման վրա փորձագետներից յուրաքանչյուրն իր հատուկ

գիտելիքների սահմաններում մասնակցում է ընդհանուր եզրակացության ձևավորմանը:

3. Փորձագետն իրավունք չունի ստորագրել համալիր փորձաքննության եզրակացության այն մասը, որը չի պատկանում իր գիտական իրավասությանը:

4. Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին՝ առանց համալիր փորձաքննություն կատարելու պահանջի, ապա անհրաժեշտության դեպքում այդ հիմնարկի ղեկավարը կարող է կազմակերպել համալիր փորձաքննություն:

Հոդված 279. Փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկում

1. Քննիչը փորձաքննություն նշանակելու մասին իր կայացրած որոշումը, հետազոտման օբյեկտը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև քրեական վարույթի նյութերն ուղարկում է փորձագիտական հիմնարկի ղեկավարին: Փորձաքննության կատարմանը մասնակցում է այն փորձագետը, որը նշված է որոշման մեջ: Եթե որոշման մեջ կոնկրետ փորձագետ նշված չէ, ապա փորձագիտական հիմնարկի ղեկավարը պետք է որոշի, թե տվյալ փորձագիտական հիմնարկի որ փորձագետն է կատարելու փորձաքննությունը:

2. Փորձագիտական հիմնարկի ղեկավարը փորձագետին ծանոթացնում է սույն օրենսգրքի 54-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներին ու պարտականություններին, նախազգուշացնում է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին, կազմակերպում է սահմանված ժամկետում փորձաքննության կատարումը, սակայն իրավունք չունի փորձագետին տալ ցուցումներ, որոնք կանխորոշում են հետազոտությունների ընթացքը և հետևությունների բովանդակությունը:

Հոդված 280. Փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկից դուրս

1. Եթե փորձաքննությունը կատարվում է փորձագիտական հիմնարկից դուրս, ապա քննիչը փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելուց հետո իր մոտ է կանչում այն անձին, ում հանձնարարված է փորձաքննությունը, հավաստիանում է նրա ինքնության և ձեռնհասության մեջ, պարզում է փորձագետի հարաբերությունները մեղադրյալի, տուժողի, դատավարության այլ մասնակիցների հետ և ստուգում է, թե չկան արդյոք փորձագետին բացարկ հայտնելու հիմքեր:

2. Փորձաքննություն նշանակած անձը փորձագետին հանձնում է փորձաքննություն նշանակելու մասին որոշումը, բացատրում է սույն օրենսգրքի 54-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնում է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու, ինչպես նաև ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Այդ գործողությունները կատարելու մասին քննիչը կազմում է արձանագրություն, որը ստորագրվում է փորձագետի և հաստատվում քննիչի կողմից: Արձանագրության մեջ նշվում են նաև փորձագետի արած հայտարարությունները և նրա միջնորդությունները: Փորձագետի միջնորդությունները մերժելու մասին փորձաքննություն նշանակած անձը կայացնում է պատճառաբանված որոշում:

3. Փորձաքննություն նշանակող անձը մեղադրյալին, տուժողին, վկային ներկայացնում է փորձագետին, երբ անհրաժեշտ է հետազոտել նրանց մարմինը կամ հոգեկան վիճակը կամ եթե փորձաքննությանը նրանց մասնակցելն անհրաժեշտ է:

Հոդված 281. Փորձագետի եզրակացությունը

1. Անհրաժեշտ հետազոտություններ կատարելուց հետո փորձագետը կազմում է իր ստորագրությամբ հաստատված գրավոր եզրակացություն, որն ուղարկվում է փորձաքննություն նշանակող անձին:

2. Փորձագետի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ երբ, որտեղ, ում կողմից (անուն, ազգանուն, հայրանուն, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը) և ինչի հիման վրա է կատարվել փորձաքննությունը, ովքեր

են մասնակցել, քրեական գործի որ նյութերն է փորձագետն օգտագործել, ինչպիսի իրեղեն ապացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ են կիրառվել, առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ:

3. Փորձագետի եզրակացությանը պետք է կցվեն հետազոտված իրեղեն ապացույցները, նմուշները և այլ նյութեր, ինչպես նաև փորձագետի հետևությունները պարզաբանող լուսանկարները, սխեմաները:

4. Եթե ներկայացված նյութերն անբավարար են կամ հարցի լուծումը դուրս է փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից, փորձագետի եզրակացությունը պետք է բովանդակի առաջադրված բոլոր կամ որոշ հարցերին պատասխանելու անհնարինության մասին հիմնավորում:

Հոդված 282. Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն

1. Եթե հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը համաձայն չեն փորձագետի եզրակացության հետ վերջինիս ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, կարող են նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ ուրիշ փորձագետի:

2. Կրկնակի փորձաքննությունը կատարվում է, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել են ոչ հավաստի կամ անթույլատրելի, կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները: Կրկնակի փորձաքննության կատարումը հանձնարարվում է ուրիշ փորձագետի: Կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձագետի առջև կարող է դրվել նախկին հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցը: Կրկնակի փորձաքննություն կատարելու մասին որոշման մեջ պետք է նշվեն նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու շարժառիթները: Նախկին փորձաքննությունը կատարած

փորձագետները կարող են ներկա գտնվել կրկնակի փորձաքննությանը, տալ պարզաբանումներ, սակայն հետազոտմանը և եզրակացություն կազմելիս նրանք չեն մասնակցում:

Հոդված 283. Փորձագետի հարցաքննությունը

1. Եթե փորձագետի եզրակացությունը բավարար չափով պարզ կամ հստակ չէ, ունի բացեր, որոնք լրացնելու համար չեն պահանջվում լրացուցիչ հետազոտություններ կամ անհրաժեշտություն է առաջացել ճշտելու փորձագետի կողմից կիրառված մեթոդները և հասկացությունները, քննիչն իրավունք ունի հարցաքննել փորձագետին:

2. Փորձագետին չի թույլատրվում հարցաքննել մինչև նրա կողմից եզրակացություն ներկայացնելը: Փորձագետի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով:

ԳԼՈՒԽ 39
ԳԱՂՏՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 284. Ընդհանուր դրույթներ գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ

1. Հետաքննության մարմինն իրավասու է կատարել միայն սույն օրենսգրքով նախատեսված գաղտնի քննչական գործողություններ:

2. Գաղտնի քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքում կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց:

3. Գաղտնի քննչական գործողություն կատարում է հետաքննության մարմինը՝ դատարանի որոշման հիման վրա՝ քննիչի հանձնարարությամբ:

4. Հետաքննության մարմինն իրավունք չունի կատարել այնպիսի գաղտնի քննչական գործողություններ, որոնց կատարման համար բացակայում են դատարանի որոշումը կամ քննիչի հանձնարարությունը:

5. Գաղտնի քննչական գործողությունները կատարվում են միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ վարույթներով:

6. Գաղտնի քննչական գործողությունների կատարման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների ցանկը լիազոր պետական մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Օրենքի խախտմամբ կատարված գաղտնի քննչական գործողության արդյունքում ձեռք բերված տեղեկություններն ապացուցման գործընթացում չեն կարող օգտագործվել:

8. Գաղտնի քննչական գործողության կատարումը դադարեցվում է տվյալ վարույթն իրականացնող քննիչի հանձնարարությամբ:

Հոդված 285. Գաղտնի քննչական գործողության մասնակիցների իրավունքների պաշտպանության ընդհանուր երաշխիքները

1. Եթե գաղտնի քննչական գործողության իրականացման ընթացքում այն անձի վերաբերյալ, ում նկատմամբ այդ միջոցառումներն իրականացվում են, ձեռք են բերվել տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ գործողությունն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք քրեական վարույթում ապացույցներ չեն և ենթակա են ոչնչացման, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) հետաքննության մարմինը գործել է բարեխղճորեն.

2) ստացված տեղեկությունները պարունակում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կամ դրա նախապատրաստման վերաբերյալ տեղեկություններ.

3) այդ տեղեկությունների ձեռքբերման համար սույն օրենսգրքով թույլատրվում է իրականացված գաղտնի քննչական գործողության կատարումը: Սույն մասով նախատեսված տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն:

2. Գաղտնի քննչական գործողությունների կատարման ընթացքում կիրառվող հատուկ տեխնիկական միջոցները չպետք է վնաս պատճառեն մարդկանց կյանքին ու առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին:

3. Արգելվում է գաղտնի տեղեկություններ ստանալու համար նախատեսված (մշակված, ծրագրված, հարմարեցված) հատուկ տեխնիկական և այլ միջոցների օգտագործումը և գաղտնի քննչական գործողությունների կատարումը սույն օրենսգրքով չլիազորված պետական մարմինների, ստորաբաժանումների կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

Հոդված 286. Գաղտնի քննչական գործողությունների տեսակները և կատարման ընդհանուր պայմանները

1. Քրեական վարույթի ընթացքում կարող են կատարվել հետևյալ գաղտնի քննչական գործողությունները՝

1) ներքին դիտում.

2) արտաքին դիտում՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ.

3) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում.

4) հեռախոսային հաղորդակցության վերահսկում.

5) ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում.

6) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված գաղտնի քննչական գործողությունները կարելի է կատարել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ դրանք պետք է կատարվեն, առնչություն ունի ծանր կամ առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությանը, և եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այլ եղանակով քրեական վարույթի համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

3. Արգելվում է անցկացնել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված գաղտնի քննչական գործողությունները, երբ անձը, ում նկատմամբ իրականացվելու է այդ գործողությունը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Անհապաղ ոչնչացման են ենթակա սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված գաղտնի քննչական գործողությունների անցկացման ընթացքում տվյալ գործողության անցկացման

նպատակից անկախ պատճառով ստացված փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունները:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված գաղտնի քննչական գործողությունների ընդհանուր ժամկետը չի կարող վեց ամսից ավելի լինել: Դրանք վերացվում են, երբ վերանում է դրանց անհրաժեշտությունը, բայց բոլոր դեպքերում՝ նախաքննության ավարտից ոչ ուշ:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունը նույն անձի նկատմամբ նույն անձի կողմից տրված նույն հայտարարության հիման վրա կարող է կատարվել միայն մեկ անգամ:

Հոդված 287. Գաղտնի քննչական գործողություն անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ քննիչի միջնորդությունը և դրա քննարկման կարգը

1. Գաղտնի քննչական գործողություն անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ քննիչի միջնորդության մեջ պետք է նշվեն՝

1) այն գաղտնի քննչական գործողությունը, որ նախատեսվում է կատարել.

2) գաղտնի քննչական գործողության կատարման հիմքը.

3) տվյալ տեսակի գործողությունն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները.

4) այն տեղեկությունները, նյութերը կամ փաստաթղթերը, որոնք նախատեսվում է ստանալ դրա հետևանքով.

5) գաղտնի քննչական գործողության անցկացման տեղը, սկիզբը և ավարտը:

2. Սույն օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև այն հեռախոսահամարը (հեռախոսահամարները), որը (որոնք) լսվելու է (են):

3. Սույն օրենսգրքի 286-րդ հոդվածի 1–ին մասի 3-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունը կատարելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև փոստային կամ էլեկտրոնային հասցեն,

որը վերահսկվելու է, որոնողական հետաքրքրություն ներկայացնող բառերը կամ բառակապակցությունները (փոստային առաքումների և այլ հաղորդումների վերահսկման դեպքում փոստային կամ էլեկտրոնային հասցեի, որոնողական հետաքրքրություն ներկայացնող բառերի կամ բառակապակցությունների բացակայության դեպքում կարող են ներկայացվել անձի ձեռագրի նմուշը կամ այն անձին նույնացնելու համար բավարար այլ հատկանիշներ, ում նամակագրության, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումները պետք է վերահսկվեն):

4. Սույն օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունը կատարելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև վերահսկվող բանկային հաշվի (ավանդի) տվյալները, տվյալներ այն ֆինանսական գործարքների վերաբերյալ, որոնք պետք է վերահսկվեն, ինչպես նաև այն անձանց անհատական տվյալները, որոնց վերաբերում են այդ գործարքները, կամ որոնց պատկանում է բանկային հաշիվը:

5. Սույն օրենքի 286-րդ հոդվածի 1–ին մասի 6-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունը կատարելու վերաբերյալ միջնորդությանը կից պետք է ներկայացվի նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկության վերաբերյալ համապատասխան անձի հայտարարությունը:

Հոդված 288. Գաղտնի քննչական գործողություն կատարելու մասին քննիչի հանձնարարությունը

1. Գաղտնի քննչական գործողություն կատարելու մասին հանձնարարությունը տրվում է գրավոր և պետք է պարունակի հանձնարարությունը տվողի, հանձնարարությունը կատարողի վերաբերյալ տվյալներ, քրեական վարույթը, որի շրջանակներում պետք է կատարվի գաղտնի քննչական գործողությունը, կատարման ենթակա գաղտնի քննչական գործողության տեսակը, կատարման պայմանները և տևողությունը, տեղեկություններ, թե երբ և ում պետք է ներկայացվեն դրա արդյունքները: Գաղտնի քննչական գործողություն կատարելու հանձնարարությանը կցվում է գաղտնի քննչական գործողության կատարումը թույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը: Քաղվածքը տրվում է

դատարանի կողմից՝ նշված գաղտնի քննչական գործողության կատարման վերաբերյալ որոշման հետ միաժամանակ:

2. Հեռախոսային հաղորդակցության վերահսկում գաղտնի քննչական գործողությունը կատարելու իրավասություն ունեցող մարմինները հեռախոսային հաղորդակցության վերահսկում իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչություն (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) են ներկայացնում քննիչի հանձնարարությունը և դատարանի որոշման քաղվածքը, որը պետք է պարունակի միայն վերահսկման ենթակա հեռախոսահամարը:

Հոդված 289. Ներքին դիտում

Ներքին դիտումը բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային կամ այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

Հոդված 290. Արտաքին դիտում տեխնիկական միջոցների կիրառմամբ

Տեխնիկական միջոցների կիրառմամբ արտաքին դիտումը առանց բնակարանի անձեռնմխելիության խախտման անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է բաց տարածությունում կամ հասարակական վայրերում հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, լուսանկարահանման, էլեկտրոնային կամ այլ կրիչների միջոցով, երբ անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին:

Հոդված 291. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը

1. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց, փոխանցվող նամակների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ դրանց բովանդակության հետազոտումն է և դրանց արդյունքների ամրագրումը, ինչպես նաև նամակի, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը նրա ձեռագրի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

2. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը, բացառությամբ միջազգային նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների փոխանցման, հետաքննության մարմիններն իրականացնում են ինքնուրույն: Անհրաժեշտության դեպքում ազգային անվտանգության մարմինները ստեղծում են անհրաժեշտ տեխնիկական պայմաններ, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, հետաքննության այլ մարմինների կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

3. Սույն գաղտնի քննչական գործողությունն անցկացնելիս հեռահաղորդակցության և փոստային կապի կազմակերպությունները պարտավոր են հետաքննության մարմինների պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել սույն գաղտնի քննչական գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմաններ:

Հոդված 292. Հեռախոսային հաղորդակցության վերահսկումը

1. Հեռախոսային հաղորդակցության վերահսկումը հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող հաղորդակցության, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային հաղորդակցության և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է, որը նշանակում է՝

1) հեռախոսային ֆիքսված ցանցի դեպքում՝

ա. հեռախոսային հաղորդակցության ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը.

բ. հեռախոսահամարի պարզումը.

գ. տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային հաղորդակցություն սկսելու պահին և ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը.

դ. հեռախոսային զանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսի համարի պարզումը, որի վրա փոխանցվել է զանգը.

2) բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝

ա. հեռախոսային հաղորդակցության, ներառյալ՝ կարճ հաղորդագրությունների (sms) և ձայնային հաղորդագրությունների ձայնագրումը կամ դրանց բովանդակության այլ ձևով ամրագրումը.

բ. հեռախոսային հաղորդակցությունը սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը, հեռախոսահամարը, տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը.

3) ինտերնետային հաղորդակցության, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային հաղորդակցության և ինտերնետի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում հաղորդման ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը, ինչպես նաև տվյալները, որոնց միջոցով կարող են պարզվել՝

ա. ինտերնետային ցանցին միանալու և ցանցից դուրս գալու աշխարհագրական վայրը, օրը, ժամը և տևողությունը, ներառյալ ինտերնետ պրոտոկոլի (IP) հասցեն.

բ. ինտերնետն օգտագործողի կամ բաժանորդի անունը և անհատականացման տվյալները (user ID).

գ. հեռախոսի համարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, ինտերնետային հասցեն, ինտերնետային հեռախոսային զանգը ստացողի անունը կամ այդ անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին յուրաքանչյուր տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել նրա ինքնությունը:

2. Հեռախոսային հաղորդակցության վերահսկումը հետաքննության մարմինների կողմից անցկացվում է Գլխավոր վարչություն կողմից օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, ոստիկանության կամ քրեակատարողական ծառայության մարմինների կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների և Գլխավոր վարչության կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

3. Ինտերնետային ցանցով փոխանցվող հաղորդումների, միջազգային նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման նպատակով ազգային անվտանգության մարմինները ստեղծում են օպերատիվ-տեխնիկական պայմաններ, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, հետաքննության այլ մարմինների կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների կողմից այդ տվյալների, տեղեկությունների և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

4. Սույն գաղտնի քննչական գործողությունն անցկացնելիս հեռահաղորդակցության և փոստային կապի կազմակերպությունները պարտավոր են Գլխավոր վարչության պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել գաղտնի քննչական գործողության կատարման համար անհրաժեշտ այլ պայմաններ:

Հոդված 293. Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանասական գործարքների գաղտնի վերահսկումը

Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումն առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները:

Հոդված 294. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը

1. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը՝ որպես գաղտնի քննչական գործողություն, կարող է կատարվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենսգրքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված իմաստով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գաղտնի քննչական գործողության արդյունքները հավաստվում են բացառապես տեսանկարահանման կամ ձայնագրման միջոցով:

Տեսանկարահանումը կամ ձայնագրումը անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ:

Հոդված 295. Գաղտնի քննչական գործողության արձանագրությունը

1. Գաղտնի քննչական գործողության ընթացքն ու արդյունքներն արձանագրում է դրանք անցկացնող պաշտոնատար անձը: Արձանագրությունում պետք է նշվեն գաղտնի քննչական գործողության կատարման տեղը, ժամանակը, հանգամանքները, այն կատարող հետաքննիչի, գաղտնի քննչական գործողության այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները, ինչպես նաև այն անձանց (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) անունները և ազգանունները, որոնց վրա տարածվում են գաղտնի քննչական գործողության արդյունքում ձեռք

բերված տեղեկությունները, գաղտնի քննչական գործողության ընթացքում ձեռնարկված բոլոր գործողությունները այն հաջորդականությամբ, ինչպես որ դրանք կատարվել են, կիրառված գիտատեխնիկական մեթոդները և միջոցները, ինչպես նաև գործողության հետևանքով ձեռք բերված տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը: Արձանագրությունը ստորագրում է գաղտնի քննչական գործողությունը կատարող պաշտոնատար անձը (անձինք):

Հեռախոսային հաղորդակցության վերահսկման արձանագրության մեջ պետք է բառացիորեն վերարտադրվի ձայնագրության՝ գործին վերաբերող մասը:

Լուսանկարչական նեգատիվները և լուսանկարները, համակարգչային տեղեկատվության կրիչները, տեսաերիզները, կինոժապավենները, դիապոզիտիվները, գծագրերը, պլանները, որոնք կազմվել կամ պատրաստվել են գործողության ընթացքում, կցվում են գաղտնի քննչական գործողության արձանագրությանը:

2. Գաղտնի քննչական գործողությունը կատարող պաշտոնատար անձի, գաղտնի քննչական գործողության այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները արձանագրության մեջ կարող են չնշվել, երբ դրանով կարող են բացահայտվել հետաքննության մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները կամ այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք:

3. Գաղտնի քննչական գործողության արձանագրությունը հետաքննության մարմինը փոխանցում է այդ գործողությունը կատարելու հանձնարարություն տված քննիչին: Արձանագրությունն այլ մարմինների կամ անձանց փոխանցել չի թույլատրվում:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ
ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ 10
ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 40
ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոդված 296. Դատական վարույթի իրականացման ձևը և վայրը

1. Դատական վարույթն իրականացվում է դատական նիստերի ձևով:

2. Դատական նիստը պետք է անցկացվի դատական նիստերի դահլիճում:

3. Այն դեպքում, երբ վարույթի արդարացի քննությունն ու լուծումը պահանջում են դատավարական գործողությունների կատարում այլ վայրում, կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ դատական նիստը կարող է անցկացվել դատական նիստերի դահլիճից դուրս:

Հոդված 297. Դատական նիստի կարգը

1. Մինչև դատարանի կազմի՝ դատական նիստի դահլիճ մտնելը կամ դատական նիստի դահլիճից դուրս գալը դատական նիստի քարտուղարը համապատասխանաբար հայտարարում է. «Ոտքի, Դատարանն է գալիս» կամ «Ոտքի, Դատարանը հեռանում է»: Նշված հայտարարությունից հետո դատական նիստի դահլիճում բոլոր ներկա գտնվողները ոտքի են կանգնում:

2. Դատական վարույթի բոլոր մասնակիցները դատարանին պարտավոր են դիմել հոտնկայս, «Պատվարժան դատարան» արտահայտությամբ, ինչպես նաև դատական նիստի ընթացքում դրսևորել քաղաքավարի և հարգալից վարքագիծ: Դատարանին դիմելու կանոններից շեղում թույլատրվում է միայն նախագահողի թույլտվությամբ:

3. Տասնվեց տարեկանից փոքր անձանց մուտքը դատական նիստի դահլիճ արգելվում է, եթե նրանք վարույթի մասնակից չեն: Նախագահող դատավորն

արգելում է ոչ պատշաճ հագուստով կամ վիճակում գտնվող անձի ներկայությունը դատական նիստերի դահլիճում:

4. Նախագահողի կարգադրությունները պարտադիր են վարույթի մասնակիցների և դատական նիստին ներկա գտնվող յուրաքանչյուր անձի համար: Դատական նիստի կարգը խախտելու դեպքում դատարանն իրավունք ունի վարույթի մասնակիցների և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառել սույն օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ:

Հոդված 298. Դատական վարույթի հրապարակայնությունը

1. Դատական վարույթը հրապարակային է, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հասարակության ներկայացուցիչների և լրատվության միջոցների մասնակցությունը դատական նիստին կամ դրա մի մասին դատարանի որոշմամբ կարող է արգելվել, եթե դա անհրաժեշտ է ապահովելու համար՝

1) անձի մասնավոր կյանքի գաղտնիությունը.

2) անչափահասի իրավունքների պաշտպանությունը.

3) քրեական վարույթի մասնակիցների կամ նրանց մերձավոր ազգականների անվտանգությունը.

4) պետական, ծառայողական, առևտրային, մասնագիտական կամ օրենքով սահմանված այլ գաղտնիքի պաշտպանությունը:

3. Եթե դռնփակ դատական նիստ անցկացնելու հարցը պահանջում է կողմերի մասնակցությամբ քննարկում կամ կողմերից մեկը համաձայն չէ դրա հետ, ապա հարցը քննարկվում է դռնփակ դատական նիստում:

4. Դատարանը բոլոր դեպքերում հրապարակում է դռնփակ դատական նիստ անցկացնելու մասին որոշումը, ինչպես նաև դրա հիմքերը:

5. Դատարանը կարող է պահանջել դռնփակ դատական նիստին մասնակցած անձանցից չհրապարակել դրա ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները:

Հոդված 299. Դատական վարույթի բանավորությունն ու անմիջականությունը

1. Դատական նիստի ընթացքում դատարանի և դատական վարույթի մասնակիցների միջև բոլոր շփումները, այդ թվում՝ նրանց ելույթները, միջնորդությունները, առարկությունները կամ հայտարարություններն իրականացվում են բանավոր:

2. Քրեական վարույթի բոլոր ապացույցները և այլ նյութերը դատական նիստում ենթակա են անմիջական հետազոտման դատարանի և դատական վարույթի մասնակիցների կողմից:

3. Դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն դատական նիստում հետազոտված ապացույցները:

Հոդված 300. Դատարանի կազմի անփոփոխելիությունը և վարույթի քննության անընդհատությունը

1. Դատարանում վարույթի քննությունը պետք է անցկացվի դատարանի նույն կազմով:

2. Վարույթին դատավորի մասնակցության անհնարինության դեպքում նա փոխարինվում է տվյալ դատարանի այլ դատավորով, իսկ գործի քննությունը սկսվում է նորից:

3. Սույն օրենսգրքի 23-րդ հոդվածով նախատեսված դեպքերում մեղադրանքը քննող դատավորին փոխարինում է պահեստային դատավորը:

4. Յուրաքանչյուր վարույթ քննվում է անընդհատ, բացառությամբ դատական նիստի ընդմիջման դեպքերի: Դատարանի նույն կազմի կողմից նախքան սկսված վարույթի քննությունն ավարտելը կամ հետաձգելը այլ քրեական վարույթներ քննել չի թույլատրվում:

Հոդված 301. Դատական նիստում որոշում կայացնելու կարգը

1. Վարույթի քննության ընթացքում լուծվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

2. Վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, խափանման միջոց ընտրելու, փոխելու կամ վերացնելու, բացարկի, ինքնաբացարկի, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները դատարանը կայացնում է առանձին սենյակում, և դրանք շարադրվում են առանձին փաստաթղթի ձևով՝ ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

3. Մյուս բոլոր որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կա՛մ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, կա՛մ դատական նիստերի դահլիճում՝ որոշումը մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ:

4. Դատարանի կայացրած որոշումներն անմիջապես հրապարակվում են:

ԳԼՈՒԽ 41

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոդված 302. Վարույթին ներգրավված անձանց ներկայությունը դատական նիստին

1. Դատական վարույթին ներգրավված բոլոր անձինք պարտավոր են ժամանակին ներկայանալ դատական նիստին՝ ունենալով անձը հաստատող փաստաթուղթ:

2. Հարգելի պատճառով դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն չունեցող անձը պարտավոր է նախապես և պատշաճ կարգով դատարանին տեղեկացնել իր ներկայանալու անհնարինության և դրա պատճառների մասին:

3. Դատական նիստին առանց հարգելի պատճառի չներկայացած անձի նկատմամբ դատարանի որոշմամբ կարող են կիրառվել սույն օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ՝ հետագա դատական նիստերին նրա ներկայությունն ապահովելու նպատակով:

Հոդված 303. Մեղադրյալի մասնակցությունը դատական նիստին և նրա չներկայանալու հետևանքները

1. Մեղադրյալի մասնակցությունը դատական նիստին պարտադիր է: Դատական նիստին մեղադրյալի չներկայանալու դեպքում վարույթը հետաձգվում է:

2. Դատական նիստին առանց հարգելի պատճառի չներկայացած մեղադրյալի նկատմամբ դատարանի որոշմամբ կարող են կիրառվել սույն օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի միջոցներ՝ հետագա դատական նիստերին նրա ներկայությունն ապահովելու նպատակով:

3. Դատական նիստն առանց մեղադրյալի մասնակցության կարող է անցկացվել միայն նրա նկատմամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դատական սանկցիա կիրառելու դեպքում:

Հոդված 304. Դատախազի և պաշտպանի մասնակցությունը դատական նիստին և նրանց չներկայանալու հետևանքները

1. Դատախազի մասնակցությունը դատական նիստին պարտադիր է: Դատական նիստին դատախազի չներկայանալու և տվյալ նիստում նրան այլ դատախազով փոխարինելու անհնարինության դեպքում վարույթը հետաձգվում է:

2. Դատական նիստին առանց հարգելի պատճառի դատախազի չներկայանալու մասին դատարանը տեղեկացնում է վերադաս դատախազին, ով պարտավոր է ապահովել դատախազի մասնակցությունը հետագա դատական նիստերին:

3. Վարույթի քննությանը դատախազի հետագա մասնակցության անհնարինության դեպքում նա փոխարինվում է այլ դատախազով: Վարույթին ընդգրկված նոր դատախազին դատարանը տրամադրում է գործի նյութերն ուսումնասիրելու և մեղադրանքի պաշտպանությանը նախապատրաստվելու համար ողջամիտ ժամկետ՝ հաշվի առնելով վարույթի բարդությունը, դատական վարույթի քննության վրա արդեն ծախսված ժամանակը և այլ հանգամանքներ:

4. Պաշտպանի մասնակցությունը դատական նիստին պարտադիր է, բացառությամբ այն դեպքի, երբ մեղադրյալը դատարանում հայտարարել է իր պաշտպանությունն անձամբ իրականացնելու մտադրության մասին, և դա չի վտանգում կողմերի հավասարությունն ու մրցակցությունը:

5. Դատական նիստին պաշտպանի չներկայանալու և տվյալ նիստում նրան այլ պաշտպանով փոխարինելու անհնարինության դեպքում վարույթի քննությունը հետաձգվում է: Դատական նիստին առանց հարգելի պատճառի պաշտպանի չներկայանալու մասին դատարանը տեղեկացնում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին:

6. Դատական նիստին երկու անգամ առանց հարգելի պատճառի պաշտպանի չներկայանալու կամ այլ պատճառով վարույթին նրա հետագա մասնակցության անհնարինության դեպքում դատարանը տվյալ պաշտպանին ազատում է հետագա վարույթին մասնակցելուց և առաջարկում մեղադրյալին հրավիրել նոր պաշտպան: Մեղադրյալի կողմից նոր պաշտպան չհրավիրվելու դեպքում դատարանը ՀՀ փաստաբանների պալատից պահանջում է նշանակել այլ պաշտպան:

7. Վարույթին ընդգրկված նոր պաշտպանին դատարանը տրամադրում է գործի նյութերն ուսումնասիրելու և մեղադրյալի պաշտպանությունը նախապատրաստելու համար ողջամիտ ժամկետ՝ հաշվի առնելով վարույթի բարդությունը, դատական վարույթի քննության վրա արդեն ծախսված ժամանակը և այլ հանգամանքներ:

Հոդված 305. Թարգմանչի մասնակցությունը դատական նիստին և նրա չներկայանալու հետևանքները

1. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում թարգմանչի մասնակցությունը դատական նիստին պարտադիր է:

2. Դատական նիստին թարգմանչի չներկայանալու դեպքում վարույթը հետաձգվում է:

Հոդված 306. Տուժողի, գույքային պատասխանողի և նրանց ներկայացուցիչների մասնակցությունը դատական նիստին և նրանց չներկայանալու հետևանքները

1. Տուժողի, գույքային պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությունը դատական նիստին պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը, լսելով կողմերի կարծիքը, գտնում է, որ նրանց բացակայությունը

բացասաբար չի անդրադառնա վարույթի արդարացի քննության վրա: Տուժողը, գույքային պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները դատական նիստին կարող են չմասնակցել միայն դատարանի թույլտվությամբ:

2. Դատական նիստին տուժողի, գույքային պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների չներկայանալը վարույթի քննությունը հետաձգելու հիմք չէ, եթե դատարանը, լսելով կողմերի կարծիքը, գտնում է, որ նրանց բացակայությունը խոչընդոտ չէ տվյալ դատական նիստն անցկացնելու համար:

Հոդված 307. Չներկայացած վկայի կամ փորձագետի բացակայությամբ վարույթի քննությունը շարունակելու հարցի լուծումը

1. Դատական նիստին հրավիրված որևէ վկայի կամ փորձագետի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում վարույթի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին:

2. Վարույթի քննությունը շարունակվում է, եթե տվյալ դատական նիստին հրավիրված վկայի կամ փորձագետի բացակայությունը չի խոչընդոտի վարույթի արդարացի քննությանը:

ԳԼՈՒԽ 42
ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոդված 308. Վարույթը հետաձգելը

1. Վարույթը հետաձգվում է, եթե՝

1) առկա է սույն օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քրեական հետապնդումը կասեցնելու որևէ հիմք.

2) դատական նիստին 41-րդ գլխով նախատեսված վարույթին ներգրավված անձանցից որևէ մեկի չներկայանալու դեպքում, եթե նրա մասնակցությունը պարտադիր է օրենքի կամ դատարանի որոշման հիման վրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով վարույթի քննությունը հետաձգելու դեպքում դատարանը միջոցներ է ձեռնարկում հետագա

դատական նիստերին վարույթի համապատասխան մասնակցի ներկայությունն ապահովելու համար:

3. Վարույթի քննությունը դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է հետաձգվել, եթե՝

1) դա անհրաժեշտ է նոր ապացույցներ պահանջելու համար.

2) դա անհրաժեշտ է հանրային մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու, ինչպես նաև պաշտպանության կողմին նոր մեղադրանքին ծանոթանալու և դրանից պաշտպանվելու միջոցներ ձեռնարկելու համար.

3) դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է որոշել տվյալ վարույթին առնչվող նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականության հարցը: Նշված հիմքով վարույթի քննությունը հետաձգելու դեպքում դատարանը դիմում է ՀՀ սահմանադրական դատարան:

4. Վարույթի քննությունը հետաձգելու մասին դատարանը կայացնում է որոշում: Յուրաքանչյուր դեպքում դատարանը վարույթի քննությունը հետաձգում է ողջամիտ ժամկետով՝ հաշվի առնելով վարույթի քննությունը շարունակելուն խոչընդոտող հանգամանքների առանձնահատկությունը և դրանց վերացման համար ձեռնարկվող միջոցների բնույթը:

Հոդված 309. Վարույթի սահմանները

1. Առաջին ատյանի դատարանում վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ: Դատարանը բոլոր դեպքերում սահմանափակված է մեղադրյալին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներով: Դատարանը սահմանափակված է մեղսագվող փաստական հանգամանքներին (արարքին) տրված իրավական գնահատականով միայն այն դեպքում, երբ տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում կողմերի համար չի դարձրել քննարկման առարկա:

2. Մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքների մասով առաջին ատյանի դատարանում կարող է փոփոխվել կամ լրացվել միայն

հանրային մեղադրողի կողմից, եթե դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում և որոնք ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք ներկայացնելը:

3. Մինչև առաջին ատյանի դատարանի առանձին սենյակ հեռանալը հանրային մեղադրողը իրավասու է մեղադրյալին ներկայացված մեղադրանքը իրավական գնահատականի մասով փոփոխել կամ լրացնել:

4. Վերդիկտ կայացնելիս դատարանը, դուրս չգալով մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակից, կարող է սույն օրենսգրքով սահմանված պայմանների պահպանմամբ դրանց տալ իրավական այլ գնահատական, ինչպես նաև մեղադրանքի ծավալից հանել մեղադրյալին մեղսագրվող առանձին հանցավոր արարքներ:

Հոդված 310. Ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու կարգը

1. Հանրային մեղադրողն առաջին ատյանի դատարանում մեղադրանքը պաշտպանում է ապացույցների վրա հիմնված իր ներքին համոզմամբ: Սույն օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստական հանգամանքների առկայության դեպքում հանրային մեղադրողը միջնորդում է դատարանին ժամանակ տրամադրել մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար: Նման միջնորդություն կարող է ներկայացվել մինչև եզրափակիչ ելույթները սկսվելը:

2. Մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու՝ հանրային մեղադրողի միջնորդությունը մերժվում է միայն այն դեպքում, երբ այն ներկայացվել է սույն օրենսգրքով սահմանված պայմանների բացակայությամբ: Միջնորդությունը մերժելու դեպքում դատարանը շարունակում է վարույթի քննությունը:

3. Հանրային մեղադրողի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը հետաձգում է վարույթի քննությունը՝ ողջամիտ ժամկետ տրամադրելով մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար:

4. Մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու դեպքում հանրային մեղադրողը կազմում է նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշում, որը փոխարինում է մեղադրական եզրակացությանը և պետք է համապատասխանի մեղադրական եզրակացության բովանդակությանը ներկայացվող պահանջներին: Նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումը հանձնում է դատարանին և դատական վարույթի մասնակիցներին: Դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ողջամիտ ժամանակ է տրամադրում մեղադրյալին և նրա պաշտպանին, տուժողին, գույքային պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին:

5. Դատարանը վարույթը շարունակում է սկզբնական մեղադրանքով, եթե նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումը կազմվել կամ ներկայացվել է սույն օրենսգրքով սահմանված պահանջների խախտմամբ: Այդ մասին դատարանը կայացնում է առանձին որոշում:

6. Եթե դատաքննության ընթացքում բոլոր ապացույցների հետազոտումից հետո հանրային մեղադրողը գալիս է այն համոզման, որ մեղադրյալին ներկայացված մեղադրանքն ամբողջությամբ կամ մասնակիորեն չի ապացուցվել, ապա եզրափակիչ ելույթում միջնորդում է դատարանին համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն արդարացնել մեղադրյալին:

7. Դատարանը հաշվի առնելով մեղադրյալին արդարացնելու վերաբերյալ հանրային մեղադրողի միջնորդության հիմքը, հիմնավորումները և ծավալը, ինչպես նաև լսելով դրա վերաբերյալ վարույթի մյուս մասնակիցների կարծիքը, եզրափակիչ դատական ակտում կարող է բավարարել կամ մերժել այն:

Հոդված 311. Դատական վարույթի արձանագրումը

1. Դատարանում վարույթի ընթացքը ենթակա է պարտադիր արձանագրման: Արձանագրությունը դատական նիստի ընթացքում վարում է դատական նիստի քարտուղարը՝ դրանում ներառելով բոլոր կատարված դատավարական գործողություններն ու ընդունված որոշումները: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելիս արձանագրությունը վարվում է դատական նիստից դուրս:

2. Դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգի առկայության դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով: Համառոտագրումը դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են: Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգի շահագործման, տվյալների արխիվացման և համակարգի պահպանության մանրամասն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

3. Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգի բացակայության դեպքում կամ դատական նիստից դուրս առանձին դատավարական գործողություններ կատարելիս արձանագրությունը վարվում է պարզ թղթային արձանագրման եղանակով:

4. Դատական նիստի պարզ թղթային եղանակով վարվող արձանագրությունում նշվում են՝

1) դատական նիստի վայրը, տարին, ամիսը, ամսաթիվը.

2) դատական նիստը սկսելու և ավարտելու ժամը.

3) քննվող վարույթը.

4) վարույթը քննող դատարանի անվանումը և կազմը, դատական նիստին ներկա վարույթի մասնակիցները.

5) մեղադրյալի անձին վերաբերող տվյալները և խափանման միջոցը.

6) դատարանի գործողություններն այն կարգով, ինչ կարգով դրանք տեղի են ունեցել.

7) վարույթի մասնակիցների հայտարարություններն ու միջնորդությունները.

8) դատարանի այն որոշումները, որոնք կայացվել են առանց առանձին սենյակ հեռանալու.

9) հիշատակում՝ որոշումներն առանձին սենյակում կայացված լինելու մասին.

10) վարույթի մասնակիցների իրավունքների և պարտականությունների պարզաբանումը.

11) ցուցմունքների բովանդակությունը, տրված հարցերը և դրանց պատասխանները.

12) ապացույցների հետազոտմանն ուղղված այլ գործողությունները և դրանց արդյունքները.

13) այն հանգամանքները, որոնք վարույթի մասնակիցները խնդրել են ամրագրել արձանագրության մեջ.

14) եզրափակիչ ելույթների համառոտ բովանդակությունը.

15) տեղեկություններ եզրափակիչ դատական ակտի հրապարակման և դրա բողոքարկման կարգի ու ժամկետների պարզաբանման մասին.

16) տեղեկություններ դատական նիստի դահլիճում կարգի խախտման և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի փաստերի և խախտողի անձի, ինչպես նաև դատարանի կողմից նրա նկատմամբ կիրառված սանկցիաների մասին.

17) տեղեկություններ արձանագրությանը վարույթի մասնակիցների ծանոթանալու և դրա վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու իրավունքները պարզաբանելու վերաբերյալ.

18) առանձին դատական ակտի տեսքով ձևակերպվող որոշումների բովանդակությունը.

19) եզրափակիչ դատական ակտի եզրափակիչ մասը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի 11-13 կետերով նախատեսված տեղեկությունները դատական նիստերի քարտուղարն արձանագրում է բառացիորեն:

6. Պարզ թղթային արձանագրությունը նիստի ժամանակ վարվում է գրավոր կամ համակարգչի միջոցով: Այն գործի նյութերին կցվում է՝ հավաստված նախագահող դատավորի և քարտուղարի ստորագրությամբ:

7. Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը կատարվում է միաժամանակ՝ համակարգչային եղանակով: Ձայնային արձանագրությունը գործի նյութերին կցվում է լազերային կրիչի վրա: Համառոտագրումը գործի նյութերին կցվում է թղթային կրիչի վրա՝ հավաստված դատական նիստի քարտուղարի ստորագրությամբ:

8. Դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչի օրինակը՝ դրա համառոտագրման հետ, վարույթի մասնակիցների գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է դատական նիստից անմիջապես հետո:

9. Դատական նիստի պարզ թղթային եղանակով արձանագրման դեպքում գրավոր արձանագրության պատճենը վարույթի մասնակիցների գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:

10. Արձանագրության չլրացված տողերը նշվում են գծիկով, իսկ բովանդակության մեջ չի թույլատրվում կատարել ջնջումներ կամ ուղղումներ: Համաձայնեցված ուղղումները կատարվում են մինչև նախագահող դատավորի և քարտուղարի ստորագրությամբ արձանագրության հավաստվելը:

Հոդված 312. Դիտողությունները պարզ գրավոր ձևով վարվող արձանագրության վերաբերյալ

1. Վարույթի մասնակիցներն իրավունք ունեն ծանոթանալ պարզ թղթային եղանակով կազմված դատական նիստի արձանագրությանը և երեք օրվա ընթացքում դիտողություններ ներկայացնել դրա լրիվության կամ ճշտության վերաբերյալ:

2. Արձանագրության վերաբերյալ դիտողություններն ուսումնասիրում է արձանագրությունը ստորագրած նախագահող դատավորը՝ դրանք ներկայացնելու պահից երեք օրվա ընթացքում:

3. Արձանագրության վերաբերյալ դիտողություններն ընդունելու կամ մերժելու մասին նախագահող դատավորը կայացնում է որոշում:

ԲԱԺԻՆ 11

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԴԱՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 43

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 313. Խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքների շրջանակը

Կալանքը, ինչպես նաև տնային կալանքը և ոստիկանության հսկողությանը հանձնելը կարող են կիրառվել բացառապես իրավասու դատարանի որոշմամբ՝ սույն օրենսգրքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Հոդված 314. Դատարանում խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու վարույթի հարուցումը

1. Խափանման միջոց կիրառելու, ինչպես նաև կալանքի և տնային կալանքի ժամկետը երկարացնելու վարույթը հարուցվում է քննիչի միջնորդության հիման վրա:

2. Քննիչի միջնորդությունը պարունակում է՝

1) իրավասու դատարանի անվանումը.

2) քննիչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը.

3) միջնորդությունը դատարանին ներկայացնելու տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն.

4) քրեական գործի համարը.

5) մեղադրյալի անունը, հայրանունը, ազգանունը, վերաբերելի անձնական տվյալները, իսկ անազատության մեջ լինելու պարագայում՝ դրա իրավական հիմքերը և ազատությունից զրկելու փաստացի ժամանակը.

6) միջնորդվող խափանման միջոցը.

7) միջնորդության հիմնավորումները.

8) անհրաժեշտության դեպքում՝ միջնորդության քննությունը դռնփակ անցկացնելու մասին խնդրանք և դրա հիմնավորումները.

9) միջնորդությանը կցվող նյութերի ցանկը:

3. Միջնորդությանը կցվում է հանցագործության մասին հաղորդումն ընդունելու մասին արձանագրության պատճենը, ինչպես նաև միջնորդության հիմնավորվածությունը հաստատող անհրաժեշտ նյութերի պատճենները: Եթե մեղադրյալը, ում նկատմամբ հարուցվում է միջնորդությունը, անազատության մեջ է, ապա միջնորդությանը կցվում են նաև անձին ազատությունից զրկելու հիմք հանդիսացած դատավարական փաստաթղթերի պատճենները:

4. Միջնորդությունը և կից նյութերը դատարան են ներկայացվում երկու օրինակով:

5. Կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդության պարագայում համապատասխանաբար ձերբակալված կամ կալանավորված մեղադրյալը դատարան է բերվում միջնորդությունը ներկայացնելու հետ միաժամանակ:

6. Միջնորդությունը ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում դատարանը կայացնում է խափանման միջոց կիրառելու, կամ կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարացնելու վարույթ հարուցելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում:

7. Վարույթ հարուցելու մասին որոշման մեջ նշվում է դատական նիստի օրը, ժամը, ինչպես նաև դռնբաց կամ դռնփակ լինելը: Դատական նիստը նշանակվում է հնարավոր ամենակարճ ժամկետում: Դատական նիստի ժամանակը որոշելիս հաշվի է առնվում միջնորդությանը և կից նյութերին ծանոթանալու և դիրքորոշում մշակելու համար պաշտպանության կողմին ողջամտորեն անհրաժեշտ ժամանակը: Վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո միջնորդության և կից նյութերի մեկ օրինակն անհապաղ հանձնվում է մեղադրյալին:

8. Վարույթի հարուցումը հիմնավորված մերժվում է, եթե պահպանված չէ սույն հոդվածի 2-5-րդ մասերով սահմանված որևէ պայման: Վարույթի հարուցման մերժումը խոչընդոտ չէ նոր միջնորդություն ներկայացնելու համար:

9. Վարույթ հարուցելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումները ենթակա չեն բողոքարկման:

Հոդված 315. Դատարանում խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու վարույթի առարկան

Դատարանում խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու վարույթի առարկան են կազմում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման կամ կիրառված խափանման միջոցի ժամկետի երկարացման իրավաչափությունը և անհրաժեշտությունը, ավելի մեղմ

խափանման միջոցներ կիրառելու հնարավորությունը, իսկ ձերբակալված մեղադրյալի նկատմամբ՝ նաև ձերբակալման իրավաչափությունը:

Հոդված 316. Դատարանում խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու վարույթի իրականացումը

1. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու վարույթն իրականացվում է դատական նիստում՝ կողմերի մրցակցության հիման վրա, քննիչի և մեղադրյալի պարտադիր մասնակցությամբ: Մեղադրյալի ներկայության ապահովման պարտականությունը կրում է միջնորդությունը հարուցած պաշտոնատար անձը:

Մեղադրյալի պարտադիր մասնակցության կանոնից միակ բացառությունը վերաբերում է այն դեպքին, երբ մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու հարցի քննության դատական նիստին մասնակցության իրավունք ունեն հսկող դատախազը, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանը և օրինական ներկայացուցիչը:

3. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու հարցի քննության դատական նիստը դռնբաց է, եթե վարույթ հարուցելու մասին դատարանի որոշման մեջ դատարանը չի որոշել անցկացնել դռնփակ նիստ: Ամեն դեպքում, դատարանը կարող է սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ դատական նիստից առաջ կամ դրա ընթացքում հիմնավորված փոխել դատական նիստի հրապարակայնության մասին որոշումը:

4. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու հարցի քննարկման դատական նիստին առաջինը բացատրություն է տալիս մեղադրանքի կողմը, ապա՝ պաշտպանության կողմը: Բացատրություն ներկայացնող կողմին հարցեր տալու իրավունք ունի հակառակ կողմը, ինչպես նաև դատավորը:

5. Կողմերը կարող են դատարանին ներկայացնել վարույթի առարկային վերաբերող լրացուցիչ նյութեր: Վերաբերելի չլինելու դեպքում դատարանը քննության չի առնում լրացուցիչ նյութերը, սակայն պարտավոր է կցել դրանք վարույթին: Վերաբերելի լինելու դեպքում հակառակ կողմին տրվում է լրացուցիչ նյութերին ծանոթանալու ողջամիտ հնարավորություն:

6. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու հարցի քննարկման դատական նիստի կարգի նկատմամբ, վերաբերելի մասով (mutatis mutandis), կիրառվում են սույն օրենսգրքի 10-րդ բաժնի դրույթները:

7. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու հարցի քննությունն ավարտելով՝ դատարանը հեռանում է առանձին սենյակ՝ որոշում կայացնելու:

Հոդված 317. Խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդության վերաբերյալ որոշումը

1. Խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդության քննության արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ երեք որոշումներից մեկը՝

1) միջնորդությունը մերժելու մասին.

2) միջնորդությունը մասնակի բավարարելու մասին.

3) միջնորդությունն ամբողջությամբ բավարարելու մասին:

2. Դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որոշումը, եթե՝

1) հայտնաբերում է սույն օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված հանգամանք.

2) չի ապացուցվում մեղադրյալին վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր ենթադրությունը.

3) հանգում է հետևության, որ մեղադրյալի նկատմամբ որևէ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը բացակայում է.

4) հանգում է հետևության, որ անձի ձերբակալման ընթացքում թույլ են տրվել օրենքի կոպիտ խախտումներ:

3. Դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը, եթե՝

1) հանգում է հետևության, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառմամբ.

2) հանգում է հետևության, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել միջնորդված խափանման միջոցի՝ առավել մեղմ պայմաններով կիրառմամբ (կալանքի կամ տնային կալանքի առավել կարճ ժամկետով, գրավի առավել փոքր գումարով, ոստիկանական հսկողության առավել բարենպաստ պայմաններով).

4. Դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված որոշումը, եթե գալիս է հետևության, որ մեղադրանքի կողմը սույն օրենսգրքով սահմանված կարգով պատշաճորեն հիմնավորել է միջնորդվող խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը և հնարավորությունը միջնորդված պայմաններով:

5. Եթե դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կամ 3-րդ կետով նախատեսված որոշումներից որևէ մեկը, ապա դրանում հստակորեն սահմանում է կիրառվող խափանման միջոցի տեսակը և պայմանները:

6. Որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է դատական նիստում: Որոշումն ամբողջությամբ պատշաճ ձևով հանձնվում է դատական նիստի մասնակիցներին՝ ոչ ուշ, քան որոշումը հրապարակելուց հետո երեք ժամվա ընթացքում: Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բնակության հասցեով որոշման պատճենը պատշաճ ձևով ուղարկվում է:

Հոդված 318. Կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդությունը և դրա քննությունը

1. Կալանավորված մեղադրյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչն իրավունք ունեն միջնորդություն ներկայացնել դատարան կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին՝ կալանքի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան յոթ օր առաջ: Միջնորդության պատճենն ուղարկվում է մինչդատական վարույթն իրականացնող քննիչին և հսկող դատախազին:

2. Դատարանը մերժում է միջնորդության հիման վրա վարույթի հարուցումը, եթե միջնորդությունը ներկայացրել է ոչ պատշաճ սուբյեկտ կամ ոչ պատշաճ ժամկետում, կամ եթե դրանում չեն ներկայացվել կալանքի իրավաչափությունը վիճարկող կամ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորությունը հիմնավորող նոր էական փաստարկներ: Հակառակ դեպքում դատարանը միջնորդության հիման վրա հարուցում է վարույթ և հինգ օրվա ընթացքում նշանակում է դատական նիստ:

3. Սույն հոդվածով նախատեսված միջնորդության քննությունը կատարվում է դատական նիստում ՝ սույն օրենսգրքի 299-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ: Եթե դատարանը, միջնորդության փաստարկների բնույթից ելնելով, գալիս է հետևության, որ մեղադրյալի մասնակցությունը պարտադիր չէ, ապա վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող է հատուկ սահմանել, որ մեղադրյալի մասնակցությունը դատական նիստին պարտադիր չէ:

4. Միջնորդության քննության արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ երեք որոշումներից մեկը՝

1) միջնորդությունը մերժելու մասին, եթե գալիս է հետևության, որ կալանքի անհրաժեշտության և հնարավորության մասին հետևությունները շարունակում են հիմնավոր լինել.

2) միջնորդությունը մասնակի կամ ամբողջությամբ բավարարելու մասին, եթե հաստատում է սույն օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով ամրագրված հանգամանքներից որևէ մեկի առկայությունը: Եթե կալանքը վերացնելով դատարանը գալիս է հետևության, որ անհրաժեշտ է կիրառել այլընտրանքային խափանման միջոց կամ դրանց համակցություն, ապա որոշման մեջ հստակորեն սահմանում է կիրառվող խափանման միջոցի տեսակը և պայմանները:

ԳԼՈՒԽ 44

ՔՆՆՉԱԿԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ ԴԱՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 319. Քննչական և գաղտնի քննչական գործողություններ կատարելիս դատական երաշխիքների շրջանակը

Բնակարանում կատարման ենթակա քննչական գործողությունները (բացառությամբ դեպքի վայրի զննության և անձի կողմից համաձայնություն տալու դեպքերի), ինչպես նաև գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել միայն դատարանի նախնական թույլտվությամբ՝ սույն օրենսգրքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Հոդված 320. Քննչական և գաղտնի քննչական գործողություններ կատարելու միջնորդությունը

1. Սույն օրենսգրքի 319-րդ հոդվածում նախատեսված դատավարական գործողություններ կատարելու միջնորդությունը դատարան է ներկայացվում քննիչի կողմից: Քննիչի միջնորդությունը պարունակում է՝

1) իրավասու դատարանի անվանումը.

2) քննիչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը.

3) միջնորդությունը դատարանին ներկայացնելու տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն.

4) վարույթի համարը.

5) այն անձի անունը, հայրանունը, ազգանունը և դատավարական կարգավիճակը, ում սահմանադրական իրավունքը միջնորդվում է սահմանափակել.

6) միջնորդվող դատավարական գործողությունը, ինչպես նաև դրա կատարման վերաբերելի պայմանները, այդ թվում՝ ժամկետները.

7) միջնորդվող դատավարական գործողությունից ակնկալվող արդյունքը.

8) այն փաստարկները, որոնք հիմնավորում են անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը և համաչափությունը.

9) միջնորդությանը կցվող նյութերի ցանկը:

2. Միջնորդությանը կցվում է հանցագործության մասին հաղորդումն ընդունելու մասին արձանագրության պատճենը, ինչպես նաև միջնորդության հիմնավորվածությունը հաստատող անհրաժեշտ նյութերի պատճենները:

Հոդված 321. Քննչական կամ գաղտնի քննչական գործողություններ կատարելու մասին միջնորդության քննությունը և դրա արդյունքում կայացվող որոշումները

1. Քննչական կամ գաղտնի քննչական գործողություններ կատարելու մասին միջնորդության քննությունը սկսվում է միջնորդությունը դատարան ներկայացնելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում:

2. Միջնորդության դատական քննությունն իրականացվում է դռնփակ դատական նիստում՝ միջնորդությունը ներկայացրած անձի պարտադիր մասնակցությամբ: Դատական նիստին կարող է մասնակցել նաև հսկող դատախազը:

3. Դատարանի պահանջով քննիչը տալիս է միջնորդության առարկայի վերաբերյալ բացատրություններ:

4. Միջնորդության քննության արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ երկու որոշումներից մեկը՝

1) միջնորդությունը մերժելու մասին.

2) միջնորդությունը բավարարելու և միջնորդվող դատավարական գործողությունը թույլատրելու մասին:

5. Միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը կարող է ի շահ դատավարական գործողության արդյունքում իրավունքների սահմանափակման ենթարկվող անձի՝ փոխել թույլատրվող դատավարական գործողության կատարման վերաբերելի պայմանները, այդ թվում՝ ժամկետը:

6. Միջնորդության քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումն անհապաղ հանձնվում է միջնորդությունը ներկայացրած քննիչին:

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 322. Մինչդատական ակտերի օրինականության դատական երաշխիքները շրջանակը

1. Դատական բողոքարկման ենթակա են հետևյալ մինչդատական ակտերը՝

1) հանցագործության մասին հաղորդումն արձանագրելուց հրաժարվելը.

2) քրեական վարույթը կարճելու մասին որոշումը.

3) քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդումը նորոգելու մասին որոշումը.

4) քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշումը.

5) վարույթի մասնակից ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը.

6) խափանման միջոց կիրառելու մասին քննիչի որոշումը.

7) ՀՀ գլխավոր դատախազի որոշումը՝ քրեական հետապնդում չհարուցելու մասին կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նոր հանգամանքների հիմքով վերացնելու մասին:

2. Դատական բողոքարկման ենթակա են նաև քրեական հետապնդման մարմինների այն գործողությունները, անգործությունը, ինչպես նաև միջնորդությունը մերժելու մասին այն որոշումները, որոնց վիճարկումը դատաքննության ընթացքում անհնարին է կամ բողոքարկողին ակնհայտորեն զրկելու է իր իրավաչափ շահերը պաշտպանելու իրական հնարավորությունից:

Հոդված 323. Մինչդատական ակտերի դատական բողոքարկման ընթացակարգը

1. Սույն օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված դատավարական ակտերի դեմ բողոքներ կարող է ներկայացնել վարույթի մասնավոր մասնակիցը, ինչպես նաև ցանկացած այլ անձ, եթե հիմնավորում է իր իրավաչափ շահերի նկատմամբ այդ ակտի անհամաչափ ներգործությունը:

2. Սույն օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված դատավարական ակտերի դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան միայն դատախազին

բողոքարկելու և նրա կողմից բողոքը չբավարարելու դեպքում, բացառությամբ սույն օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված ակտի:

3. Սույն օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված դատավարական ակտերը դատարան կարող են բողոքարկվել 15 օրյա ժամկետում՝ դատախազին ուղղված բողոքի մերժման որոշումը կամ բավարարումից տարբերվող պատասխանը ստանալուց օրից, իսկ եթե բողոքի վերաբերյալ պատասխան չի ստացվել, ապա բողոք ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետը լրանալու օրից:

Հոդված 324. Մինչդատական ակտի վերաբերյալ բողոքի բովանդակությունը

1. Մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը պարունակում է՝

1) իրավասու դատարանի անվանումը.

2) բողոքարկողի անունը, հայրանունը, ազգանունը, ունենալու դեպքում՝ դատավարական կարգավիճակը.

3) բողոքը դատարանին ներկայացնելու տարին, ամիսը, օրը.

4) վարույթի համարը.

5) բողոքարկվող դատավարական ակտը.

6) բողոքարկվող դատավարական ակտի դատախազական բողոքարկման ընթացքը և արդյունքը.

7) սույն օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատավարական ակտերի բողոքարկման դեպքում՝ հիմնավորորում այն մասին, որ դատաքննության ընթացքում տվյալ ակտի վիճարկումն անհնարին է կամ իրեն ակնհայտորեն զրկելու է իրավաչափ շահերը պաշտպանելու իրական հնարավորությունից.

8) բողոքի հիմնավորումները և պահանջը.

9) բողոքին կցվող նյութերի ցանկը:

Հոդված 325. Մինչդատական ակտի վիճարկման վարույթի հարուցումը

1. Մինչդատական ակտի վերաբերյալ բողոք ստանալուց հետո եռօրյա ժամկետում դատարանը կայացնում է մինչդատական ակտի վիճարկման վարույթի

հարուցման մասին որոշում, որում նշվում են դատական նիստը օրը և ժամը: Դատական նիստը կարող է նշանակվել վարույթը հարուցելուց հետո երեքից յոթ օրվա ընթացքում:

2. Վարույթի հարուցումը հիմնավորված մերժվում է, եթե պահպանված չէ սույն օրենսգրքի 322-324-րդ հոդվածներով սահմանված որևէ պահանջ:

3. Վարույթի հարուցման մասին որոշումն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին, բողոքարկվող ակտը կայացրած (կատարած)՝ վարույթի հանրային մասնակցին, ինչպես նաև քննիչին և դատախազին:

4. Վարույթի հարուցման մասին որոշմամբ դատարանը քննիչից կամ դատախազից կարող է պահանջել դատարան ներկայացնել բողոքին վերաբերող նյութեր և (կամ) ներկայանալ դատական նիստին:

5. Վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին:

Հոդված 326. Մինչդատական ակտի վիճարկման վարույթի իրականացումը

1. Մինչդատական ակտի վիճարկման վարույթն իրականացվում է դատական նիստում՝ կողմերի մրցակցության հիման վրա, բողոքը ներկայացրած անձի կամ նրա պաշտպանի, օրինական ներկայացուցչի կամ ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Եթե նշված անձանցից ոչ ոք դատական նիստին չի ներկայացել, ապա դատարանի որոշմամբ վարույթը կարճվում է:

2. Մինչդատական ակտի վիճարկման դատական նիստին մասնակցության իրավունք ունեն բողոքարկվող ակտը կայացրած (կատարած)՝ վարույթի հանրային մասնակիցը, քննիչը և հսկող դատախազը, ինչպես նաև բողոքը ներկայացրած անձի պաշտպանը, օրինական ներկայացուցիչը և ներկայացուցիչը: Սույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում քննիչի կամ դատախազի մասնակցությունը դատական նիստին պարտադիր է:

3. Դատական նիստին մասնակցող անձինք ունեն բացատրություն տալու իրավունք:

Հոդված 327. Մինչդատական ակտի վիճարկման վարույթի արդյունքում կայացվող որոշումները

1. Մինչդատական ակտի վիճարկման վարույթի արդյունքում դատարանը որոշմամբ ամբողջությամբ կամ մասնակի բավարարում է բողոքը կամ մերժում է այն:

2. Բողոքն ամբողջությամբ բավարարվում է, եթե չի կատարվել սույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասում նշված պարտականությունը:

3. Բողոքը բավարարելու դեպքում դատարանը վարույթն իրականացնող մարմնի կամ դատախազի վրա դնում է անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ ակտեր կատարելու (կայացնելու) պարտականություն:

4. Մինչդատական ակտի վիճարկման վարույթի արդյունքում կայացված որոշման պատճենն անհապաղ հանձնվում կամ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին, դատախազին և վարույթն իրականացնող մարմնին:

ԳԼՈՒԽ 46
ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ

Հոդված 328. Ցուցմունքների դեպոնացման դատական երաշխիքի շրջանակը

Ցուցմունքների դատական դեպոնացումը կատարվում է՝

1) մեղադրյալի խոստովանական ցուցմունքի արժանահավատության ապահովման նպատակով՝ քննիչի միջնորդությամբ.

2) դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու հիմնավոր ենթադրության պարագայում ցանկացած անձից արժանահավատ ցուցմունք ստանալու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ:

Հոդված 329. Ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը

1. Ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը պետք է բովանդակի դրա անհրաժեշտության հիմնավորումները, ինչպես նաև դատավարության այն մասնակիցների մասին տվյալներ, որոնց մասնակցությունն անհրաժեշտ է դեպոնացմանը:

2. Միջնորդությանը կցվում են այն նյութերը, որոնք դեպոնացման մասնակիցներին հնարավորություն կտան պատշաճորեն իրականացնել հակընդդեմ հարցման իրավունքը:

3. Դատարանը որոշմամբ մերժում է ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը, եթե այն հիմնավորված չէ կամ դրա հիմնավորումները համոզիչ չեն:

Հոդված 330. Ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշումը

1. Ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը կայացնում է ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշում, որում պետք է նշվեն ցուցմունք տալու համար հրավիրվող անձի անունը, միջնորդությունը ներկայացրած դատավարության մասնակիցը, ինչպես նաև դեպոնացման օրը, ժամը և վայրը:

2. Ցուցմունքի դեպոնացումը նշանակվում է սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված որոշման կայացումից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 10 օր հետո:

3. Սույն օրենսգրքի 328-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ցուցմունքի դեպոնացման պարագայում դեպոնացման օրը որոշելիս դատարանը հաշվի է առնում դատավարության մասնակիցների կողմից հակընդդեմ հարցում կատարելուն նախապատրաստվելու համար անհրաժեշտ ժամանակը:

4. Ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է միջնորդությունը ներկայացրած անձին, ինչպես նաև դատավարության այն մասնակիցներին, որոնց մասնակցությունն անհրաժեշտ է դեպոնացմանը: Դատավարության այդ մասնակիցներին նաև ուղարկվում են սույն օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նյութերը:

Հոդված 331. Ցուցմունքի դեպոնացման ընթացակարգը

1. Ցուցմունքի դեպոնացումը կատարվում է դատական նիստում՝ սույն օրենսգրքի 10-րդ բաժնի պահանջների՝ վերաբերելի մասով (mutatis mutandis) պահպանմամբ:

2. Պատշաճ ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալը խոչընդոտ չէ դատական դեպոնացում կատարելու համար:

3. Դատարանն ապահովում է սույն օրենսգրքով սահմանված՝ հարցաքննության ընթացակարգի պահպանումը, ինչպես նաև ցուցմունքի դեպոնացման ընթացքում հակընդդեմ հարցման իրավունքի իրականացումը: Դատարանն ըստ էության հարցեր տալու իրավունք չունի:

4. Պաշտպան չունեցող մեղադրյալին դատարանը պարտավոր է առանձին բացատրել նրա հիմնարար իրավունքները, այդ թվում՝ պաշտպանի ներկայությամբ ցուցմունք տալու իրավունքը: Մեղադրյալի կողմից պաշտպանի ներկայությամբ ցուցմունք տալու ցանկություն հայտնելու դեպքում դատական նիստը հետաձգվում է ողջամիտ ժամկետով:

5. Ցուցմունքի դեպոնացման արդյունքում կազմվում է հարցաքննության արձանագրություն, որը հաստատվում է նիստը նախագահող դատավորի ստորագրությամբ:

ԲԱԺԻՆ 12

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 47

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԸ

Հոդված 332. Նախնական դատալսումների պարտադիր լինելը

Նախնական դատալսումները պարտադիր են բոլոր վարույթներով:

Հոդված 333. Նախնական դատալսումներ նշանակելը

1. Ստանալով վարույթի նյութերը՝ դատարանը նշանակում է նախնական դատալսումներ, որի մասին կայացվում է որոշում:

2. Նախնական դատալսումներ նշանակելու մասին որոշումը պետք է բովանդակի տեղեկություններ այդ որոշման հիմքերի, այն կայացրած դատարանի և դատավորի, ինչպես նաև որոշման կայացման և նախնական դատալսումների անցկացման տեղի ու ժամանակի մասին:

3. Նախնական դատալսումներ նշանակելու մասին որոշում կայացնելու պահից 3 օրվա ընթացքում դատարանը պարտավոր է դրա պատճենն ուղարկել դատախազին, ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցներին՝ պատշաճ կարգով նրանց ուղարկելով սահմանված ձևի հուշաթերթիկ՝ հասցեատիրոջ իրավունքների և պարտականությունների պարզաբանմամբ, ներառյալ՝ միջնորդությունների և դիմումների՝ դատարան ուղարկելու կարգի և ժամկետների մասին պարզաբանում:

Հոդված 334. Նախնական դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարցերը

1. Նախնական դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարցերն են՝

1) ապացույցի թույլատրելիության որոշումը.

2) նոր ապացույցներ ձեռք բերելը.

3) գույքային պատասխանող ճանաչելը.

4) համաձայնեցման վարույթ կիրառելը.

5) խափանման միջոցը ընտրելը, փոխելը կամ վերացնելը.

6) պաշտպանության միջոց ձեռնարկելը.

7) վարույթի նյութերը դատախազին վերադարձնելը.

8) վարույթն ըստ ընդդատության փոխանցելը.

9) բացարկը, ինքնաբացարկը և վարույթից հեռացնելը.

10) վարույթի քննությունը հետաձգելը.

11) վարույթը կարճելը և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 5-11-րդ կետերով նախատեսված հարցերը քննարկվում են ինչպես դատարանի նախաձեռնությամբ, այնպես էլ վարույթի մասնակիցների միջնորդությամբ, 1-3-րդ կետերով նախատեսված հարցերը՝ միայն վարույթի մասնակիցների միջնորդությամբ, իսկ 4-րդ կետով նախատեսված հարցը՝ միայն մեղադրյալի միջնորդությամբ:

Հոդված 335. Նախնական դատալսումների անցկացման կարգը

1. Նախնական դատալսումներն անցկացվում են դատավորի կողմից միանձնյա՝ դատախազի և վարույթի մասնավոր մասնակիցների մասնակցությամբ՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները և սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

2. Նախնական դատալսումներն անցկացվում են դռնբաց դատական նիստում, որն արձանագրվում է դատական նիստի քարտուղարի կողմից և ձայնագրառվում: Նախնական դատալսումները սույն օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով անցկացվում են դռնփակ դատական նիստում:

3. Դատախազի կամ վարույթի մասնավոր մասնակիցներից որևէ մեկի՝ նախնական դատալսումներին չներկայանալու դեպքում դատարանը ղեկավարվում է սույն օրենսգրքի 303-304-րդ և 306-րդ հոդվածներով սահմանված պահանջներով:

Հոդված 336. Ապացույցների թույլատրելիության որոշումը

1. Նախնական դատալսումների ընթացքում ապացույցների թույլատրելիության հարցը քննարկելիս դրանց բովանդակային հետազոտում տեղի չի ունենում:

2. Եթե ապացույցի թույլատրելիության որոշումը պահանջում է տվյալ կամ մեկ այլ ապացույցի բովանդակային հետազոտում, ապացույցն անթույլատրելի ճանաչելու միջնորդության քննությունը հետաձգվում է մինչև դրա հետազոտումը դատաքննության ընթացքում:

3. Դատարանի կողմից որևէ ապացույց անթույլատրելի ճանաչելու դեպքում տվյալ ապացույցը կորցնում է իրավաբանական ուժը և չի կարող

հետազոտվել կամ որևէ կերպ օգտագործվել դատաքննության ընթացքում կամ դրվել դատական ակտի հիմքում:

Հոդված 337. Նոր ապացույցներ ձեռք բերելը

1. Նախնական դատալսումների մասնակիցները դատարանին կարող են հարուցել նոր ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ միջնորդություններ:

2. Միջնորդություն հարուցող անձը պարտավոր է ցույց տալ, թե ինչ հանգամանքներ պարզելու համար են անհրաժեշտ լրացուցիչ ապացույցները:

3. Եթե հանգամանքները, որոնց բացահայտման համար հարուցված է միջնորդությունը, կարող են նշանակություն ունենալ վարույթի համար, դատարանը բավարարում է միջնորդությունը: Դատարանի կողմից միջնորդության մերժումը չի սահմանափակում միջնորդություն հարուցած մասնակցի իրավունքը՝ նույն միջնորդությունը հարուցել դատաքննության ընթացքում:

Հոդված 338. Գույքային պատասխանող ճանաչելը

1. Նախնական դատալսումներ նշանակելու մասին որոշումը ստանալու պահից տուժողը կամ դատախազն իրավունք ունեն սույն օրենսգրքի 20-րդ գլխում սահմանված դեպքերում և կարգով հարուցել գույքային հայց:

2. Հարուցված գույքային հայցի հիման վրա դատարանը որոշում է կայացնում գույքային պատասխանող ճանաչելու մասին:

3. Դատարանը գույքային հայց հարուցած մասնակցի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում գույքային հայցի ապահովման համար, եթե դա չանելը անհնարին կդարձնի ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի, դատական ծախսերի հատուցումը կամ գույքի հնարավոր բռնագրավումը:

Հոդված 339. Համաձայնեցման վարույթ կիրառելը

1. Համաձայնեցման վարույթ կիրառելու հարցը քննարկվում է միայն մեղադրյալի միջնորդությամբ՝ սույն օրենսգրքի 499-500-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ:

2. Համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդությունը բավարարելուց կամ մերժելուց անմիջապես հետո դատարանը որոշում է կայացնում դատաքննություն նշանակելու մասին:

Հոդված 340. Խափանման միջոց ընտրելը, փոխելը կամ վերացնելը, ինչպես նաև պաշտպանության միջոց ձեռնարկելը

1. Նախնական դատալսումների ընթացքում, բացի վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշումից, դատարանը քննում է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում:

2. Սույն օրենսգրքի 68-83-րդ հոդվածներով սահմանված դեպքերում և կարգով նախնական դատալսումների ընթացքում վարույթի մասնակիցների նկատմամբ դատարանը կարող է ձեռնարկել պաշտպանության միջոցներ:

Հոդված 341. Վարույթի նյութերը դատախազին վերադարձնելը

1. Դատարանը վարույթի նյութերը դատախազին վերադարձնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը կամ մեղադրական ակտը չի համապատասխանում սույն օրենսգրքի 213-րդ հոդվածի պահանջներին, ինչպես նաև եթե դրա պատճենը չի հանձնվել մեղադրյալին:

2. Վարույթի նյութերը դատախազին վերադարձնելու մասին որոշման մեջ, բացի նման որոշում կայացնելու հիմքերից, նշվում է այն ժամկետը, որի ընթացքում դատախազը պետք է վերացնի մեղադրական եզրակացությունում կամ մեղադրական ակտում առկա թերությունները կամ դրա պատճենը հանձնի մեղադրյալին:

3. Եթե մեղադրյալը գտնվում է կալանքի տակ, նշված ժամկետը չպետք է 3, իսկ մնացած դեպքերում՝ 7 օրվանից ավելի լինի:

Հոդված 342. Վարույթի փոխանցումն ըստ ընդդատության

Եթե նախնական դատալսումների ընթացքում դատարանը պարզում է, որ վարույթն իրեն ընդդատյա չէ, ապա որոշում է կայացնում այն ըստ ընդդատության փոխանցելու մասին՝ նշելով նման որոշման իրավաբանական հիմքերը և դատարանը, որին ուղարկվում են վարույթի նյութերը:

Հոդված 343. Բացարկը, ինքնաբացարկը և վարույթից հեռացնելը

1. Նախնական դատալսումների ընթացքում սույն օրենսգրքի 59-66-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով կարող են քննարկվել և լուծվել վարույթի մասնակիցներին հայտնված բացարկի, նրանց ինքնաբացարկի կամ վարույթից հեռացնելու հարցերը:

2. Եթե նախնական լսումների ընթացքում պարզվում է, որ առկա է վարույթին դատավորի մասնակցությունը բացառող հիմք, ապա դատավորը որոշում է կայացնում ինքնաբացարկի կամ իրեն հայտնված բացարկն ընդունելու մասին: Այդպիսի որոշում կայացվելու դեպքում վարույթի նյութերը ներկայացվում են վերաբաշխման ընդհանուր կարգով:

Հոդված 344. Վարույթը հետաձգելը

1. Սույն օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված դեպքերում դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում վարույթը հետաձգելու մասին:

2. Սույն օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված դեպքում դատարանը հետաձգում է քրեական վարույթը և արգելանքի տակ գտնվող մեղադրյալի՝ փախուստի դիմելու դեպքում վարույթի նյութերը վերադարձնում է դատախազին և հանձնարարում նրան ապահովել մեղադրյալի հետախուզումը: Արգելանքի տակ չգտնվող մեղադրյալի՝ փախուստի դիմելու դեպքում նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրում է կալանքը և դատախազին հանձնարարում ապահովել մեղադրյալի հետախուզումը:

3. Վարույթը կարող է հետաձգվել նաև մի քանի մեղադրյալներից մեկի նկատմամբ՝ պայմանով, որ դա չի սահմանափակում նրա պաշտպանության իրավունքը:

Հոդված 345. Վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը

1. Սույն օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, երբ դա հնարավոր է առանց դատաքննության, դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Եթե քրեական հետապնդումը բացառող հանգամանքները վերաբերում են մեկ մեղադրյալի, քրեական հետապնդումը դադարեցվում է միայն նրա նկատմամբ:

2. Վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն ընդգրկում է նախաքննության ընթացքում ընտրված խափանման և վնասի հատուցման ապահովման միջոցները, քրեադատավարական հարկադրանքի այլ միջոցները վերացնելու մասին որոշում, ինչպես նաև իրեղեն ապացույցների ճակատագրի հարցը:

3. Վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկվում է դատախազին և վարույթի մասնավոր մասնակիցներին:

4. Նախնական դատալսումների ընթացքում վարույթը չի կարող կարճվել սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-2-րդ կետերով նախատեսված հիմքերով, ինչպես նաև քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել սույն օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-2-րդ, 8-9-րդ կետերով նախատեսված հիմքերով:

Հոդված 346. Նախնական դատալսումների արդյունքում կայացվող որոշումները

1. Նախնական դատալսումների արդյունքում կայացվում են հետևյալ որոշումները՝

1) վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին.

2) դատավորի ինքնաբացարկի կամ նրան հայտնված բացարկն ընդունելու մասին.

3) դատաքննություն նշանակելու մասին.

4) վարույթի նյութերը դատախազին վերադարձնելու մասին.

5) վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

2. Այն դեպքում, երբ նախնական դատալսումների ընթացքում քննարկվում են սույն օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասի միայն 1-6-րդ, 10-րդ կետերը, ինչպես նաև դատախազին կամ վարույթի մասնավոր մասնակցին հայտնված բացարկի, նրանց ինքնաբացարկի կամ վարույթից հեռացնելու հարցերը, ապա ավարտին կայացվում է որոշում դատաքննություն նշանակելու մասին:

Հոդված 347. Որոշում դատաքննություն նշանակելու մասին

1. Դատաքննություն նշանակելու մասին որոշումը պետք է բովանդակի մեղադրյալի մասին նշում, քրեական օրենսգրքի հոդվածի, մասը, կետը, որով նախատեսված արարքի կատարումը վերագրվում է մեղադրյալին, որոշում խափանման միջոցները և պատճառված վնասի ապահովման միջոցները վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին, որոշումներ՝ վարույթի մասնակիցների միջնորդությունների, բացարկների և այլ հայտարարությունների առթիվ, որոշում դատարանի կազմի մասին, որոշում մեղադրյալի ընտրած կամ վերջինիս համար նշանակված անձին որպես պաշտպան թույլատրելու մասին, դատական նիստին կանչման ենթակա անձանց ցանկը, տեղեկություններ դատաքննության տեղի և ժամանակի մասին, որոշում սույն օրենսգրքով նախատեսված դեպքում դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին, որոշում վարույթի մասնակիցների նկատմամբ պաշտպանության միջոցներ կիրառելու մասին:

2. Դատաքննությունը պետք է նշանակվի դատաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելու պահից 10 օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 48
ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հոդված 348. Դատաքննության սկիզբը

Դատաքննություն նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հայտարարում է, թե որ վարույթն է

ենթակա քննության, ինչպես նաև հայտնում է դատավորի և դատական նիստի քարտուղարի անունը և ազգանունը:

Հոդված 349. Դատաքննության մասնակիցների վերաբերյալ հաղորդումը

Դատական նիստի քարտուղարը զեկուցում է դատարանին, թե ովքեր են ներկայացել դատաքննության, ինչպես նաև բացակայող անձանց չներկայանալու պատճառները:

Հոդված 350. Վկաներին դատական նիստի դահլիճից հեռացնելը

Նախագահողը կարգադրում է դատաքննության ներկայացած վկաներին մինչև նրանց հարցաքննությունը հեռանալ հատուկ նախատեսված սենյակ, ինչպես նաև հանձնարարում է դատական կարգադրիչներին միջոցներ ձեռնարկել, որպեսզի չհարցաքննված վկաները չհաղորդակցվեն արդեն հարցաքննված վկաների, ինչպես նաև դատական նիստերի դահլիճում գտնվող այլ անձանց հետ:

Հոդված 351. Կողմերի բացման (ներածական) խոսքը

1. Նախագահողը հնարավորություն է տալիս հանրային մեղադրողին հանդես գալ բացման խոսքով, որի ընթացքում ներկայացվում են մեղադրանքի փաստական հիմքը, ինչպես նաև մեղադրյալին մեղսագրվող արաքի իրավական գնահատականը:

2. Այնուհետև նախագահողն առաջարկում է պաշտպանին կամ մեղադրյալին հանդես գալ բացման խոսքով, որի ընթացքում ներկայացվում է մեղադրյալի դիրքորոշումը մեղադրանքի վերաբերյալ: Նախագահողն իրավունք ունի մեղադրյալի դիրքորոշումը ճշտող հարցեր տալ:

3. Նախագահողը բացման խոսքը ներկայացնելու համար կողմերին տրամադրում է ողջամիտ ժամանակ:

ԳԼՈՒԽ 49

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Հոդված 352. Ապացույցների հետազոտման կարգը և հերթականությունը

1. Ապացույցների հետազոտումը սկսվում է բացման խոսքերը ներկայացնելուց անմիջապես հետո: Սկզբում հետազոտվում են մեղադրանքի կողմի ապացույցները, որին հետևում է պաշտպանության կողմի ապացույցների հետազոտումը:

2. Ապացույցներ ներկայացրած կողմը որոշում է դրանց հետազոտման հերթականությունն ու ծավալը: Եթե դատաքննությանը մասնակցում են մեկից ավելի մեղադրյալներ, ապա նրանց ներկայացրած ապացույցների հետազոտման հերթականությունը որոշում է դատարանը՝ հաշվի առնելով կողմերի կարծիքները:

3. Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի միջնորդել դատարանին սահմանափակելու իր ներկայացրած ապացույցների հետազոտումը: Դատարանը մերժում է նման սահմանափակումը, եթե գտնում է, որ դեռևս չհետազոտված ապացույցներն էական նշանակություն կարող են ունենալ վարույթի արդարացի քննության և լուծման համար:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է մասնակցի մյուս կողմի ներկայացրած ապացույցների հետազոտմանը:

Հոդված 353. Դատարանում հարցաքննության ընդհանուր կարգը

1. Հարցաքննությունը սկսելուց առաջ նախագահողը պարզում է հարցաքննվողի ինքնությունը, նրա հարաբերությունները վարույթի մասնակիցների հետ, ինչպես նաև բացատրում սույն օրենսգրքով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, ինչի կապակցությամբ հարցաքննվողը ստորագրում է դատական նիստի արձանագրության մեջ: Հարցաքննվողն իր ցանկությամբ կարող է ճշմարտացիության երդում տալ:

2. Հարցաքննության կանչված անձին առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ հրավիրվել է անձը (սկզբնական հարցաքննություն): Սկզբնական հարցաքննությունից հետո անձին կարող է հարցեր տալ հակառակ կողմը (խաչաձև հարցաքննություն): Նախագահողն իրավունք ունի անձին հարցեր տալ սկզբնական և խաչաձև հարցաքննություններն ավարտվելուց հետո: Դատարանի նախաձեռնությամբ կանչված անձին առաջինը հարցեր է տալիս նախագահողը, ապա մեղադրանքի և պաշտպանության կողմերը:

3. Սկզբնական հարցաքննության ընթացքում ուղղորդող հարցեր տալն արգելվում է: Կողմն իրավունք ունի առարկել ուղղորդող հարցի դեմ և (կամ) խնդրել նախագահողին, որ հարցը և դրան տրված պատասխանը ճանաչվեն անթույլատրելի ապացույց: Նախագահողը կողմի միջնորդությամբ կարող է հանել ուղղորդող կամ վարույթին չվերաբերող հարցերը: Խաչաձև հարցաքննության ընթացքում ուղղորդող հարցեր տալն իրավաչափ է:

4. Հարցաքննվող անձը կարող է հարցաքննության ընթացքում օգտվել գրառումներից կամ նշումներից, որոնք նախագահողի պահանջով ներկայացվում են դատարանին և կարող են կցվել վարույթի նյութերին:

5. Հարցաքննվող անձին կողմերը և դատարանը կարող են ներկայացնել վարույթում առկա առարկաներ կամ փաստաթղթեր: Կողմի միջնորդությամբ այդ առարկաները կամ փաստաթղթերը կարող են հոտազոտվել հարցաքննության ընթացքում: Դատական նիստի արձանագրության մեջ նշվում է, թե հարցաքննվողին ինչպիսի առարկաներ կամ փաստաթղթեր են ներկայացվել և ում կողմից:

6. Այն դեպքում, երբ հարցաքննության ենթակա անձի ներկայությունը դատարանում անհնար է ապահովել հարգելի պատճառով, դատարանը, կողմի միջնորդությամբ, կարող է հարցաքննությունն անցկացնել նրա գտնվելու վայրում կամ մեկ այլ դատարանում՝ տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

7. Ներկայացված բոլոր ապացույցները հետազոտելուց հետո դատարանում ցուցմունք տված անձը կողմի միջնորդությամբ կարող է կրկին հարցաքննվել:

Հոդված 354. Ցուցմունքների հրապարակումը դատաքննության ընթացքում

1. Կողմի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ մինչդատական վարույթում կամ դատարանում սույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ տրված ցուցմունքի, ինչպես նաև դրան կցված հավելվածների (նկարների, գծագրերի, սխեմաների, լուսանկարների, ձայնագրությունների,

տեսագրությունների, նկարահանումների, տեսաֆիլմերի) հրապարակումը թույլատրվում է, եթե՝

1) առկա է էական հակասություն անձի՝ դատարանում և նախկինում տված ցուցմունքների միջև.

2) անձն օգտվելով իր սահմանադրական իրավունքից՝ իրավաչափորեն հրաժարվել է դատարանում ցուցմունք տալուց.

3) անձը մահացել է կամ չի կարող հարցաքննվել ֆիզիկական կամ հոգեկան ոչ լիարժեքության պատճառով.

4) անձը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս կամ գործում է անձի դատարան ներկայանալուն խոչընդոտող անհաղթահարելի ուժ և չկա տեսահաղորդակցության տեխնիկական միջոցներով նրան հարցաքննելու հնարավորություն.

5) հայտնի չէ անձի գտնվելու վայրը կամ սպառվել են նրան դատարան ներկայացնելու բոլոր ողջամիտ միջոցները.

6) մինչդատական վարույթում անձի ցուցմունքը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան դեպոնացվել է:

2. Անձի՝ նախկինում տված ցուցմունքը կարող է հրապարակվել միայն դատարանում նրա հարցաքննությունն ավարտելուց կամ այդպիսի հարցաքննության անհնարինությունը հաստատելուց հետո: Մինչև ցուցմունքի հրապարակումն արգելվում է դրան կցված հավելվածների հետազոտումը:

Հոդված 355. Մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները

1. Մեղադրյալը կարող է հարցաքննվել այն դեպքում, երբ կողմերից մեկը նման միջնորդություն է ներկայացրել նախնական դատալսումների ընթացքում, և մեղադրյալը հաստատել է ցուցմունք տալու իր մտադրությունը: Դատաքննության ընթացքում ցանկացած պահի մեղադրյալն իրավունք ունի հայտարարել ցուցմունք տալու իր ցանկության մասին:

2. Մինչդատական վարույթում դեպոնացման ընթացակարգից դուրս մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող հրապարակվել, եթե դրանք ստացվել են պաշտպանի բացակայությամբ և մեղադրյալը դատարանում պնդել է դրանց սխալ լինելը:

3. Բացառիկ դեպքերում կողմի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ, մեղադրյալը կարող է հարցաքննվել մյուս մեղադրյալի բացակայությամբ: Այդ դեպքում դատական նիստի դահլիճ մեղադրյալի վերադառնալուց հետո նրա համար ընթերցվում են դատական նիստի արձանագրության մեջ ընդգրկված ու նրա բացակայությամբ հարցաքննված մեղադրյալի ցուցմունքները և նրան հնարավորություն է ընձեռվում հարցեր տալ այդ մեղադրյալին:

Հոդված 356. Տուժողի հարցաքննությունը

1. Տուժողը հարցաքննվում է վկայի հարցաքննության համար սույն օրենսգրքով սահմանված կանոններով:

2. Եթե տուժողն ունի նաև մեղադրյալի կարգավիճակ, ապա նա հարացաքննվում է բացառապես մեղադրյալի հարցաքննության կանոններով:

Հոդված 357. Վկայի հարցաքննության առանձնահատկությունները

1. Վկաները հարցաքննվում են միմյանցից անջատ և դեռևս չհարցաքննված վկաների բացակայությամբ:

2. Կողմի միջնորդությամբ նախագահողը կարող է հարցաքննված վկայից պահանջել չլքել դատական նիստի դահլիճը մինչև դատական նիստի ավարտը:

3. Վկայի կամ նրա մերձավոր ազգականների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտության դեպքում դատարանն իրավունք ունի հարցաքննությունն անցկացնել առանց վկայի իրական անձնական տվյալները հրապարակելու և դատական վարույթի մյուս մասնակիցների տեսողական դիտարկումից դուրս, ինչի վերաբերյալ կայացվում է որոշում:

4. Մեղադրյալի պաշտպանության իրավունքն իրացնելու կամ վարույթի արդարացի քննության ու լուծման համար որևէ էական հանգամանք պարզելու նպատակով կողմի պատճառաբանված միջնորդությամբ դատարանը կարող է կողմերին հնարավորություն ընձեռել ծանոթանալու վկայի վերաբերյալ իրական տվյալներին:

5. Բացառիկ դեպքերում կողմի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ, վկան կարող է հարցաքննվել մեղադրյալի բացակայությամբ: Այդ դեպքում

դատական նիստի դահլիճ մեղադրյալի վերադառնալուց հետո նրա համար ընթերցվում են դատական նիստի արձանագրության մեջ ընդգրկված ու նրա բացակայությամբ հարցաքննված վկայի ցուցմունքները և նրան հնարավորություն է ընձեռվում հարցեր տալ այդ վկային:

Հոդված 358. Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննության առանձնահատկությունները

1. Մինչև տասնվեց տարեկան տուժողի կամ վկայի հարցաքննությունը կատարվում է նրա օրինական ներկայացուցչի մասնակցությամբ: Տասնվեցից տասնութ տարեկան տուժողի կամ վկայի հարցաքննությանը օրինական ներկայացուցիչը կարող է մասնակցել դատարանի հայեցողությամբ:

2. Մինչև հարցաքննությունը սկսելը նախագահողն օրինական ներկայացուցչին պարզաբանում է նրա իրավունքները և պարտականությունները, ինչի մասին նշում է արվում դատական նիստի արձանագրության մեջ: Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի նախագահողի թույլտվությամբ հարցեր տալ անչափահաս տուժողին կամ վկային:

3. Մինչև տասնվեց տարեկան տուժողի կամ վկայի հարցաքննությունը սկսելուց առաջ նախագահողը նրանց բացատրում է վարույթի արդարացի իրականացման համար ճշմարտացի և լիարժեք ցուցմունքներ տալու նշանակությունը, սակայն չի նախազգուշացնում ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

4. Անչափահաս տուժողի կամ վկայի իրավունքների և շահերի պահպանության նպատակով կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ նրանց հարցաքննությունը կարող է իրականացվել մեղադրյալի բացակայությամբ, ինչի վերաբերյալ կայացվում է որոշում: Այդ դեպքում դատական նիստի դահլիճ մեղադրյալի վերադառնալուց հետո նրա համար ընթերցվում են դատական նիստի արձանագրության մեջ ընդգրկված ու նրա բացակայությամբ հարցաքննված տուժողի կամ վկայի ցուցմունքները և նրան հնարավորություն է ընձեռվում հարցեր տալ այդ անձին:

5. Կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ նախագահողը կարող է հարցաքննված անչափահաս տուժողից, վկայից, նրանց օրինական ներկայացուցչից պահանջել չլքել դատական նիստի դահլիճը մինչև դատական նիստի ավարտը:

Հոդված 359. Փորձագետի հարցաքննության առանձնահատկությունները

1. Մինչդատական վարույթում կամ դատարանում եզրակացություն կամ կարծիք տված փորձագետի հարցաքննությունը պարտադիր է:

2. Փորձագետը կարող է հարցաքննվել իր տված եզրակացության կամ կարծիքի հետևությունները հրապարակելուց հետո:

Հոդված 360. Իրեղեն ապացույցի կամ փաստաթղթի հետազոտումը

1. Իրեղեն ապացույցն առաջինը զննում է այն նախաձեռնած կողմը, ապա մյուս կողմը, այնուհետև՝ դատարանը: Կողմերն իրավունք ունեն դատարանի ուշադրությունը հրավիրել իրեղեն ապացույցի զննության արդյունքում պարզված և վարույթի արդարացի իրականացման համար էական նշանակություն ունեցող փաստական անգամանքների վրա:

2. Դատական նիստի դահլիճից դուրս գտնվող իրեղեն ապացույցի զննությունը կատարվում է դրա գտնվելու վայրում սույն հոդվածի 1-ին մասի կանոնների պահպանմամբ:

3. Վարույթի նյութերում առկա փաստաթուղթը կողմի նախաձեռնությամբ հետազոտվում է, եթե այն շոշափում է վարույթի արդարացի իրականացման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ:

4. Փաստաթուղթն ամբողջությամբ կամ դրա մի մասը հրապարակում է այն անձը, ով նախաձեռնել է դրա հետազոտումը:

5. Դատարանի պահանջով ստացված առարակաները կամ փաստաթղթերը սկզբում հետազոտում է նախագահողը, այնուհետև մեղադրանքի և պաշտպանության կողմերը:

Հոդված 361. Փորձաքննություն նշանակելը

1. Դատարանը կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է առաջնային փորձաքննություն նշանակել, եթե մինչդատական վարույթում նման փորձաքննություն չի անցկացվել:

2. Փորձաքննության նշանակում հայցող կողմը դատարանին գրավոր ներկայացնում է փորձագետին առաջադրվելիք հարցերը, փորձագիտական հիմնարկը կամ որպես փորձագետ ներգրավման ենթակա անձին, ինչպես նաև իրավունք ունի որպես փորձագիտական հետազոտության օբյեկտներ ներկայացնել առարկաներ կամ փաստաթղթեր: Միջնորդության վերաբերյալ որոշումը դատարանն ընդունում է դատական վարույթի բոլոր մասնակիցների կարծիքը լսելուց հետո:

3. Դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելիս նախագահողը մեղադրանքի և պաշտպանության կողմերին առաջարկում է ձևակերպել փորձագետին առաջադրվելիք հարցերը, ինչպես նաև շարադրել իրենց կարծիքն այն մասին, թե ում հանձնարարել փորձաքննության կատարումը, և առարկաներ կամ փաստաթղթեր ներկայացնել փորձագետին:

4. Սույն օրենսգրքի 282-րդ հոդվածով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում դատարանը կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է նշանակել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն:

5. Դատարանի նշանակած փորձաքննությունը կազմակերպվում և կատարվում է սույն օրենսգրքի 273-283-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Հոդված 362. Առարկաներ կամ փաստաթղթեր պահանջելը

1. Դատարանը կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել վարույթի արդարացի իրականացման համար անհրաժեշտ առարկաներ կամ փաստաթղթեր:

2. Դատարանի պահանջով ստացված առարկաները կամ փաստաթղթերը սույն օրենսգրքի 360-րդ հոդվածներով սահմանված կարգով հետազոտվելուց հետո դատարանի որոշմամբ կարող են կցվել վարույթի նյութերին:

Հոդված 363. Այլ հետազոտական գործողություններ կատարելը

1. Դատարանը, կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, կարող է կատարել տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի զննում, քննում, փորձարարություն, ճանաչման ներկայացնել, եթե մինչդատական վարույթում նշված գործողությունները չեն կատարվել կամ դատարանը, հաշվի առնելով կողմերի կարծիքը, գտնում է, որ չի կարելի սահմանափակվել դրանց կատարման վերաբերյալ մինչդատական վարույթում կազմված արձանագրությունները հրապարակելով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարվում են սույն օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ կողմերի, իսկ դատարանի որոշմամբ (անհրաժեշտության դեպքում) նաև վկայի, փորձագետի մասնակցությամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունների կատարման ընթացքում դրանց մասնակիցների կարող են տրվել հարցեր, իսկ կազմված արձանագրությունները կցվում են քրեական վարույթի նյութերին:

Հոդված 364. Հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը լրացնելը

1. Ներկայացված բոլոր ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը հարցնում է պաշտպանության և մեղադրանքի կողմերին, թե արդյոք նրանք միջնորդում են լրացնել հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը:

2. Հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը լրացնելու միջնորդություն հարուցելու դեպքում կողմը հիմնավորում է, թե լրացուցիչ ինչ ապացույց պետք է հետազոտվի և ինչպիսի փաստական հանգամանք պարզելու համար:

3. Դատարանը միջնորդությունը լուծում է կողմերի կարծիքը լսելուց հետո: Միջնորդությունը բավարարվելու դեպքում ապացույցների հետազոտումը շարունակվում է:

4. Այն դեպքում, երբ հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը լրացնելու միջնորդություն չի հարուցվում կամ նախագահողը պատճառաբանված մերժում է նման միջնորդությունը, դատարանն իրավունք ունի իր

նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել դատաքննությունը լրացնելու համար, եթե գտնում է, որ դա չանելը կարող է կասկածի տակ դնել վարույթի արդարացիությունը:

Հոդված 365. Ապացույցների հետազոտումն ավարտելը

1. Հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը լրացնելու անհրաժեշտության բացակայության, ինչպես նաև մեղադրանքը փոփոխելու և լրացնելու վերաբերյալ հանրային մեղարողի միջնորդության բացակայության դեպքում նախագահողն ավարտում է ապացույցների հետազոտումը և հայտարարում կողմերի եզրափակիչ ելույթների ու մեղադրյալի եզրափակիչ հայտարարության ունկնդրմանն անցնելու մասին:

2. Նախագահողը կողմերին պարզաբանում է, որ նրանք եզրափակիչ ելույթներում, իսկ դատարանը՝ դատական ակտ կայացնելիս, իրավունք ունեն հիմնվել միայն ապացույցների վրա, որոնք հետազոտվել են դատաքննության ընթացքում:

3. Դատարանը, հաշվի առնելով կողմերի կարծիքը, նրանց ողջամիտ ժամկետ է տրամադրում եզրափակիչ ելույթներին պատրաստվելու համար:

ԳԼՈՒԽ 50
ԿՈՂՄԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 366. Եզրափակիչ ելույթների բովանդակությունը և կարգը

1. Կողմերի եզրափակիչ ելույթները բաղկացած են մեղադրողի և պաշտպանի ճառերից: Եթե դատական վարույթին պաշտպան չի մասնակցում, եզրափակիչ ելույթով հանդես է գալիս մեղադրյալը:

2. Եզրափակիչ ելույթով կարող են հանդես գալ նաև տուժողը, նրա լիազոր ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը, մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, գույքային պատասխանողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը՝ այդպիսի միջնորդություններ կայացնելու դեպքում:

3. Եթե եզրափակիչ ելույթներով հանդես են գալու մի քանի մեղադրող, պաշտպան, մեղադրյալ, տուժող, գույքային պատասխանող և նրանց ներկայացուցիչներ, նախագահողը կողմերից յուրաքանչյուրում ընդգրված անձանց առաջարկում է որոշել իրենց ելույթների հաջորդականությունը: Եթե նշված անձինք համաձայնության չեն գալիս եզրափակիչ ելույթների հաջորդականության հարցում, այն որոշում է դատարանը: Ընդ որում, առաջինը միշտ ելույթ է ունենում մեղադրողը, իսկ վերջինը՝ պաշտպանը կամ մեղադրյալը:

4. Իրենց ելույթներում կողմերն իրավունք չունեն հիմնվել այնպիսի ապացույցների վրա, որոնք չեն հետազոտվել նախքան եզրափակիչ ելույթները սկսելը կամ դատարանի կողմից ճանաչվել են անթույլատրելի:

5. Դատարանը չի կարող որոշակի ժամանակով սահմանափակել եզրափակիչ ելույթի տևողությունը, սակայն նախագահողն իրավունք ունի ընդհատել ելույթ ունեցող անձին, եթե նա անդրադառնում է վարույթին չառնչվող հանգամանքների կամ նախքան եզրափակիչ ելույթները սկսելը չհետազոտված կամ դատարանի կողմից անթույլատրելի ճանաչված ապացույցների:

6. Եզրափակիչ ելույթով հանդես եկած յուրաքանչյուր անձ բոլոր ելույթների ավարտից հետո իրավունք ունի մեկ անգամ հակիրճ իր նկատառումները ներկայացնել դրանցում արծարծված հարցերի վերաբերյալ: Այդպիսի իրավունքից վերջինը օգտվում են պաշտպանը և մեղադրյալը:

Հոդված 367. Օրենքի կիրառման և մեկնաբանման հարցի քննարկումը

1. Եզրափակիչ ելույթով հանդես եկած անձն իրավունք ունի մինչև դատարանի՝ առանձին սենյակ հեռանալը, դատարանին գրավոր ներկայացնել սույն օրենսգրքի 374-րդ հոդվածի շրջանակներում դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի կապակցությամբ օրենքի կիրառման և մեկնաբանման վերաբերյալ իր կողմից առաջարկվող հիմնավորումները կամ ձևակերպումները, որոնք դատարանի համար պարտադիր չեն:

2. Դատարանը կարող է եզրափակիչ ելույթով հանդես եկած անձանց հարցեր ուղղել հետազոտված փաստական հանգամանքների կապակցությամբ օրենքի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ:

Հոդված 368. Մեղադրյալի եզրափակիչ հայտարարությունը

1. Եզրափակիչ ելույթներն ունկնդրելուց հետո նախագահողը մեղադրյալին առաջարկում է հանդես գալ եզրափակիչ հայտարարությամբ: Մեղադրյալը կարող է հրաժարվել այդ իրավունքի իրականացումից:

2. Մեղադրյալի եզրափակիչ հայտարարության ընթացքում նրան հարցեր տալ չի թույլատրվում:

3. Դատարանը չի կարող որոշակի ժամանակով սահմանափակել մեղադրյալի եզրափակիչ հայտարարության տևողությունը, ակայն նախագահողն իրավունք ունի մեղադրյալին ընդհատել, եթե նա շոշափում է վարույթին ակնհայտորեն չառնչվող հանգամանքներ:

Հոդված 369. Ապացույցների հետազոտումը վերսկսելը

1. Եթե վարույթի մասնակիցը եզրափակիչ ելույթում կամ մեղադրյալն իր եզրափակիչ հայտարարության մեջ հայտնում է վարույթի համար էական նշանակություն ունեցող նոր հանգամանքներ կամ հետազոտման նպատակով ներկայացնում է նախկինում իր համար անհայտ նոր ապացույցներ, դատարանը, մինչև առանձին սենյակ հեռանալը և ելնելով վարույթի արդարացիության անհրաժեշտությունից, իրավունք ունի որոշում կայացնել ապացույցների հետազոտումը վերսկսելու մասին:

2. Ապացույցների վերսկսված հետազոտությունն ավարտելուց հետո դատարանը նորից անցնում է եզրափակիչ ելույթները և մեղադրյալի եզրափակիչ հայտարարությունն ունկնդրելուն:

Հոդված 370. Դատարանի հեռանալն առանձին սենյակ

Մեղադրյալի եզրափակիչ հայտարարությունն ունկնդրելուց հետո դատարանը դատական ակտ կայացնելու համար հեռանում է առանձին սենյակ՝ հայտարարելով դատական ակտի հրապարակման վայրը, օրը և ժամը:

ԳԼՈՒԽ 51

ԴԱՏԱՎՃԻՌ ԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 371. Դատավճիռկայացնելը

Դատարանները դատավճիռները կայացնում են հանուն Հայաստանի Հանրապետության:

Հոդված 372. Դատավճռի օրինական և հիմնավոր լինելը

1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավոր:

2. Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ վարույթն իրականացնելիս:

3. Դատարանի դատավճիռը հիմնավոր է, եթե՝

1) դրա հետևությունները հիմնված են միայն ապացույցների հետազոտության փուլում հետազոտված ապացույցների վրա.

2) այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

3) դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին.

4) դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները պատճառաբանված են:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները:

Հոդված 373. Առանձին սենյակի գաղտնիությունը

Դատարանը դատավճիռը կայացնում է առանձին սենյակում: Առանձին սենյակում կարող է ներկա գտնվել միայն տվյալ վարույթն իրականացնող դատավորը: Այլ անձանց ներկայությունը չի թույլատրվում:

Հոդված 374. Դատավճիռ կայացնելու փուլերը և դատարանի լուծմանը ենթակա հարցերը

1. Վճռահատման առաջին փուլում դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

1) ապացուցված են արդյոք մեղադրյալին մեղսագրվող փաստական հանգամանքները (արարքը).

2) ապացուցված է արդյոք այդ արարքի հանրային վտանգավորությունը և քրեական հակաօրինականությունը.

3) ապացուցված է արդյոք մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը.

4) ապացուցված է արդյոք մեղադրյալի մեղքը տվյալ արարքը կատարելու մեջ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հարցերին պատասխանելու արդյունքում դատարանը կայացնում է արդարացման կամ մեղադրական վերդիկտ:

3.Սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր հարցերին հաստատական պատասխան տալու դեպքում դատարանը կայացնում է մեղադրական վերդիկտ, որում սահմանում է նաև, թե ապացուցված արարքի նկատմամբ քրեական օրենսգրքի որ հոդվածը, հոդվածի մասը կամ կետն է ենթակա կիրառման:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հարցերից որևէ մեկին բացասական պատասխան տալու դեպքում դատարանը կայացնում է արդարացման վերդիկտ:

3. Վերդիկտը հրապարակվում է և միաժամանակ սահմանվում է վճռահատման դատական նիստի օրը և ժամը: Վճռահատման դատական նիստը նշանակվում է 15 օրվա ընթացքում:

4. Վճռահատման դատական նիստին հետազոտվում են՝

1) մեղադրական վերդիկտի դեպքում՝ մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների, ինչպես նաև մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքների վերաբերյալ ապացույցները.

2) արդարացման վերդիկտի դեպքում՝ մեղադրյալի ռեաբիլիտացիայի վերաբերյալ ապացույցները:

5. Վճռահատման դատական նիստի մասին վարույթի մասնակիցները պատշաճ ծանուցվում են: Վճռահատման դատական նիստին վարույթի մասնակիցների չներկայանալը խոչընդոտ չէ վարույթն իրականացնելու համար:

6. Վճռահատման դատական նիստի արդյունքներով դատարանը կայացնում է դատավճիռ, որում վերաշարադրում է վերդիկտը:

7. Արդարացման վերդիկտի դեպքում դատավճռում լուծվում են մեղադրյալի ռեաբիլիտացիայի հարցերը:

8. Մեղադրական վերդիկտի դեպքում դատավճռում ներկայացված հաջորդականությամբ լուծվում ենհետևյալ հարցերը՝

1) ապացուցված է արդյոք մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայությունը.

2) մեղադրյալը ենթակա է արդյոք պատժի իր կատարած հանցանքի համար.

3) ինչ պատիժ պետք է նշանակվի մեղադրյալի նկատմամբ.

4) մեղադրյալը արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը.

5) գույքային հայցը ենթակա է արդյոք բավարարման, ում օգտին և ինչ չափով, ինչպես նաև պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման, եթե գույքային հայց չի հարուցվել.

6) վերացվելու է արդյոք հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցումը կամ գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու համար գույքի վրա դրված կալանքը.

7) ինչ անել իրեղեն ապացույցները.

8) վերացվելու, փոխվելու կամ ընտրվելու է արդյոք խափանման միջոց և ինչպիսի միջոց.

9) ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը.

10) հանցանքը կատարելու մեջ մեղավոր ճանաչված մեղադրյալի նկատմամբ անհրաժեշտ է արդյոք կիրառել հարկադրական բուժում գինեմոլությունից և թմրամոլությունից, նրա նկատմամբ նշանակել արդյոք խնամակալություն:

9. Մեղադրայլի կոմից մի քանի հանցանքներ կատարելու մեջ մեղադրվելու դեպքում դատարանը սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերում և 8-րդ մասի 1-4-րդ կետերում նշված հարցերը լուծում է յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին:

10. Մի քանի մեղադրյալների դեպքում սույն հոդվածում նշված բոլոր հարցերը լուծվում են յուրաքանչյուր մեղադրյալի նկատմամբ առանձին:

Հոդված 375. Մեղադրյալի մեղսունակության հարցը քննարկելը

1. Այն դեպքում, երբ նախաքննության կամ դատաքննության ժամանակ առաջացել է մեղադրյալի մեղսունակության կամ վարույթի իրականացման ժամանակ նրա կողմից իր գործողությունների համար հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ունակության հարցը, որի կապակցությամբ նշանակվել է դատահոգեբուժական փորձաքննություն, դատարանը պարտավոր է վերդիկտ կայացնելիս այդ հարցը քննարկել ևս մեկ անգամ:

2. Գտնելով, որ մեղադրյալն արարքը կատարելու պահին եղել է անմեղսունակության վիճակում, կամ հանցագործությունը կատարելուց հետո հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ այդ գործողությունները ղեկավարելու հնարավորությունից, դատարանն ընդունում է համապատասխան որոշում:

Հոդված 376. Դատարանի լրացուցիչ որոշումը

1. Դատարանը դատավճռի կամ որոշման հետ միաժամանակ համապատասխան հիմքերի առկայության դեպքում պարտավոր է կայացնել լրացուցիչ որոշում, որով պետական մարմնի համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունն է հրավիրում դատաքննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել մինչդատական վարույթի ընթացքում:

2. Դատարանի լրացուցի չորոշումը պետք է լինի պատճառաբանված: Լրացուցիչ որոշումը դատարանի հայեցողությամբ կարող է հրապարակվել դատական նիստում:

3. Լրացուցիչ որոշումն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ խախտում թույլ տված պաշտոնատար անձին: Լրացուցիչ որոշումը ստացած պաշտոնատար անձը պարտավոր է որոշումը ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում, քննարկել այն և ձեռնարկել համապատասխան միջոցներ առկա խախտումները վերացնելու կամ նմանատիպ խախտումները բացառելու ուղղությամբ:

Հոդված 377. Ապացույցների հետազոտումը վերսկսելը

1. Եթե առանձին սենյակում, սույն օրենսգրքի 374-րդ հոդվածի 1-ին մասում և 375-րդ հոդվածում նշված հարցերը քննարկելիս, դատարանը գտնի, որ դրանց լուծման համար անհրաժեշտ է հետազոտել ապացույցներ, ապա որոշում է կայացնում ապացույցների հետազոտումը վերսկսելու մասին: Ապացույցների վերսկսված հետազոտումն ավարտելուց հետո դատարանը նորից ունկնդրում է կողմերի եզրափակիչ ելույթները և մեղադրյալի եզրափակիչ հայտարարությունը, որից հետո վերստին հեռանում է առանձին սենյակ:

2. Եթե առանձին սենյակում, սույն օրենսգրքի 374-րդ հոդվածի 3-րդ մասում նշված հարցը քննարկելիս, դատարանը գտնում է, որ դրա արդարացի լուծման համար անհրաժեշտ է կողմերի քննարկման առարկա դարձնել օրենքի կիրառման կամ մեկնաբանման որևէ հարց, ապա որոշում է կայացնում եզրափակիչ ելույթները վերսկսելու մասին: Կողմերին հարցեր ուղղելուց և դրանց վերաբերյալ նրանց կարծիքները լսելուց հետո դատարանը վերստին հեռանում է առանձին սենյակ:

Հոդված 378. Դատավճիռների տեսակները

Դատավճիռը կարող է լինել մեղադրական կամ արդարացման:

Հոդված 379. Մեղադրական դատավճիռը

1. Մեղադրական դատավճիռը կայացվում է մեղադրական վերդիկտի հիման վրա և բովանդակում է հանցանքի կատարման մեջ մեղադրյալին մեղավոր ճանաչելու և նրա նկատմամբ պատիժ կիրառելու, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ պատիժ չկիրառելու կամ պատժից ազատելու մասին դատարանի որոշումը:

2. Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է մի այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցված է դատաքննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ մեղադրյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով

պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատաքննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, մեղադրյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, կայացնում է մեղադրական վերդիկտ:

Հոդված 380. Արդարացման դատավճիռը

1. Արդարացման դատավճիռը կայացվում է արդարացման վերդիկտի հիման վրա: Արդարացման դատավճիռը ճանաչում և հռչակում է հանցանքի կատարման մեջ մեղադրյալի անմեղությունը՝ այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ:

2. Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի առաջին մասի 1-2-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ:

3. Եթե արդարացման դատավճիռ կայացնելիս անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, դատարանը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործն ուղարկում է դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը:

Հոդված 381. Գույքային հայցը լուծելը դատավճիռ կայացնելիս

Դատավճիռ կայացնելիս դատարանը, ելնելով գույքային հայցի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքից, հարուցված հայցը բավարարում է լրիվ կամ մասնակիորեն, կամ մերժում է դրա բավարարումը, կամ այն թողնում է առանց քննության:

Հոդված 382. Գույքային հայցի ապահովման մասին որոշումը

Գույքային հայցը բավարարելու դեպքում դատարանն իրավունք ունի մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը որոշում կայացնել հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին, եթե այդպիսի միջոցներ նախկինում ձեռնարկված չեն եղել:

Հոդված 383. Դատավճիռ կազմելը

1. Անհրաժեշտ բոլոր հարցերը լուծելուց հետո դատարանն անցնում է վերդիկտի հիման վրա դատավճիռ կազմելուն: Դատավճիռը կազմվում և հրապարակվում է վճռահատման դատական նիստից հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

2. Դատավճիռը շարադրվում է պարզ և հասկանալի արտահայտություններով:

3. Դատավճիռը բաղկացած է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

4. Նախագահողը ստորագրում է դատավճիռն ամբողջությամբ և դրա յուրաքանչյուր էջը:

Հոդված 384. Դատավճռի ներածական մասը

Դատավճռի ներածական մասում ցույց է տրվում՝

1) որ դատավճիռը կայացվել է Հայաստանի Հանրապետության անունից.

2) դատավճիռը կայացնելու ժամանակը և վայրը.

3) դատավճիռը կայացնող դատարանի անվանումը, դատարանի կազմը, դատական նիստի քարտուղարը, հանրային մեղադրողը, պաշտպանը, տուժողը, գույքային պատասխանողը, նրանց ներկայացուցիչները.

4) մեղադրյալի անունը, հայրանունը, ազգանունը, նրա ծննդյան թվականը, ամիսը, օրը և ծննդավայրը, ընտանեկան դրությունը, աշխատանքի վայրը, զբաղմունքը, կրթությունը և մեղադրյալի անձին վերաբերող այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի համար.

5) քրեական օրենսգրքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված հանցանքի կատարման համար մեղադրյալին մեղադրանք է առաջադրվել:

Հոդված 385. Դատավճռի նկարագրական մասը

Դատավճռի նկարագրական մասում ցույց է տրվում՝

1) մեղադրանքի բովանդակությունը.

2) վարույթի մասնակիցների պնդումները և հիմնավորումները.

2) հետազոտված ապացույցները.

3) ապացույցների հիման վրա դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները:

Հոդված 386. Դատավճռի պատճառաբանական մասը

Դատավճռի պատճառաբանական մասում ցույց է տրվում՝

1) կիրառվող իրավունքը, այդ թվում՝ միջազգային պայմանագրերը.

2) դատարանի իրավական վերլուծությունները.

3) դատարանի հետևությունները և դրանց իրավական հիմնավորումները.

4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է որոշում ընդունելիս:

Հոդված 387. Դատավճռի եզրափակիչ մասը

1. Դատավճռի եզրափակիչ մասում նշվում են՝

1) դատարանի որոշումները.

2) դատավճռի բողոքարկման կարգը:

2. Եթե առկա է դատավճռում նշված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր, ապա դատավճռում նշվում են նաև համապատասխան պայմանագիրը և դրանից բխող այն իրավունքը (իրավունքները), որից (որոնցից) կարող է օգտվել դատապարտված կամ արդարացված մեղադրյալը:

Հոդված 388. Դատավճռի հրապարակումը

1.Դատավճիռը ստորագրելուց հետո նախագահողը վերադառնում է դատական նիստի դահլիճ և հրապարակում է դատավճիռը:

Դատական նիստի դահլիճում բոլոր ներկա գտնվողները դատավճիռը լսում են հոտնկայս:

2. Եթե դատավճիռը շարադրված է այն լեզվով, որին մեղադրյալը չի տիրապետում, ապա դատավճիռը հրապարակվելուց անմիջապես հետո

թարգմանիչն այն պետք է թարգմանաբար կարդա այն լեզվով, որին մեղադրյալը տիրապետում է:

3. Նախագահողը պարզաբանում է դատավճռի բողոքարկման կարգը և ժամկետը:

4. Մեղադրյալին ցմահ ազատազրկման դատապարտելիս նրան բացատրվում է ներման մասին միջնորդության իրավունքը:

Հոդված 389. Մեղադրյալին կալանքից ազատելը

Մեղադրյալին արդարացնելու, ինչպես նաև պատիժը կրելուց ազատելով մեղադրական դատավճիռ կայացնելու, կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու, կամ պատժի կրումը հետաձգելու, կամ նրան ազատությունից զրկելու հետ չկապված պատժի կամ այն ժամկետով ազատազրկման դատապարտելու դեպքում, որը չի գերազանցում մեղադրյալի նախնական կալանքի տակ փաստացի գտնվելու ժամկետը, եթե մեղադրյալը կալանքի տակ է գտնվում, դատարանը նրան անհապաղ ազատում է կալանքից դատական նիստի դահլիճում:

Հոդված 390. Դատավճռի պատճենը հանձնելը դատապարտված կամ արդարացված մեղադրյալին

Դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտված կամ արդարացված մեղադրյալին, նրա պաշտպանին և հանրային մեղադրողին: Տուժողին, գույքային պատասխանողին, նրանց լիազոր ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ:

ԳԼՈՒԽ 52

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼԸ

Հոդված 391. Դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը և դրանց ի կատար ածումը

1. Առաջին ատյանի դատարանի՝ եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել: Առաջին ատյանի դատարանի այլ դատական ակտերն ուժի մեջ են մտնում կայացման պահից: Վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

2. Օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը կատարման է հանձնվում այն կայացրած դատարանի կողմից ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց կամ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանից գործը վերադարձվելուց 3 օր հետո:

3. Մեղադրյալի արդարացման կամ նրան պատժից ազատելու մասին դատական ակտն ի կատար է ածում դատական ակտը կայացրած դատարանը: Այս դեպքում կալանքի տակ գտնվող մեղադրյալն անմիջապես ազատվում է դատական նիստերի դահլիճից՝ դատական ակտը հրապարակելուց հետո:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով կալանքից ազատվում է նաև այն մեղադրյալը՝

1) ով դատապարտվել է ազատությունից զրկելու հետ չկապված պատժի.

2) ում նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժի կրումը հետաձգելու մասին որոշում է կայացվել.

3) ով ազատազրկման է դատապարտվել այն ժամկետով, որը չի գերազանցում ձերբակալման կամ խափանման միջոցի կիրառման հետևանքով անազատության մեջ պահվելու ժամանակահատվածը:

Հոդված 392. Դատական ակտը կատարման հանձնելու կարգադրությունը

1. Դատական ակտը կատարելու մասին դատավորի կարգադրությունը դատական ակտի պատճենի հետ, իսկ վերաքննության կարգով դատական ակտի փոփոխման դեպքում՝ նաև վերաքննիչ դատարանի որոշման պատճենի հետ, ուղարկվում է այն անձանց կամ մարմնին, որոնց վրա դրված է դատական ակտն ի կատար ածելու պարտականությունը:

2. Միաժամանակ դատավորը պարտավոր է կալանքի տակ գտնվող և ազատազրկման դատապարտվածի ընտանիքին հայտնել ի կատար ածելու համար դատական ակտն ուղարկելու մասին: Եթե կալանքի տակ գտնվող և ազատազրկման դատապարտված անձն օտարերկրյա պետության քաղաքացի է, որի հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային պայմանագրով կամ այդպիսի օգնություն ցույց տալու համար փոխադարձության շուրջ պայմանավորվածությամբ, ապա դատարանն այդ անձի նկատմամբ դատական որոշումն ի կատար ածելու որոշման մասին դիվանագիտական ուղիներով ծանուցում է նաև այդ անձի քաղաքացիության պետությանը:

3. Դատական ակտն ի կատար ածող մարմինները դատական որոշումը կայացրած դատարանին անհապաղ հաղորդում են այն ի կատար ածելու մասին: Պատիժն իրականացնող հիմնարկի վարչակազմը պետք է դատական որոշումը կայացրած դատարանին և դատապարտյալի ընտանիքին հայտնի մեղադրյալի կողմից պատիժը կրելու վայրի, նրան տեղափոխելու և ազատելու մասին: Այն դեպքում, երբ դատական որոշումն ի կատար է ածվում սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված օտարերկրյա պետությունների քաղաքացիների նկատմամբ, ապա ի կատարածող մարմինը սույն մասով նախատեսված տեղեկությունները հայտնում է նաև սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված պետություններին՝ այդ պարբերությամբ սահմանված կարգով:

Հոդված 393. Դատական ակտի վերաբերյալ կասկածների և անհստակությունների լուծումը

Դատական ակտ կայացրած դատարանն իրավունք ունի լուծել դրա ի կատար ածման ընթացքում ծագած կասկածները և անհստակությունները, մասնավորապես՝

1) հստակ որոշել հաշվարկվող պատժի չափը, եթե դատարանի դատավճռում այն սահմանված չէ.

2) լուծել խափանման միջոցների, դատական ծախսերը վերաբաշխելու և իրեղեն ապացույցների ճակատագրի հարցը, եթե այն լուծված չի եղել կամ լուծված է եղել ոչ հստակ.

3) մեկնաբանել իր որոշումների անհստակությունները:

ԲԱԺԻՆ 13

ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 53

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 394. Վերաքննիչ բողոքներով գործերը քննող դատարանը

Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքներով գործերը քննում է քրեական վերաքննիչ դատարանը: Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը ստուգում է փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենսգրքի ու նյութական այլ օրենսդրության կիրառման ճշտությունը, ինչպես նաև քրեադատավարական օրենքի նորմերի պահպանումը:

Հոդված 395. Վերաքննիչ բողոքարկման ենթակա դատական ակտերը

Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանի հետևյալ դատական ակտերը՝

1) դատավճիռները և վարույթը կարճելու մասին որոշումները.

2) վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումները.

3) այն եզրափակիչ որոշումները, որոնք կայացվել են որպես մինչդատական վարույթի օրինականության դատական երաշխիքներ.

4) հանձնման մասին որոշումները.

5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր:

Հոդված 396. Վերաքննիչ բողոք բերելու իրավունքը

1. Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն վարույթի մասնավոր և հանրային մասնակիցները:

Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև տվյալ վարույթին չմասնակցած անձինք:

2. Վարույթի մասնավոր մասնակիցների և տվյալ վարույթին չմասնակցած անձանց կողմից կամ ի շահ նրանց վերաքննիչ բողոքը կարող է բերվել միայն դատական ակտի՝ այդ անձանց շահերին առնչվող մասով:

3. Վարույթի հանրային մասնակիցները կարող են վերաքննիչ բողոք բերել միայն հանրային շահին առնչվող մասով:

Հոդված 397. Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը

1. Վերաքննիչ բողոք բերվում է՝

1) Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ակտերի դեմ՝ դրանք ստանալու օրվանից հետո մեկամսյա ժամկետում.

2) Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-5-րդ կետերով նախատեսված որոշումների դեմ՝ դրանք ստանալու օրվանից հետո տասնօրյա ժամկետում:

2. Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ակտերի բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոքներ կայացնելու իրավունք ունեցող մասնավոր անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանին միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատական ակտ կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին՝ բացատրություններ տալու համար: Բաց թողնված ժամկետը վերականգնվում է, եթե միջնորդության մեջ ներկայացված պատճառներով պատշաճ վերաքննիչ բողոքարկումը գործնականում անհնարին էր:

3. Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի պահանջները:

4. Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին որոշմամբ դատական ակտի կատարումը կարող է կասեցվել:

Հոդված 398. Վերաքննիչ բողոքներ կայացնելու կարգը

Վերաքննիչ բողոքը ներկայացվում է վերաքննիչ դատարան: Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքի պատճենը ներկայացվում է դատական ակտ կայացրած դատարան՝ ծանուցման և գործը վերաքննիչ դատարան ուղարկելու վերաբերյալ սույն օրենսգրքի պահանջները կատարելու համար:

Հոդված 399. Վերաքննիչ բողոք բերելու հիմքերը

Վերաքննիչ բողոք բերելու հիմքն է դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել վարույթի ելքի վրա:

Հոդված 400. Վերաքննիչբողոքը

1. Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) տվյալներ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը, բնակության կամ գտնվելու վայրը.

3) դատականա կտը, որը բողոքարկվում է, և այն կայացրած դատարանի անվանումը.

4) նշում այն մասին, թե դատական ակտը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով.

5) բողոքի հիմքերը և պահանջը.

6) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև վարույթի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները.

7) առկայության դեպքում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետազոտված ապացույցները.

8) բողոքին կցվող նյութերի ցանկը.

9) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել դատաքննության ընթացքում:

Հոդված 401. Վերաքննիչ բողոքի պատասխանը

1. Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքի մասին դատական ակտը կայացրած դատարանը ծանուցում է վարույթի այն մասնակիցներին, որոնց շահերին այն առնչվում է: Բողոքի պատճենն ուղարկվում է նշված անձանց՝պարզաբանելով վերաքննիչ բողոքի պատասխաններ կայացնելու հնարավորությունը և ներկայացնելու ժամկետը, որը չի կարող 15 օրից ավելի լինել:

2. Բողոքի նկատմամբ ստացված պատասխանները կցվում են գործին:

3. Բողոքարկման և բողոքին պատասխաններ ներկայացնելու համար սահմանված ժամկետն անցնելուց հետո դատական ակտը կայացրած դատարանը գործը՝ բողոքների վերաբերյալ ստացված պատասխանների հետ, ուղարկում է վերաքննիչ դատարան, որի մասին հայտնվում է վարույթի մասնակիցներին:

Հոդված 402. Վերաքննիչ բողոքարկման ընթացքում ապացույցներ հետազոտելու միջնորդությունը

Վարույթի մասնակիցներն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնել նոր նյութեր, իսկ սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ինկետով նախատեսված դատական ակտերի բողոքարկման պարագայում նաև միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ

հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն:

Հոդված 403. Վերաքննիչ բողոքարկման կապակցությամբ դատարանի կողմից ընդունվող որոշումները

1. Վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 400-րդ հոդվածով սահմանված պահանջներին.

2) բողոքը բերել է բողոքարկման իրավունք չունեցող անձը.

3) բողոքը ժամկետանց է.

4) բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքն ընդունվում է վարույթ:

3. Բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման պատճենն ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին, իսկ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստն շանակելու մասին որոշման պատճենը՝ վարույթի բոլոր մասնակիցներին:

Հոդված 404. Բողոքը հետ վերցնելը

1. Բողոք բերած անձը և այն անձը, որի շահերի պաշտպանության նպատակով բերվել է բողոքը, իրավունք ունեն հետ վերցնելու այն մինչև վերաքննիչ դատարանում դատական նիստը սկսվելը: Պաշտպանն իրավունք չունի առանց պաշտպանյալի համաձայնության հետ վերցնել իր ներկայացրած բողոքը: Դատախազի կողմից բերված բողոքը կարող է հետ վերցնել վերադաս դատախազը:

2. Եթե վերաքննիչ բողոքարկման ժամկետն ավարտվել է, իսկ տվյալ դատական ակտի դեմ այլ վերաքննիչ բողոքներ չեն բերվել, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին

որոշում: Որոշումը կայացնելու պահից առաջին ատյանի դատարանի դատական ակտը մտնում է ուժի մեջ:

Հոդված 405. Վերաքննիչ դատարանում վարույթի սահմանները

1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վերաքննիչ դատարանն իրավասու է ի շահ մեղադրյալի դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից, եթե՝

1) հայտնաբերում է քրեական հետապնդումը բացառող հանգամանք.

2) հայտնաբերում է քրեադատավարական օրենքի անվերապահ խախտում.

3) բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքն ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին:

2. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքներն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքին համապատասխան լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք, եթե

առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 402-րդ հոդվածին համապատասխան՝ լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

Հոդված 406. Վերաքննության կարգով վարույթն իրականացնող դատարանի կազմը

Դատավճիռները և վարույթը կարճելու մասին որոշումները վերաքննիչ դատարանում վերանայվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահողն է: Մյուս դատական ակտերը վերաքննիչ դատարանում վերանայվում են դատավորի կողմից միանձնյա:

Հոդված 407. Վերաքննիչ դատարանի նիստը նշանակելը

1. Գործը դատարանում ստացվելուց հետո հանձնվում է դատարանի կազմը նախագահողին: Դատարանի կոլեգիալ կազմի դեպքում նախագահողը գործն ուսումնասիրման է ներկայացնում նաև դատական կազմի մյուս դատավորներին:

2. Ուսումնասիրելով ստացված գործը՝դատարանի որոշմամբ այն նշանակվում է դատական նիստում քննության: Դատական նիստ նշանակելու մասին որոշմամբ՝

1) սահմանվում է դատական նիստի օրը, ժամը, վայրը, դատական դահլիճը.

2) որոշվում է վարույթի կարգը՝ պարզեցված կամ սովորական.

3) սովորական կարգով վարույթն իրականացնելու մասին որոշում կայացնելու դեպքում սահմանվում է դատական նիստում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, դատական նիստին կանչվող վկաները, փորձագետը և այլ անձինք.

4) անհրաժեշտության դեպքում լուծվում է խափանման միջոցի հարցը.

5) որոշվում է, թե նիստը պետք է անցկացվի դռնբաց թե դռնփակ:

3. Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ակտերի դեմ բողոքի դեպքում վերաքննիչ դատարանը կարող է դատական նիստ նշանակելու մասին որոշման փոխարեն որոշում կայացնել վարույթը վճռաբեկ դատարան փոխանցելու մասին, եթե կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ գալիս է հետևության, որ առկա է օրենքի միատեսակ

կիրառության հնարավոր խնդիր: Վճռաբեկ դատարանի կողմից վարույթի փոխանցման միջնորդությունը մերժելու դեպքում վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում դատական նիստն շանակելու մասին:

4. Վերաքննիչ դատարանում առաջին դատական նիստը նշանակվում է քրեական գործը ստանալու օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո երկու ամիսը: Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 3-4-րդ կետերով նախատեսված որոշումների դեմ բերված բողոքներով դատական նիստը նշանակվում է ոչ ուշ, քան բողոքարկման ժամկետի ավարտից հետո 3-րդ օրը:

5. Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքի քննությունն իրականացվում է պարզեցված կարգով, եթե բողոքում չեն վիճարկվում առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերը: Ամեն դեպքում, սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ակտերի դեմ մեղադրյալի վերաքննիչ բողոքի քննությունն իրականացվում է սովորական կարգով: Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-5-րդ կետերով նախատեսված որոշումների դեմ վերաքննիչ բողոքի քննությունն իրականացվում է պարզեցված կարգով:

6. Դատական նիստ նշանակելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է վարույթի մասնակիցներին:

Հոդված 408. Վերաքննիչ դատարանում պարզեցված վարույթը

1. Պատշաճ ձևով ծանուցված՝ վարույթի մասնակիցների չներկայանալը խոչընդոտ չէ վերաքննիչ դատարանում պարզեցված կարգով վարույթի իրականացման համար:

2. Վարույթի ընթացքում դատավորներից մեկը ներկայացնում է զեկուցում, որում շարադրվում են վարույթի ընթացքը, էական փաստերը, ինչպես նաև բողոքի և բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները և պահանջը: Զեկուցող դատավորին մյուս դատավորները կարող են տալ հարցեր:

3. Եթե դատական նիստին ներկայացած վարույթի մասնակիցները ցանկություն են հայտնում հանդես գալ բացատրությամբ, ապա նրանց այդպիսի

հնարավորություն տրվում է: Բացատրությունից հետո վարույթի մասնակցին կարող են տրվել հարցեր նախ՝ դատավորների, ապա, դատարանի թույլտվությամբ, վարույթի մյուս մասնակիցների կողմից: Մի քանի մասնակցի կողմից բացատրություններ կայացնելու ցանկություն հայտնելու դեպքում բացատրություններ կայացնելու հաջորդականությունը որոշում է դատարանը:

4. Բացատրություններ ներկայացնելու հնարավորություն տալուց հետո դատարանը հեռանում է որոշում կայացնելու:

Հոդված 409. Վերաքննիչ դատարանում սովորական վարույթը

1. Վերաքննիչ դատարանում սովորական կարգով վարույթին պարտադիր մասնակցում է բողոքը ներկայացրած անձը: Դատարանի որոշմամբ կարող է պարտադիր համարվել վարույթի մյուս մասնակիցների, այդ թվում՝ դատախազի մասնակցությունը:

2. Պատշաճ ձևով ծանուցված բողոքը ներկայացրած անձի կողմից երկու անգամ դատական նիստին անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում վերաքննիչ բողոքը թողնվում է առանց քննության:

3. Ապացույցների հետազոտությանն անցնելուց առաջ զեկուցող դատավորը շարադրում է սույն օրենսգրքի 408-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները: Այնուհետև դատարանը լսում է բողոքը ներկայացրած անձի բացատրությունները, իսկ դատարանի կողմից անհրաժեշտ համարվելու դեպքում՝ նաև դատական ակտը չբողոքարկած հակառակ կողմի բացատրությունները:

4. Ապացույցների հետազոտությունն իրականացվում է դատական նիստ նշանակելու մասին որոշմամբ դատարանի սահմանած ծավալով: Կողմի միջնորդությամբ դատարանը կարող է ընդլայնել այդ ծավալը՝ հետազոտելով նաև այլ ապացույցներ, այդ թվում՝ նոր:

5. Ապացույցների հետազոտումն ավարտելուց հետո նախագահողը կողմերին հարցնում է, թե նրանք միջնորդում են արդյոք լրացնելու ապացույցների շրջանակը, և լուծելով այդ միջնորդությունները, անցնում է եզրափակիչ ելույթներին:

6. Եզրափակիչ ելույթների հաջորդականությունը որոշում է դատարանը: Եզրափակիչ ելույթներին մասնակցությունը պարտադիր չէ:

7. Եզրափակիչ ելույթները լսելուց հետո դատարանը հեռանում է որոշում կայացնելու:

Հոդված 410. Դատական ակտ կայացնելը

1. Բողոքը քննելու արդյունքում վերաքննիչ դատարանը կայացնում է դատական ակտ, որն ամբողջությամբ կամ մասամբ փոխարինում է առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

2. Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված պահանջները:

3. Դատարանում վարույթը կոլեգիալ կազմով իրականացնելիս դատավորների խորհրդակցության ժամանակ առանձին սենյակում կարող են գտնվել միայն վարույթով դատական կազմում ընդգրկված դատավորները: Այլ անձանց ներկայությունն արգելվում է: Դատավորներն իրավունք չունեն հրապարակելու խորհրդակցության ժամանակ արտահայտված կարծիքները:

4. Նախագահողը հարցերը դատարանի լուծմանն է դնում սույն օրենսգրքով նախատեսված հաջորդականությամբ: Առաջին հերթին քվեարկության է դրվում այն առաջարկը, որն առավել բարենպաստ է մեղադրյալի համար:

5. Յուրաքանչյուր հարցին դատավորներից յուրաքանչյուրը պետք է դրական կամ բացասական պատասխան տա: Դատավորներն իրավունք չունեն ձեռնպահ մնալու քվեարկությունից: Նախագահողը քվեարկում է վերջում:

6. Հարցերը լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

7. Դատական ակտն ամբողջությամբ և դրա յուրաքանչյուր էջը պետք է ստորագրեն բոլոր դատավորները: Մեծամասնության կարծիքի հետ չհամաձայնվող դատավորն իրավունք ունի չստորագրելու դատական ակտը, սակայն այդ դեպքում պարտավոր է գրավոր շարադրել իր հատուկ կարծիքը:

8. Հատուկ կարծիքը կարող է վերաբերել դատական ակտի ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասին:

9. Հատուկ կարծիքը ստորագրում և կնքում է դատավորը, և այն կցվում է գործին:

10. Դատական նիստում դատական ակտի հրապարակման ժամանակ հայտարարվում է հատուկ կարծիքի առկայության մասին, սակայն հատուկ կարծիքը չի հրապարակվում:

11. Հատուկ կարծիքը տրամադրվում է վարույթի մասնակիցներին:

12. Վերաքննիչ դատարանի դատական ակտում պետք է նշվեն, թե ինչ հիմքերով է առաջին ատյանի դատարանի դատական ակտը համարվում ճիշտ, իսկ բողոքում բերված եզրահանգումները՝ անհիմն, ինչն է հիմք ծառայել առաջին ատյանի դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մի մասով բեկանելու կամ փոխելու համար:

13. Դատական ակտ կայացնելիս, վերաքննիչ դատարանն իրավունք ունի իր դատական ակտերը հիմնավորելու համար հիմնվել վերաքննիչ դատարանի նիստին չկանչված, սակայն առաջին ատյանի դատարանում հարցաքննված անձանց ցուցմունքների վրա:

14. Դատական ակտում ուղղումը պետք է համաձայնեցվի և հաստատվի բոլոր դատավորների ստորագրություններով՝ մինչև դատական ակտը հրապարակելը:

15. Դատական ակտի հրապարակումը կատարվում է սույն օրենսգրքով սահմանված կանոններով:

Հոդված 411. Վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերը

1. Վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած ըստ էության ճիշտ դատական ակտը թերի կամ մասնակի սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է նոր դատական ակտ, կամ գործն ուղարկվում

է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ.

3) գույքային հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում գույքային հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

2. Վերաքննիչ դատարանն իրավունք ունի բեկանել արդարացման դատավճիռը, ինչպես նաև առաջադրված մեղադրանքի սահմաններում կիրառել ավելի ծանր հանցագործության համար օրենք կամ նշանակել ավելի խիստ պատիժ միայն այն դեպքում, երբ այդ պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրա ներկայացուցիչը:

3. Արդարացման դատավճիռը, վարույթը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած համապատասխան այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում:

Հոդված 412. Բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը

Բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝

1) գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին.

2) ճիշտ չի կիրառվել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը.

3) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ

4) առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում.

5) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և մեղադրյալի անձին:

Հոդված 413. Փաստական հանգամանքների մասին դատավճռում կամ որոշման մեջ շարադրված՝ դատարանի հետևությունների անհամապատասխանությունն ապացույցներին

1. Պարզելով, որ փաստական հանգամանքների մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված՝ դատարանի հետևությունները չեն համապատասխանում առաջին ատյանի դատարանում կամ վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին, վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը՝ գործն ուղարկելով առաջին ատյանի դատարան նոր քննության, կամ փոփոխում է դատական ակտը:

2. Վերաքննիչ դատարանը, գնահատելով դատաքննության ընթացքում իր կողմից հետազոտված ապացույցները, իրավունք ունի ապացուցված ճանաչելու այն փաստերը, որոնք չեն հաստատվել կամ հաշվի չեն առնվել առաջին ատյանի դատական ակտում: Այդ դեպքում վերաքննիչ դատարանը փոփոխում է դատական ակտը կամ գործն ուղարկում է առաջին ատյանի դատարան նոր քննության:

Հոդված 414. Միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը

Միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կիրառումն է, եթե այն ենթակա չէր կիրառման, կամ չկիրառումն է, եթե այն ենթակա էր կիրառման, կամ միջազգային պայմանագրի սխալ մեկնաբանումն է:

Հոդված 415. Քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը

1. Քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը քրեական օրենքի այն հոդվածի, հոդվածի այն մասի կամ կետի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, կամ այն հոդվածի, հոդվածի այն մասի կամ կետի չկիրառումն է, որը ենթակա էր կիրառման, կամ քրեական օրենքի սխալ մեկնաբանումն է, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին:

2. Գործի քննության արդյունքում գտնելով, որ արարքն իրավաբանորեն ճիշտ գնահատված չէ, վերաքննիչ դատարանն իրավունք ունի փոխել հանցագործության իրավական գնահատականը քրեական օրենսգրքի այն հոդվածով, հոդվածի մասով կամ կետով, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության համար:

Հոդված 416. Քրեադատավարական օրենքի էական խախտումը

1. Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատաքննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների խախտումները, որոնք ազդել են կամ կարող էին ազդել վարույթով ճիշտ որոշում կայացնելու վրա:

2. Դատավճիռն անվերապահորեն ենթակա է բեկանման, եթե՝

1) քրեական վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը.

2) մեղադրական դատավճիռը կայացվել է ապացույցների բավարար ամբողջությամբ չհիմնավորված խոստովանական ցուցմունքի հիման վրա.

3) դատավճիռը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով.

4) գործն անիրավաչափորեն քննվել է մեղադրյալի բացակայությամբ.

5) գործը քննվել է պաշտպանի բացակայությամբ, երբ նրա մասնակցությունը, համաձայն օրենքի, պարտադիր էր.

6) դատարանում խախտվել է մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգտվելու՝ մեղադրյալի իրավունքը.

7) անձամբ իր պաշտպանությունն իրականացրած մեղադրյալին իրավունք չի վերապահվել եզրափակիչ ելույթ արտասանել.

8) գործում բացակայում է դատական նիստի արձանագրությունը.

9) դատավճռում բացակայում է դրա պատճառաբանական մասը.

10) խախտվել են ընդդատության կանոնները.

11) դատարանը մեղադրյալին մեղսագվող փաստական հանգամանքներին (արարքին) տվել է տարբերվող իրավական գնահատական՝ առանց այդ հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում կողմերի համար քննարկման առարկա դարձնելու:

3. Գտնելով, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել սույն հոդվածի 2-րդ մասի 2-9-րդ կետերով նախատեսված խախտում, վերաքննիչ դատարանը բեկանում է դատավճիռը և կայացնում նոր դատական ակտ կամ գործն ուղարկում է առաջին ատյանի դատարան նոր քննության, իսկ 1-ին կետով նախատեսված դեպքում՝ բեկանում է դատավճիռը, կարճում է վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը:

4. Եթե առաջին ատյանի դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի այլ էական խախտում, ապա վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վարույթի արդյունքները, փոփոխում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը կամ բեկանում է այն և գործն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

5. Սույն հոդվածի նորմերը տարածվում են նաև վերաքննիչ դատարանի կողմից այլ դատական ակտերը վերանայելիս այնքանով, որքանով կիրառելի են դրանց նկատմամբ:

Հոդված 417. Նշանակված պատժի անհամապատասխանությունը հանցագործության ծանրությանը և մեղադրյալի անձին

Գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և մեղադրյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում կամ խստացնում է պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով:

Հոդված 418. Վերաքննիչ դատարանի դատավճռի կամ որոշման օրինական ուժի մեջ մտնելը և դրանք կողմերին հանձնելը

1. Դատավճիռը կամ վարույթը կարճելու մասին որոշումը բողոքարկված լինելու դեպքում վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, իսկ մյուս դեպքերում՝ հրապարակման պահից:

2. Վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում ուղարկվում է վարույթի մասնակիցներին:

Հոդված 419. Վարույթը դատական ակտը վերաքննիչ դատարանի կողմից բեկանվելուց հետո

Դատական ակտը վերաքննիչ դատարանի կողմից բեկանվելուց հետո վարույթն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ վերաքննիչ դատարանի սահմանած ծավալով:

ԳԼՈՒԽ 54
ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 420. Վճռաբեկ բողոքներով գործերը քննող դատարանը

Վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից եզրափակիչ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները վերանայում է վճռաբեկ դատարանի քրեական պալատը՝ նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով: Վճռաբեկ դատարանը ստուգում է օրենքի կիրառման ճշտությունը և միատեսակությունը:

Հոդված 421. Վճռաբեկ դատարանում քննության ենթակա դատական ակտերը

Վճռաբեկ դատարանը վերանայում է դատավճիռների և վարույթը կարճելու մասին որոշումների վերանայման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած

դատական ակտերը, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առաջին ատյանի դատարանի դատական ակտերը՝ վարույթի փոխանցման միջնորդությունը բավարարելու դեպքում:

Հոդված 422. Վճռաբեկ բողոք բերելու և վարույթը վճռաբեկ դատարանին փոխանցելու միջնորդություն հարուցելու իրավունք ունեցող անձինք

1. Վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն վարույթի մասնավոր մասնակիցները, հանրային մասնակիցները, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալը: Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն նաև տվյալ վարույթին չմասնակցած անձինք:

2. Վարույթի մասնավոր մասնակիցների և տվյալ վարույթին չմասնակցած անձանց կողմից կամ ի շահ նրանց վճռաբեկ բողոքը կարող է բերվել միայն դատական ակտի՝ այդ անձանց շահերին առնչվող մասով:

3. Վարույթի հանրային մասնակիցները, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալը կարող են վճռաբեկ բողոք բերել միայն հանրային շահին առնչվող մասով:

4. Վարույթը վճռաբեկ դատարանին փոխանցելու միջնորդություն հարուցելու լիազորություն ունի քրեական վերաքննիչ դատարանը:

Հոդված 423. Վճռաբեկ բողոքարկման ժամկետները

Վճռաբեկ բողոքը կարող է բերվել վճռաբեկ բողոքարկման ենթակա դատական ակտի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Հոդված 424. Վճռաբեկ բողոքարկման կարգը

1. Վճռաբեկ բողոքը բերվում է վճռաբեկ դատարան, իսկ պատճենը՝ վերաքննիչ դատարան:

2. Վերաքննիչ դատարանը, ստանալով վճռաբեկ բողոքի պատճենը, գործն անհապաղ ուղարկում է վճռաբեկ դատարան:

Հոդված 425. Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը

1. Վճռաբեկ բողոք բերելու հիմքն է դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

2. Վճռաբեկ դատարանը վարույթի մասնակիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում ղեկավարվում է սույն օրենսգրքի 413-415-րդ հոդվածների կանոններով:

Հոդված 426. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանները

Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե վճռաբեկ դատարանը գալիս է հետևության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունած որոշումներին, կամ

3) վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրված դատական սխալ:

Հոդված 427. Վճռաբեկ բողոքը և դրա նախնական քննությունը

1. Վճռաբեկ բողոքը բովանդակում է՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) տվյալներ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը, բնակության կամ գտնվելու վայրը.

3) դատական ակտը, որը բողոքարկվում է, և այդ ակտը կայացրած դատարանի անվանումը.

4) նշում այն մասին, թե դատական ակտը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով.

5) մատնանշում այն մասին, թե որ նյութական կամ դատավարական իրավունքն է խախտվել, որն ազդել է կամ կարող էր ազդել վարույթի ելքի վրա, ինչպես նաև դրա հիմնավորումները.

6) բողոք բերած անձի պահանջը.

7) բողոքը վարույթ ընդունելու պայմանը և դրա հիմնավորումները.

8) բողոքին կցվող նյութերի ցանկը.

9) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը:

2. Բողոքին կցվում են բողոքի պատճենը վարույթն իրականացրած դատարան և վարույթի մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը:

3. Վարույթը վճռաբեկ դատարանին փոխանցելու միջնորդության մեջ պետք է մատնանշվի օրենքի միատեսակ կիրառության խնդիրը և բովանդակվի դրա հիմնավորումը:

4. Բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) բողոքը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասի պահանջներին.

2) բողոքը բերել է բողոքարկման իրավունք չունեցող անձը.

3) բողոքը ժամկետանց է.

4) բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վճռաբեկ բողոքարկման:

5. Բողոքի վարույթ ընդունումը մերժվում է, եթե վճռաբեկ դատարանը գալիս է միաձայն հետևության, որ վարույթ ընդունելու պայմանների հիմնավորումները բավարար չեն:

6. Բողոքն ընդունվում է վարույթ, եթե այն համապատասխանում է սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին, և վճռաբեկ դատարանը չի գալիս միաձայն հետևության, որ վարույթ ընդունելու պայմանների հիմնավորումները բավարար չեն:

7. Վարույթը վճռաբեկ դատարան փոխանցելու մասին միջնորդությունը մերժվում է, եթե վճռաբեկ դատարանը գալիս է միաձայն հետևության, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիրը բացակայում է: Հակառակ դեպքում միջնորդությունը բավարարվում է և վարույթը վերաքննիչ դատարանից փոխանցվում է վճռաբեկ դատարան:

8. Սույն հոդվածի 4-7-րդ մասերում նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանը գործը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կայացնում է որոշում:

Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

9. Վճռաբեկ դատարանի որոշումները պատշաճ ձևով ուղարկվում են բողոք բերող անձին, վարույթի մասնավոր մասնակիցներին և դատախազին:

Հոդված 428. Վճռաբեկ բողոքի պատասխանը

Վարույթի մասնակիցը, ստանալով վճռաբեկ բողոքի պատճենը, մինչև վճռաբեկ դատարանում գործի քննությունը սկսելն իրավունք ունի իր պատասխանն ուղարկելու վճռաբեկ դատարան: Վարույթի մասնակիցը վճռաբեկ դատարան պատասխան ուղարկելու հետ միաժամանակ պետք է պատասխանի պատճենն ուղարկի նաև վարույթի մյուս մասնակիցներին: Պատասխանը ստորագրում է այն ներկայացնող վարույթի մասնակիցը կամ նրա լիազորած անձը:

Հոդված 429. Բողոքը հետ վերցնելը

Բողոք բերած անձն իրավունք ունի միջնորդել հետ վերցնելու բողոքը մինչև վճռաբեկ դատարանում դատական նիստի սկսվելը: Դատարանը կարող է չբավարարել բողոքը հետ վերցնելու միջնորդությունը, եթե բողոքի քննությունը հիմնարար նշանակություն ունի օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար:

Հոդված 430. Վճռաբեկ դատարանում վարույթի սահմանները

1. Վճռաբեկ դատարանը վերանայումն իրականացնում է վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Վճռաբեկ դատարանն իրավասու է ի շահ մեղադրյալի դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից, եթե՝

1) հայտնաբերում է քրեական հետապնդումը բացառող հանգամանք.

2) հայտնաբերում է սույն օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում.

3) բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքն ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին:

Հոդված 431. Վճռաբեկ դատարանի նիստերը

Պալատի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն չորս դատավոր:

Հոդված 432. Վճռաբեկ դատարանի նիստի նախապատրաստումը

1. Վճռաբեկ դատարանը դատական նիստում վարույթն իրականացնում է ողջամիտ ժամկետում:

2. Դատական նիստի տեղի և ժամանակի մասին բողոքը ներկայացրած անձը և վարույթի մասնակիցները ծանուցվում են:

Հոդված 433. Վճռաբեկ դատարանում վարույթի իրականացման կարգը

Վճռաբեկ դատարանի դատական նիստում վարույթն իրականացվում է վերաքննիչ դատարանում պարզեցված կարգով վարույթի իրականացման համար սահմանված կանոններով:

Հոդված 434. Վճռաբեկ դատարանի եզրափակիչ դատական ակտերը

1. Վերանայման վարույթի արդյունքում վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ մասնակի սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ.

3) գույքային հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) փոփոխում է համապատասխան ստորադաս դատարանի ակտը, եթե համապատասխան ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը.

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի բեկանման կամ փոփոխման դեպքերում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի է կամ մասնակի սխալ է պատճառաբանված:

2. Վճռաբեկ դատարանն իրավունք ունի բեկանել արդարացման դատավճիռը, ինչպես նաև առաջադրված մեղադրանքի սահմաններում կիրառել ավելի ծանր հանցագործության համար օրենք կամ նշանակել ավելի խիստ պատիժ միայն այն դեպքում, երբ այդ պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը:

3. Արդարացման դատավճիռը, վարույթը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած համապատասխան այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում:

Հոդված 435. Վճռաբեկ դատարանի որոշումների բովանդակությունը

1. Գործի քննության արդյունքներով կայացված վճռաբեկ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝

1) գործի համարը և որոշման կայացման տարին, ամսաթիվը, որոշումը կայացրած վճռաբեկ դատարանի կազմը.

2) վճռաբեկ բողոք բերած անձի անունը (անվանումը).

3) վարույթն իրականացրած դատարանի անվանումը, դատավճռի կամ որոշման կայացման տարին, ամսաթիվը, դատարանի կազմը.

4) դատավճռի կամ որոշման էության համառոտ շարադրանքը.

5) վարույթի մասնակիցներիանունները, հայրանունները, ազգանունները.

6) հիմքերը, որոնցով դրվել է դատավճռի կամ որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման հարցը.

7) օրենքները, որոնցով ղեկավարվել է վճռաբեկ դատարանը որոշում կայացնելիս.

8) դատավճիռը կամ որոշումըբեկանելիսայնշարժառիթները, որոնցովվճռաբեկդատարանըչիհամաձայնվելդատավճիռկամորոշումկայացրածդատարանիհետևություններին.

9) վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով եզրահանգումը:

2. Վճռաբեկ դատարանը, պարզելով, որ բացակայում են դատավճիռը կամ որոշումը բեկանելու հիմքեր, այդ մասին պետք է նշի կայացրած որոշման մեջ:

3. Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, ապահովի օրենքի ճիշտ մեկնաբանությունը, նպաստի իրավունքի զարգացմանը: Որոշումը ստորագրում է դատարանի ամբողջ կազմը:

4. Դատարանի որոշումները բողոքի հետ կցվում են գործին:

Հոդված 436. Վճռաբեկ դատարանի կողմից որոշում կայացնելու կարգը

1. Վճռաբեկ դատարանը գործի քննության արդյունքներով կայացնում է որոշում:

2. Որոշումը կայացվում է հանուն Հայաստանի Հանրապետության:

3. Որոշումը կայացվում է բողոք բերած անձի և կանչված այլ անձանց բացակայությամբ:

4. Որոշումը կայացվում է բաց քվեարկությամբ: Վճռաբեկ դատարանի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա

դատավորների մեծամասնությունը: Հարցերը քվեարկության են դրվում նախագահողի կողմից: Ձայների հավասարության դեպքում ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է մեղադրյալի համար:

5. Որոշումը ստորագրում են որոշում կայացրած դատավորները:

6. Որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է նիստում:

7. Որոշումը կայացման օրվանից ողջամիտ ժամկետում ուղարկվում է բողոք բերած անձին և վարույթի մասնակիցներին:

Հոդված 437. Վճռաբեկ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը

Վճռաբեկ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Հոդված 438. Վարույթը դատական ակտը վճռաբեկ դատարանի կողմից բեկանվելուց հետո

Դատական ակտը վճռաբեկ դատարանի կողմից բեկանվելուց հետո վարույթն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ վճռաբեկ դատարանի սահմանած ծավալով:

ԳԼՈՒԽ 55
ԲԱՑԱՌԻԿ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Հոդված 439. Բացառիկ վերանայման վարույթների շրջանակը

Բացառիկ վերանայման վարույթներն են՝

1) նոր հանգամանքներով վարույթը.

2) հիմնարար խախտման հիմքով վարույթը:

Հոդված 440. Բացառիկ վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը և բացառիկ վերանայման վարույթներով դատական ակտը վերանայող դատարանը

1. Բացառիկ վերանայման ենթակա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատարանի որոշումը, ինչպես նաև մինչդատական ակտերի վիճարկման վարույթի շրջանակներում կայացված և օրինականուժիմեջմտած այն դատականակտը, որով հաստատվում է քրեական հետապնդումը դադարեցնելու իրավաչափությունը կամ քրեական հետապնդումը նորոգելու անիրավաչափությունը:

2. Բացառիկ վերանայման վարույթներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը:

Հոդված 441. Բացառիկ վերանայման վարույթ հարուցելու միջնորդություններ կայացնելու իրավունք ունեցող անձինք

Բացառիկ վերանայման վարույթ հարուցելու միջնորդություններ կայացնելու իրավունք ունեն՝

1) նոր հանգամանքի կամ հիմնարար խախտման հետ առնչվող վարույթի մասնավոր մասնակիցները.

2) այն անձինք, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն կամ նույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կամ 5-րդ կետերի ուժով զրկված են եղել սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից.

3) այն անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից համապատասխան դատական ակտի կայացման պահին ունեցել են միջազգային պայմանագրի պահանջներին (ժամկետներին) համապատասխան միջազգային դատարան դիմելու իրավունք.

4) այն անձինք, ում առնչվում է արարքի հանցավորությունը վերացնող օրենքը.

5) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա տեղակալները:

2. Շահագրգիռ անձի փոխարեն բացառիկ վերանայման վարույթ հարուցելու միջնորդություն կարող է ներկայացնել նրա լիազորած անձը, որը միջնորդության հետ միաժամանակ դատարան պետք է ներկայացնի նաև իր լիազորությունները հաստատող փաստաթուղթը:

Հոդված 442. Նոր հանգամանքներով վերանայման հիմքերը

Նոր հանգամանքներով վարույթը հարուցվում է, եթե՝

1) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված է վկայի, տուժողի ցուցմունքների, թարգմանչի կատարած թարգմանության ակնհայտ սխալ կամ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, ինչպես նաև իրեղեն ապացույցների, քննչական, գաղտնի քննչական ու դատական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են անօրինական դատական ակտ կայացնելուն.

2) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են դատավորների հանցավոր գործողությունները, որոնք նրանք թույլ են տվել տվյալ գործը քննելիս.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են վարույթ իրականացրած անձանց այնպիսի հանցավոր գործողություններ, որոնք հանգեցրել են դատարանի չհիմնավորված և անօրինական դատավճիռ կամ վարույթը կարճելու վերաբերյալ որոշում կայացնելուն.

4) ուժի մեջ է մտել արարքի հանցավորությունը վերացնող օրենք.

5) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ վարույթով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

6) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

7) ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ նոր հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ վարույթը կարճվել է:

Հոդված 443. Հիմնարար խախտման հիմքով վերանայման հիմքերը

Հիմնարար խախտման հիմքով վարույթը հարուցվում է, եթե դատական վարույթի ընթացքում անձը զրկվել է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված որևէ երաշխիքից, ինչի հետևանքով ակնհայտ անմեղ անձը դատապարտվել է ազատազրկման:

Հոդված 444. Նոր հանգամանքներով և հիմնարար խախտման հիմքով վարույթի հարուցման միջնորդություններ կայացնելու ժամկետները

1. Նոր հանգամանքներով կամ հիմնարար խախտման հիմքով վարույթի հարուցման միջնորդություն կարող է ներկայացվել 4 ամսվա ընթացքում՝ այն պահից, երբ միջնորդություն հարուցող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

2. Եթե վաղեմության ժամկետները լրանալու, համաներման ակտ ընդունվելու կամ առանձին անձանց ներում շնորհելու պատճառով, ինչպես նաև մեղադրյալի մահվան հետևանքով դատական ակտ կայացնելն անհնարին է, ապա սույն օրենսգրքի 442-րդ հոդվածի 1-3-րդ կետերում մատնանշված նոր հանգամանքները պարզվում են սույն օրենսգրքով նախատեսված կարգով կատարվող քննությամբ:

3. Արդարացման դատավճռի և վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների վերանայումը թույլատրվում է միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում:

4. Այն դատական ակտի վերանայումը, որով մեղադրական դատավճիռ է կայացված այնպիսի հանգամանքներ ի հայտ գալու հետևանքով, որոնք ցույց են տալիս դատապարտյալի անմեղությունը կամ նրա կողմից ավելի թեթև հանցանք կատարելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ժամկետներով սահմանափակված չէ:

5. Դատապարտյալի մահն արգելք չէ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելուն՝ (դատապարտված մեղադրյալի) դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով:

6. Սույնօրենսգրքի 442-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքում չորսամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից:

Հոդված 445. Նախնական վարույթի հարուցումը նոր հանգամանքներով

1. Նոր հանգամանքների մասին հայտարարությունները և հաղորդումներն ուղարկվում են դատախազին:

2. Սույն օրենսգրքի 442-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված հանգամանքի առերևույթ առկայության դեպքում դատախազը որոշում է կայացնում նոր հանգամանքների վերաբերյալ նախնական վարույթ հարուցելու մասին և այդ հանգամանքների առթիվ քննություն կատարելու մասին հանձնարարություն է տալիս նախաքննության մարմնին:

3. Եթե հաղորդումը ստացած դատախազը նոր հանգամանքների կապակցությամբ նախնական վարույթ հարուցելու համար առերևույթ հիմքեր չի գտնում, ապա նա պատճառաբանված որոշմամբ մերժում է նախնական վարույթ

հարուցելը: Այդ որոշումը հաղորդվում է շահագրգիռ անձանց, որոնք այն կարող են բողոքարկել վերադաս դատախազին:

Հոդված 446. Դատախազի գործողությունները նոր հանգամանքներով նախնական վարույթն ավարտելուց հետո

1. Նոր հանգամանքներով նախնական վարույթն ավարտելուց հետո դատական ակտը վերանայելու համար հիմքերն առկա համարելով՝ դատախազը քննության արդյունքներով կազմված եզրակացությունն ուղարկում է գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին:

2. Գլխավոր դատախազը, նրա տեղակալը, գործի վերանայման հիմքերն առկա համարելով, բողոք են ներկայացնում դատարան՝ դրան կցելով եզրակացությունը և այլ անհրաժեշտ նյութեր:

3. Դատական ակտերը վերանայելու հիմքեր չլինելու դեպքում դատախազն իր պատճառաբանված որոշմամբ կարճում է նախնական վարույթը: Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում ուղարկվում է հաղորդում ներկայացրած անձին:

Հոդված 447. Բացառիկ վերանայման հիմքերով դատական ակտերը վերանայելու միջնորդությունը և դրանց ներկայացվող պահանջները

1. Նոր հանգամանքներով կամ հիմնարար խախտման հիմքով դատական ակտը վերանայելու միջնորդությունը պետք է բովանդակի՝

1) միջնորդությունը ներկայացրած անձի անունը, ազգանունը, բնակության կամ աշխատանքի վայրի հասցեն, պաշտոնը.

2) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

3) վերանայման ենթակա դատական ակտի կայացման օրը, ամիսը, տարին.

4) դատական ակտի վերանայման համար հիմք ծառայած նոր հանգամանքի կամ հիմնարար խախտման շարադրանքը.

5) միջնորդությունը ներկայացրած անձի պահանջը.

6) միջնորդությանը կցվող փաստաթղթերի ցանկը.

7) միջնորդությունը ներկայացրած անձի ստորագրությունը:

2. Միջնորդությանը կցվում են նոր հանգամանքը կամ հիմնարար խախտումը հաստատող նյութերը և այլ անհրաժեշտ նյութեր:

3. Միջնորդությունը ներկայացնող անձը դրա պատճենը, նոր հանգամանքը կամ հիմնարար խախտումը հաստատող նյութերի պատճենների հետ պատշաճորեն ուղարկում է վարույթի մասնավոր մասնակիցներին, ինչպես նաև դատախազին:

Հոդված 448. Նոր հանգամանքներով կամ հիմնարար խախտման հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը

1. Դատարանը դատական ակտը նոր հանգամանքներով կամ հիմնարար խախտման հիմքով վերանայում է վերանայման վարույթ հարուցելու որոշման հիման վրա:

2. Դատարանը վերանայման վարույթի հարուցումը մերժում է, եթե՝

1) միջնորդությունը ներկայացվել է դրա համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետի խախտմամբ, և այն վերականգնելու մասին միջնորդություն չի ներկայացվել, կամ

2) առերևույթ բացակայում է նոր հանգամանքը կամ հիմնարար խախտումը, կամ

3) դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել, և եթե դատարանին հայտնի չէ նման հանգամանքի առկայությունը, կամ

4) բողոքը ներկայացրել կամ ստորագրել է ոչ պատշաճ անձը, կամ այն ընդհանրապես ստորագրված չէ:

3. Դատարանը վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացնում է միջնորդությունը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում: Վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 449. Բացառիկ հիմքերով դատական ակտերի վերանայումը

1. Նոր հանգամանքներով կամ հիմնարար խախտման հիմքով հարուցված վարույթն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 442-րդ հոդվածի 1-6-րդ կետերով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա:

3. Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ
ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ 14
ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 56
ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 450. Անչափահասների նկատմամբ իրականացվող վարույթի կարգը

1. Սույն գլխի դրույթները կիրառվում են այն անձանց վերաբերյալ վարույթներով, ում տասնութ տարին չի լրացել ենթադրյալ հանցանքը կատարելու պահին:

2. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված կանոնները:

Հոդված 451. Անչափահասի նկատմամբ իրականացվող վարույթի նպատակը

1. Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վարույթի բոլոր փուլերում անչափահասի դաստիարակության, բնակության, կրթության կամ աշխատանքի բնականոն պայմաններն ապահովելու, ինչպես նաև ոչ իրավաչափ ներգործությունից նրան առավելագույնս զերծ պահելու համար:

2. Անչափահասի նկատմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի և ներգործության մյուս միջոցները պետք է համարժեք լինեն նրան վերագրվող հանցանքի հանգամանքներին և ծանրությանը, ինչպես նաև անչափահասի սոցիալական և հոգեկան վիճակին:

Հոդված 452. Հաստատման ենթակա հանգամանքները

1. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով, բացի սույն օրենսգրքի 122-րդ հոդվածով սահմանված ապացուցման ենթակա հանգամանքներից, հաստատվում են՝

1) անչափահասի տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը).

2) անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկան զարգացման մակարդակը և նրա անձի այլ առանձնահատկությունները.

3) անչափահասի վրա տարիքով ավագ անձանց ազդեցությունը:

2. Հոգեկան խանգարումների հետ չկապված հոգեկան թերզարգացման մասին վկայող վյալների առկայության դեպքում պետք է պարզվի նաև, թե արդյոք անչափահասը կարող էր ամբողջությամբ գիտակցել իր գործողությունների (անգործության) փաստական բնույթը և հանրային վտանգավորությունը կամ ղեկավարել դրանք:

Հոդված 453. Վարույթի արագությունը և առանձնացումը

1. Անչափահասի վերաբերյալ ցանկացած վարույթ պետք է ի սկզբանե քննվի արագ և առանց անհարկի ձգձգումների:

2. Չափահաս անձանց հետ ենթադրյալ հանցանքի կատարման մեջ մեղադրվող անչափահասի վերաբերյալ վարույթն անջատվում է սույն օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված կարգով: Եթե վարույթի անջատումն անհնար է արդարադատության շահի պաշտպանության նկատառումներով, ապա չափահասների հետ ներգրավված անչափահաս մեղադրյալի նկատմամբ կիրառվում են սույն գլխի կանոնները:

3. Անչափահասի վերաբերյալ վարույթի նյութերը չպետք է հրապարակվեն կամ առանց ծայրահեղ անհրաժեշտության հասանելի լինեն վարույթի բոլոր մասնակիցների համար, ինչպես նաև չպետք է օգտագործվեն չափահաս անձին վերագրվող հանցանքի քննության ընթացքում:

Հոդված 454. Պաշտպանի մասնակցությունը վարույթին

1. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

2. Վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից անչափահաս մեղադրյալի հրաժարումը, բացառությամբ այն դեպքի, երբ դա պայմանավորված է պաշտպանի թեկնածության հետ ունեցած անհամաձայնությամբ: Այդ, ինչպես նաև անչափահաս մեղադրյալի օրինական ներկայացուցչի կողմից պաշտպանի լիազորությունները դադարեցնելու դեպքերում, վարույթն իրականացնող մարմինը սույն օրենսգրքով սահմանված կարգով անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին նոր պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար:

Հոդված 455. Օրինական ներկայացուցչի մասնակցությունը վարույթին

1. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով օրինական ներկայացուցչի մասնակցությունը պարտադիր է:

2. Վարույթն իրականացնող մարմինն օրինական ներկայացուցչի մասնակցությունն ապահովում է անչափահասի ձերբակալման կամ նրան մեղադրանք ներկայացնելու պահից: Օրինական ներկայացուցչին պարզաբանվում են սույն օրենսգրքով սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները:

3. Օրինական ներկայացուցիչը, մասնավորապես, իրավունք ունի՝

1) իմանալ ինչում է մեղադրվում անչափահասը.

2) մասնակցել մեղադրանք ներկայացնելուն.

3) մասնակցել անչափահասի հարցաքննությանը, իսկ վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ նաև նրա մասնակցությամբ կատարվող այլ քննչական և դատավարական գործողություններին.

4) իրականացնել սույն օրենսգրքով մեղադրյալին վերապահված բոլոր իրավունքները, բացառությամբ նրա անձից անբաժանելի իրավունքների:

4. Կալանքի տակ չգտնվող մեղադրյալին վերաբերող ծանուցումները քրեական վարույթն իրականացնող մարմինը հանձնում է նրա օրինական ներկայացուցչին, իսկ անչափահասների համար մասնագիտացված հիմնարկում գտնվելու դեպքում՝ այդ հիմնարկի վարչակազմին:

5. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ օրինական ներկայացուցիչը կարող է ազատվել վարույթին մասնակցելուց, եթե ողջամիտ հիմքեր կան ենթադրելու, որ նրա վարքագիծը վնասում է անչափահասի շահերին կամ նա չարաշահում է իր դատավարական իրավունքները: Այդ դեպքում վարույթին անհապաղ մասնակից է դարձվում անչափահասի այլ օրինական ներկայացուցիչ:

Հոդված 456. Անչափահասի ձերբակալումը կամ կալանավորումը

1. Անչափահասի անձնական ազատության սահմանափակման մասին ցանկացած որոշում պետք է ընդունվի վարույթի բոլոր հանգամանքների մանրամասն քննարկումից հետո՝ սահմանափակումը հնարավորության սահմաններում նվազագույնի հասցնելու նպատակով:

2. Անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն նրան ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարում վերագրվելու դեպքում՝ որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակահատվածի համար:

3. Անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքն ընտրելու հարցը լուծելիս, յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկվի նրան հսկողության հանձնելու հնարավորությունը՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Անչափահասի ձերբակալման, կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին անհապաղ տեղեկացվում է նրա օրինական ներկայացուցիչը:

5. Անչափահասին ազատ արձակելու վերաբերյալ յուրաքանչյուր խնդրանք կամ հարց վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է քննարկվի և լուծվի անհապաղ:

Հոդված 457. Անչափահաս մեղադրյալի հարցաքննությունը

1. Անչափահաս մեղադրյալի հարցաքննությունը կատարվում է պաշտպանի մասնակցությամբ: Անչափահաս մեղադրյալի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նաև նրա օրինական ներկայացուցիչը:

2. Մինչև տասնվեց տարեկան կամ հոգեկան թերզարգացում ունեցող մեղադրյալի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի կամ հոգեբանի

մասնակցությամբ: Պաշտպանի միջնորդությամբ կամ քննիչի նախաձեռնությամբ մանկավարժ կամ հոգեբան կարող է ներգրավվել նաև տասնվեցից տասնութ տարեկան մեղադրյալի հարցաքննությանը:

3. Հարցաքննությունը սկսելուց առաջ տասնվեց տարին չլրացած մեղադրյալին քննիչը բացատրում է նրա լռելու իրավունքը և պարզաբանում, որ այդ իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա: Եթե տասնվեց տարին չլրացած մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության մասին, սակայն չի նախազգուշացնում ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին: Այդ փաստը հաստատվում է մեղադրյալի և նրա պաշտպանի ստորագրությամբ:

4. Հարցաքննությունը սկսելուց առաջ քննիչը մեղադրյալի օրինական ներկայացուցչին, մանկավարժին, հոգեբանին բացատրում է իր թույլտվությամբ մեղադրյալին հարցեր տալու, հարցաքննությունն ավարտվելուց հետո արձանագրության հետ ծանոթանալու, դրա ճշտության և լրիվության վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու իրավունքները, ինչպես նաև պարտականությունները, ինչի մասին նշում է արվում արձանագրության մեջ:

5. Քննիչն իրավունք ունի հանել հարցաքննության մասնակիցների կողմից անչափահաս մեղադրյալին տրված հարցերը, սակայն դրանք պետք է ներառվեն արձանագրության մեջ:

Հոդված 458. Քրեական հետապնդումը դադարեցնելը

1. Եթե մինչդատական վարույթում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի քննության ընթացքում պարզվում է, որ առաջին անգամ հանցանք կատարած անչափահաս մեղադրյալի ուղղմանը հնարավոր է հասնել առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, քննիչը դատախազի գրավոր համաձայնությամբ որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն է հարուցում, որը դատախազի կողմից վարույթի նյութերի հետ միասին ուղարկվում է դատարան:

2. Դատարանը միջնորդությունը և վարույթի նյութերը քննարկում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար նախատեսված ընթացակարգով:

3. Միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը որոշում է կայացնում անչափահասի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին: Դատարանը կարող է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել անչափահասների համար մասնագիտացված իրավասու մարմնին:

4. Միջնորդությունը մերժելու դեպքում դատարանը վերացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը և վարույթի նյութերը վերադարձնում է դատախազին՝ մինչդատական վարույթը վերսկսելու համար:

5. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքով քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում են անչափահաս մեղադրյալը կամ նրա օրինական ներկայացուցիչը:

Հոդված 459. Դատական վարույթի առնձնահատկությունները

1. Անչափահասի վերաբերյալ վարույթը դատարանում որպես կանոն անցկացվում է դռնփակ:

2. Դռնբաց դատական նիստ անցկացնելու դեպքում դատարանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել անչափահաս մեղադրյալի իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար:

3. Կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատարանը կարող է որոշում կայացնել անչափահաս մեղադրյալին դատական նիստի դահլիճից հեռացնելու մասին, եթե հետազոտման ենթակա հանգամանքները կարող են նրա վրա բացասական ազդեցություն ունենալ:

4. Դատական նիստի դահլիճ մեղադրյալի վերադառնալուց հետո նախագահողն անհրաժեշտ ծավալով և ձևով հայտնում է նրա բացակայությամբ կայացած դատաքննության բովանդակությունը և անչափահաս մեղադրյալին հնարավորություն ընձեռում հարցեր տալ իր բացակայությամբ հարցաքննված անձանց:

Հոդված 460. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը

1. Եթե մեղադրական եզրակացությամբ կամ մեղադրական ակտով դատարան ուղարկված վարույթի քննության արդյունքում պարզվում է, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատասխանատվության ենթարկվելու, դատարանը որոշում է կայացնում անչափահասի նկատմամբ քրեական հետանպնդումը դադարեցնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին:

2. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի պահանջների կատարումն ապահովելու նպատակով որոշումն ուղարկվում է կողմերին, ինչպես նաև անչափահասի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին:

Հոդված 461. Անչափահասի նկատմամբ դատավճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերը

1. Անչափահաս մեղադրյալի նկատմամբ դատավճիռ կայացնելիս դատարանը, ի թիվս սույն օրենսգրքի 374-րդ հոդվածով նախատեսված հարցերի, պետք է լուծի նաև ՀՀ քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածով նախատեսված դեպքերում մեղադրյալին պատժից ազատելու կամ նրա նկատմամբ ազատազրկման հետ չկապված պատիժ նշանակելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցերը, ինչպես նաև պետք է քննարկի հանցանքի կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները և դրանց վերացմանն ուղղված միջոցառումները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում դատարանը նշում է, թե անչափահասի վարքագծի նկատմամբ հսկողությունը մասնագիտացված որ իրավասու մարմնին է հանձնարարվում:

Հոդված 462. Ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելը

Եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթի արդյունքում պարզվում է, որ այդ հանցանքը կատարած անչափահասը կարող է ուղղվել առանց պատիժ նշանակելու, ապա դատարանն իրավունք ունի դատավճիռ կայացնելիս ՀՀ քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածի հիման վրա մեղադրյալին ազատել պատժից և նրան տեղավորել ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում:

ԳԼՈՒԽ 57
ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 463. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը

1. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթն իրականացվում է այն անձանց նկատմամբ, ովքեր ենթադրյալ հանցանքը կատարել են անմեղսունակության վիճակում և շարունակում են վտանգավոր լինել հասարակության համար:

2. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի կարգը որոշվում է սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

Հոդված 464. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթը

1. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթն իրականացվում է նախաքննության ձևով:

2. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ սկսելու պահից 24 ժամվա ընթացքում քննիչը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել այն անձին, ում նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, ինչպես նաև այդ անձի

ներկայացուցչին՝ պատշաճ կարգով նրանց ուղարկելով հասցեատիրոջ իրավունքների և պարտականությունների պարզաբանմամբ հուշաթերթիկ:

3. Քննչական գործողություններին կարող են մասնակցել այն անձը, ում նկատմամբ նախաձեռնվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրա հոգեկան վիճակը խոչընդոտում է մասնակցությանը, այդ անձի պաշտպանը, նրա օրինական ներկայացուցիչը:

4. Եթե անձը, ում նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պատճառով չի կարող մասնակցել վարույթին, քննիչն այդ մասին կազմում է արձանագրություն, որը դատախազի համաձայնությամբ ուղարկվում է դատարան՝ համապատասխան անձին անգործունակ ճանաչելու հարցը լուծելու համար:

Հոդված 465. Այն անձանց վերաբերյալ վարույթով բացահայտման ենթակա հանգամանքները, ում նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ

Անմեղսունակ անձանց վերաբերյալ վարույթով պետք է պարզվի՝

1) նրանց կողմից ենթադրյալ հանցանք կատարելու ժամանակը, տեղը, միջոցը և այլ հանգամանքները.

2) արարքը տվյալ անձի կողմից կատարելը.

3) տվյալ անձի մոտ մինչև արարքը կատարելը հոգեկան հիվանդության առկայությունը, հիվանդության աստիճանը և բնույթը արարքը կատարելու պահին, դրանից հետո, վարույթի ընթացքում.

4) տվյալ անձի վարքագիծն արարքը կատարելուց առաջ և հետո.

5) պատճառված վնասի չափը և բնույթը:

Հոդված 466. Վարույթն անջատելը

Եթե վարույթի ընթացքում պարզվի, որ հանցակիցներից որևէ մեկն արարքը կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, ապա նրա վերաբերյալ վարույթն անջատվում է:

Հոդված 467. Պաշտպանի մասնակցությունը

Պաշտպանի մասնակցությունը պարտադիր է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ սկսելու պահից:

Հոդված 468. Օրինական ներկայացուցիչը

Այն անձանց վարույթներով, ում նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, քննիչի կամ դատարանի որոշմամբ որպես օրինական ներկայացուցիչ կարող են մասնակցել մերձավոր ազգականները կամ այն բժշկական հաստատության ներկայացուցիչը, որտեղ գտնվում է անձը:

Հոդված 469. Այն անձի իրավունքները, ում նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ

Այն անձն, ում նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից՝ հաշվի առնելով նրա հիվանդության աստիճանը և բնույթը, ինչպես նաև սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

Հոդված 470. Անվտանգության միջոցները

1. Անմեղսունակության վիճակում ենթադրյալ հանցանք կատարած անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել խափանման միջոցներ: Անմեղսունակությունը պարզվելուց հետո կիրառված խափանման միջոցը ենթակա է անհապաղ վերացման:

2. Այդ անձանց նկատմամբ կարող են կիրառվել սույն օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցներ:

Հոդված 471. Մինչդատական վարույթի ավարտը

1. Վարույթն ավարտելու համար բավարար ապացույցների առկայության դեպքում կայացվում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար վարույթը դատարան ուղարկելու մասին.

2) վարույթը կարճելու մասին, եթե ենթադրյալ հանցանքն անմեղսունակության վիճակում կատարած անձը քննության պահին առողջացել է և չկա բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու կարիք.

3) ընդհանուր հիմքերով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

2. Ավարտելով վարույթը՝ քննիչն ավարտված վարույթի նյութերը ներկայացնում է տուժողին, նրա ներկայացուցչին, այն անձին, ում նկատմամբ իրականացվել է վարույթը, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված անձանց կողմից վարույթի նյութերին ծանոթանալու մասին կազմվում է արձանագրություն:

Հոդված 472. Դատախազի լիազորությունները բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթն ավարտելիս

Ավարտված վարույթի նյութերը բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար դատարան ուղարկելու մասին քննիչի որոշման հետ հանձնվում են դատախազին, ով՝

1) հաստատում է քննիչի որոշումը և վարույթն ուղարկում դատարան.

2) վարույթն ուղարկում է քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար.

3) կարճում է վարույթը և (կամ) դադարեցնում քրեական հետապնդումը:

Հոդված 473. Վարույթը դատարանում

1. Ապացույցների հետազոտությունը սկսվում է ենթադրյալ հանցանք կատարած անձի նկատմամբ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին դատախազի զեկույցով: Այնուհետև՝ դատարանը հետազոտում է կողմերի ներկայացրած ապացույցները և լսում այն անձին, ում նկատմամբ իրականացվում է վարույթը, նրա պաշտպանին և օրինական ներկայացուցչին, ինչպես նաև դատախազի կարծիքը:

2. Դատական նիստին կարող է հրավիրվել փորձագետ:

3. Այնուհետև, որոշում կայացնելու համար դատարանը հեռանում է առանձին սենյակ:

Հոդված 474. Որոշում կայացնելիս դատարանի կողմից քննարկվող հարցերը

Որոշում կայացնելիս դատարանը պետք է լուծի հետևյալ հարցերը՝

1) կատարվել է արդյոք հանրորեն վտանգավոր արարք.

2) արարքը կատարել է արդյոք այն անձը, ում նկատմամբ իրականացվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ.

3) արարքը կատարվել է արդյոք անմեղսունակության վիճակում, անձը գտնվում է արդյոք տվյալ վիճակում դատաքննության պահին.

4) արդյոք անձը կարիք ունի իր նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու և հատկապես ինչպիսի միջոցներ:

Հոդված 475. Որոշում կայացնելը

1. Անձի կողմից ենթադրյալ հանցանքն անմեղսունակության վիճակում կատարելն ապացուցված համարելով՝ դատարանը որոշում է կայացնում անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին:

2. Եթե անձը հասարակության համար մեծ վտանգ չի ներկայացնում և կարիք չունի իր նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման, դատարանը կայացնում է վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Այս դեպքում դատարանը կարող է այդ անձին հանձնել նրա մերձավոր ազգականների խնամքին կամ նրա բնակության վայրին հնարավորին մոտ հոգեբուժական հաստատության հսկողությանը:

3. Եթե արարքը կատարելու պահին անձը գտնվել է անմեղսունակության վիճակում, իսկ դատաքննության պահին առողջացել է, դատարանը նույնպես որոշում է կայացնում վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

4. Եթե դատաքննության ընթացքում չի հաստատվում այն անձի հոգեկան հիվանդությունը, ում նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցի կիրառման վարույթը կամ այդ անձի հիվանդությունը արգելք չէ նրա նկատմամբ պատիժ նշանակելու համար, դատարանն իր որոշմամբ վարույթն ուղարկում է դատախազին:

Հոդված 476. Բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելը կամ փոփոխելը

1. Եթե անձի առողջական վիճակի բարելավումից կամ լրիվ առողջանալուց հետո վերանում է բժշկական բնույթի հարկադրական միջոցի հետագա կիրառման անհրաժեշտությունը, դատարանը, բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, առողջապահության մարմնի միջնորդությամբ քննում է բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու կամ փոխելու հարցը:

2. Բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու կամ փոխելու մասին միջնորդություն կարող են հարուցել մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչները և այլ շահագրգիռ անձինք:

3. Բոլոր հարցերը լուծում է բժշկական բնույթի հարկադրական միջոցի կիրառման վայրի դատարանը՝ դատախազի և այն անձի պարտադիր մասնակցությամբ, ում միջնորդությամբ որոշվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու կամ փոխելու հարցը:

4. Դատարանի կողմից բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու կամ փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու դեպքում այն կրկին անգամ կարող է ներկայացվել միջնորդությունը մերժելու մասին որոշում կայացնելու պահից երեք ամիս հետո:

ԳԼՈՒԽ 58

ԴԵՊՔԻՑ ՀԵՏՈ ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՀԻՎԱՆԴԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 477. Մինչդատական վարույթը

1. Դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի կարգը որոշվում է սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված կատեգորիայի անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթն իրականացվում է նախաքննության ձևով:

3. Վարույթին կարող են մասնակցել դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձը, նրա պաշտպանը, օրինական ներկայացուցիչը:

4. Եթե հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձն առողջական վիճակի պատճառով չի կարող մասնակցել վարույթին, քննիչն այդ մասին կազմում է արձանագրություն՝ ղեկավարվելով սույն օրենսգրքի 231-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) կասեցնել վարույթը և նյութերն ուղարկել դատախազին՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար վարույթը դատարան ուղարկելու մասին հարցը լուծելու.

2) կարճել վարույթը և (կամ) դատախազին միջնորդություն ներկայացնել քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

6. Ստանալով սույն հոդվածի 4-րդ մասում նշված նյութերը՝ դատախազն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) հաստատում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար վարույթի նյութերը դատարան ուղարկելու մասին քննիչի որոշումը.

2) վարույթի նյութերը վերադարձնում է քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար.

3) կարճում է վարույթը և (կամ) դադարեցնում քրեական հետապնդումը:

Հոդված 478. Պաշտպանի մասնակցությունը

Պաշտպանի մասնակցությունը վարույթին պարտադիր է հոգեկան խանգարման փաստը հաստատվելու պահից, եթե նա մինչ այդ չի մասնակցել վարույթին:

Հոդված 479. Վարույթն անջատելը

Եթե վարույթի ընթացքում պարզվի, որ հանցակիցներից մեկը հանցանքը կատարելուց հետո ստացել է հոգեկան խանգարում, ապա նրա նկատմամբ վարույթը կարող է անջատվել:

Հոդված 480. Խափանման միջոցները

1. Հանցանքը կատարելուց հետո հոգեկան խանգարում ստացած անձի նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց, եթե դրան չի խոչընդոտում նրա առողջական վիճակը: Եթե տվյալ անձը գտնվում է արգելանքի տակ, նա պետք է գտնվի հատուկ բժշկական հաստատություններում՝ բժշկական վերահսկողության տակ:

2. Եթե հոգեկան խանգարում ստացած անձի նկատմամբ առողջական վիճակի պատճառով չի կարող կիրառվել խափանման միջոց, նրա նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցները:

Հոդված 481. Մեղադրանք առաջադրելը

1. Հանցանք կատարելու մեջ մեղադրանք առաջադրելու համար հիմք տվող բավարար ապացույցների առկայության դեպքում քննիչի միջնորդության հիման վրա դատախազը պատճառաբանված որոշում է կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2. Որոշումը կարող է ներկայացվել անձին, եթե դրան չի խոչընդոտում նրա առողջական վիճակը: Որոշմանը ծանոթացնելու անհնարինության դեպքում կազմվում է արձանագրություն: Որոշմանը ծանոթացվում են պաշտպանը, ինչպես նաև մեղադրյալի օրինական ներկայացուցիչը:

Հոդված 482. Վարույթը դատարանում

1. Դատաքննությանը դատախազի և պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: Դատական նիստին կարող է հրավիրվել փորձագետ:

2. Ապացույցների հետազոտումը սկսվում է քննիչի որոշումը հրապարակելով:

3. Ապացույցների հետազոտումից հետո ճառով հանդես է գալիս դատախազը, լսվում է պաշտպանի կարծիքը:

4. Այնուհետև դատարանը որոշում կայացնելու համար հեռանում է առանձին սենյակ, որտեղ պետք է լուծվեն հետևյալ հարցերը՝

1) կատարվել է արդյոք արարքը.

2) արարքը պարունակում է արդյոք հանցակազմ.

3) այդ արարքը կատարել է արդյոք մեղադրյալը.

4) հիվանդացել է արդյոք անձը հոգեկան հիվանդությամբ, ինչպիսին է դրա բնույթը, երբ է սկսվել հիվանդագին վիճակը.

5) կարիք ունի արդյոք անձը բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման և ինչպիսի միջոցների:

5. Եթե հոգեկան հիվանդությունը վրա է հասել դատաքննության ընթացքում, դատարանը պետք է լուծի նաև վարույթը հետաձգելու հարցը:

Հոդված 483. Բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելը և փոխելը

1. Եթե անձի առողջական վիճակը բարելավվելուց կամ լրիվ առողջանալուց հետո վերանում է բժշկական բնույթի հարկադրական միջոցի հետագա կիրառման անհրաժեշտությունը, դատարանը, բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, առողջապահության մարմնի միջնորդությամբ քննում է բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու կամ փոխելու հարցը:

2. Բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու կամ փոխելու մասին միջնորդություն կարող են հարուցել մերձավոր ազգականները և այլ շահագրգիռ անձինք:

3. Բոլոր հարցերը լուծում է այն բժշկական հաստատության գտնվելու վայրի դատարանը, որտեղ կիրառվում են բժշկական բնույթի հարկադրական միջոցները:

Հոդված 484. Վարույթը վերսկսելը

1. Եթե դատարանը գտնում է, որ անձը, ում նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց, առողջացել է, ապա բժշկական եզրակացության հիման վրա որոշում է կայացնում բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու մասին և լուծում է նախաքննություն կամ դատաքննություն կատարելու համար վարույթն ուղարկելու հարցը:

2. Բժշկական հաստատությունում գտնվելու ժամանակը մտնում է արգելանքի տակ պահելու ժամկետի մեջ:

ԳԼՈՒԽ 59
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 485. Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց գտնվելը Հայաստանի Հանրապետության իրավասության ներքո

Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք կարող են գտնվել Հայաստանի Հանրապետության իրավասության ներքո այն դեպքում, երբ համապատասխան օտարերկրյա պետությունը կամ միջազգային կազմակերպությունը դրա առնչությամբ կտա հստակ համաձայնություն:

Հոդված 486. Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք

Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվում են հետևյալ անձինք՝

1) օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները, այդ ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամները և նրանց ընտանիքների համատեղ բնակվող անդամները, եթե նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն.

2) փոխադարձության սկզբունքի հիման վրա դիվանագիտական ներկայացուցչությունների վարչական-տեխնիկական անձնակազմի աշխատակիցները և նրանց ընտանիքների համատեղ բնակվող անդամները, եթե

նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում.

3) փոխադարձության սկզբունքի հիման վրա դիվանագիտական ներկայացուցչության սպասարկող անձնակազմի աշխատակիցները, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում.

4) դիվանագիտական սուրհանդակները.

5) հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք.

6) օտարերկրյա պետության ներկայացուցիչները, խորհրդարանական և կառավարական պատվիրակությունների անդամները և փոխադարձության սկզբունքի հիմքով օտարերկրյա պետության այն պատվիրակությունների անդամները, որոնք ժամանել են միջազգային բանակցությունների, միջազգային վեհաժողովների և խորհրդակցությունների կամ այլ պաշտոնական հանձնարարություններով կամ նույն նպատակներով Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում են տարանցիկ, նշված անձանց ընտանիքի անդամները, որոնք ուղեկցում են նրանց և Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն.

7) միջազգային կազմակերպություններում օտարերկրյա պետության ներկայացուցչությունների ղեկավարները, անդամները և անձնակազմը, դրանց պաշտոնատար անձինք, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում են միջազգային համաձայնագրերի կամ միջազգային հանրաճանաչ սովորույթների ուժով.

8) երրորդ պետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները, օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում են տարանցիկ, և նրանց ընտանիքի անդամները, որոնք ուղեկցում են նշված անձանց կամ ճանապարհորդում են առանձին՝ նրանց միանալու կամ իրենց պետություն վերադառնալու նպատակով:

Հոդված 487. Անձնական անձեռնմխելիությունը

1. Սույն օրենսգրքի 486-րդ հոդվածում թվարկված անձինք օգտվում են անձնական անձեռնմխելիության իրավունքից: Նրանք չեն կարող ձերբակալվել կամ կալանավորվել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է նրանց նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարման համար:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց ձերբակալած կամ կալանավորած մարմինը պարտավոր է հեռախոսագրով, հեռագրով կամ այլ միջոցներով այդ մասին անհապաղ տեղեկացնել համապատասխան պետության արտաքին գործերի նախարարությանը:

Հոդված 488. Քրեական հետապնդման անձեռնմխելիությունը

1. Սույն օրենսգրքի 486-րդ հոդվածում թվարկված անձինք Հայաստանի Հանրապետությունում օգտվում են քրեական հետապնդման անձեռնմխելիությունից: Այդպիսի անձանց որպես մեղադրյալ ներգրավելու հարցը լուծվում է դիվանագիտական ճանապարհով:

2. Դիվանագիտական ներկայացուցչությունը սպասարկող անձնակազմի աշխատակիցները, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում, հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք Հայաստանի Հանրապետությունում օգտվում են քրեական հետապնդման անձեռնմխելիությունից միայն իրենց գործունեության ոլորտում ծառայողական պարտականությունները կատարելիս:

Հոդված 489. Առավելությունը ցուցմունք տալուց

1. Սույն օրենսգրքի 486-րդ հոդվածում թվարկված անձինք կարող են ցուցմունքներ չտալ որպես վկա կամ տուժող, իսկ ցուցմունքներ տալու համաձայնության դեպքում՝ պարտավոր չեն դրա համար ներկայանալ քննիչին կամ դատարան:

2. Երբ տվյալ անձինք նախաքննության ընթացքում ցուցմունքներ են տվել որպես վկա, տուժող, իսկ դատաքննության չեն ներկայացել, դատարանը կարող է հրապարակել նրանց ցուցմունքները:

3. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք չեն կարող հրաժարվել որպես վկաներ կամ տուժողներ ցուցմունքներ տալուց՝ բացառությամբ իրենց ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված հարցերի վերաբերյալ ցուցմունքներ տալու դեպքերի: Հյուպատոսական հիմնարկների պաշտոնատար անձանց կողմից ցուցմունքներ տալուց հրաժարվելու դեպքում նրանց նկատմամբ չեն կարող կիրառվել հարկադրանքի միջոցներ:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված համաձայնությունը ստանալու դեպքում, համապատասխան անձանց հանձնված կանչ-ծանուցագրում չպետք է բովանդակվի նշում ցուցմունք տալու համար հարցաքննության չներկայանալու դեպքում հարկադրանքի միջոցների կիրառման մասին:

5. Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք պարտավոր չեն քննիչին, դատախազին կամ դատարան ներկայացնել իրենց ծառայողական պարտականությունների կատարմանն առնչվող թղթակցություններ կամ այլ փաստաթղթեր:

Հոդված 490. Շինությունների և փաստաթղթերի անձեռնմխելիությունը

1. Դիվանագիտական ներկայացուցչության զբաղեցրած շենքը, դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի նստավայրը, դիվանագիտական անձնակազմի անդամների բնակելի շինությունները, նրանց գույքը և փոխադրամիջոցներն անձեռնմխելի են: Այդ շինություններ մուտք գործել, ինչպես նաև խուզարկություն, առգրավում, գույքի վրա կալանք դնել կարող է կատարվել միայն դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի կամ այդ պաշտոնը զբաղեցնող անձի համաձայնությամբ:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավունքները փոխադարձության սկզբունքի հիման վրա տարածվում են դիվանագիտական ներկայացուցչության վարչական-տեխնիկական անձնակազմի աշխատակիցների և

նրանց ընտանիքների համատեղ բնակվող անդամների զբաղեցրած բնակելի շինությունների վրա, եթե նշված անձինք և նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում:

3. Հյուպատոսական հիմնարկների զբաղեցրած շենքը և հյուպատոսական հիմնարկների ղեկավարների նստավայրը փոխադարձության սկզբունքի հիման վրա անձեռնմխելի են: Այդ շինություններ մուտք գործելը, ինչպես նաև խուզարկություն, առգրավում, գույքի վրա կալանք դնել կարող են կատարվել միայն դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկների ղեկավարների խնդրանքով կամ համաձայնությամբ:

4. Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների արխիվը, փաստաթղթերը, պաշտոնական գրությունները անձեռնմխելի են: Դիվանագիտական փոստը չի կարող բացվել և վերցվել:

5. Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ղեկավարների համաձայնությունը սույն հոդվածի առաջին, երկրորդ և երրորդ մասերով նախատեսված դեպքերում վարույթն իրականացնող մարմինները ստանում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով:

6. Վերոհիշյալ շինություններում խուզարկությունը, առգրավումը և կալանավորումը պարտադիր կատարվում են դատախազի և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացուցչի ներկայությամբ:

ԲԱԺԻՆ 15

ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 60

ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 491. Մասնավոր մեղադրանքով վարույթի սկիզբը

1. Մասնավոր մեղադրանքով վարույթը կարող է սկսվել այն դեպքում, եթե այն անձը, ով բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով, 116-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով, 118-րդ հոդվածով, 128-րդ հոդվածի 1-ին մասով, 158-րդ հոդվածի 1-ին մասով, 174-րդ հոդվածով 186-րդ հոդվածի 1-ին մասով, 197-րդ հոդվածով, 213-րդ հոդվածի 1-ին մասով կամ 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներով իրեն պատճառվել է վնաս, բողոք է ներկայացնում դատարան:

2. Բողոքը կարող է ներկայացնել միայն սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը:

3. Բողոքը պետք է բովանդակի՝

1) սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի անունը, ազգանունը և բնակության վայրը.

2) այն անձի անունը, ազգանունը և բնակության վայրը, որի դեմ ներկայացվել է բողոքը.

3) մեղադրանքի բովանդակությունը.

4) այն անձանց անունները, ազգանուններն ու բնակության վայրերը, որոնք պետք է կանչվեն դատական նիստին.

5) մեղադրանքը հիմնավորող նյութերը:

4. Դատախազը կարող է, անկախ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի բողոքից, սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով սկսել քրեական վարույթ, եթե բողոք բերող անձն իր անօգնական վիճակի կամ այն անձից, ում դեմ բողոք է ներկայացրել, կախվածության մեջ գտնվելու պատճառով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական վարույթն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով: Այս վարույթները չեն կարճվում բողոք բերած անձի և այն անձի, ում դեմ բողոք է ներկայացվել, հաշտության դեպքում:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձը բողոքը ներկայացնում է այն անձի բնակության վայրի առաջին ատյանի դատարան, ում դեմ բողոք է ներկայացնում:

6.Մասնավոր մեղադրանքով մինչդատական վարույթ չի իրականացվում:

Հոդված 492. Քրեական վարույթը սկսելուց առաջ դատարանի գործողությունները

1. Բողոքը ստանալուց հետո դատավորը ստուգում է՝ արդյոք պահպանվել են 491-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ բողոքին ներկայացվող պահանջները, արդյոք բողոքում ճիշտ է նշված քրեական օրենսգրքի հոդվածը և հոդվածի մասը, որով կարող է սկսվել մասնավոր մեղադրանքով քրեական վարույթը, արդյոք չի լրացել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը և 5-օրյա ժամկետում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) քրեական վարույթ սկսելու մասին.

2) քրեական վարույթ սկսելը մերժելու մասին.

3) նյութերն ըստ ընդդատության ուղարկելու մասին:

2. Քրեական վարույթը սկսելու մասին որոշում կայացնելու պահից այն անձը, որի դեմ բողոք է ներկայացվել, ձեռք է բերում մեղադրյալի կարգավիճակ, իսկ այն անձը, որը բողոք է ներկայացրել, ճանաչվում է տուժող:

3. Քրեական վարույթը սկսելու մասին դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Հոդված 493. Քրեական վարույթը սկսելու մասին որոշումը

1. Քրեական վարույթը սկսելու մասին որոշման մեջ նշվում են՝

1) տուժողի անունը, ազգանունը և բնակության վայրը.

2) մեղադրյալի անունը, ազգանունը և բնակության վայրը.

3) մասնավոր մեղադրանքի բովանդակությունը.

4) հանցագործության որակումը.

5) տուժողի ներկայացրած նյութերը.

6) նախնական դատական նիստի օրը և ժամը:

2. Որոշման պատճենն ուղարկվում է տուժողին և մեղադրյալին, և նրանք պատշաճ ծանուցվում են նախնական դատական նիստի վայրի և ժամանակի մասին: Մեղադրյալը և նրա պաշտպանը իրավունք ունեն մինչև նախնական

դատական նիստի օրը ծանոթանալու բողոքին կցված նյութերին, որի մասին նշվում է որոշման մեջ:

Հոդված 494. Մասնավոր մեղադրանքի գործը դատաքննության համար նախապատրաստելը

1. Դատարանը վարույթը դատաքննության նախապատրաստելիս որոշմամբ սահմանված օրը և ժամին հրավիրում է նախնական դատալսումներ: Դատարանը նախնական դատալսումներում՝

1) տուժողին և մեղադրյալին պարզաբանում է նրանց իրավունքներն ու պարտականությունները.

2) միջոցներ է ձեռնարկում տուժողի և մեղադրյալի հաշտության համար: Եթե նրանք չեն հաշտվում, ապա դատավորը նրանց պարզաբանում է, թե ինչ ապացույցներ նրանք պետք է ներկայացնեն դատարանին, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները.

3) կողմերի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ լուծում է փորձաքննություն նշանակելու կամ այլ քննչական գործողություններ կատարելու, փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու հարցերը:

2. Նախնական դատալսումներն արձանագրվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

3. Եթե կողմերը հաշտվում են, դատավորը կազմում է արձանագրություն, որը ստորագրվում է տուժողի և մեղադրյալի կողմից:

4. Եթե կողմերը չեն հաշտվում, դատավորը որոշում է կայացնում դատաքննություն նշանակելու մասին:

Հոդված 495. Դատաքննություն նշանակելուց հետո դատարանի գործողությունները

1. Դատաքննություն նշանակելու մասին որոշման մեջ դատավորը սահմանում է քրեական գործի քննության ժամանակը և վայրը, ինչպես նաև՝

1) դատական նիստում հետազոտման ենթակա նյութերը.

2) վկաները, որոնք պետք է ներկայանան դատական նիստին.

3) մեղադրյալին և տուժողին տեղեկացնում իրենց իրավունքների և պարտականությունների, այդ թվում՝ բողոքին կցված նյութերին ծանոթանալու իրավունքի մասին.

4) կողմերին ծանուցում է բողոքի քննության ժամանակի և վայրի մասին.

5) դատական նիստին հրավիրում մեղադրյալին և անհրաժեշտության դեպքում վկաներին, փորձագետին և այլ անձանց:

2. Եթե մինչև դատաքննությունը սկսելը մեղադրյալը տուժողի նկատմամբ բողոք է ներկայացնում դատարան, երկու մեղադրանքները կարող են միավորվել և քննվել մեկ վարույթում: Այդ դեպքում տուժողներից յուրաքանչյուրը միաժամանակ հանդիսանում է նաև մեղադրյալ և ունի ինչպես տուժողի, այնպես էլ մեղադրյալի իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 496. Մասնավոր մեղադրանքի վարույթներով դատաքննության կարգը

1. Մասնավոր մեղադրանքի վարույթն իրականացվում է միանձնյա սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով՝ սույն հոդվածով սահմանված նորմերի պահպանմամբ: Դատարանը վարույթն իրականացնում է միայն բողոքում նշված մեղադրանքի սահմաններում:

2. Մասնավոր մեղադրանքի վարույթով դատաքննության ժամանակ որպես մեղադրող հանդես է գալիս տուժողը, ով պարտավոր է ապացուցել բողոքում շարադրված մեղադրանքը: Որպես մեղադրող՝ տուժողն ունի սույն օրենսգրքով մեղադրողի համար նախատեսված իրավունքները, բացառությամբ դատարանին ապացույցներ ներկայացնելն ապահովելու համար հետաքննության մարմնին պարտադիր հանձնարարություններ տալու իրավունքի, և կրում նրա համար սահմանված պարտականությունները:

3. Դատախազի մասնակցությունը պարտադիր չէ, բացառությամբ 490-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Եթե տուժողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը կրկին անգամ առանց հարգելի պատճառի չեն ներկայացել դատական նիստին, դատարանը որոշում է կայացնում քրեական վարույթը կարճելու մասին:

5. Եթե մեղադրյալը առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին, ապա դատարանը կարող է հետաձգել դատական նիստը, և նրա նկատմամբ սույն օրենսգրքով սահմանված կարգով ընդունել դատարան ներկայացնելու կարգադրագիր:

6. Եթե մեղադրյալը ներկայացրել է իր գրավոր բացատրությունները և միջնորդել դատաքննությունը անցկացնել առանց իր մասնակցության, տուժողի կարծիքը լսելուց հետո դատարանը կարող է շարունակել դատաքննությունը:

7. Մինչև դատաքննությունը սկսելը դատավորը տուժողին պարզաբանում է մեղադրանքը պաշտպանելու կամ մեղադրյալի հետ հաշտվելու նրա իրավունքը:

8. Դատաքննության սկսվում է տուժողի կողմից իր բողոքի ներկայացմամբ: Այնուհետև դատավորը մեղադրյալին հարցնում է՝ արդյոք նրան հասկանալի է մեղադրանքը և արդյոք նա իրեն մեղավոր ճանաչում է: Տուժողը դատարանին կարող է միջնորդություն ներկայացնել որոշակի անձանց դատարան կանչելու և անհրաժեշտ նյութեր պահանջելու մասին, եթե դրա համար անհրաժեշտ է պետական մարմնի պաշտոնատար անձի աջակցությունը:

9. Եթե հաշտությունը տեղի է ունենում մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը, քրեական վարույթը կարճվում է:

10. Մինչև դատավորի հեռանալն անձն իրավունք ունի հրաժարվել մասնավոր մեղադրանքից:

Հոդված 497. Մասնավոր մեղադրանքի գործով քրեական վարույթը դատական նիստի ընթացքում կարճելը

1. Մասնավոր մեղադրանքի գործով քրեական վարույթը կարող է կարճվել դատաքննության փուլում, եթե՝

1) տուժողը հրաժարվել է մասնավոր մեղադրանքից.

2) տուժողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը առանց հարգելի պատճառի կրկին անգամ չեն ներկայացել դատական նիստին.

3) տուժողը և մեղադրյալը հաշտվել են:

2. Մասնավոր մեղադրանքի գործերի վրա տարածվում են նաև սույն օրենսգրքով նախատեսված քրեական վարույթը կարճելու այլ հիմքերը:

Հոդված 498. Դատավճիռը մասնավոր մեղադրանքի գործով

1. Մասնավոր մեղադրանքի գործով կայացվում է միասնական դատավճիռ՝ առանց վերդիկտի: Դատավճռի պատճենը եռօրյա ժամկետում ուղարկվում է կողմերին, ինչպես նաև դատախազություն:

2. Մասնավոր մեղադրանքի գործով դատավճիռը բողոքարկվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

ԳԼՈՒԽ 61

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Հոդված499. Համաձայնեցման վարույթ կիրառելու հիմքերը

1. Դատարանը համաձայնեցման վարույթի կարգով քննություն իրականացնում է մեղադրյալի հարուցած միջնորդության հիման վրա ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ վարույթով:

2. Համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել եթե՝

1) մեղադրյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու.

2) համաձայնեման վարույթ կիրառելու դեմ առարկում է մեղադրողը.

3) վարույթում ներգրավված մի քանի մեղադրյալներից թեկուզ մեկն առարկում է համաձայնեցման վարութ կիրառելու դեմ.

4) առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ և համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը:

Հոդված 500. Համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդության լուծումը

1. Համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը քննվում և լուծվում է սույն օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

2. Դատարանը բավարարում է համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 499-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանքները, ինչպես նաև եթե մեղադրյալը միջնորդությունը ներկայացրել է կամավոր և գիտակցում է իր միջնորդության բնույթը և հետևանքները:

3. Մեղադրյալի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը համաձայնության կայացման համար սահմանում է առնվազն երկշաբաթյա ժամկետ:

4. Դատարանը համաձայնեցման վարույթ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը մերժելու դեպքում կայացնում է որոշում:

5. Եթե դատարանը մերժում է համաձայնեցման վարույթ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը, նախնական դատալսումները շարունակվում են ընդհանուր կարգով:

Հոդված 501. Համաձայնության վերաբերյալ բանակցությունները

1. Համաձայնեցման վարույթ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը բավարարելուց հետո դատախազը համաձայնության գալու նպատակով բանակցություններ է սկսում մեղադրյալի և նրա պաշտպանի հետ:

2. Այն դեպքում, երբ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ, սակայն տուժողը չի առարկել համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ, դատախազը տուժողի համաձայնությամբ նրան ներգրավում է բանակցություններին:

Տուժողը մասնակցում է միայն հանցագործությամբ պատճառված վնասի բնույթի և չափի վերաբերյալ համաձայնության կայացմանը:

3. Հանցագործության իրավական գնահատականի, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասի բնույթի և չափի վերաբերյալ համաձայնություն կայացնելուց հետո կողմերը բանակցություններ են սկսում պատժատեսակի և պատժաչափի վերաբերյալ:

4. Ամեն դեպքում համաձայնության արդյունքում չի կարող սահմանվել այնպիսի պատժաչափ, որը կգերազանցի տվյալ հանցագործության համար սահմանված առավելագույն պատժի կեսը:

5. Արարքի իրավական գնահատականի, հանցագործությամբ պատճառված վնասի չափի, պատժատեսակի կամ պատժաչափի վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում վարույթի քննությունը շարունակվում է ընդհանուր կարգով:

6. Բանակցությունների արդյունքում կազմվում է համաձայնության մասին արձանագրություն, որտեղ նշվում է՝

1) համաձայնության մասին արձանագրությունը կազմելու տեղը և ժամանակը.

2) մեղադրողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

3) մեղադրյալի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվականը, ամիսը, օրը և ծննդավայրը, բնակության հասցեն, քաղաքացիությունը, կրթությունը, մայրենի լեզուն, աշխատանքի կամ ուսման վայրը, մեղադրյալի մոտ դատվածության առկայությունը, ինչպես նաև մեղադրյալի անձին վերաբերող տեղեկություններ, որոնք կարող են վարույթի համար նշանակություն ունենալ.

4) պաշտպանի անունը և ազգանունը.

5) տուժողի անունը և ազգանունը, եթե տուժողը մասնակցել է համաձայնության կայացմանը.

6) մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը և դրա կիրառման ժամկետը.

7) հանցագործության փաստական հանգամանքները, դրա իրավական գնահատականը.

8) հանցագործությամբ պատճառած վնասի բնույթը և չափը.

9) համաձայնեցված պատժատեսակը և պատժաչափը:

7. Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու դեպքում նշվում է յուրաքանչյուր հանցագործության համար նշանակվող պատժի տեսակը և չափը, ինչպես նաև վերջնական պատժի տեսակը և չափը:

8. Համաձայնությունը համարվում է կայացված մեղադրյալի, նրա պաշտպանի, մեղադրողի և տուժողի, եթե վերջինս մասնակցել է համաձայնության կայացմանը, կողմից համաձայնության մասին արձանագրությունը ստորագրելու պահից:

Եթե վարույթին ներգրավված է մի քանի մեղադրյալ, համաձայնությունը համարվում է կայացված բոլոր մեղադրյալների, նրանց պաշտպանների և մեղադրողի կողմից համաձայնության մասին արձանագրությունը ստորագրելու պահից:

9. Համաձայնության մասին արձանագրության մեկական օրինակ մեղադրողը հանձնում է մեղադրյալին, նրա պաշտպանին և տուժողին:

Հոդված 502. Համաձայնեցման մասին արձանագրությունը ստանալուց հետո դատարանի կողմից կայացվող որոշումները

1. Համաձայնության մասին արձանագրությունը ստանալուց հետո դատարանը, սույն օրենսգրքի 346-րդ հոդվածով սահմանված կարգով, որոշում է կայացնում դատաքննություն նշանակելու մասին:

2. Եթե դատարանը գալիս է հետևության, որ արարքի իրավական գնահատականի, հանցագործությամբ պատճառված վնասի չափի վերաբերյալ կայացված համաձայնությունն ակնհայտոր չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին կամ համաձայնեցված պատժատեսակը կամ պատժաչափը անօրինական է՝

1) որոշում է կայացնում համաձայնության մասին արձանագրությունը մեղադրողին վերադարձնելու մասին՝ սահմանելով ժամկետ նոր արձանագրություն կազմելու և դատարան ներկայացնելու համար, կամ

2) որոշում է կայացնում ընդհանուր կարգով դատական քննություն անցկացնելու մասին:

Հոդված 503. Համաձայնեցման վարույթով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը

1. Համաձայնեցման վարույթով դատական քննությունն իրականացվում է մեղադրյալի, նրա պաշտպանի, մեղադրողի և տուժողի, եթե վերջինս մասնակցել է համաձայնության կայացմանը, պարտադիր մասնակցությամբ:

2. Համաձայնեցման վարույթով դատական քննությունը սկսվում է մեղադրողի կողմից համաձայնության մասին արձանագրության հրապարակմամբ:

3. Համաձայնության մասին արձանագրության հրապարակումից հետո դատարանը մեղադրյալին հարցնում է, թե նրան արդյոք պարզ է կայացված համաձայնության բովանդակությունը և արդյոք նա համաձայն է դրա հետ: Այնուհետև դատարանն առաջարկում է մեղադրյալին ներկայացնել համաձայնության կայացման ընթացքը և պարզում է՝ արդյոք մեղադրյալն արտահայտել է իր իրական կամքը, գիտակցում է համաձայնեցման վարույթի կիրառման հետևանքները և պնդում է արդյոք կայացված համաձայնությունը:

4. Դատարանը պաշտպանին և մեղադրողին հարցնում է նրանց վերաբերմունքը կայացված համաձայնության վերաբերյալ և արդյոք նրանք պնդում են այն:

5. Դատարանը տուժողին հարցնում է նրա վերաբերմունքը հանցագործությամբ պատճառված վնասի չափի մասով կայացված համաձայնության վերավերյալ և արդյոք նա պնդում է այն:

6. Եթե հարուցված է նաև գույքային հայց և մեղադրյալն ընդունում է այն, ապա դատարանը պետք է պարզի, թե արդյոք հայցի ընդունումը կամավոր է, և արդյոք այն վերաբերում է այլ անձանց իրավունքներին: Դատարանը, գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ տուժողին բացատրելով քաղաքացիական դավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը:

Այն դեպքում, երբ մեղադրյալը կամ գույքային պատասխանողը հայցը չի ընդունում, ապա դատարանը գույքային հայցը թողնում է առանց քննության՝ տուժողին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը:

7. Համաձայնության մասին արձանագրությունը հետազոտելուց հետո դատարանը հեռանում է առանձին սենյակ՝ նախապես հայտարարելով դատավճռի կայացման վայրը, օրը և ժամը:

Հոդված 504. Համաձայնեցման վարույթի արդյունքում կայացվող դատավճիռը

1. Համաձայնեցման վարույթի արդյունքում դատարանը կայացնում է դատավճիռ սույն օրենսգրքի 371-390-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Եթե բացակայում են մեղադրյալի մեղավորության վերաբերյալ կասկածները և սույն օրենսգրքի 153-րդ հոդվածներով նախատեսված՝ քրեական հետապնդումը կամ վարույթը բացառող հանգամանքները, դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ:

3. Մեղադրական դատավճիռը պետք է պարունակի համաձայնության մասին արձանագրության տեքստի բառացի շարադրանքը:

4. Մեղադրական դատավճռով դատարանը չի կարող նշանակել ավելի խիստ պատժատեսակ կամ պատժաչափ, քան նախատեսված է համաձայնության մասին արձանագրությամբ:

5. Եթե առկա է նաև գույքային հայց և մեղադրյալը կամ գույքային պատասխանողը սույն գլխով սահմանված կարգով ընդունել է այն, ապա դատարանը դատավճռով բավարարում է նաև գույքային հայց, եթե այն չի հակասում օրենքին:

6. Դատավճիռը հրապարակելուց հետո դատավորը կողմերին պարզաբանում է դատավճիռը բողոքարկելու՝ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքը և կարգը:

7. Սույն օրենսգրքի 165-րդ հոդվածով նախատեսված վարութային ծախսերը մեղադրյալից ենթակա չեն բռնագանձման:

Հոդված 505. Դատավճռի բողոքարկման սահմանները

Սույն օրենսգրքի 504-րդ հոդվածին համապատասխան կայացված դատավճիռը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենսգրքի 413-րդ և 417-րդ հոդվածներով նախատեսված հիմքերի:

ԳԼՈՒԽ 62

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹ)

Հոդված 506. Համագործակցության վարույթ կիրառելու հիմքը

1. Համագործակցության վարույթը կարող է նախաձեռնվել միայն մեղադրյալի կողմից համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն ներկայացնելու դեպքում:

2. Միջնորդությունը հասցեագրվում է նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին և պետք է ստորագրված լինի մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից:

Հոդված 507. Համագործակցության վարույթ կիրառելու միջնորդության ներկայացնելու կարգը

1. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու միջնորդությունը կարող է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մինչև նախաքննությունն ավարտելու մասին հայտարարելը:

2. Միջնորդության մեջ նշվում է, թե ինչում է արտահայտվելու քննության հետ մեղադրյալի համագործակցելու էությունը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել հանցագործությունը բացահայտելուն կամ քննելուն կամ մյուս հանցակիցներին մերկացնելուն կամ հանցագործությամբ ձեռք բերված գույքը հայտնաբերելուն աջակցելու նպատակով:

3. Միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից դատախազին հանձնվում է քննիչի միջոցով: Եթե մեղադրյալը միջնորդությունը ներկայացնելու պահին չունի հրավիրված կամ նշանակված պաշտպան, քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար և մեղադրյալին հնարավորություն ընձեռում միջնորդությունը պաշտպանի հետ քննարկելու համար:

4. Մեղադրյալի և պաշտպանի կողմից ստորագրված միջնորդությունը ստանալու պահից երեք օրվա ընթացքում քննիչն այն հանձնում է դատախազին՝ կցելով դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքը:

5. Նույն վարույթով մեկից ավելի մեղադրյալների կողմից համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու ցանկություն արտահայտելու դեպքում նրացից յուրաքանչյուրը ներկայացնում է առանձին միջնորդություն:

Հոդված 508. Համագործակցության վարույթ կիրառելու մասին միջնորդության լուծումը

1. Դատախազը համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու միջնորդությունը և դրա վերաբերյալ քննիչի կարծիքը ստանալու պահից երեք օրվա ընթացքում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու միջնորդությունը բավարարելու մասին.

2) համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրր կնքելու միջնորդությունը մերժելու մասին:

2. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրր կնքելու միջնորդությունը մերժելու մասին դատախազի որոշումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

Հոդված 509. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կազմելու կարգը

1. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու միջնորդությունը բավարարելու մասին որոշում կայացնելու դեպքում դատախազը քննիչի, մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ կազմում է համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը:

2. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի մեջ նշվում են՝

1) այն կազմելու տեղը և ժամանակը.

2) դատախազի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

3) մեղադրյալի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թվականը, ամիսը, օրը և ծննդավայրը, բնակության հասցեն, քաղաքացիությունը, կրթությունը, աշխատանքի կամ ուսման վայրը, դատվածության առկայությունը, ինչպես նաև մեղադրյալի անձին վերաբերող այլ տեղեկություններ, որոնք կարող են նշանակություն ունենալ վարույթի համար.

4) մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը և դրա ժամկետը.

5) պաշտպանի անունը, ազգանունը և վարույթին նրա մասնակցության հիմքը.

6) մեղադրյալին ներկայացված մեղադրանքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի կատարման տեղը, ժամանակը, եղանակը և սույն օրենսգրքի 122-րդ հոդվածով ապացուցման ենթակա մյուս հանգամանքները.

7) քրեական օրենսգրքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված մեղադրյալին մեղսագրվող արարքի կատարման համար (արարքի իրավական գնահատականը).

8) համագործակցության նպատակը և բովանդակությունը.

9) այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել համագործակցության նպատակին հասնելու համար.

10) ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմերը, որոնք կարող են կիրառվել մեղադրյալի կողմից համաձայնագրով նախատեսված պայմանները պահպանելու և պարտականությունները կատարելու դեպքում:

3. Այն դեպքում, երբ մեղադրյալին մեղսագրվող արարքով տուժողին պատճառված վնասը հատուցված չէ, համաձայանգրում նշվում է նաև այդ վնասը լրիվ կամ մասնակի հարթելու մեղադրյալի պարտականությունը:

4. Համաձայնագիրը ստորագրում են դատախազը, մեղադրյալը և պաշտպանը: Համաձայնագրի մեկական օրինակ հանձնվում է մեղադրյալին և պաշտպանին:

5. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայանգիր կնքելու մասին մեկից ավելի մեղադրյալների միջնորդություններ բավարարելու դեպքում, դատախազը նրանցից յուրաքանչյուրի հետ կնքում է առանձին համաձայնագիր:

Հոդված 510. Համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը

1. Համագործակցության վարույթով նախաքննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված կանոնները:

2. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայանգիր կազմելուց հետո տվյալ մեղադրյալի վերաբերյալ վարույթն անջատվում է: Անջատված վարույթի նյութերին պարտադիր կցվում են համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու մասին մեղադրյալի միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին դատախազի որոշումը, ինչպես նաև համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը:

3. Համագործակցության վարույթի ընթացքում քննիչի միջնորդությամբ դատախազը կարող է երկարացնել մեղադրյալի համար սույն օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված քրեական հետապնդման ժամկետները, եթե դա անհրաժեշտ է համաձայնագրով ստանձնած նրա պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

4. Մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապակցված այլ անձի անվտանգության սպառնալիքի առկայության դեպքում քննիչը որոշում է կայացնում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը կնքված փակ ծրարում պահելու, ինչպես նաև համապատասխան անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին:

5. Նախաքննությունն ավարտելուց հետո քննիչը, սույն օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով, վարույթի նյութերն ուղարկում է դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու և մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդություն կազմելու համար:

Հոդված 511. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդությունը

1. Դատախազը, սույն օրենսգրքի 214-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում, ուսումնասիրելով քննիչից ստացած վարույթի նյութերը, ինչպես նաև մեղադրյալի կողմից համաձայնագրի պայմանները և իր պարտավորությունների կատարումը հավաստող ապացույցները, հաստատում է մեղադրական եզրակացությունը և միջնորդություն հարուցում մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին կամ իր որոշմամբ մերժում է այդպիսի միջնորդությամբ վարույթը դատարան ուղարկելը:

2. Միջնորդության մեջ նշվում են՝

1) քննության հետ մեղադրյալի համագործակցության բնույթն ու սահմանները.

2) հանցագործությունը բացահայտելու կամ քննելու, կամ մյուս հանցակիցներին մերկացնելու, կամ հանցագործությամբ ձեռք բերված գույքը հայտնաբերելու գործում մեղադրյալի համագործակցության նշանակությունը.

3) մեղադրյալի հետ համագործակցության արդյունքում այլ հանցագործություն հայտնաբերելը կամ այլ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը.

4) մեղադրյալի կողմից համաձայնագրի պայմանները և իր պարտավորությունների կատարումը հաստատող, ինչպես նաև մեղադրյալի հայտնած տեղեկությունների լրիվությունն ու ճշմարտացիությունը հավաստող ապացույցները.

5) մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ նրա հետ կապակցված այլ անձի նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցները, դրանց հիմքերը և նպատակը:

3. Միջնորդության պատճենը հանձնվում է մեղադրյալին և նրա պաշտպանին, ովքեր իրավունք ունեն դրա վերաբերյալ իրենց նկատառումները ներկայացնել դատարանին:

4. Մեղադրյալին և պաշտպանին հանձնվում է մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդությամբ վարույթը դատարան ուղարկելը մերժելու մասին որոշումը, որը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին: Մինչև բողոքի լուծումը վարույթը չի կարող ուղարկվել դատարան:

Հոդված 512. Համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու հիմքը և պայմանները

1. Դատարանը նախնական դատալսումների ընթացքում քննարկում է համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու հարցը, եթե դատախազը վարույթը դատարան ուղարկելուց նման միջնորդություն է հարուցել:

2. Դատարանը համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին որոշում է կայացնում, եթե համոզվում է, որ՝

1) համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը մեղադրյալի կողմից կնքվել է կամավոր, պաշտպանի մասնակցությամբ և սույն գլխով նախատեսված մյուս պահանջների պահպանմամբ.

2) ներկայացվել են մեղադրյալի կողմից համաձայնագրի պայմանները պատշաճ պահպանելու և դրանով նախատեսված պարտավորությունները կատարելու մասին առերևույթ բավարար ապացույցներ:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքի կամ նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված պայմաններից թեկուզև մեկի բացակայության դեպքում դատարանը որոշում է կայացնում ընդհանուր կարգով դատաքննություն նշանակելու մասին:

4. Սույն գլխով նախատեսված դատաքննության հատուկ կարգ չի կարող կիրառվել նաև այն դեպքում, երբ քննության հետ մեղադրյալի համագործակցությունը սահմանափակվել է միայն հանցանքի կատարմանն իր մասնակցության մասին տեղեկություններ հաղորդելով:

Հոդված 513. Համագործակցության վարույթով դատաքննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը

1. Համագործակցության վարույթով դատաքննությունն անցկացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված կանոնները:

2. Համագործակցության վարույթով դատաքննությունն անցկացվում է մեղադրյալի, նրա պաշտպանի, մեղադրողի և տուժողի (եթե կայացվելիք դատավճիռը կարող է շոշափել նրա շահերը) պարտադիր մասնակցությամբ:

3. Մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապակցված այլ անձի անվտանգության ապահովման նպատակով դատարանի որոշմամբ դատաքննությունը կարող է անցկացվել դռնփակ:

4. Համագործակցության վարույթով դատաքննության սկզբում մեղադրողը ներկայացնում է մեղադրանքի փաստական հիմքը, մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավական գնահատականը, որից հետո հաստատում է քննության հետ մեղադրյալի համագործակցության փաստը և պարզաբանում դատարանին, թե հատկապես ինչում է դա արտահայտվե:

5. Մեղադրյալը և պաշտպանն իրավունք ունեն իրենց նկատառումները հայտնել քննության հետ մեղադրյալի համագործակցության բնույթի և այլ էական հանգամանքների վերաբերյալ:

6. Դատաքննության ընթացքում հետազոտվում են այն ապացույցները, որոնք հաստատում են՝

1) քննության հետ մեղադրյալի համագործակցության բնույթն ու սահմանները.

2) մեղադրյալի կողմից համաձայնագրի պայմանները պատշաճ պահպանելը և դրանով նախատեսված պարտավորությունները կատարելը.

3) հանցագործությունը բացահայտելու կամ քննելու կամ մյուս հանցակիցներին մերկացնելու կամ հանցագործությամբ ձեռք բերված գույքը հայտնաբերելու կամ այլ հանցագործություն հայտնաբերելու կամ այլ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու գործում մեղադրյալի դերը և նշանակությունը.

4) համագործակցության ընթացքում մեղադրյալի հայտնած տեղեկությունների լրիվությունն ու ճշմարտացիությունը.

5) մեղադրյալի անձը բնութագրող, ինչպես նաև նրա պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները.

6) համագործակցության արդյունքում մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապակցված այլ անձի անվտանգության սպառնալիքի աստիճանը:

Հոդված 514. Համագործակցության վարույթով կայացվող դատավճիռը

1. Հետազոտված ապացույցներով մեղադրյալի կողմից համաձայնագրի պայմանների պատշաճ պահապանումը և դրանով նախատեսված իր պարտավորությունների կատարումը, ինչպես նաև համագործակցության նպատակի նվաճումը հաստատված համարելու դեպքում դատարանը, հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները, մեղադրյալի նկատմամբ կայացնում է մեղադրական դատավճիռ՝ նշանակելով օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով կամ մեղադրյալին պատժից ազատելով:

2. Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրվում են մեղադրյալին մեղսագրվող հանցանքի նկարագրությունը, նրա կողմից համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի պայմանները պահպանելու և դրանով նախատեսված պարտականությունները կատարելու վերաբերյալ դատարանի հետևությունները, ինչպես նաև այդ հետևությունները հաստատող ապացույցները:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանգամանքները չհաստատվելու դեպքում, դատարանը մեղադրյալի նկատմամբ մեղադրական դատավճիռ է կայացնում ընդհանուր կարգով:

4. Դատավճիռը հրապարակելուց հետո դատավորը կողմերին պարզաբանում է դատավճիռը բողոքարկելու՝ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքը և կարգը:

Հոդված 515. Դատավճռի բողոքարկման սահմանները

Համագործակցության վարույթով կայացված դատավճիռը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենսգրքի 413-րդ հոդվածով նախատեսված հիմքերի:

Հոդված 516. Դատավճռի վերանայման առանձնահատկությունները

Եթե մեղադրյալի նկատմամբ սույն գլխի կանոններին համապատասխան պատիժ նշանակելուց հետո հայտնաբերվում է, որ նա քննությանը դիտավորյալ հայտնել է սուտ տեղեկություններ կամ թաքցրել որևէ էական տեղեկություն, ապա դատավճիռը ենթակա է վերանայման սույն օրենսգրքի 53-րդ գլխով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 16

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 64

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Հոդված 517. Միջպետական հարաբերություններում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու կարգը

1. Հայաստանի Հանրապետության դատարանների, դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների հարցումով օտարերկրյա պետության տարածքում սույն օրենսգրքով նախատեսված դատավարական գործողությունների կատարումը, ինչպես նաև օտարերկրյա պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հարցումով Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենսգրքով նախատեսված դատավարական գործողությունների կատարումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության

միջազգային պայմանագրերին համապատասխան՝ այդ պայմանագրերով և սույն օրենսգրքով սահմանված կարգով:

2. Օտարերկրյա պետության իրավասու մարմինների հարցումով Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենսգրքով նախատեսված դատավարական գործողություններ կատարելիս Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կիրառում են սույն օրենսգրքի նորմերը՝ համապատասխան միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

Օտարերկրյա պետության իրավասու մարմինների հարցումների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում դատավարական գործողություններ կատարելիս Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կարող են կիրառել համապատասխան օտարերկրյա պետության քրեական դատավարության օրենսդրության նորմերը, եթե դրանց կիրառումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրով:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հարցումները կատարվում են սույն օրենսգրքով նախատեսված ժամկետներում, եթե համապատասխան միջազգային պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ:

Հոդված 518. Իրավական օգնության հարցերով հաղորդակցություն իրականացնող մարմինները

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու հարցով հաղորդակցությունն իրականացվում է՝

1) մինչդատական վարույթի ընթացքում դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջոցով.

2) դատական վարույթի ընթացքում դատավարական գործողություններ, այդ թվում՝ դատավճիռներ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու

առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված լինելու դեպքում հաղորդակցությունը կարող է իրականացվել նաև դիվանագիտական ուղիներով՝ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների միջոցով, որոնք, համապատասխան հարցումներն ստանալով, անհապաղ ներկայացնում են սույն մասով նախատեսված իրավասու մարմին՝ կատարման ներկայացնելու համար:

2. Եթե դատավարական գործողություններ կատարելու հարցումը տալիս են Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, ապա նրանք Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան կազմած հարցումները ներկայացնում են սույն հոդվածի առաջին մասով սահմանված իրավասու համապատասխան մարմին՝ դրա կատարման նպատակով օտարերկրյա պետության իրավասու մարմին փոխանցելու համար:

Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի հարցումը կատարելուց և դա սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավասու մարմին ներկայացնելուց հետո վերջիններս կատարումն անհապաղ տրամադրում են հարցումը կազմած Հայաստանի Հանրապետության դատարանին, դատախազին, քննիչին, հետաքննության մարմնին:

3. Եթե դատավարական գործողություններ կատարելու հարցումը տրվել է օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից, և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ այն ներկայացվել է սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավասու մարմին, ապա վերջինս հարցումը կատարման է ներկայացնում Հայաստանի Հանրապետության այն դատարան, դատախազին, քննիչին, հետաքննության մարմին, որոնք, սույն օրենսգրքին համապատասխան, իրավասու են կատարելու տվյալ հարցումը:

Դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը հանձնարարությունը կատարելուց հետո այն ներկայացնում են սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավասու համապատասխան մարմին, որը կատարումն անհապաղ փոխանցում է օտարերկրյա պետության իրավասու մարմին:

4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ հարցում տալը, հարցման առաքումը և դրա կատարման արդյունքների փոխանցումը կարող են իրականացվել օտարերկրյա պետության համապատասխան իրավասու մարմնի և Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի միջև անմիջական հաղորդակցության միջոցով:

Ընդ որում, եթե անմիջական հաղորդակցության միջոցով օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստացված հարցման կատարումը չի մտնում հարցումը ստացած Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասության մեջ, ապա հարցումը անհապաղ վերահասցեագրվում է Հայաստանի Հանրապետության իրավասու դատարան, դատախազին, քննիչին, հետաքննության մարմին՝ այդ մասին ծանուցելով հարցումը տված օտարերկրյա պետության համապատասխան իրավասու մարմնին:

Վերահասցեագրման կարգով հարցումը ստացած Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը հարցումը կատարում և օտարերկրյա պետության իրավասու մարմին են փոխանցում սույն մասով նախատեսված կարգով, միաժամանակ սույն հոդվածի առաջին մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմնին ծանուցելով հարցման և դրա կատարման մասին:

Սույն մասով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը սույն հոդվածի առաջին մասում նշված համապատասխան իրավասու մարմնին ծանուցում են անմիջական հաղորդակցության միջոցով փոխադարձորեն իրականացված յուրաքանչյուր հարցման, դրա ստացման և կատարման մասին՝ համառոտակի նշելով հարցումը տված մարմնի անվանումը (պաշտոնատար անձի

անունը և պաշտոնը), հարցման բովանդակությունը, կատարող մարմինը կամ պաշտոնատար անձը, կատարման բովանդակությունը, հարցման տրման և կատարման ժամկետները:

5. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստացված հարցման կատարումը անհնար է կամ չի բխում տվյալ միջազգային պայմանագրից, ապա օտարերկրյա պետության համապատասխան մարմինը սույն հոդվածով սահմանված կարգով ծանուցում է հարցման կատարման անհնարինության և դրա պատճառների մասին:

Հոդված 519. Մեկից ավելի միջազգային պայմանագրերով նախատեսված հարցումները կատարելը

1. Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից դատավարական գործողությունների վերաբերյալ հարցումների կատարման պարտականությունը բխում է տվյալ պետության հետ կնքված Հայաստանի Հանրապետության մեկից ավելի միջազգային պայմանագրերից, ապա կիրառվում են հետևյալ կանոնները՝

1) եթե հարցման մեջ նշված է, թե որ միջազգային պայմանագրի հիման վրա է այն կազմվել և ներկայացվել, ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այդ միջազգային պայմանագրով.

2) եթե հարցման մեջ նշված են տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող մեկից ավելի միջազգային պայմանագրեր, ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են հարցման մեջ նշված այն միջազգային պայմանագրով, որն առավել ամբողջական լուծում է տալիս հարցման կատարման հետ կապված հարցերին՝ միաժամանակ կիրառելով մյուս պայմանագրի (պայմանագրերի) դրույթները, որոնք թեև նախատեսված չեն առավել ամբողջական լուծում տվող միջազգային պայմանագրով, բայց հարցումն առավել լրիվ և արագ կատարելու հնարավորություն են տալիս.

3) եթե հարցման մեջ նշում չկա տվյալ պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող որևէ միջազգային պայմանագրի վերաբերյալ, ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այն միջազգային պայմանագրով, որը առավել ամբողջական լուծում է տալիս հարցման լիարժեք կատարման հետ կապված հարցերին, որի ընթացքում չի բացառվում նաև տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող մյուս պայմանագրերի այն դրույթների կիրառումը, որոնք լրացնում են տվյալ պայմանագիրը:

2. Եթե Հայաստանի Հանրապետության և հարցում ներկայացրած օտարերկրյա պետության մասնակցությամբ գործում է բազմակողմ միջազգային պայմանագիր, որը հանձնման հարցերով այդ պայմանագրին գերակայություն է տալիս կողմերի միջև գործող և հանձնման հարցեր կարգավորող այլ միջազգային պայմանագրերի նկատմամբ, ապա Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այդ բազմակողմ միջազգային պայմանագրով:.

Հոդված 520. Միջազգային պայմանագրերից բխող հարցումների կատարումը մերժելը

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետության իրավասու մարմինների ներկայացրած դատավարական գործողությունների վերաբերյալ հարցումների կատարումը կարող է մերժվել այդ պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Ընդ որում, եթե հարցումը ներկայացրել է այն օտարերկրյա պետության իրավասու մարմինը, որի հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է մեկից ավելի համապատասխան միջազգային պայմանագրերով, ապա հարցման կատարումը կարող է մերժվել միայն այն դեպքում, եթե մերժման հիմք հանդիսացող հանգամանքը (պայմանը) նախատեսված է բոլոր միջազգային պայմանագրերով՝ անկախ նրանից, թե հարցումը միջազգային որ պայմանագրի հիման վրա է կազմվել և ներկայացվել:

Հարցման կատարումն ամեն դեպքում մերժվում է, եթե այն կարող է վնասել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին, ինքնիշխանությանը, ազգային անվտանգությանը, կամ եթե նշված հիմքերով հարցման կատարման մերժման հնարավորությունը նախատեսված է տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերից թեկուզ մեկով:

Հոդված 521. Հանցագործություն կատարած անձանց հանձնելը օտարերկրյա պետությանը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործություն կատարած կամ օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա պետության քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա պետության տարածքում մշտական բնակության վայր ունեցող քաղաքացիություն չունեցող անձինք, նրանց նկատմամբ համապատասխան օտարերկրյա պետությունում քրեական վարույթ սկսելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենսգրքին համապատասխան սկսված վարույթը տվյալ օտարերկրյա պետությունում շարունակելու նպատակով կարող են տվյալ օտարերկրյա պետությանը հանձնվել այդ պետության և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում:

Տվյալ օտարերկրյա պետության իրավասու մարմիններ են փոխանցվում նաև հանձնվող անձի կատարած հանցանքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի վարույթում կամ հետաքննության մարմնի տրամադրության տակ առկա բոլոր փաստաթղթերը և այլ նյութեր՝ համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված կարգով:

Փաստաթղթերի և այլ նյութերի փոխանցման կարգը միջազգային պայմանագրով նախատեսված կամ սահմանված չլինելու դեպքում դրանց փոխանցումը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետության կենտրոնական մարմինների կամ անմիջական հաղորդակցություն իրականացնող դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի և

օտարերկրյա պետության իրավասու մարմնի հետ ձեռք բերված պայմանավորվածությանը համապատասխան:

Փոխանցված փաստաթղթերի մեկական օրինակները (պատճենները) պետք է պահվեն փաստաթղթերը պատրաստած կամ տրամադրած՝ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի մոտ:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց՝ այդ մասով նախատեսված նպատակներով օտարերկրյա պետությանը հանձնելը կարող է իրականացվել այդ անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում հանցավոր արարքը կատարելու կամ այդ առնչությամբ քրեական վարույթ հարուցելու պահից մինչև տվյալ անձի նկատմամբ դատավճիռ կայացնելու պահն ընկած ժամանակահատվածում կամ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված այլ ժամկետում:

Հոդված 522. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման կարգը

1. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալելու դեպքում ձերբակալումն իրականացրած մարմինն անհապաղ տեղեկացնում է հետախուզում նախաձեռնողին՝ պահանջելով տվյալ պետության իրավասու մարմնի կողմից կայացված՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կամ դատավճիռը:

2. Անձի ձերբակալման մասին արձանագրությունն անհրաժեշտ փաստաթղթերի հետ անհապաղ ուղարկվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը ձերբակալման արձանագրությունն ստանալուց հետո ձերբակալման մասին անհապաղ տեղեկացնում է միջազգային հետախուզում հայտարարած պետության իրավասու մարմիններին և (կամ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

4. Եթե անձի ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում չի կայացվել նրան ժամանակավոր կալանավորելու մասին Հայաստանի Հանրապետության դատարանի որոշումը՝ անձին անազատության մեջ պահել հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով, ապա ձերբակալված անձը ենթակա է անհապաղ ազատման:

Հոդված 523. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս Հանցագործություն կատարած անձանց ժամանակավոր կալանավորման կարգը

1. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված անձանց նկատմամբ կիրառվում է ժամանակավոր կալանավորում՝ մինչև 40 օր ժամկետով կամ միջազգային պայմանագրով նախատեսված այլ ժամկետով՝ հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով: Եթե հանձնելու վերաբերյալ միջնորդությունը չի ստացվել ժամանակավոր կալանավորման համար նախատեսված առավելագույն ժամկետի ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության դատարանը մերժել է հանձնելու համար կալանավորում կիրառելու միջնորդությունը կամ պարզվել են հանձնումը բացառող հանգամանքներ, ապա անձը ենթակա է ազատման: Հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ժամանակին չներկայացնելու հիմքով անձին ժամանակավոր կալանավորումից ազատելը չի խոչընդոտում հետագայում նրա նկատմամբ հանձնելու համար կալանավորման կիրառումը:

2. Մինչև անձին հանձնելու վերաբերյալ միջնորդություն ստանալը, օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կամ դատավճիռը կարող է հանձնվել փոստով, այդ թվում՝ էլեկտրոնային կամ հեռագրով կամ տեխնիկական այլ միջոցներով, ինչպես նաև Միջազգային քրեական ոստիկանության (Ինտերպոլ) կամ անձի հետախուզում իրականացնող այլ միջազգային կազմակերպության միջոցով, որի մասնակից է Հայաստանի Հանրապետությունը:

3. Դատախազն անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնում է ձերբակալման վայրի դատարան: Միջնորդությանը կցվում են՝ ձերբակալման արձանագրության պատճենը, օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ որոշումը կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերից մեկը և ձերբակալվածի անձը հաստատող փաստաթղթերը:

4. Միջնորդությունը քննարկելիս՝ դատարանը, լսելով դատախազին, ձերբակալված անձին և նրա պաշտպանին, ուսումնասիրելով ներկայացված նյութերը, որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու և ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին կամ միջնորդությունը մերժելու մասին: Ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

5. Միջնորդության քննարկման արդյունքների մասին դատախազը, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, անհապաղ տեղյակ է պահում օտարերկրյա պետության իրավասու մարմնին:

Հոդված 524. Հանձնելու համար կալանավորելու կարգը

1. Անձին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ստանալիս դատախազը, իսկ այլ պետության դատարանի վարույթով գտնվող քրեական գործերով կամ դատավճռի ի կատար ածելու գործերով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը անձին հանձնելու համար կալանավորում կիրառելու միջնորդություն են ներկայացնում անձին արգելանքի վերցնելու վայրի դատարան:

2. Հանձնելու համար կալանավորում կիրառելու միջնորդությանը կցվում են անձին հանձնելու մասին միջնորդության պատճենը և անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկանքը:

3. Միջնորդությունը քննարկելիս դատարանը, լսելով միջնորդություն ներկայացնողին, արգելանքի վերցված անձին և նրա պաշտպանին, ստուգելով անձին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը և ուսումնասիրելով ներկայացված

այլ փաստաթղթերը, որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու և հանձնման համար կալանավորում կիրառելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

4. Միջնորդությունը քննարկելիս դատարանն իրավասու չէ հետազոտել անձի մեղավորության հարցերը կամ ստուգել օտարերկրյա պետության մարմինների կողմից ընդունված դատավարական փաստաթղթերի օրինականությունը:

5. Հանձնելու համար կալանավորումը կիրառվում է երկու ամիս ժամկետով: Կալանավորման ժամկետը լրանալուց 10 օր առաջ՝ դատախազը կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը դատարան են ներկայացնում անձի կալանավորման ժամկետը երկարացնելու միջնորդություն: Հանձնելու համար կալանավորման ժամկետը չի կարող գերազանցել 8 ամիսը:

6. Հանձնելու համար կալանավորման առավելագույն ժամկետում անձին հանձնելու հարցը չլուծելու կամ նրան փաստացի չհանձնելու դեպքում՝ անձը ենթակա է անհապաղ ազատման: Սույն հիմքով անձին ազատելը չի խոչընդոտում նրա նկատմամբ փաստացի հանձնելու նպատակով կալանավորում կիրառելը:

7. Անձին կալանավորումից ազատելու դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված խափանման այլ միջոցներ՝ մինչև 8 ամիս ժամկետով:

8. Սույն հոդվածի և սույն օրենսգքրքի 523-րդ հոդվածի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա՝ քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու նպատակով: Փոխանցված քրեական գործը վարույթ ընդունելու պահից անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցը լուծվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

Հոդված 525. Ազատությունից զրկված անձանց իրավունքները

1. Սույն օրենսգրքի 522-524-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում արգելանքի վերցված անձինք իրավունք ունեն հայտնել բացարկներ, անվճար ստանալ ձերբակալման արձանագրությունը, ինչպես նաև ժամանակավոր

կալանավորում կիրառելու կամ հանձնելու համար կալանավորում կիրառելու որոշման կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշման պատճենը, ունենալու պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն, առանձին, խորհրդապահական կարգով անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցության թվի և տևողության սահմանափակման, հետ վերցնել իր կամ իր պաշտպանի ներկայացրած բողոքը, բողոքարկել հետաքննության մարմնի, դատախազի, դատարանի որոշումները և գործողությունները:

2. Քրեական վարույթի լեզվին չտիրապետող անձինք պետական միջոցների հաշվին ապահովվում են թարգմանչի ծառայություններով: Քրեական վարույթի լեզվին չտիրապետող անձանց տրվում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանձնման ենթակա փաստաթղթերի պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են:

3. Արգելանքի վերցված անձին գրավոր բացատրվում են իր իրավունքները և ապահովում դրանց իրականացումը՝ սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

4. Սույն օրենսգրքի 522-524-րդ հոդվածներով կալանավորված անձանց՝ ազգականների կամ այլ անձանց հետ տեսակցելու հարցը լուծում է հանձնման միջնորդությունը քննարկող մարմինը:

Հոդված 526. Հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմինները և այդ որոշման բողոքարկման կարգը

1. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված է հանցագործություն կատարած անձի հանձնումը այդ պայմանագրի մասնակից համարվող օտարերկրյա պետությանը, և եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձի նկատմամբ՝

1) հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումներն ընդունում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը՝ մինչդատական վարույթում.

2) հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ դատական վարույթների ընթացքում, ինչպես նաև այն դեպքում, երբ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ.

3) հանձնման թույլտվության վերաբերյալ որոշումն ընդունում է համապատասխանաբար գործը քննող կամ դատավճիռը կայացրած դատարանը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդությամբ՝ դատական վարույթներում, ինչպես նաև այն դեպքում, երբ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

Հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինն ընդունված որոշման մասին տեղեկացնում է այն անձին, որի նկատմամբ կայացվել է որոշումը և բացատրում այն բողոքարկելու նրա իրավունքը:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի՝ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան որոշումները ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, իսկ վերաքննիչ դատարանի որոշումները՝ վճռաբեկ դատարան դրանք ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Վերաքննիչ դատարանը և վճռաբեկ դատարանը գործը քննում և դրա վերաբերյալ որոշում են կայացնում համապատասխանաբար բողոքը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքերում դատարանը գործը քննում և որոշում է կայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված դատարանի որոշումները կարող են բողոքարկվել և քննարկվել վերաքննության և վճռաբեկության կարգով սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետներում:

5. Հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկման դեպքում այն կայացրած իրավասու մարմինը 3 օրվա ընթացքում դատարան է ուղարկում նշված որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող փաստաթղթերը:

6. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությունն իրականացվում է այն անձի մասնակցությամբ, որի վերաբերյալ կայացվել է հանձնելու կամ հանձնումը մերժելու մասին որոշում, և (կամ) նրա պաշտպանի և դատախազի մասնակցությամբ:

Դատաքննության ընթացքում դատարանը չի քննարկում բողոքը բերած անձի մեղավորության հարցը՝ սահմանափակելով միայն հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշման՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և միջազգային պայմանագրերին համապատասխանության հարցի ստուգմամբ:

7. Ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) բողոքը չբավարարել և հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումը թողնել անփոփոխ.

2) բավարարել բողոքը և վերացնել հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումը:

8. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով հանձնումը պայմանավորված է տվյալ պայմանագրի մասնակից համարվող պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը որևէ երաշխիք տալով, ապա այդ պետության երաշխիքի՝ Հայաստանի Հանրապետության համար բավարար կամ ընդունելի լինելու հանգամանքը որոշում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը՝ մինչդատական վարույթում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ դատական վարույթներում, ինչպես նաև այն դեպքում, երբ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

9. Եթե մերժվում է անձի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնելը օտարերկրյա պետությանը կամ միջազգային դատարան, սակայն սույն օրենսգրքով նախատեսված բավարար հիմքեր կան նրա նկատմամբ

քրեական հետապնդում հարուցելու այն արարքի առնչությամբ, որի համար նրա հանձնման մասին խնդրանք է ուղարկվել օտարերկրյա պետությունից կամ միջազգային դատարանից, ապա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը այդ անձի նկատմամբ սկսում է քրեական հետապնդում:

Հոդված 527. Հանցագործություն կատարած անձին օտարերկրյա պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը հանձնելը

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

Նույն նպատակով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունները Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնել նաև տվյալ օտարերկրյա պետության տարածքում հանցագործություն կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են սույն օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

3. Եթե օտարերկրյա պետությունը մերժում է հայցվող անձի հանձնումը Հայաստանի Հանրապետությանը, ապա դատարանը, դատախազը, քննիչը տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով քրեական վարույթը փոխանցում են համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմին՝ այդ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

4. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով հանձնումը պայմանավորված է տվյալ պայմանագրի մասնակից համարվող պետությանը Հայաստանի Հանրապետության կողմից որևէ երաշխիք տալով, ապա այդ երաշխիքը տալիս է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը՝ մինչդատական վարույթում, վճռաբեկ դատարանը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ՝ դատական վարույթում:

Հոդված 528. Որպես վկա, տուժող, գույքային պատասխանող, նրանց ներկայացուցիչներ, փորձագետ՝ Հայաստանի Հանրապետություն կանչելը և դատավարական գործողություններ կատարելը

Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող քրեական վարույթի ընթացքում որպես վկա, տուժող, գույքային պատասխանող, նրանց ներկայացուցիչներ կամ փորձագետ հանդես եկող անձինք, ովքեր գտնվում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով կարող են կանչվել Հայաստանի Հանրապետություն՝ համապատասխան քրեական վարույթ իրականացնող դատարանի, դատախազի, քննիչի, կողմից նրանց մասնակցությամբ անհրաժեշտ քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու համար:

Այդ անձանց մասնակցությամբ քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու ընթացքում կիրառվում են սույն օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

ԳԼՈՒԽ 65
ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հոդված 529. Միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում իրավական օգնություն ցույց տալու պայմանները

1. Օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև քրեական վարույթով դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում տվյալ պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) և Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի միջև փոխադարձության հիման վրա իրավական օգնություն կարող է ցույց տրվել բացառիկ դեպքերում՝ տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև իրավական ոլորտում փոխադարձության հիման վրա փոխօգնություն ցույց տալու շուրջ դիվանագիտական ուղիներով ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, որը պետք է նախապես համաձայնեցված լինի՝

1) մինչդատական վարույթի ընթացքում դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետ.

2) դատական վարույթի ընթացքում դատավարական գործողություններ, այդ թվում՝ դատավճիռներ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով տվյալ օտարերկրյա պետության իրավասու մարմինների և Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի միջև, տվյալ պետության և Հայաստանի Հանրապետության միջև հաղորդակցությունը և փոխադարձ իրավական օգնություն ցույց տալը շարունակվում են մինչև համապատասխան հարցով (հարցերով) միջազգային պայմանագրի (պայմանագրերի) կնքումը կամ քրեական վարույթով փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու մասին ուժի մեջ մտած բազմակողմ միջազգային պայմանագրին Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության երկուստեք մասնակից դառնալը, եթե մինչ այդ դիվանագիտական ուղիներով Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան պետությունը միակողմանիորեն կամ երկկողմ համաձայնությամբ չեն վերացրել փոխադարձության հիմունքներով

իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունը:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով փոխադարձության հիման վրա իրավական օգնությունը ցույց տալիս տվյալ օտարերկրյա պետության այլ մարմինների հետ Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը հաղորդակցվում են համապատասխանորեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կամ գլխավոր դատախազության միջոցով՝ սույն օրենսգրքի 518-րդ հոդվածի կանոններին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով համապատասխան օտարերկրյա պետության իրավասու կենտրոնական մարմնին է տրամադրում սույն գլխի՝ այդ պետության համար ընդունելի լեզվով թարգմանված տեքստը՝ փոխադարձության կարգով իրավական օգնություն ցույց տալու ժամանակ օգտվելու համար՝ այդ պետությունից ստանալով նրա համապատասխան օրենքը:

Հոդված 530. Փոխադարձության կարգով իրավական օգնության մասին խնդրանքի բովանդակությունը

1. Փոխադարձության կարգով օտարերկրյա պետության իրավասու մարմնին հասցեագրվող առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին հանձնարարությունը, հարցումը կամ խնդրանքը (այսուհետ՝ խնդրանք) պետք է կազմվեն գրավոր, ստորագրված լինեն ուղարկող պաշտոնատար անձի կողմից և հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատարանի կամ դատախազության պաշտոնական կնիքով:

2. Դատավարական գործողություններ կատարելու մասին իրավական օգնության վերաբերյալ խնդրանքը պետք է պարունակի՝

1) խնդրանքն ուղարկող Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի անվանումը (անունը).

2) օտարերկրյա պետության այն մարմնի անվանումը, որին ուղարկվում է խնդրանքը.

3) վարույթը, որի շրջանակներում ուղարկվում է խնդրանքը և խնդրանքի բնույթը.

4) տվյալներ այն անձանց մասին, որոնց կապակցությամբ ուղարկվում է խնդրանքը. անունը, հայրանունը և ազգանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը (հասցեն), քաղաքացիությունը, զբաղմունքի տեսակը, բնակության կամ գտնվելու վայրը, իրավաբանական անձանց համար՝ անվանումը և գտնվելու վայրը (հասցեն).

5) բացահայտման ենթակա հանգամանքների շարադրանքը, ինչպես նաև այն փաստաթղթերի, իրեղեն և այլ ապացույցների ցանկը, որոնք ակնկալվում է ստանալ խնդրանքը կատարողից.

6) տեղեկություններ՝ կատարված հանցանքի փաստական հանգամանքների, դրա որակման մասին, անհրաժեշտության դեպքում՝ տվյալ հանցագործությամբ պատճառված վնասի բնույթի և չափի մասին, ինչպես նաև խնդրանքն ուղարկողի մոտ առկա այլ տեղեկություններ, որոնք կարող են նպաստել խնդրանքի արդյունավետ կատարմանը:

Հոդված 531. Դատավարական գործողությունների վերաբերյալ խնդրանքի կատարումը

1. Փոխադարձության հիման վրա քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած խնդրանքը Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կատարում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով:

2. Եթե խնդրանքը չի կարող կատարվել, ապա ստացված փաստաթղթերը վերադարձվում են խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության իրավասու մարմին՝ նշելով դրա կատարմանը խոչընդոտող պատճառները:

Խնդրանքը չի կատարվում և ենթակա է վերադարձման, եթե դրա կատարումը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության անկախությունը, սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը կամ անվտանգությունը կամ հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Հոդված 532. Քրեական հետապնդում սկսելու և շարունակելու համար գործի նյութերն օտարերկրյա պետություն ուղարկելը

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետության քաղաքացու կամ օտարերկրյա պետության տարածքում բնակության վայր ունեցող, քաղաքացիություն չունեցող անձի կողմից հանցագործություն կատարվելու և Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու դեպքում հարուցված կամ քննվող կամ հարուցման ենթակա վարույթի բոլոր նյութերը քրեական վարույթն իրականացնող մարմինը սույն օրենսգրքի 529-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված համապատասխան իրավասու մարմնի միջոցով ուղարկում է տվյալ օտարերկրյա պետության համապատասխան մարմին՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան՝ նշված անձանց նկատմամբ քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու խնդրանքով:

Սույն հոդվածով նախատեսված գործի բոլոր փաստաթղթերի պատճենները պահվում են վարույթն իրականացնող Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի մոտ այն իրեղեն ապացույցների ցանկի հետ, որոնք նույնպես ուղարկվել են համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմին:

Հոդված 533. Օտարերկրյա պետությունից ստացված՝ քրեական հետապնդումը շարունակելու վերաբերյալ խնդրանքը կատարելը

1. Օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած Հայաստանի Հանրապետության քաղաքացու նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքը փոխանցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության իրավասու քննչական մարմին՝ խնդրանքին կից ներկայացված նյութերի հիման վրա քրեական վարույթ հարուցելու և գործը քննելու համար.

2) Հայաստանի Հանրապետության իրավասու դատախազին կամ դատարան՝ օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացու նկատմամբ արդեն իսկ հարուցված քրեական վարույթը Հայաստանի Հանրապետության տարածքում շարունակելու համար:

2. Քրեական վարույթը Հայաստանի Հանրապետության տարածքում սկսելու կամ շարունակելու դեպքում օտարերկրյա պետության տարածքում տվյալ վարույթի քննության ընթացքում այդ պետության օրենքներով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցներն ունեն տվյալ գործով Հայաստանի Հանրապետությունում ստացված ապացույցներին հավասար իրավաբանական ուժ, եթե դրանց ձեռք բերման կարգը չի հակասում քրեական դտավարության՝ սույն օրենսգրքով նախատեսված սկզբունքներին:

Քննությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացնելու ընթացքում օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած լրացուցիչ ապացույցները միացվում են վարույթում առկա մյուս ապացույցներին:

3. Հայաստանի Հանրապետությունում քրեական վարույթ սկսելու, քրեական հետապնդում հարուցելու կամ հարուցված վարույթը կամ հետապնդումը շարունակելու՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքին սույն հոդվածի առաջին մասով սահմանված կարգով ընթացք տալու մասին ծանուցվում է խնդրանքն ուղարկած տվյալ օտարերկրյա պետության իրավասու մարմինը:

Հոդված 534. Հանձնումը

1. Հանցանք կատարած անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից խնդրանք ստանալու դեպքում Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը միջոցներ են ձեռնարկում խնդրանքում նշված անձի հանձնման թույլտվություն ստանալու և քրեական պատասխանատվության ենթարկելու կամ նրա նկատմամբ դատավճիռն ի կատար ածելու նպատակով այդ անձին օտարերկրյա պետությանը հանձնելու ուղղությամբ:

2. Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով:

3. Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար անձը դատապարտվել է ազատազրկման վեց ամսից ոչ պակաս ժամկետով:

Հոդված 535. Հանձնումը մերժելը

1. Անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժվում է, եթե՝

1) հանձնման վերաբերյալ խնդրանքը սույն օրենսգրքով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից ստանալու պահին, խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության օրենքին համապատասխան, քրեական հետապնդում չի կարող հարուցվել, կամ դատավճիռը չի կարող ի կատար ածվել վաղեմության ժամկետն անցնելու պատճառով կամ այլ օրինական հիմքով.

2) անձի նկատմամբ նույն արարքի համար արդեն իսկ կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ քրեական վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում.

3) խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնմանը.

4) հանձնման դեպքում, տվյալ օտարերկրյա պետության օրենքներին համապատասխան, կարող է նշանակվել մահապատիժ, և այդ պետությունը բավարար երաշխիքներ չի տալիս առ այն, որ հանձնելու դեպքում այդպիսի պատիժ չի նշանակվի և չի կիրառվի:

2. Անձի հանձնման մասին խնդրանքի կատարումը կարող է մերժվել, եթե անձը, որի հանձնելը հայցվում է՝

1) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում ձեռք է բերել քաղաքական ապաստանի իրավունք.

2) հետապնդվում է քաղաքական, ռասայական կամ կրոնական շարժառիթներով.

3) հետապնդվում է խաղաղ ժամանակ զինվորական հանցագործություն կատարելու համար.

4) հանցագործությունը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Հանձնելը կարող է մերժվել նաև, եթե տվյալ օտարերկրյա պետությունը քրեական վարույթներում իրավական օգնության ոլորտում չի ապահովում փոխադարձությունը:

Հոդված 536. Հանձնելու մասին խնդրանքի բովանդակությունը

1. Փոխադարձության կարգով իրավական օգնության շրջանակներում անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած խնդրանքը պետք է պարունակի՝

1) խնդրանքի հասցեատիրոջ՝ Հայաստանի Հանրապետության դատարանի կամ դատախազության անվանումը.

2) արարքի փաստական հանգամանքների նկարագրությունը և խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության օրենքի բնագիր տեքստը, որի հիման վրա այդ արարքը համարվում է հանցագործություն.

3) անձի անունը, հայրանունը և ազգանունը, որի հանձնումը հայցվում է, նրա քաղաքացիությունը, բնակության կամ գտնվելու վայրը (հասցեն) և հնարավորության դեպքում՝ նրա մասին այլ տվյալներ.

4) նշում հանցագործությամբ պատճառված վնասի չափի և խնդրանքն ուղարկելու պահի դրությամբ դրա հատուցման մասին:

2. Հանձնելու մասին խնդրանքին պետք է կցված լինի անձի կալանավորման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման հաստատված պատճենը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում դատավճիռն ի կատար ածելու կամ պատժի չկրած մասը կրելու համար հանձնելու մասին խնդրանքին պետք է կցված լինեն օտարերկրյա պետության իրավասու դատարանի կայացրած դատավճռի հաստատված պատճենը՝ այն օրինական ուժի մեջ մտնելու մասին նշումով, և օտարերկրյա պետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով

տվյալ անձը դատապարտվել է: Եթե դատապարտյալն արդեն իսկ կրել է պատժի մի մասը, ապա հաղորդվում են նաև դրա մասին տվյալները:

Հոդված 537. Լրացուցիչ տեղեկությունները

1. Եթե հանձնելու մասին պահանջը չի պարունակում բոլոր անհրաժեշտ տվյալները, ապա խնդրանքն ստացած Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կարող են պահանջել լրացուցիչ տվյալներ և անհրաժեշտության դեպքում այդ տվյալներն ստանալու համար սահմանել մինչև մեկ ամիս ժամկետ:

2. Եթե խնդրանքը ներկայացրած օտարերկրյա պետության իրավասու մարմինը սույն հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում չի ներկայացնում լրացուցիչ տվյալներ, ապա խնդրանքն ստացած Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը պետք է ազատեն հանձնման ենթակա անձին, եթե նա խնդրանքին կից ուղարկված օտարերկրյա պետության իրավասու մարմնի կալանավորման մասին որոշման համաձայն և սույն օրենսգրքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշման հիման վրա կալանավորված է եղել:

Հոդված 538. Հանձնելու համար կալանավորելը

1. Անձին հանձնելու վերաբերյալ խնդրանքին կից նրան կալանքի վերցնելու մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման (դրա պատճենի) առկայության դեպքում խնդրանքն ստացած Հայաստանի Հանրապետության դատախազը, քննիչը սույն օրենսգրքով սահմանված կարգով միջոցներ են ձեռնարկում հանձնման ենթակա անձին կալանավորելու համար, եթե հնարավոր չեն համարում խնդրանքի կատարումն առանց դրա:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում անձի կալանավորման մասին Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը պետք է կայացվի հանձնման ենթակա անձի ներկայությամբ:

Եթե կալանավորման մասին Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը կայացվել է առանց հանձնման ենթակա անձի ներկայության՝

նրա բացակայության կամ ներկա գտնվելուն խոչընդոտող այլ պատճառով, ապա նախքան այդ անձի հանձնումն իրականացնելը նա պետք է հնարավորություն ունենա բողոքարկելու դատարանի որոշումը վերադաս դատարան:

Սույն հոդվածի կանոնները չեն կիրառվում հանձնման ենթակա այն անձի նկատմամբ, որը նախքան հանձնման մասին խնդրանքը ստանալը սույն օրենսգրքով սահմանված կարգով պատիժ է կրում Հայաստանի Հանրապետության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Հոդված 539. Նախքան հանձնելու մասին խնդրանքը ստանալը կալանավորելը կամ ձերբակալելը

1. Օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջնորդությամբ անձը կարող է Հայաստանի Հանրապետությունում կալանավորվել նաև մինչև հանձնելու մասին խնդրանքն ստանալը: Միջնորդության մեջ պետք է պարունակվեն հղումներ կալանքի վերցնելու մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռին՝ նշելով, որ տվյալ անձին հանձնելու մասին խնդրանքը կներկայացվի լրացուցիչ: Մինչև հանձնելու մասին խնդրանք ներկայացնելը անձին կալանավորելու մասին միջնորդությունը կարող է հանձնվել փոստով, այդ թվում՝ էլեկտրոնային կամ հեռագրով կամ տեխնիկական այլ միջոցներով, ինչպես նաև Միջազգային քրեական ոստիկանության (Ինտերպոլ) կամ անձի հետախուզում իրականացնող այլ միջազգային կազմակերպության միջոցով, որի մասնակից է Հայաստանի Հանրապետությունը:

2. Անձը կարող է սույն օրենսգրքով սահմանված կարգով ձերբակալվել առանց օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջնորդության կամ հանձնելու մասին խնդրանքի, եթե սույն օրենսգրքով նախատեսված հիմքեր կան կասկածելու, որ նա հանցագործություն է կատարել այն օտարերկրյա պետության տարածքում, որի հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է փոխադարձության կարգով քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու պայմանավորվածությամբ: Այդ պետության իրավասու մարմնի կողմից հանձնելու մասին խնդրանք ներկայացվելու դեպքում ձերբակալված անձը ենթակա է հանձնման:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում անձին կալանավորելիս կիրառվում են սույն օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները, իսկ 2-րդ մասով նախատեսված դեպքում անձին ձերբակալելիս կիրառվում են սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնները:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում համապատասխան հարկադրանքի միջոցի կիրառման մասին անմիջապես տեղյակ է պահվում օտարերկրյա պետության իրավասու մարմինը:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով կալանավորված անձը պետք է ազատ արձակվի, եթե նրան հանձնելու խնդրանքը չի ստացվել կալանքի վերցնելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված կարգով ձերբակալված անձը պետք է ազատ արձակվի, եթե սույն օրենսգրքով ձերբակալման համար սահմանված ժամկետը լրանալու պահի դրությամբ համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնից նրա հանձնման մասին խնդրանքը կամ մինչև խնդրանքն ուղարկելը կալանավորման միջնորդությունը չներկայացվի:

Հանձնման մասին խնդրանքը կամ մինչև խնդրանքն ուղարկելը կալանավորման միջնորդությունը ստացվելու դեպքում կալանավորման առնչությամբ համապատասխանաբար կիրառվում են սույն օրենսգրքի 538-րդ հոդվածի կամ սույն հոդվածի 1-ին մասի կանոնները:

Հոդված 540. Հանձնումը հետաձգելը, ժամանակավոր հանձնելը

1. Եթե անձի նկատմամբ, որի հանձնումը խնդրվում է, Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում է հարուցված, կամ այդ անձը Հայաստանի Հանրապետությունում դատապարտվել է այլ հանցագործության համար, ապա նրա հանձնումը կարող է հետաձգվել մինչև սույն օրենսգրքով սահմանված կարգով քրեական հետապնդումն ավարտելը, դատավճիռն ի կատար ածելը կամ պատժից ազատելը:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի հանձնման հետաձգումը կարող է հանգեցնել հանձնման մասին խնդրանքով դիմած օտարերկրյա պետության օրենքով սահմանված քրեական հետապնդման

վաղեմության ժամկետն անցնելուն կամ վնաս պատճառել այդ պետությունում վարվող քննությանը, ապա այդ անձը կարող է հանձնվել ժամանակավոր:

Ժամանակավոր հանձնված անձը պետք է օտարերկրյա պետության կողմից վերադարձվի այնտեղ վարվող քրեական գործի վարույթով այն դատավարական գործողությունները կատարելուց հետո, որի համար նա հանձնվել է, բայց ոչ ուշ, քան հանձնելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Օտարերկրյա պետության իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի հիմնավորված խնդրանքի և դրա հետ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի համաձայնվելու դեպքերում այդ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց մեկ ամսից ոչ ավելի ժամանակով:

3. Ժամանակավոր հանձնված անձի՝ օտարերկրյա պետությունում գտնվելու ժամանակամիջոցը հաշվակցվում է Հայաստանի Հանրապետությունում նրա նախնական կալանքի կամ պատժի կրման ժամկետին:

Հոդված 541. Հանձնելու մասին մի քանի խնդրանքների բավարարման կարգը

1. Եթե միևնույն անձին հանձնելու մասին խնդրանքներ են ստացվել մի քանի պետություններից, ապա խնդրանքները ստացած Հայաստանի Հանրապետության դատախազը կամ դատարանը ինքն է որոշում, թե դրանցից որը պետք է բավարարվի առաջին հերթին:

Ընդ որում, խնդրանքներից որևէ մեկն առաջին հերթին բավարարելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հանգամանքները, հատկապես հանցագործության ծանրությունը և կատարման վայրը, համապատասխան խնդրանքների կազմման տարին, ամիսը և ամսաթիվը, հանձնման ենթակա անձի քաղաքացիությունը և նրան փոխադարձության կարգով այլ պետության հետագա հանձնման հնարավորությունը:

2. Եթե միևնույն անձի հանձնման մասին խնդրանքներից բացի, հարցում կամ հարցումներ են ստացվել այն օտարերկրյա պետություններից կամ միջազգային կազմակերպություններից, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է հանձնման հարցեր կարգավորող բազմակողմ կամ երկկողմ միջազգային

պայմանագրերով, ապա հանձնման հարցը լուծելիս նախապատվությունը պետք է տրվի այդ պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը:

Հոդված 542. Հանձնումն իրականացնելը

1. Անձի հանձնման մասին վերջնական որոշում ընդունելուց հետո համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմինը, որի հանձնման մասին խնդրանքը բավարարվել է, տեղյակ է պահվում անձի փաստացի հանձնման ժամանակի և տեղի մասին:

2. Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմինը, որին սույն հոդվածի առաջին մասով նախատեսված ծանուցումն ուղարկվել է, հանձնման ենթակա անձին չի ընդունում ծանուցմամբ սահմանված ժամկետից հետո 15 օրվա ընթացքում, ապա այդ անձը, եթե նա մինչ այդ կալանավորված է եղել, ազատվում է կալանքից:

Հոդված 543. Կրկնակի հանձնելը

Եթե հանձնված անձը խուսափում է տվյալ օտարերկրյա պետությունում իր նկատմամբ վարվող քրեական հետապնդումից կամ պատիժը կրելուց և վերադառնում է Հայաստանի Հանրապետության տարածք, ապա նույն օտարերկրյա պետության նոր խնդրանքով նա հանձնվում է առանց սույն օրենսգրքի 530-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկություններն ու տվյալները ներկայացնելու, եթե սույն օրենսգրքի 537-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքեր չեն առաջացել հանձնումը մերժելու համար:

Հոդված 544. Տարանցիկ փոխադրման թույլտվությունը

1. Փոխադարձության կարգով Հայաստանի Հանրապետության հետ իրավական օգնություն ցույց տվող օտարերկրյա պետության իրավասու մարմնի գրավոր միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը լուծում է Հայաստանի Հանրապետության տարածքով այն անձի փոխադրման վերաբերյալ թույլտվության հարցը, որի հանձնմանը համաձայնություն է տվել որևէ երրորդ պետություն:

Տարանցիկ փոխադրման թույլտվության վերաբերյալ միջնորդությունը քննվում է նույն կարգով, ինչ հանձնման մասին խնդրանքը:

2. Տարանցիկ փոխադրման թույլտվության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը միաժամանակ որոշում է փոխադրման եղանակը (օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտով):

Տարանցիկ փոխադրման ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում կանգառ կատարելու դեպքում հանձնված անձը պետք է դուրս չգա համապատասխան տրանսպորտային միջոցից, իսկ դուրս գալու անհրաժեշտության դեպքում դա կարող է կատարվել բացառապես Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի նշանակած օպերատիվ խմբի վերահսկողությամբ և ժամկետով:

3. Հայաստանի Հանրապետությունը տարանցիկ փոխադրման համար թույլտվությունը կարող է մերժել, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության օրենքով հանցագործություն չի համարվում այն արարքը, որի համար խնդրվում է անձի հանձնումը.

2) հանձնման ենթակա անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

Տարանցումը չի թույլատրվում այն երկիր, որտեղ հանձնման ենթակա անձի կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի, ազգային կամ ռասսայական պատկանելության, կրոնի, քաղաքացիական կամ քաղաքական հայացքների պատճառով:

Հոդված 545. Քրեական հետապնդման պարտադիր լինելը

1. Հայաստանի Հանրապետության դատախազը, դատարանը սույն գլխով սահմանված կարգով օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած խնդրանքով, սույն օրենսգրքին համապատասխան, քրեական հետապնդում է իրականացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող այն անձանց նկատմամբ, որոնց հանձնումը մերժվել է, և որոնք կասկածվում են խնդրանքը ներկայացրած օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարելու մեջ:

2. Եթե հանցագործությունը, որով քրեական վարույթ է իրականացվում, առաջ է բերում հանցագործությունից վնաս կրած անձանց քաղաքացիաիրավական պահանջներ, ապա վնասը հատուցելու մասին նրանց միջնորդության առկայության դեպքում համապատասխան պահանջները քննվում են տվյալ վարույթի շրջանակներում՝ սույն օրենսգրքին համապատասխան:

Հոդված 546. Հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները

1. Եթե սույն գլխի նորմերով սահմանված կարգով անձը Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի կամ քննիչի իրավասությանն է հանձնվել նրա նկատմամբ քրեական վարույթ սկսելու կամ շարունակելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար, ապա առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ այդ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

2. Առանց հանձնումը թույլատրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության հանձնված անձը չի կարող հանձնվել նաև երրորդ պետության:

3. Հանձնումը թույլատրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնությունը չի պահանջվում, եթե հանձնված անձը, լինելով օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, իր նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխան դատավարական գործողությունների կատարումն ավարտելուց, իսկ նրան դատապարտելու դեպքում՝ պատիժը կրելուց կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով պատժից վաղաժամկետ ազատվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, չի լքում Հայաստանի Հանրապետության տարածքը, կամ եթե լքելուց հետո նա ինքնակամ վերադառնում է այնտեղ: Նշված ժամկետի մեջ չի հաշվակցվում այն ժամանակը, որի ընթացքում հանձնված անձը իրենից անկախ հանգամանքներով չէր կարող լքել Հայաստանի Հանրապետության տարածքը:

Հոդված 547. Քրեական վարույթ իրականացնելու խնդրանքը

1. Փոխադարձության կարգով Հայաստանի Հանրապետության հետ կապված օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական վարույթ իրականացնելու մասին խնդրանքը պետք է բովանդակի՝

1) խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության իրավասու մարմնի անվանումը.

2) արարքի նկարագրությունը, որի առնչությամբ ուղարկվում է քրեական հետապնդում իրականացնելու մասին խնդրանքը.

3) արարքը կատարելու ժամանակի և տեղի մասին հնարավորինս ստույգ նշումներ.

4) խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության այն օրենքի բնագիր տեքստի պատճենը, որը տվյալ արարքը դիտում է որպես հանցագործություն, ինչպես նաև այն օրենսդրական նորմերի տեքստերի պատճենները, որոնք էական նշանակություն ունեն գործով վարույթի համար.

5) կասկածվող անձի անունը, հայրանունը և ազգանունը, քաղաքացիությունը, ինչպես նաև նրա մասին հայտնի այլ տվյալներ.

6) տվյալ հանցագործությամբ պատճառված վնասի չափի և խնդրանքն ուղարկելու պահին դրա հատուցման վիճակի մասին:

2. Խնդրանքին պետք է կցվեն խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության իրավասու մարմնի մոտ առկա ապացույցներն ու այլ նյութեր:

Գործում առկա բոլոր փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն համապատասխան պաշտոնատար անձի կողմից՝ նրա պաշտոնի նշումով, և հաստատված լինեն խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության իրավասու մարմնի զինանշանի պատկերով կնիքով:

Հոդված 548. Քրեական վարույթի արդյունքների մասին տեղեկացնելը

Քրեական վարույթ իրականացնելու մասին խնդրանք ստացած Հայաստանի Հանրապետության դատախազը խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության իրավասու մարմնին տեղեկացնում են տվյալ քրեական վարույթի արդյունքում ընդունված վերջնական որոշման մասին՝ ուղարկելով դրա հաստատված պատճենը:

Հոդված 549. Առարկաներ հանձնելը

1. Փոխադարձության կարգով իրավական օգնություն ցույց տալու խնդրանքն ստացած Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը խնդրանքն ուղարկած օտարերկրյա իրավասու մարմնի միջնորդությամբ, առանց վնասելու իր կողմից վարվող քրեական վարույթի քննությունը, նրան են հանձնում այն առարկաները, որոնք՝

1) օգտագործվել են հանցանքը կատարելիս, այդ թվում՝ հանցագործության գործիքները, առարկաները, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով, կամ հանցագործն ստացել է որպես փոխհատուցում հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների փոխարեն.

2) կարող են ունենալ ապացուցողական նշանակություն օտարերկրյա պետությունում վարվող քրեական վարույթով: Այդ առարկաները հանձնվում են նաև այն դեպքում, երբ հանցագործին հանձնելն անհնար է նրա մահվան, փախուստի կամ այլ պատճառներով:

2. Սույն հոդվածում նշված գործիքները, առարկաները օտարերկրյա պետության իրավասու մարմնին կարող են հանձնվել պայմանով, որ օտարերկրյա պետությունում վարվող քրեական վարույթն ավարտելուց հետո անհապաղ վերադարձվեն դրանք հանձնած Հայաստանի Հանրապետության դատարան, դատախազին, քննիչին, հետաքննության մարմին:

3. Օտարերկրյա պետության իրավասու մարմին հանձնված գործիքների, առարկաների նկատմամբ երրորդ անձանց իրավունքները մնում են ուժի մեջ:

Հոդված 550. Փոխադարձության հիման վրա իրավական հարցերով օտարերկրյա իրավասու մարմիններ դիմելու և դրա առնչությամբ ստացված նյութերի օգտագործման կարգը

1. Փոխադարձության հիման վրա իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ խնդրանքը կազմելիս և օտարերկրյա պետության իրավասու մարմին ուղարկելիս Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը պահպանում են խնդրանքի ձևի և դրա ներկայացման վերաբերյալ տվյալ օտարերկրյա պետության օրենքով նախատեսված պահանջները,

իսկ օտարերկրյա պետության օրենքի բացակայության դեպքում խնդրանքը կազմվում և օտարերկրյա պետության իրավասու մարմին է ուղարկվում սույն օրենսգրքի 547-րդ հոդվածով սահմանված ձևին և կարգին համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի խնդրանքը տվյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից կատարվելու ընթացքում լրացուցիչ փաստաթղթերի, նյութերի, այդ թվում՝ ապացույցների, առարկաների տրամադրումը Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից իրականացվում է օտարերկրյա պետության համապատասխան մարմնի հետ ձեռք բերված պայմանավորվածություններին և սույն գլխի դրույթներին համապատասխան:

3. Օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից խնդրանքի կատարման կապակցությամբ ստացված փաստաթղթերը, առարկաները, նյութերը, այդ թվում՝ ապացույցները, Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը օգտագործում են սույն օրենսգրքին համապատասխան:

Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմինը խնդրել է իր տրամադրած փաստաթղթերը, նյութերը կամ առարկաները վերադարձնել, ապա դա իրականացվում է նրա հետ ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան:

4. Եթե փոխադարձության հիման վրա իրավական օգնության արդյունքում տեղի է ունեցել հանցագործություն կատարած անձի հանձնում Հայաստանի Հանրապետությանը, ապա այդ անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվում կամ տվյալ օտարերկրյա պետությունում հարուցված հետապնդումը շարունակում են սույն օրենսգրքով իրավասու Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը՝ այդ անձի նկատմամբ իրականացնելով սույն օրենսգրքից բխող համապատասխան դատավարական գործողություններ:

Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից անձի հանձնումը պայմանավորված է նրա վերադարձնելու պայմանով, ապա նրա վերադարձը իրականացվում է փոխադարձ պայմանավորվածությանը համապատասխան:

Ընդ որում, եթե հանձնումը պայմանավորված է անձին կալանքի տակ պահելու հանգամանքով, ապա նա Հայաստանի Հանրապետությունում սույն օրենսգրքով սահմանված կարգով կալանքի տակ կարող է պահվել այն ժամկետով, որի ընթացքում այդ անձը ենթակա է վերադարձման տվյալ օտարերկրյա պետության տարածք: Այդ ժամկետը չի կարող գերազանցել նախնական կալանքի տակ պահելու համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները:

5. Օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքով նրա կողմից վարվող քրեական գործով անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելիս, անձանց հանձնելիս, հանցագործության գործիքներ կամ իրեր փոխանցելիս Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը օտարերկրյա պետության իրավասու մարմնի ուշադրությունը պետք է հրավիրեն համապատասխան գործողություններն իրենց կողմից կատարվելու վերաբերյալ սույն գլխի համապատասխան կանոնների վրա:

Հոդված 551. Անձնաց ներկայանալը Հայաստանի Հանրապետություն

1. Փոխադարձության կարգով քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու շուրջ պայմանավորվածություններին համապատասխան՝ խնդրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետություն կարող են կանչվել Հայաստանի Հանրապետությունում քննվող քրեական վարույթով որպես վկա, տուժող, գույքային պատասխանող, նրանց ներկայացուցիչներ, փորձագետներ հանդես եկող այն անձինք (այսուհետ՝ այլ անձինք), ովքեր, լինելով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, հայտնի է, որ գտնվում են այն օտարերկրյա պետության տարածքում, որի իրավասու մարմիններ համապատասխան խնդրանք է ուղարկվում:

2. Եթե այլ անձինք իրենց համաձայնությամբ և կամքով ներկայանում են Հայաստանի Հանրապետություն, ապա համապատասխանաբար դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը նրանց մասնակցությամբ համապատասխան դատավարական գործողությունները կատարում են սույն

օրենսգրքով սահմանված կարգով՝ հետևյալ վերապահումներով. եթե ներկայացած այլ անձը օտարերկրյա պետության քաղաքացի է կամ նրա տարածքում այդ պետության օրենքներին համապատասխան բնակության վայր ունեցող քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրա նկատմամբ արգելվում է կիրառել բերման ենթարկելու, դրամական տույժի, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ կամ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու դատավարական գործողություններ:

3. Այլ անձինք Հայաստանի Հանրապետություն կարող են կանչվել և ներկայանալ իրենց ազատ կամքի արտահայտմամբ նաև իրենց գտնվելու պետության և Հայաստանի Հանրապետության միջև փոխադարձության շուրջ պայմանավորվածությունների բացակայության դեպքում:

Հայաստանի Հանրապետություն ներկայացած՝ սույն մասով նախատեսված այլ անձանց նկատմամբ նույնպես տարածվում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոնները:

ԳԼՈՒԽ 66
ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Հոդված 552. Միջազգային մարմինների հետ հաղորդակցվելու հիմքը

1. Սույն օրենսգրքի իմաստով միջազգային մարմիններ են համարվում միջպետական, միջկառավարական կամ միջգերատեսչական միջազգային պայմանագրերով ստեղծված դատարանները կամ այլ այնպիսի մարմիններ, որոնց իրավասությունների մեջ են մտնում քրեական վարույթերով որոշակի դատավարական գործողությունների կատարումը և հանցավորության դեմ պայքարի գործում պետությունների ջանքերին օժանդակելը, նպաստելը, աջակցելը, ինչպես նաև քրեական պատիժներ նշանակելը և դրանք ի կատար ածման ներկայացնելը:

2. Միջազգային մարմինների հետ հարաբերությունները Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը

իրականացնում են այդ մարմինների հիմնադրման (ստեղծման) մասին, դրանց լիազորությունները սահմանող միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը:

Եթե Հայաստանի Հանրապետությունը մասնակից չէ միջազգային մարմնի հիմնադրման և դրանից բխող միջազգային պայմանագրերին, որոնք կարգավորում են քրեական ոլորտում համագործակցության հարցերը, ապա այդ մարմինների հետ Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը հաղորդակցվում են տվյալ միջազգային մարմնի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված քրեական վարույթներով համագործակցության կամ օգնության մասին միջազգային պայմանագրին համապատասխան:

3. Եթե Հայաստանի Հանրապետությունը մասնակից է տվյալ միջազգային մարմնի ստեղծման կամ նրա լիազորությունները սահմանող մի քանի միջազգային պայմանագրերից ոչ բոլորին, ապա մյուս պայմանագրի (պայմանագրերի) դրույթները, որին Հայաստանի Հանրապետությունը մասնակից չէ, Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կարող են կիրառել համապատասխան դատավարական գործողությունները կատարելիս, եթե դրանք չեն հակասում սույն օրենսգրքի և քրեական դատավարության նորմեր պարունակող այլ օրենքների պահանջներին:

Հոդված 553. Միջազգային մարմինների հետ հաղորդակցության և քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու կարգը

1. Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը միջազգային մարմինների իրավասությունից բխող հարցերով իրավական օգնություն կամ առաջարկություն ցույց տալու հարցումներով նրանց դիմում և իրավական օգնությունը կամ աջակցությունը ստանում են սույն օրենսգրքի սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

Ընդ որում, տվյալ միջազգային մարմին համապատասխան հարցում ներկայացնելիս Հայաստանի Հանրապետության դատարանները դա իրականացնում են Հայաստանի Հանրապետության արդարադատության

նախարարության միջոցով, իսկ դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջոցով, եթե համապատասխան միջազգային պայմանագրով քրեական վարույթներով իրավական օգնության այլ կարգ սահմանված չէ:

2. Միջազգային մարմնի կողմից քրեական վարույթներով իրավական օգնություն կամ աջակցություն ցույց տալուն Հայաստանի Հանրապետության դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի (նրա ներկայացուցչի) մասնակցության հնարավորության դեպքում վերջիններս պարտավոր են տվյալ մարմնում գտնվելու ընթացքում կատարել սույն օրենսգրքից և այլ օրենքներից բխող իրենց վրա դրվող պարտականությունները՝ համապատասխան միջազգային պայմանագրերից բխող բացառություններով:

3. Միջազգային մարմնի հարցումները Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կատարում են սույն օրենսգրքով նախատեսված կանոններին համապատասխան՝ միջազգային պայմանագրից բխող բացառություններով:

Եթե միջազգային մարմնի հարցումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կատարվելիք դատավարական գործողություններին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետություն է ներկայանում միջազգային մարմնի իրավասու պաշտոնատար անձը, ապա նրա հետ Հայաստանի Հանրապետությունում հաղորդակցվելու կարգը և պայմանները որոշվում են այդ մարմնի լիազորություններին առնչվող միջազգային պայմանագրով, իսկ այդ պայմանագրով կարգ և պայմաններ սահմանված չլինելու դեպքում կիրառվում են հետևյալ կանոնները՝

1) Հայաստանի Հանրապետության դատարանների հետ կապված դատավարական գործողությունների առնչությամբ միջազգային մարմնի պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին է ներկայացնում այն գործը և դրան առնչվող հարցերի շրջանակը, որոնք ենթակա են պարզաբանման կամ լուծման Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը որոշում է միջազգային մարմնի պաշտոնատար անձի ներկայացրած հարցերի պարզաբանմանը կամ լուծմանը ներգրավվող Հայաստանի Հանրապետության դատարանը կամ դատարանները՝ սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան.

2) մինչդատական վարույթում գտնվող քրեական վարույթի հետ կապված դատավարական գործողությունների առնչությամբ միջազգային մարմնի պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին է ներկայացնում այն գործը և դրան առնչվող հարցերի շրջանակը, որոնք ենթակա են պարզաբանման և լուծման Հայաստանի Հանրապետության հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը որոշում է միջազգային մարմնի պաշտոնատար անձի ներկայացրած հարցերի պարզաբանման կամ լուծման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության նախաքննության կամ հետաքննության մարմինը (մարմինները)՝ սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համապատասխան դատավարական գործողությունների ավարտից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը համապատասխանորեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կամ գլխավոր դատախազին գրավոր ծանուցում են կատարված դատավարական գործողությունների մասին:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը իրենց իրավասությունների շրջանակներում համակարգում են համապատասխան դատավարական գործողությունների կատարմանը ներգրավված Հայաստանի Հանրապետության մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունները՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով իրավասու այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց:

ԳԼՈՒԽ 67

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդված 554. Օտարերկրյա պետությունների դատավճիռների ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետությունում:

2. Օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են տվյալ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով:

3. Օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչում են՝

1) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը, եթե ճանաչման ենթակա դատավճիռը կայացրել է օտարերկրյա պետության բարձրագույն դատական մարմինը.

2) Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարանը, եթե ճանաչման ենթակա դատավճիռը կայացրել է օտարերկրյա պետության իրավասու վերաքննիչ դատարանը.

3) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանը՝ սույն օրենսգրքով սահմանված ընդդատությանը համապատասխան, եթե ճանաչման ենթակա դատավճիռը կայացրել է օտարերկրյա պետության առաջին ատյանի դատարանը:

4. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման վերաբերյալ սույն հոդվածի 3-րդ մասով իրավասու Հայաստանի Հանրապետության դատարանը որոշում է կայացնում:

Հայաստանի Հանրապետությունում ճանաչված օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը կատարվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությանը, իսկ վնասի հատուցմանը և գույքային այլ բռնագանձումներին վերաբերող մասով՝ Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրությանը համապատասխան՝ միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

Հոդված 555. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման պայմանները

1. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը պարզում է, թե որքանով են պահպանված համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված այն պայմանները, որոնք ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելու հիմք են:

Այդ պայմանների պահպանված լինելը, ինչպես նաև տվյալ միջազգային պայմանագրով դատավճռի ճանաչումը և կատարումը մերժելու հիմքերի բացակայությունը հիմք են օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու որոշում կայացնելու և ի կատար ածման ներկայացնելու համար:

2. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերով՝ նկատի ունենալով նաև կիրառվող միջազգային պայմանագրի վերաբերյալ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արած հայտարարությունները կամ վերապահումները, ինչպես նաև, եթե՝

1) արարքը, որի համար անձը դատապարտվել է, Հայաստանի Հանրապետության օրենքով քրեորեն պատժելի չէ.

2) դատավճռով որպես պատիժ նախատեսված է մահապատիժ:

Հոդված 556. Միջազգային դատարանի դատավճիռը ճանաչելը և մերժելը

1. Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ենթակա է ճանաչման, եթե դա նախատեսված է այդ դատարանի հիմնադրման մասին կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրով (պայմանագրերով):

Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշում է կայացնում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը՝ միջազգային դատարանի իրավասությունը սահմանող միջազգային պայմանագրով սահմանված կարգով:

2. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է այդ դատարանի իրավասությունը սահմանող միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով, և ճանաչումը կարող է մերժվել այդ պայմանագրով նախատեսված հիմքերով, ինչպես նաև սույն օրենսգրքի 555-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում:

3. Միջազգային դատարան է համարվում Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող այն միջպետական մարմինը, որն իր հիմնադրման կամ նրա լիազորությունները սահմանող այլ միջազգային պայմանագրով (պայմանագրերով) իրավասու է քրեական գործեր քննելու և դրանց վերաբերյալ դատավճիռ կայացնելու:

4. Միջազգային դատարանի դատավճիռների կատարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությանը, իսկ վնասի հատուցմանը և գույքային այլ բռնագանձումներին վերաբերող մասով՝ Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

Հոդված 557. Օտարերկրյա պետության դատարանի և միջազգային դատարանի դատավճռի ճանաչման իրավական հետևանքները

Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճռի ճանաչումը Հայաստանի Հանրապետության տարածքում առաջացնում է նույն իրավաբանական հետևանքները, ինչ կառաջացներ Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը:

Հոդված 558. Միջազգային դատարանի դատավճռի կատարումը առանց ճանաչման

1. Եթե միջազգային դատարանի հիմնադիր կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրով (պայմանագրով) նախատեսված է այդ դատարանի դատավճռի կատարում առանց ճանաչման, ապա այդ դատավճիռը տվյալ միջազգային դատարանի կանոնակարգերով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում ստանալուն պես ուղարկվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկ՝ ի կատար ածման:

2. Եթե տվյալ միջազգային դատարանի կանոնակարգով նախատեսված չէ նրա դատավճռի անմիջական կատարման կամ ճանաչման ձևով կատարման պարտականություն, ապա այդ դատավճռի հիման վրա, սույն օրենսգրքին, հարուցվում է վերանայման վարույթ:

Հոդված 559. Միջազգային դատարանի դատավճռի կատարման իրավական հիմքերը և կարգը

1. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է կատարվել տվյալ դատարանի վերաբերյալ միջազգային պայմանագրերին Հայաստանի Հանրապետության մասնակից լինելու դեպքում:

2. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է ի կատար ածվել նաև այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում նման միջազգային պարտավորություն ստանձնած չլինելով հանդերձ՝ տվյալ դատարանի իրավասության շրջանակներում միջազգային դատարանի հետ գրավոր համաձայնություն է ձեռք բերել այդ դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ի կատար ածելու վերաբերյալ:

3. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ի կատար ածման է ներկայացվում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան և առանց դատավճիռը Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կողմից ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու, եթե նշված պարտավորություններով այլ բան նախատեսված չէ:

4. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ի կատար ածման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համաձայն, որոշում է քրեակատարողական այն հիմնարկը, որտեղ պետք է դատապարտված անձը կրի դատավճռով նշանակված պատիժը:

5. Միջազգային դատարանի դատավճռով Հայաստանի Հանրապետությունում պատիժ կրող անձի նկատմամբ գործում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենքի ռեժիմը՝ միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

Հոդված 560. Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճռի կատարման իրավական հետևանքները

1. Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճռի ի կատար ածման նկատմամբ գործում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենքի ռեժիմը:

Պատիժ կրող անձի նկատմամբ այն առաջացնում է նույն իրավաբանական հետևանքները, ինչ կառաջանար, եթե տվյալ անձը դատապարտված լիներ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա իրավասու դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճռով նշանակված պատիժը լրիվ կամ չկրած մասով Հայաստանի Հանրապետության տարածքում կրող անձը օգտվում է պատժից վաղաժամկետ ազատվելու այն իրավունքներից, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության

համապատասխան միջազգային պայմանագրերից, այդ թվում՝ ներման և համաներման իրավունքներից:

3. Պատժի լրիվ կամ դրա մի մասի կրումից կամ պատժից՝ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով վաղաժամկետ ազատվելուց հետո անձը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է գտնվել իր կարգավիճակին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրյա պետության քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ և այլն):

Միաժամանակ, եթե պատիժը կրած կամ պատժից վաղաժամկետ ազատված անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացի չէ և, ըստ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի, կարող է փոխանցվել որևէ օտարերկրյա պետության, որը պարտավոր է ընդունել նրան, կամ որևէ այլ պետության, որը համաձայնվել է ընդունել նրան, ապա այդ անձը իր համաձայնությամբ փոխանցվում է տվյալ պետությանը:

4. Եթե օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ի կատար ածելու ընթացքում վերանայում է դրա իրավասությունն ունեցող օտարերկրյա պետության դատարանը կամ միջազգային դատարանը, ապա ի կատար ածումը դադարեցվում կամ շարունակվում է վերանայման արդյունքում կայացրած դատավճռին համապատասխան և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

5. Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը կարող է վերանայել բացառապես Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում:

ԳԼՈՒԽ 68
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ

Հոդված 561. Միջազգային դատարան դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր անձ, որ գտնում է, որ քրեական վարույթի արդյունքում սույն օրենսգրքով սահմանված կարգով ընդունված վերջնական դատական որոշմամբ իր նկատմամբ խախտվել են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված իրավունքները, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարան դիմելու իրավունք ունի՝ այդ դատարանի հիմնադրման մասին կամ նրա լիազորությունները սահմանող միջազգային պայմանագրերով (այսուհետ՝ միջազգային դատարանի կանոնակարգեր) սահմանված կարգով:

2. Սույն գլխի նպատակների համար վերջնական դատական որոշում է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի կայացրած և 437-րդ հոդվածով սահմանված կարգով ուժի մեջ մտած որոշումը:

3. Միջազգային դատարան դիմելու իրավունքը ծագում է վերջնական դատական որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ համապատասխան միջազգային դատարանի կանոնակարգերով սահմանված պահից: Անձն այդ իրավունքը կորցնում է միջազգային դատարանի կանոնակարգերով սահմանված դեպքերում և կարգով:

4. Միջազգային դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանվում է տվյալ միջազգային դատարանի կանոնակարգերով:

Հոդված 562. Միջազգային դատարան դիմելու կարգը

1. Միջազգային դատարան դիմելու կարգը սահմանվում է համապատասխան միջազգային դատարանի կանոնակարգերով:

2. Անձը, որը մտադրություն ունի օգտվելու միջազգային դատարան դիմելու իրավունքից, ինչպես նաև նրա ներկայացուցիչը իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից, ինչպես նաև տվյալ գործով դատական ակտեր ընդունած Հայաստանի Հանրապետության մյուս դատարաններից ձեռք բերելու տվյալ գործին առնչվող փաստաթղթեր, դրանց պատճենները, լուսապատճենները, կատարել քաղվածքներ դրանցից:

3. Միջազգային դատարան դիմելու հետ կապված ծախսերը կրում է դիմողը, եթե այդ դատարանի կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 563. Միջազգային դատարանին աջակցելու պարտականությունը

Միջազգային դատարանի վարույթում գտնվող գործի հետ կապված հանգամանքներ պարզելու կամ լրացուցիչ ապացույցներ, փաստաթղթեր և այլ նյութեր ներկայացնելու վերաբերյալ այդ դատարանի ուղարկած հարցումներին Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը պատասխանում և անհրաժեշտ նյութերն ու փաստաթղթերը տրամադրում է համապատասխան հարցումն ստանալու օրվանից հետո 15 օրվա ընթացքում, եթե միջազգային դատարանի կանոնակարգերով այլ ժամկետ սահմանված չէ:

ԲԱԺԻՆ 17

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

ԳԼՈՒԽ 69

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Հոդված 564. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը գործողության մեջ դնելը

Սույն օրենսգիրքը գործողության մեջ է դրվում հատուկ օրենքով:

Հիմնավորում

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի

Ներկա իրավիճակը և առկա խնդիրները.

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի կիրառման ավելի քան տասը տարիների ընթացքում երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք անխուսափելի փոփոխություններ են ենթադրում քրեական գործերի քննության և լուծման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող հիմնական իրավական ակտում: Մասնավորապես, 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի Կոնվենցիան, ճանաչեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավասությունը, ինչի հետևանքով երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ ձևափոխություններ պետք է կատարվեն ներպետական համապատասխան ոլորտներում, այդ թվում՝ քրեական արդարադատության բնագավառում: 2005 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած հանրաքվեով երկրի հիմնական օրենքում կատարվեցին հիմնարար փոփոխություններ, որոնք էապես շոշափեցին քրեական արդարադատության ոլորտը՝ անխուսափելի դարձնելով Օրենսգրքում համապատասխան փոփոխություններն ու լրացումները: Քրեադատավարական իրավահարաբերությունների կարգավորման գործընթացի վրա նշանակալի ազդեցություն ունեցավ նաև դատական պրակտիկան: Մասնավորապես, Օրենսգրքի գործածության ընթացքում բացահայտված մի շարք թերություններ ու բացթողումներ իրենց գնահատականը ստացան ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում:

Վերը թվարկված գործոնների ամբողջությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների մշտական զարգացումը ներկայումս հանգեցրել են այնպիսի մի իրավիճակի, որի պայմաններում 1998 թվականի Օրենսգիրքն օբյեկտիվորեն ի վիճակի չէ համապարփակ կարգավորման ենթարկել քրեական գործերի քննության և լուծման ընթացակարգը, այդ գործընթացի շրջանակներում ապահովել հանրային

և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը, հետևաբար, և քրեական դատավարության խնդիրների լուծումն ու նպատակների նվաճումը: Ներկայումս առկա են բոլոր այն օբյեկտիվ նախադրյալները (իրավական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն), որոնց ամբողջությունը թույլ է տալիս խոսել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման անհրաժեշտության մասին:

<u>Առաջարկվող լուծումները.</u>

1. Իրավունքի հանրաճանաչ սկզբունքների հիման վրա քրեադատավարական ոլորտ ներգրավված անձանց իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանությունը.

1.1 Անձի ազատության իրավունքի համակարգային պաշտպանությունը.

Ա) Ձերբակալում.

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում անձի ազատության իրավունքի պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մշակած չափանիշներին համահունչ, ինչպես նաև ելնելով ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների համապատասխան որոշումների ինկորպորացման անհրաժեշտությունից, հստակեցված են ձերբակալման նպատակը, հիմքերը, պայմանները, ինչպես նաև կիրառման ընթացակարգերը: Մասնավորապես, անձի իրավուքների ապահովման տեսանկյունից կարևոր երաշխիք պետք է համարել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում ՀՀ սահմանադրության 16-րդ հոդվածով սահմանված ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում որպես ձերբակալում բնորոշելը և ձերբկալաման՝ հանցանք կատարած անձին դատարան ներկայացնելու նպատակի հստակ ամրագրումը: Հաշվի առնելով ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա իրականացվող ձերբակալման հետ կապված պրակտիկայում առաջացող դժվարությունները՝ միանգամայն արդարացված պետք է համարել նոր օրենսգրքի նախագծում այն չնախատեսելը՝ փոխարենն ամրագրելով

ձերբակալաման նոր տեսակ, այն է՝ ձերբակալումը մեղադրյալին դատարան ներկայացնելու կարգադրագրի հիման վրա: Ազատության իրավունքի ապահովման իրական երաշխիք պետք է համարել ձերբակալման տեսակներից յուրաքանչյուրի համար անձին անազատության մեջ պահելու առավելագույն ժամկետների հստակ տարբերակումը և հատկապես ձերբակալման պահից հաշվարկվող այն առավելագույն ժամկետի սահմանումը, որի ընթացքում անձը պետք է տարվի դատարան: Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի պաշտպանվածության բարձրացմանն է նպատակաուղղված կալանավորման հարցը լուծելիս ձերբակալման իրավաչափությունը դատական վերահսկողության առարկա դարձնելը: Օրենսդրական նման կարգավորումը բխում է *habeas corpus* հիմնադրույթից, ըստ որի գործում է ձերբակալման անօրինականության կանխավարկածը, քանի դեռ դատարանը չի հաստատել հակառակը, ինչպես նաև Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներից, որոնք կոչված են անձին ապահովագրել անհիմն ազատազրկումից:

Բ) Կալանավորում և այլընտրանքային խափանման միջոցներ.

Խափանման միջոցների հետ կապված՝ նախագծում տրված կարգավորման բնութագրական գծերից մեկը կալանքի ինստիտուտի համապատասխանեցումն է միջազգային չափանիշներին, ինչպես նաև ՀՀ բարձր դատարանների որոշումներում արտահայտված դիրքորոշումներին: Այդ մասին են, մասնավորապես, վկայում նոր օրենսգրքի նախագծում կալանքի կիրառման իրավաչափության՝ Եվրոպական դատարանի մշակած չափանիշներին համահունչ պայմանների նախատեսումը, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանավորման ժամկետի երկարացման հիմքերի տարանջատումը: Անձի ազատության իրավունքի անհիմն սահմանափակման դեմ կարևոր երաշխիք է կալանավորման մասին որոշումների պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջի հստակ ամրագրումը, ինչը հնարավարություն կտա խուսափելու պրակտիկայում տարածված ստանդարտ արտահայտություններ և սոսկ օրենսդրական դրույթներին հղումներ պարունակող որոշումներից: Նախագծում այն կանոնի նախատեսումը, համաձայն որի կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է ընտրվել միայն

այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցների կիրառումն անհնարին է կամ բավարար չէ մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար, կոչված է վերացնելու տարածված այն արատավոր պրակտիկան, երբ ազատությունից զրկելու հետ կապված այս ծայրահեղ միջոցի կիրառումը կանոն, այլ ոչ թե բացառություն է: Իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանն է նպատակաուղղված նաև նոր այլընտրանքային խափանման միջոցների (տնային կալանք, ոստիկանության հսկողությանը հանձնելը), ինչպես նաև գրավի՝ որպես ինքնուրույն խափանման միջոցի նախատեսումը:

1.2. Մրցակցային տարրերի ուժեղացումը.

Նախագծում վերահիմաստավորվել է քրեական դատավարությունում մրցակցության գաղափարախոսությունը: Այսպես, քրեական դատավարության մրցակցային բնույթին համահունչ՝ ապահովվել է այդ սկզբունքի առանձին տարրերի ներմուծումն ու կիրառումը մինչդատական վարույթում այնքանով, որքանով դա բացասաբար չի անդրադառնա վարույթի արդարացի քննության վրա և չի հանգեցնի չարաշահումների:

Նախաքննության փուլում մրցակցության ընդլայնմանն ուղղված քայլերից մեկն ապացուցողական զանգվածի ձևավորման գործընթացում պաշտպանին լրացուցիչ իրավունքների վերապահումն է: Մասնավորապես, պաշտպանն անվերապահորեն իրավունք ունի մասնակցել իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կամ իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին: Նույն կանոնները գործում են նաև մեղադրյալի մասնակցությամբ կամ պաշտպանի միջնորդությամբ կատարվող փորձաքննությունների դեպքում:

Բացի այդ, քննարկվող սկզբունքի տեսանկյունից կարևոր ձեռքբերում պետք է համարել այն, որ հիմնվելով պաշտպանի կողմից վարույթն իրականացնող մարմնին տրամադրված դատավարական տեղեկատվության օրինականության կանխավարկածի վրա՝ նրա ներկայացրած նյութերը համարվում են թույլատրելի ապացույց, քանի դեռ վարույթն իրականացնող մարմինը չի ապացուցել հակառակը: Ընդ որում, պաշտպանի ներկայացրած փաստաթղթերը կամ առարկաները բոլոր

դեպքերում պետք է մնան քրեական գործի նյութերում՝ անկախ դրանց նկատմամբ վարույթն իրականացնող մարմնի վերաբերմունքից: Դրա հետ մեկտեղ, պաշտպանը պահպանում է անձանց հարցման ենթարկելու և փորձագետի կարծիք հարցնելու իրավունքները:

Նախաքննության ընթացքում մրցակցության տարրերի ամրապնդման երաշխիքներից մեկը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակների ընդլայնումն է: Մասնավորապես, քննչական գործողություններ (խուզարկություն, առգրավում, զննություն) կատարելու համար անձի բնակարան կարելի է մուտք գործել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ դեպքի վայրի զննություն կատարելու դեպքերի:

Մրցակցության ամրապնդմանն ուղղված նորամուծություններից է նաև մինչդատական վարույթի ընթացքում դատավորի ներկայությամբ անձին հարցաքննելու (ցուցմունքը դեպոնացնելու) ընթացակարգը:

Դատական քննության փուլում մրցակցության սկզբունքի զարգացմանն ուղղված կարևոր քայլ է պաշտպանության և մեղադրանքի կողմերի համար ապացույցներ ներկայացնելու հավասար հնարավորության նախատեսումը. գործող կարգավորմամբ մեղադրանքի կողմը կարող է ներկայացնել ապացույցներ, իսկ պաշտպանության կողմը՝ միայն միջնորդել, որպեսզի իր ներկայացրած նյութերը ճանաչվեն ապացույց:

1.3 Մեղադրյալի իրավունքները.

Նախագծով ընդլայնվել է մեղադրյալի իրավունքների շրջանակը՝ նրան ընձեռելով պաշտպանության ավելի լայն հնարավորություններ:

Նախ և առաջ հստակ սահմանվել է, որ մեղադրյալ է համարվում այն անձը, ում նկատմամբ դատախազը հարուցել է քրեական հետապնդում, և միաժամանակ, ում նկատմամբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ մեղադրական կամ արդարացման դատավճիռ: Հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա ձերբակալված անձը մեղադրյալ չի համարվում, սակայն օգտվում է մեղադրյալի համար սահմանված բոլոր իրավունքներից և երաշխիքներից: Օրենսդրական նման

կարգավորումը հնարավորություն է տալիս հրաժարվել «կասկածյալ» սուբյեկտից և միասնական դատավարական կարգավիճակ սահմանել քրեական հետապնդման ենթարկված անձի համար: Դրա շնորհիվ հանցանքի կատարման մեջ կասկածվող անձը օգտվում է մեղադրյալի համար սահմանված բոլոր իրավունքներից: Վերոնշյալ նպատակին է ուղղված նաև այն նորմը, որ այն հարցերի պատասխանները, որոնք անձին տրվել են մինչև մեղադրյալի կարգավիճակ ստանալը և կրել են ակնհայտ մեղադրող բնույթ, հետագայում չեն կարող օգտագործվել դատարանում:

Մեղադրյալի իրավունքների երաշխիքների առումով առաջարկվող կարևոր քայլ է քրեական վարույթում մեղադրյալի հայտնվելու պահից պաշտպանի պարտադիր մասնակցությունը, ինչպես նաև պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի շրջանակի ընդլայնումը և այն ոչ սպառիչ դարձնելը: Քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, քանի դեռ մեղադրյալը նրանից չի հրաժարվել օրենքով սահմանված կարգով: Նշված կարգի խախտումով մեղադրյալի տված ցուցմունքը չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում, եթե մեղադրյալն այն չի հաստատել դատարանում:

Բացի այդ, նախաքննության ավարտին գործի նյութերին ծանոթանալուց հետո մեղադրյալին և/կամ նրա պաշտպանին իրավունք է վերապահված միջնորդություն ներկայացնել մեղադրյալի դեմ ցուցմունք տված դատավարության սուբյեկտին, հարցեր տալու քննչական գործողություն կատարելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել սեփական վկաներին, ինչով կապահովվի նաև Եվրոպական Կոնվենցիայի վեցերորդ հոդվածով նախատեսված իրավունքների իրացումը:

Նախագծում ամրագրվել է ևս մեկ կարևոր երաշխիք՝ ուղղված մեղադրյալի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման իրավունքի լիակատար ապահովմանը: Բանն այն է, որ գործող օրենսգրքի համաձայն արդարացման դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի բավարարման դեպքում անձը կարող է զրկվել իր նկատմամբ կայացված դատական ակտի բողոքարկման հնարավորությունից՝ կապված վճռաբեկ դատարանի՝ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական ազատության հետ: Իսկ նախագծում առաջարկվող տարբերակով Վերաքննիչ դատարանն իրավունք չունի բեկանել արդարացման դատավճիռը և

կայացնել մեղադրական դատավճիռ, այլ պետք է գործն ուղարկի առաջին ատյանի դատարան նոր քննության:

1.4 Տուժողի իրավունքների ապահովման երաշխիքների ամրապնդում.

Տուժողի իրավունքների պաշտպանությանն է միտված նախագծի էական նորամուծություններից մեկը, այն է՝ մասնավոր մեղադրանքի ինստիտուտի ներմուծումը, երբ օրենքով սահմանված հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթ սկսելու մասին տուժողի բողոքն անմիջականորեն հասցեագրվում է դատարանին:

Ապացուցման գործընթացին տուժողի մասնակցության ապահովման երաշխիքների տեսանկյունից առաջադիմական քայլ է վերջինիս՝ ցուցմունքը դեպոնացնելու (մինչդատական վարույթի ընթացքում դատավորի ներկայությամբ անձին հարցաքննելու հնարավորություն) նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք վերապահելը:

2. Դատավարական մեխանիզմների կատարելագործում.

2.1 Մինչդատական վարույթ.

Ա. Նախագծով առանցքային փոփոխություններ են նախատեսվում *մինչդատական վարույթի* առնչությամբ: Այս փուլում առաջին մեծ փոփոխությունն այն է, որ նախաքննությունը սկսվում է հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից, այսինքն՝ վերացել է քրեական գործի հարուցման (նյութերի նախապատրաստության) փուլը: Այս բարեփոխման նպատակն է առաջին հերթին հանցագործությունների մասին հաղորդումների գրանցման և դրանց իրավական արձագանքի հետ կապված իրավահարաբերությունները բերել դատախազական հսկողության ոլորտ, ինչպես նաև ապահովել վարույթի միասնականությունը:

Բ. Հետաքննություն և նախաքննություն.

Նոր օրենսգրքի նախագծում «հետաքննություն» և «նախաքննություն» սահմանադրական հասկացությունների քրեադատավարական հարաբերակցության

էական փոփոխությունը, մասնավորապես օպերատիվ-հետախուզական գործունեությունը քրեական դատավարության օրենսգիրք ինկորպորացնելը և քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման գործընթացը հետաքննություն համարելը նպատակ է հետապնդում այն դարձնել ավելի կանխատեսելի, ինչպես նաև ներառել դատախազական հսկողության տիրույթ, ինչը քրեական ընթացակարգի շրջանակներում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման կարևոր գրավական է: Հարկ է ընդգծել, որ քրեական դատավարության ոլորտ ներմուծվում է միայն ավարտված հանցագործությունների քննության հետ կապված օպերատիվ-հետախուզական գործունեությունը, մինչդեռ նշված գործունեությունը՝ որպես հանցագործությունների նախականխման, կանխման և խափանման միջոց, շարունակում է մնալ որպես համապատասխան օրենքի կարգավորման առարկա: Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիքների տեսանկյունից նշված նոր մեխանիզմի էական առավելություն պետք է համարել այն, որ հետաքննության շրջանակներում քննիչի հանձնարարությամբ իրականացվող առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումների՝ գաղտնի քննչական գործողությունների (օրինակ՝ հեռախոսային խոսակցությունները լսելը, նամակագրությունը վերահսկելը, ներքին դիտումը և այլն) արդյունքներն ապացուցողական նշանակություն են ստանում միայն դատավարական բոլոր երաշխիքների ապահովման պայմաններում (դատարանի որոշում, քննիչի գրավոր հանձնարարություն, օրենքով սահմանված ընթացակարգ և այլն):

Գ. Պարզեցված նախաքննություն.

Նախաքննության ծանրաբեռնվածության կրճատման, ժամանակային, մարդկային և նյութական ռեսուրսների արդարացված խնայողության նպատակով նախագծում առաջարկվում է ներդնել բազմաթիվ երկրներում իր կիրառման արդյունավետությունն ապացուցած պարզեցված նախաքննության ինստիտուտը: Այս վարույթի առանձնահատկությունն այն է, որ հաշվի առնելով քննվող հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը (այս դատավարական ձևը կարող է կիրառվել միայն ոչ մեծ և որոշ միջին ծանրության հանցագործությունների դեպքում)՝ սահմանափակվում է ապացուցման առարկան,

ապացուցողական գործունեության հիմնական ծանրությունն ընկնում է դատական քննության փուլի վրա, նախաքննության բովանդակությունը կազմող գործողությունները կատարվում են սեղմ ժամկետներում, իսկ քննություն իրականացնող սուբյեկտի և դատախազի դատավարական փոխհարաբերություններն առավելագույնս պարզեցվում են: Որպես այս ընթացակարգի շրջանակներում դատավարության մասնակիցների իրավունքների և շահերի պաշտպանության երաշխիք, ինչպես նաև բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով դատախազի որոշմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության վերաբերյալ ցանկացած վարույթ կարող է քննվել ընդհանուր նախաքննության կարգով:

2.2. Դատախազ-քննիչ-քննչական մարմնի ղեկավար. գործառույթների և լիազորությունների ճշգրտում.

Մինչդատական վարույթում գործող այս սուբյեկտների փոխհարաբերությունների կանոնակարգման հիմքում դրվել է գործառութային տարանջատման սկզբունքը՝ փոխհարաբերությունների առանցք դիտարկելով սուբյեկտ-գործառույթ-լիազորություն շղթան: Քննարկվող սուբյեկտների փոխհարաբերությունների կանոնակարգման հետ կապված՝ նոր օրենսգրքի նախագծի հիմքում դրված է այն գաղափարը, որ մեկ սուբյեկտը չպետք է միջամտի մյուսի գործառույթի իրականացմանը կամ կրկնօրինակի այն: Նախագծում տրված կարգավորման շրջանակներում նշված սուբյեկտների լիազորություններն օրգանապես բխում են նրանց գործառույթներից և սահմանված են այն հաշվով, որպեսզի ապահովեն հակակշիռների կառուցակարգեր, այլ ոչ թե ձևավորեն ենթակայության հարաբերություններ: Մասնավորապես, մինչդատական վարույթում քննիչին վերապահված լիազորությունները (ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ և իրականացնել համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ), նպատակաուղղված են վերջինիս հիմնական գործառույթի, այն է՝ քննության արդյունավետ իրականացմանը: Սահմանված են նաև քննիչի դատավարական ինքնուրույնությունն ապահովող երաշխիքներ (դատախազի հանձնարարությունները և որոշումները

բողոքարկել վերադաս դատախազին, հսկող դատախազին բողոքարկել քննչական մարմնի ղեկավարի հանձնարարություններն ու որոշումները): Նախագծում դատախազին օրենքի խախտումների բացահայտմանը, վերացմանը և նախազգուշացմանն ուղղված հսկողական լիազորությունների վերապահումն ուղղված է վերջինիս՝ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու բացառիկ գործառույթի իրացմանը:

Այս առումով նախագծի էական նորամուծություններից է նշված գործառույթի իրականացման շրջանակներում դատախազին քննչական գործողություններին մասնակցելու հնարավորություն ընձեռելը: Հակակշիռների կառուցակարգերի ապահովմանն է միտված այն, որ մի կողմից՝ հաշվի առնելով քննիչի որոշումները և գործողությունները դատախազական հսկողության պարտադիր օբյեկտ դարձնելու անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ քննության գործառույթի՝ բացառապես քննիչի կողմից իրականացման հանգամանքը և քննիչի՝ որպես նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձի օրինապահության կանխավարկածը, դատախազին իրավունք է վերապահվել ստուգել միայն արդեն ընդունված որոշման կամ կատարված գործողության օրինականությունը և դրա արդյունքում ձեռնարկել օրինականության խախտումների վերացմանն ուղղված միջոցառումներ:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով դատախազին վերապահված բացառիկ լիազորության իրացմանն է նպատակաուղղված քրեական հետապնդման հարուցման նույնացումը մինչդատական վարույթի համար բեկումնային նշանակություն ունեցող որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման հետ և դրա իրավասությունը դատախազին վերապահելը:

Քննչական մարմնի ղեկավարի գործառույթների հետ կապված՝ նախագծում տրված կարգավորման հիմքում դրված է այն հիմնարար գաղափարը, որ քննչական մարմնի ղեկավարին որոշակի լիազորությունների վերապահումը չպետք է խախտի քրեական դատավարության սուբյեկտների գործառույթների ներդաշնակ հարաբերակցությունը և չպետք է հանգեցնի դատախազի փոխարինմանը քննչական մարմնի ղեկավարով, պետք է բացառվեն նրանց միջև մրցակցությունն ու լիազորությունների կրկնությունը: Ըստ այդմ, քննչական մարմնի ղեկավարին ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի նախագծով իր ենթակայությամբ գործող քննիչների նկատմամբ մեթոդական, կազմակերպական և աշխատանքների արդյունավետ իրականացման համար վերահսկողական լիազորությունների խիստ որոշակի շրջանակի ընձեռումը նպատակաուղղված է քննության գործընթացը կազմակերպելու և ապահովելու, այսինքն՝ գերատեսչական վերահսկողություն իրականացնելու գործառույթի իրացմանը:

2.3. Նախնական դատական լսումներ

Մրցակցության և կողմերի հավասարության պայմաններում մինչդատական վարույթի արդյունքների ստուգման ու դատական քննության նախապատրաստմանն ուղղված բոլոր հարցերի քննարկման ու լուծման նպատակներով նախագծում նախատեսվել է դատական քննությանը նախորդող նոր պարտադիր փուլ՝ նախնական դատական լսումներ՝ հստակ սահմանելով քրեադատավարական այս փուլի շրջանակներում լուծման ենթակա հարցերի, ինչպես նաև ընդունվող որոշումների շրջանակը: Ապացույցի թույլատրելիության հարցի լուծման հիմքով նախնական լսումների անցկացումը նպատակաուղղված է մրցակցության սկզբունքի տարրերի ներմուծման պայմաններում արդարադատության արդյունավետ իրականացման ապահովմանը և դատական քննությունը հնարավոր քաշքշուկներից ազատելուն:

2.4 Դատարանի կողմից մեղադրանքը փոխելը.

Մեղադրանքի հիմնավորվածության, արարքի իրավաբանական գնահատականի և փաստական հանգամանքների համապատասխանության, պատժի արդարացիության ապահովմանն ուղղված կարևոր քայլ է դատարանին մեղադրանքը փոխելու իրավունք վերապահելը: Ներկայում, եթե դատարանը խստացման առումով համաձայն չէ հանցավոր արարքի իրավաբանական գնահատականի հետ, իսկ դատախազը պնդում է այն, ապա առաջանում է փակուղային իրավիճակ. դատարանը կա՞մ պետք է կայացնի արդարացման դատավճիռ, կա՞մ պետք է կայացնի իր մասնագիտական համոզմունքին հակառակ դատական ակտ: Երկու դեպքում էլ խախտվում են դատավճռի արդարացիության և

պատժի անխուսափելիության սկզբունքները, տուժողի օրինական շահերը: Տուժողի իրավաչափ շահերը կարող են վտանգվել նաև դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում: Առաջարկվող կարգավորման պարագայում դատախազը չի կարող դատարանում հրաժարվել մեղադրանքից, իսկ դատարանն էլ կաշկանդված չէ մեղադրանքով և կարող է դատավճիռ կայացնելիս փոխել այն՝ ինչպես դեպի մեղմը, այնպես էլ դեպի ծանրը: Արդյունքում ապահովվում է անհրաժեշտ հավասարակշռությունը տուժողի ու մեղադրյալի իրավաչափ շահերի և արդարադատության շահի միջև: Իսկ կողմերին հնարավորություն է տրվում մեղադրանքի կապակցությամբ իրենց կարծիքն արտահայտել և հիմնավորել եզրափակիչ ելույթների ժամանակ, երբ դատարանը կիրառման ենթակա օրենքի մեկնաբանության վերաբերյալ հարցադրումներ է ուղղում նրանց:

2.5. Երկփուլ վճռահատում

Դատարանում քրեական գործի քննության տրամաբանական և անխուսափելի ավարտը դատական ակտի՝ արդարացման կամ մեղադրական դատավճռի կայացումն է, որով որոշվում են ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ (այդ թվում՝ համապատասխան պատժատեսակ և պատժաչափ) կիրառելու կամ չկիրառելու և այլ հարցեր: Սակայն գործող օրենսգրքի 360-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ հարցերը միմյանցից տարբերվում են իրենց բովանդակությամբ, խորությամբ և լուծման բարդությամբ, հետևաբար, դրանց քննարկումն ու լուծումը պահանջում է տարբերակված մոտեցում:

Այս կապակցությամբ Նախագծով առաջարկվում է սահմանել դատական ակտի կայացման և հրապարակման երկփուլ կարգ: Մասնավորապես, առաջին փուլում կողմերի և դատարանի համար քննարկման առարկա է դառնում միայն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը, որի լուծումից կախված՝ երկրորդ փուլում որոշվում են դատավճռի կոնկրետ տեսակից (արդարացման կամ մեղադրական) օրգանապես և տրամաբանորեն բխող մյուս հարցերը: Այսպես, մեղադրական վերդիկտի հրապարակումից հետո հրավիրված լրացուցիչ դատական նիստում քննարկման առարկա են դառնում ամբաստանյալի նկատմամբ պատիժ

նշանակելու կամ չնշանակելու, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներն ուսումնասիրելու, կոնկրետ պատժատեսակը կամ պատժաչափը ընտրելու, քաղաքացիական հայցն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու, պատճառված գույքային վնասը հատուցելու, խափանման միջոցը պահպանելու և այլնի հետ կապված հարցեր, իսկ արդարացման վերդիկտի հրապարակման դեպքում լրացուցիչ դատական նիստում քննարկվում են ամբաստանյալի ռեաբիլիտացիայի հետ կապված հարցերը:

Առաջարկվող մեխանիզմն ունի հետևյալ առավելությունները. առաջինը, այն դատավարության մասնակիցներին հնարավորություն է տալիս ավելի լուրջ ուշադրություն դարձնել դատավճռի կայացման երկրորդ փուլում քննարկվող հարցերին, հատկապես՝ պատժի նշանակման մասով: Երկրորդ, պաշտպանության կողմին թույլ է տալիս մշակել և իրացնել ավելի ճկուն, երկաստիճան մարտավարություն՝ առանց դիրքորոշման մեջ ներքին հակասություն ունենալու վտանգի: Դրանով առավել ամբողջապես է իրացվում անձի պաշտպանության սահմանադրական իրավունքը: Երրորդ, այս ճանապարհով լուծում է ստանում Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում տեղ գտած այն հիմնարար գաղափարը, որ արդարացվածի համար պետք է նախատեսվեն հատուցում ստանալու հնարավորինս մատչելի և արագ ընթացակարգեր:

2.6. Վերաքննության ռեժիմների տարբերակումը.

Ի տարբերություն ՀՀ գործող քր. դատ. օր.-ի՝ Նախագծում, իրավական որոշակիության սկզբունքին համահունչ, հստակեցված են վերաքննության ռեժիմները (այս խնդրին անդրադարձել էր նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը Գ. Հախնազարյանի վերաբերյալ 2009թ.-ի հունիսի 29-ի որոշման մեջ): Մասնավորապես, նախատեսելով վերաքննիչ դատարանում գործի քննության սովորական և պարզեցված ընթացակարգեր, միաժամանակ հստակեցված է այն որոշումների շրջանակը, որոնց դեմ բողոքների քննությունն իրականացվում է պարզեցված ընթացակարգով: Վերոնշյալ կարգավորումը կոչված է սահմանափակելու այս ոլորտում վերաքննիչ դատարանի հայեցողությունը՝

կատարելագործելով անձի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտի արդյունավետ վերանայման երաշխիքները:

<u>Ակնկալվող արդյունքը.</u>

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է.

1. Մարդու իրավունքների պաշտպանության քրեադատավարական երաշխիքների ամրապնդում.

2. Քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռում.

3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով սահմանված՝ մարդու իրավունքների չափանիշներին ինկորպորացում, մարդու իրավունքների երաշխիքների ամրապնդման, դատավարության սուբյեկտների լիազորությունների և գործառույթների ճշգրտման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների կենսագործում.

4. Քրեական դատավարության հիմքում դրված սկզբունքների հետևողական զարգացում.

5. Քրեական դատավարությունը դատարանակենտրոն դարձնելու նպատակով դատարանի դերի և նշանակության բարձրացում, նախաքննության օրինականության նկատմամբ դատական վերահսկողության սահմանների ընդլայնում, ծանրության կենտրոնը նախաքննությունից դատական քննություն տեղափոխում.

6. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, ինչպես նաև քրեադատավարական հարկադրանքի միջոցների օրինականության նկատմամբ դատախազական հսկողության ամրապնդում.

7. Քրեական դատավարության համապատասխանեցում միջազգային չափանիշներին, մասնավորապես՝ արտասահմանյան երկրներում հաջողությամբ գործող նոր ինստիտուտների ներդաշնակ ներդրում՝ ապահովելով դրանց արդյունավետ տեղայնացում և կիրառելիություն, ինչպես նաև ժամանակակից

տեխնիկայի նվաճումների օգտագործում (քննչական գործողությունների ընթացքում տեսակապի հնարավորություն, որպես օրինականության լրացուցիչ երաշխիք ընթերակաների մասնակցության հետ միասին նաև քննչական գործողությունների ընթացքի նկարահանում և այլն).

8. Քրեական դատավարության կարգավորման առարկայի ճշգրտում, մասնավորապես՝ քրեական դատավարության բաղկացուցիչ մաս չհանդիսացող դրույթների (օր.՝քրեակատարողական ոլորտին վերաբերող) դուրսբերում քրեական դատավարության օրենսգրքից և փոխարենը քրեական դատավարության օրենսգրքով կարգավորման ենթակա գործունեության ոլորտների (օր.՝ հանցագործությունների քննության հետ կապված օպերատիվ-հետախուզական գործունեության) ներառում օրենսգրքում.

9. Քրեական դատավարությունում հասկացութային ապարատի հստակեցում: